

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲԱՅԱՌԻԿ

ՆՎԻՐՎԱԾ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 20
ԵՒ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

ԽՄԲԱԳՐԻ ԱՆԿՅՈՒՆ

ՀԱՎԱՏՆ Է ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ՝ ՄԵՐ ԶԻՆՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԶԵՆՔԸ...

«Աստվածապավինությունից եւ առ Տեր՝ հավատից են բխում մեր հույսն ու վստահությունը ապագայի հանդեպ, մեր սերը միմյանց, մեր Եկեղեցու ու Հայրենիքի հանդեպ, որով մեզ համար սիրելի ու հեշտ են դառնում նաեւ մեր պարտականությունները: Հավատով ու սիրով զոդված միասնությունից են ծնունդ առել մեր բոլոր հաղթանակները»:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետ

Ասում են՝ մի օր ծաղիկների արքան իր մոտ կանչեց բոլոր ծաղիկներին եւ ասաց. «Ներկայացե՛ք եւ պատմե՛ք, թե ձեզանից ով է ամենից շատ սիրում իր արքային»: Մեկը մյուսին հերթ չտալով՝ բոլորը սկսեցին բարձրաձայնել իրենց ճոխ գեղեցկության, զգլխիչ բույրի, նազանքվելու մասին՝ որպես իրենց սիրո արտահայտություն: Ծաղիկներից միայն մեկն էր լուռ ու գլխիկոր. նրա հասակը մի մատնաչափ էլ չկար, չուներ վառ գույներ, քամուց չէր նազանքվում, բույրն էլ շատ մեղմ էր՝ հազիվ զգալի: Արքան նայեց նրան ու հարցրեց. «Ձնծաղի՛կ, ինչո՞ւ ես լռում, մի՞թե ասելու բան չունես»: Բոլոր ծաղիկները շրջվեցին ձնծաղկի կողմն ու քմծիծաղ տվին: Ձնծաղկի քնքուշ թերթիկի վրայից ձյան փաթիլը հալչելով սահեց ցած: Արքան մեղմանուշ ժպտաց նրան, ապա դիմեց բոլոր ծաղիկներին. «Ձնծաղկին ձեր «բարձունքից» նայելուց առաջ խորհե՛ք, թե ձեզանից ով ունի սիրո այն չափը, այն զորավոր ու հզոր ուժը, որ իր փոքրիկ, վտիտ մարմնով, իր նուրբ գլխիկով, ցավն իր մեջ խեղդած, ճեղքի սառած, քար դարձած հողի կուրծքը եւ առաջինը օրհներգի ինձ»:

Այդպես է՝ առաջինը լինելու փառքն ու պատիվը վաստակելուց առաջ պիտի անցնես ոչ հեշտին ճանապարհ, պիտի լինես ավելին, քան կաս, պիտի հաճախ նաեւ խաչվես՝ հարություն առնելու համար:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հենց այդպիսին եղավ, եղավ այդ Ձնծաղիկը՝ հետագա քրիստոնյա ողջ աշխարհի համար:

Հայոց Եկեղեցին երբեւէ ոչ ոքի չի զարմացրել իր արտաքին ճոխությամբ, Տիրոջ առաջ առաջինը լինելու

բարձրահոն կեցվածքով, վերամբարձ ու գայթակղեցնող բառ ու բանով, պարապախոս աստվածսիրությամբ, բարձրագոչ մարդասիրությամբ ու հայրենասիրությամբ: Նա ձնծաղկի նման գործով ու միմիայն գործով է ապացուցել իր սերն ու հավատարմությունը, իր նվիրումն ու ծառայասիրությունը Աստծուն, իր հայրենիքին ու ժողովրդին, որքան էլ շուրջը «հողը» սառած ու քարացած լիներ, որքան էլ դարերն ու ժամանակները դժվարին, անգամ՝ օրհասական լինեին:

Հայերիս քաջ հայտնի է, որ մեր ժողովրդի խաղաղ ապրելու, ստեղծելու, արարելու, բարգավաճելու տարիներն ամենեւին էլ կշեռքի ծանր նժարին դրվելիքը չեն, բայց հայ ժողովրդի ներդրումը, ավելի ստույգ՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կամարների տակ ստեղծված արժեքները, մարդկությանը բերած մշակութային, գիտական, հոգեւոր ժառանգությունը համաշխարհային առաջադիմական մտքի ոչ պակաս արժեքավոր ձեռքբերումներից են:

Սակայն, ցավոք, այսօր մեր մեջ քիչ չեն մարդիկ, որոնք մտածում են, թե մեր այսօրվա խեղճության «մեղքերի մեղքը» Եկեղեցին է: Ծիծաղելի ու քաղաքականապես տհաս մարդը կարող է միայն մտածել, որ ծովից ծով Հայաստանի «բաղձալի լեգենդը» Եկեղեցին փլուզեց, որ Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ բզկտված Հայաստանը Խաչի թեւերով բաժանվեց:

Իսկ նրանք, ովքեր այսօր խոսում են հայկական ինքնության, ազգային գաղափարախոսության մասին, վստահ եմ, ազնիվ լինելու դեպքում կփաստեն, որ դրանց անգերազանցելի հիմնադիրները մեր Եկեղեցու հայրերն են եղել՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից, Սահակ Պարթեւից, քերթողահայր Խորենացուց մինչեւ Նարեկացի ու Կոմիտաս: Ընդամենը պետք է հնից դասեր առնել, ուրիշի հույժ կասկածելի «բոստանից» քաղելու փոխարեն՝ մերը, մեզապատկանը սնել ու աճեցնել, ինչպես դա արել են մեր լուսանուն հայրերը՝ կրկին Հայ Առաքելական Եկեղեցու խորագետ, ինչու չէ, նաեւ քաղաքագետ հոգեւորականները:

Հայոց Եկեղեցին, ի պատիվ նրա փառավոր գահակալների ու եռամեծար վարդապետների, մշտապես ապրել է հայրենիքը, հողն ու ժողովրդին ապրեցնելու մտահոգությամբ: Այս մտահոգության մասին են վկայում Եկեղեցու՝ թե՛ գրերի գյուտի ու դպրության, թե՛ գիտության ու մշակույթի խնդիրների բարձրացումն ու սքանչելի լուծումները, թե՛ ազգային ազատագրական պայքարներին նրա անմիջական մասնակցությունն ու դրանց գլխավորումը, թե՛ սոցիալական ոլորտին առնչվող ծրագրերի իրականացումը:

Հայոց Եկեղեցին ինչպես դարեր շարունակ, այնպես էլ մեր ժամանակներում չի կորցրել իր խոհեմությունն ու իմաստությունը եւ, ինչպես բոլոր ժամանակներում, այսօր եւս եղել ու մնում է աշխարհով մեկ սփռված իր ժողովրդի ոչ միայն հոգեւոր, այլեւ ազգային խոշորագույն կառույցը, ինքնության ու հայապահպանության պատվարը, իսկ հայրենիքում՝ պետականաշինության ամուր հենասյուներից մեկը: Վստահորեն կարող ենք ասել, որ Հայոց Եկեղեցին այսօր առավել, քան երբեւէ կոչված է իր բուն առաքելությանը, այսօր առավել, քան երբեւէ իր ծառայական կերպի մեջ է:

Ուստի թուլացնել Եկեղեցին նշանակում է ջուր լցնել մեր թշնամու ջրաղացին, նշանակում է կասկածի տակ դնել մեր վաղվա օրը:

Դարեր առաջ կորցրեցինք մեր պետականությունը, մեզանից առաջ ու մեզ պես նաեւ այլ ժողովուրդներ

կորցրեցին իրենց պետականությունը: Արդյոք նրանցից քանիսի՞ն գիտենք, որ շարունակ օտարի լծի ծանրության տակ հեծելով՝ կարողացան պահպանել իրենց գիրն ու գրականությունը, հոգեւոր ու մշակութային ժառանգությունը, ազգային ինքնատիպ ու կուռ նկարագիրը, վերստին պետականություն ունենալու բաղձալի տեսլականը, մի խոսքով՝ իրենց ինքնության հոգեւոր ու մտավոր բոլոր բաղադրիչները, որ հետո կարողանային վերագտնել նաեւ իրենց սահմանագծված, թող որ փոքրաչափ, հայրենիքն աշխարհի քարտեզի վրա:

Եվ ահա մենք գտանք մեր պետականությունը, գտանք շնորհիվ այն «ժառանգության», որ կոչվում է գիտակցված ու մաքառող հիշողություն, որ կոչվում է հայի տեսակով ապրելու անկոտրում կամք ու տեսլական: Իսկ այդ կամքը մեզանում կոփվել էր ոչ միայն տիրահաստատ, այլեւ առավելապես մեսրոպաշունչ մեր Եկեղեցու կամարների տակ:

Հայրենասիրությունն ու աստվածսիրությունը վերամբարձ խոսքերի փողահարում չեն. դրանք միմիայն գործերով են հաստատվում: «Թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը» ավետարանական խորախորհուրդ այս պատգամը Հայոց Հայրապետների, այդ թվում եւ Գարեգին Բ Կաթողիկոսի պարագայում ինչոր տեղ հավասարազոր է ներսից քուրձե շապիկ, իսկ դրսից՝ ոսկեկար ծիրանի հագնելուն:

Այս հողում ծնված ու սնված Հայրապետը, հիրավի, պիտի դառնա իրենից մեծ ու իրենից զորեղ, պիտի դառնա կարծր բյուրեղ, անխոցելի մարմին ու անընկճելի ոգի, պիտի դառնա մայր հայրենիքի ու Մայր Աթոռի խորհրդապատկերը համայն հայության համար՝ տիրոջ ու ծառայի միակամության մարմնավորմամբ: Եվ Հայոց 132-րդ Հայրապետը եւս, իր նախորդներից ոչ պակաս, դարձավ. կամենո՞ւմ ենք ընդունել դա, թե՞ ոչ:

Փորձենք ընդամենը համառոտակի անդրադառնալ այն ահռելի աշխատանքի միայն մի մասին, որ կատարվել է Հայոց Հայրապետի գահակալության 20 տարիների ընթացքում:

Եկեղեցուն մոտ կանգնած յուրաքանչյուր ոք լավ գիտի, որ մեր պատմության ոչ մի ժամանակահատվածում Հայոց Եկեղեցում չի կատարվել այնքան գործ, որքան Գարեգին Բ Վեհափառի գահակալության տարիներին: Դրանք այնքան շատ են եւ այնքան խոսուն, որ չտեսնելն ուղղակի պարզ միտումնավորություն է, իսկ ավելի ճիշտ՝ քաղաքական ու հանրային որոշ ուժերի մտացածին, անհեռանկար, եթե կուզեք՝ ազգակործան որդեգրումներ:

Հարկ է հիշել, որ Նորին Սրբության՝ Արարատյան թեմում պաշտոնավարության շրջանը համընկավ մեր ժողովրդի ամենածանր ու դժվարին տարիների հետ, եւ այդ դժվարությունները ոչ թե ընկճեցին, այլ մղեցին նրան հայրենանպաստ ու ազգաշեն գործերի:

Խորհրդային Միության փլուզումից հետո երկրում փլուզվել էր նաեւ ամեն ինչ՝ գործարաններն ու ֆաբրիկաները, գիտական հաստատություններն ու մշակութային օջախները, բուհերն ու դպրոցներն էլ կային ու չկային, մութ էր, ցուրտ ու սով: Եվ այդ ամենից առաջ եւ այդ ամենի կենտրոնում կար նաեւ արցախյան պատերազմը: Մի կտոր հացի հետեւից ընկած ծնողներն ասես մոռացել էին իրենց երեխաներին, որոնք դպրոց հաճախելու փոխարեն փորձում էին «ստոլիկների» առջեւ իրենց հաստատել: Չմոռանանք նաեւ, որ այդ երեխաներից ոմանց հայրերն էլ զբաղված էին մեր սահմաններն ու Արցախը պաշտպանելու սրբազան գործով: «Երեխաները մեր ապագան են» իմաստությունը, որ առ այսօր էլ շատերի համար լոկ հավուր պատշաճի ասվող խոսքեր են, Նորին Սրբության համար դարձավ կարեւորագույն գործ, դարձավ ապագային միտված հրամայական: Հայաստանի անկախացումից հետո պետական տարբեր կառույցներ ձեռքից ձեռք էին անցնում, հետո փոշիանում կամ լավագույնս վերածվում խանութների (ցավոք, այսօր էլ շատ բան չի փոխվել. այսօր էլ դեռեւս մնում ենք առավելապես իբրեւ խանութպանների երկիր): Նման կառույցներից էին նաեւ երեւանյան պիոներպալատները:

Եվ ահա 1993-ին դեռեւս Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանն ստանձնեց նման երեք շինությունների՝ Երեւանի Նոր Նորքի, Արաբկիրի եւ Մալաթիայի նախկին պիոներպալատների շենքերի տնօրինությունը՝ դրանք վերանվանելով հայորդյաց տներ, որոնց ֆինանսական հովանավորությունն էլ ստանձնեց ՀԲԸՄ-ն: Իսկապես այդ տարիներին սոցիալական ծանր վիճակում հայտնված մեր ժողովրդի համար խնդիր էր երեխաների կրթության, վտանգավոր միջավայրից կտրելու գործը, ինչը լավագույնս լուծվեց մասամբ հենց հայորդյաց տների բացումով: Այսօր արդեն Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հովանու տակ գործում է 7 հայորդյաց տուն, որից 3-ը գտնվում են Երեւանում, մեկական՝ Գյումրիում, Աշտարակում, Էջմիածնում ու Վանաձորում:

Այս կրթօջախներում հազարավոր մանուկներ ու պատանիներ ոչ միայն արհեստ ու արվեստ են սովորում, այլեւ հայրենիքի արժանի զավակներ ու քաղաքացիներ լինելու, իրենց դարավոր ավանդություններին տեր կանգնելու դասեր են առնում, սովորում առավել արժեւորել ու պահպանել նախնյաց ժառանգությունը:

Չմոռանանք նշել, որ այս կառույցներին կից սկսեցին գործել նաեւ աղքատասիրաց ճաշարանները, որոնցում ամեն օր սնվում են մի քանի հազար միայնակ թոշակառուներ ու սոցիալապես անապահով ծերեր:

Աստծո կամոք, իր գահակալության սկզբից եւեթ Գարեգին Բ Կաթողիկոսի համար էր պահված, ասես, մեր Եկեղեցու գործունեության ամենապատասխանատու ժամանակահատվածը նույնպես. ընթացիկ, առօրյա բազում գործ ու հոգսի հետ մեկտեղ՝ 1700-ամյակի տոնակատարության տարի՝ բարդ ու ընդգրկուն ծրագրերով, բազում ու բազմապիսի ձեռնարկներով ու միջոցառումներով: Այս ամենի կողքին եւ դրանց հաջորդիվ՝ մեռոնօրհնեքներ (2008 թ. սեպտեմբեր 28, 2015 թ. սեպտեմբեր 27), միջեկեղեցական ու հովվապետական այցեր, ընդունելություններ, ժողովներ, հոգեւոր ու ազգային խնդիրներ արծարծող գիտաժողովներ, գրահրատարակչական ու քարոզչական աշխատանք: Նրա հոգածության ծիրում են նաեւ «Էջմիածին» ամսագիրն ու «Քրիստոնյա Հայաստան» թերթը, «Շողակաթ» հեռուստաընկերությունը, մանրանկարչության դպրոցը:

Ի թիվս բազմաձավալ ու բազում այլ մտահոգությունների՝ սոցիալական ծառայության խնդիրը մշտապես եղել է Վեհափառ Հայրապետի հրատապ ու անհրաժեշտ ծրագրերի համայնապատկերում:

Եվ ահա Հայոց Հայրապետը 2013 թ. Մայր Աթոռում հիմնեց նաեւ սոցիալական ծառայությունների բաժինը: Այս կարեւոր մտահղացումը կյանքի կոչելու գործում առաջինն աջակցություն բերեց «ԷԿԼՕՖ Հայաստան» միջազգային կազմակերպությունը: Ծառայության հիմնական միջոցներն այսօր գոյանում են անհատ բարերարների, տեղի եւ արտերկրի կազմակերպությունների նվիրատվություններից:

Ծառայության բուն ուղեծրում գտնվող Երեւանի «Նաքաշյան» եւ Էջմիածնի «Քյուրքչյան» մանկատների, Էջմիածին քաղաքում գտնվող ծերանոցի, Էջմիածնի եւ Երեւանի բարեգործական ճաշարանների, «Գարեգին Բ» տնաշինական ծրագրի կողքին այն նաեւ հավակնում է իր կարեւոր դերակատարությունն ապահովել մեր ժողովրդի կյանքի խնդրառու բոլոր հասցեներում՝ հիվանդներ ու հաշմանդամներ, ազատամարտիկներ ու բազմանդամ կամ պարզապես սոցիալապես անապահով ընտանիքներ,

անվճարունակ ուսանողներ, տեղահանվածներ ու փախստականներ՝ սիրիահայեր, քեսաբահայեր, իրաքահայեր, բելգրութահայեր, ցավոք, այսօր նաեւ սահմանամերձ բնակավայրերի բնակիչներ, արցախահայեր:

Զարմանալի ժողովուրդ ենք. օտարներին ներկայանալիս հպարտորեն նշում ենք, որ առաջինը պետականորեն քրիստոնեությունն ընդունած ժողովուրդն ենք, քրիստոնեական մշակույթի ու քաղաքակրթության ձնծաղիկը, ցուցադրում ենք մեր պատմամշակութային հարուստ ժառանգությունը՝ վանքերն ու եկեղեցիները, խաչքարերն ու միջնադարյան արվեստի այլ նմուշները,

մեր գրչարվեստն ու մանրանկարչությունը եւ անվերջ դժգոհում հարաճող եկեղեցաշինությունից՝ մեջտեղ բերելով ժողովրդի սոցիալական վիճակը: Իսկ ո՞վ կարող է հիմնավոր փաստարկներ բերել, որ Մայր տաճարն ու Դադիվանքը, Ամարասն ու Գանձասարը, Հաղպատն ու Սանահինը, Տաթեւի վանքն ու Նորավանքը, Հառիճավանքն ու Սաղմոսավանքը, Գեղարդն ու Հռիփսիմեն կառուցվել են մեր երկրի սոցիալապես ծաղկուն պայմաններում. եթե սոցալականի հետ կապելու լինեինք, այսօր աշխարհին, մեր թշվառությունը ցուցադրելուց զատ, ուրիշ ոչինչ տալ չէինք կարող: Պետականությունը, հողը, անգամ լեզուն կորցրած շատ ժողովուրդներ մարդկության հիշողության մեջ պահպանվել են իրենց թողած մշակութային ժառանգությամբ. թվարկելու հարկ չկա: Ուստի, ի հեճուկս նման ճոճիմ մտայնության, Նորին Սրբության գահակալության տարիներին աննախադեպ զարկ ստացավ նաեւ եւ առավելապես եկեղեցաշինությունը՝ հարակից եւ օժանդակ կառույցներով ու համայքներում առկա եկեղեցիների նորոգչական աշխատանքներով թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքի հայաշատ վայրերում:

Ընդլայնվեց նաեւ Մայր Աթոռի տարածքը՝ վեր սլացող նոր մուտքակամարով ու Բաց խորանով, կառուցվեցին Մկրտարանը, վանական համալիրները, «Վաչե եւ Թամար Մանուկյան» գրադարան-գիտական կենտրոնը, Գարեգին Ա հայրապետի անունը կրող կրթադաստիարակչական կենտրոնի շենքը, բարեկարգվեցին ու ամրացվեցին հիմքերը Մայր Աթոռի տարածքում գտնվող բոլոր շինությունների, որոնց թվում՝ Խրիմյան Հայրիկի կառուցած, բայց ժամանակին իր նպատակին չծառայած թանգարանի շենքը, որոնք, իրենց բուն նպատակից զատ, նաեւ պատմամշակութային իսկական արժեքներ են: Լուրջ վերանորոգման մեջ է գտնվում նաեւ Մայր տաճարը: Այստեղ հարկ ենք համարում նշել նաեւ այն կարեւոր փաստը, որ Հայոց Հայրապետի նվիրական ջանքերով վերականգնվեցին ու բարեկարգվեցին երկու տասնյակի հասնող միջնադարյան խոնարհված ու վնասված վանքեր ու եկեղեցիներ:

Այս ամենը ոգեկոչվեց, մարմին առավ նաեւ Հայ Եկեղեցու նվիրյալ զավակների աջակցությամբ, նրանց, ովքեր իրենց նեղ անձնական ու քաղաքական շահերից վեր կանգնեցին, նրանց, ովքեր տեսան Հայոց Հայրապետի աննկուն կամքն ու նվիրումը՝ Հայ Եկեղեցին դարին համընթաց տանելու առաքելության մեջ, եւ մեծ վստահությամբ ու պատրաստակամությամբ սատարեցին՝ իրենց ունեցածից բաժին հանելով-նվիրաբերելով Մայր Եկեղեցուն: Այս նվիրատվությունների շնորհիվ էր, որ իրականացան այն հսկայածավալ աշխատանքները, որոնց ականատեսն ենք: Հայ ժողովրդի կյանքում ու Հայոց Եկեղեցում ինչպես անցյալում, այնպես էլ այսօր բազում ձեռնարկներ, ծրագրեր, հղացումներ կյանքի են կոչվել ու կոչվում առավելապես հենց բարեգործների ազնիվ պատրաստակամությամբ, նրանց՝ ներկան ապագայի մեջ տեսնելու վեհ կեցվածքի, ճշմարիտ ու անշահախնդիր հայրենասիրության ու աստվածսիրության մեծ զգացումով:

Վեհափառ Հայրապետի հաջորդ՝ ամենակարեւոր գործերից մեկն էլ հոգեւոր կադրերի պատրաստումն էր: Խիստ կարեւորելով ուսյալ հոգեւորականների դերը Եկեղեցու առաջնային առաքելության մեջ՝ Նորին Սրբությունն անհրաժեշտ նկատեց հայ ժողովրդի պատմության մեջ իր հոգեւոր, գիտական եւ մշակութային անուրանալի դերակատարումն ունեցող Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կողքին ունենալ հոգեւոր նոր կրթարաններ եւս:

Եվ ահա 1990 թ., երբ դեռ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդն էր, Սեւանա կղզու ստորոտում նրա նախաձեռնությամբ եւ անմիջական ջանքերով բացվեց հոգեւոր-կրթական մի նոր հաստատություն, որը հետո Վազգեն Վեհափառի անունով կոչվեց Վազգենյան հոգեւոր դպրանոց: Կայացման առաջին տարիները դժվարին էին, դժվարին՝ բոլոր առումներով, սակայն, շնորհիվ առաջնորդի անմիջական հոգատարության ու հաճախակի ներկայության, դրանք հետզհետե հաղթահարվեցին, ուսանողական՝ ինչ-որ տեղ ժուժկալ ու աշխարհիկ առումով ներամփոփ

կյանքը մտավ հունի մեջ եւ տվեց իր պտուղները: Իսկ 2004 թ. Հայ Եկեղեցու ազնիվ բարերարներ տեր եւ տիկին՝ Գառնիկ եւ Անի Յակուբյանների բարերարությամբ բացվեց Վազգենյան դպրանոցի նոր, եռահարկ մասնաշենքը՝ հրաշալի հարմարություններով՝ այնտեղ սովորող ու բնակվող ուսանողների թե՛ ուսումնական եւ թե՛ կենցաղային պայմանների առումով: Դպրանոցը նոր շունչ, նոր կյանք տվեց նաեւ Սեւանի թերակղզու Սբ Կարապետ եւ Սբ Առաքելոց եկեղեցիներին, որոնք տասնամյակներ շարունակ լքված ու մենիկ էին: Նրանք այսօր կրկին իրենց նախկին կարեւորության ու փառքի մեջ են:

1874 թ. սեպտեմբերի 28-ին Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի ջանքերով հիմնված Գեւորգյան հոգեւոր ճեմարանը մինչեւ 1917 թ. բարձրագույն ուսումնական միակ հաստատությունն էր հայ իրականության մեջ, ուստի բնականաբար պետք է լիներ մեր հայրապետների խնամքի եւ գուրգուրանքի առարկան:

Մեծ է եղել այս հաստատության հանդեպ նաեւ մեր ժողովրդի սերը, այնքան մեծ, որ նրա բացումը վերաճել է ժողովրդական տոնախմբության: Բավական է թվարկել ճեմարանի նախկին դասախոսների ու սաների նվիրական անունները, որպեսզի յուրաքանչյուր հայի սիրտ լցվի ազգային արժանապատվության վեհ զգացումով. Մեծն Կոմիտաս, Կարա-Մուրզա, Վարդգես Սուրենյանց, Եղիշե Թադեւոսյան, Մանուկ Աբեղյան, Կարապետ Տեր-Մկրտչյան, Գարեգին Հովսեփյան, Գարեգին Լեւոնյան, Հ. Հովհաննիսյան, Ս. Մանդինյան, Կ. Կոստանյան, Ա. Շահմուրադյան եւ բազում այլ մեծագործ հայորդիներ:

1917 թ. դեկտեմբերի 21-ին Գեւորգյան ճեմարանը փակվեց... եւ միայն տարիներ անց՝ 1949 թ., Գեւորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի մեծագույն ջանքերի գնով, ճեմարանը վերստին բացվեց: Հետագայում Գեւորգյան կրթօջախի հեղինակությունն ու վարկը մեծապես բարձրացան Վազգեն Ա եւ Գարեգին Ա մեր երջանկահիշատակ Կաթողիկոսների օրոք: Իր նախորդների սկսած գործը չէր կարող չշարունակվել Գեւորգյան ճեմարանի նախկին սան՝ այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կողմից: Եվ շարունակվեց, շարունակվեց միանգամայն այլ մոտեցումով եւ այլ խորքով:

Վեհափառի ջանքերով ճեմարանը 2002 թ. հունիսի 19-ին ՀՀ կառավարության որոշմամբ ստացավ բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ, որը ճեմարանի տեսչությանը հնարավորություն տվեց ճեմարանականների ուսումնառությունը դնել ավելի ամուր հիմքերի վրա: Ստեղծվեցին մասնագիտական մի շարք ամբիոններ՝ աստվածաբանության, եկեղեցագիտության, լեզվաբանության, պատմության եւ իմաստասիրության, որոնց շնորհիվ համապատասխան առարկաների ուսուցումը դարձավ ավելի հիմնավոր եւ ըստ համալսարանական չափանիշների:

Այստեղ դասավանդում են հանրապետության տարբեր գիտական հիմնարկների ու բուհերի առաջատար մասնագետները, ինչպես նաեւ այն երիտասարդ հոգեւորականները, որոնք վերադարձել են արտասահմանում կրթություն ստանալուց հետո:

Ճեմարանի ուսանողներն ապահովված են կենցաղի եւ ուսման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով:

Ճեմարանում կատարվեցին հիմնովին վերանորոգման աշխատանքներ, բակում վեր խոյացավ Հրեշտակապետաց նորակառույց մատուռ-եկեղեցին, որում այսօր կատարվում են ուսանողության առավոտյան եւ երեկոյան ժամերգությունները: Իսկ ճեմարանի շենքին կից գործում է նաեւ մարզասրահը՝ անհրաժեշտ ու միանգամայն արդիական մարզագույքով, նաեւ՝ հանդիսությունների սրահը, որտեղ անցկացվում են զանազան միջոցառումներ, գիտաժողովներ, բանախոսություններ եւ այլն:

Կրթության հանդեպ Վեհափառ Հայրապետի նախանձախնդրությունը դրսեւորվում է նաեւ երիտասարդ հոգեւորականների մասնագիտական հետագա պատրաստվածության պարագայում եւս: Այսօր մեր Եկեղեցու տասնյակ երիտասարդ աբեղաներ իրենց գիտելիքներն են հարստացնում տարբեր երկրների եւ տարբեր Եկեղեցիների համակարգերում գործող աստվածաբանական բարձրագույն հաստատություններում՝ ձեռք բերածը մեր ժողովրդին ու Եկեղեցուն ծառայեցնելու ազնիվ մղումով:

Տարիներ առաջ Գարեգին Երկրորդ Հայրապետի անմիջական ջանքերով հանրակրթական դպրոցների ծրագրերում տեղ գտավ նաեւ «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը: Ցավոք, այսօր կրթական խիստ վիճելի չափորոշիչներից ելնելով՝ փորձում են դուրս թողնել վերոհիշյալ առարկայի դասավանդումը՝ քննադատության թիրախը դարձնելով այն սին կարծիքը, թե իբր կրոնական քարոզչություն է տարվում: Անաչառ լինելու դեպքում պետք է իմանային, որ այս առարկայի նպատակը ոչ թե, ինչպես իրենք են ասում, «հավատացյալներ» կամ «կրոնամոլներ» պատրաստելն է, այլ դպրոցականների, ինչու չէ, նաեւ ուսանողության, որոնք աղանդների ցանցն ընկնելու ամենախոցելի թիրախն են, ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու, մեր հայրերի դարավոր ու փորձված անցած ուղուն, մեր ազգային-եկեղեցական տոներին ու ծիսական արարողություններին ծանոթացնելու, նրանց՝ նորամուծ ու կասկածելի հոգեւոր կոչվող հոսանքների մերժելի քարոզչությունից հնարավորինս զերծ պահելն ու մեր սրբանուն հերոսների ու նահատակների օրինակով առողջ ու հայեցի, վասն ազգայինի ու հայրենյաց միշտ պատրաստ ապագա քաղաքացիներ կրթելն է, որպեսզի վաղն այսօրվա պատանին որեւէ աղանդի

դրդմամբ զենքը ծնողների, քույրերի ու եղբայրների եւ կամ հենց իր վրա չպարպի:

Ճակատագրի բերմամբ մեր ժողովուրդը դարձավ աշխարհասփյուռ, դարձավ նժդեհ ու վտարանդի: Այսօր դժվար է գտնել մի աշխարհամաս, ուր հայը խարիսխ գցած չլինի: Ինչպես անցյալում, այսօր եւս առավելապես Եկեղեցին է նրանց ինքնության հիմնական միավորողը ոչ միայն ազգային ու ընկերային, այլեւ հոգեւոր ու մշակութային հարաբերությունների առումով:

Դարեր շարունակ Հայոց Եկեղեցին դարձավ իր ժողովրդի հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունը, կարելին ու հաճախ նաեւ անկարելին գործադրելով՝ պահեց ու պահպանեց հայի անկրկնելի տեսակը՝ իր ուրույն ու ինքնատիպ քրիստոնեական մշակույթով ու կենցաղավարության ավանդույթներով:

Կարեւորելով Եկեղեցու դերակատարությունն իր կյանքում՝ հայը, որտեղ էլ որ բնակություն հաստատելու լիներ՝ քրիստոնյա աշխարհում թե այլադավան երկրներում, ելքեր ու միջոցներ էր փնտրում եւ առաջին հերթին կառուցում էր իր եկեղեցին, քանզի գիտեր, որ եկեղեցու միջոցով էր, որ պիտի կարողանար պահպանել իր «ես»-ը, հավատարիմ մնար իր նախնյաց հավատին եւ կամրջվեր նաեւ հայրենի ավանդներին ու հետագայում նաեւ՝ հայրենիքին: Այս ընդհանուր պատկերի մեջ, հիրավի, անկրկնելի է եղել Հայոց հայրապետների ներդրումը՝ նաեւ հովվապետական այցերի միջոցով տեղում հանդիպելու, նրանց հոգս ու կարիքներին ի մոտո ծանոթանալու, թեմերի առաջնորդների եւ ժողովրդի հետ համատեղ որոշումներ առնելու հարցում: Համատեղ առկա խնդիրները լուծելու առումով անուրանալի է եղել նրանց՝ վասն իրենց հոտի դրսեւորած դիվանագիտական ու հոգեւոր-բարոյական կեցվածքը նաեւ օտարերկրյա պետությունների ու կառավարությունների հետ բանակցություններում: Այս ավանդությունը նույնիսկ համայնավարության շրջանում չդադարեց. որոշակիորեն նվազեց, բայց երբեք չստվերվեց: Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետը տարիների դադարից հետո կարողացավ վերականգնել հովվապետական այցերի մեր մշակույթը, որը շարունակություն գտավ նաեւ Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք, սակայն Գարեգին Երկրորդի հովվապետական այցերն իրենց քանակով (50-ից ավելի) ու առաքելությամբ աննախադեպ են մեր Եկեղեցու պատմության մեջ:

Ինչպես վկայում են գրավոր աղբյուրները, Հայոց Եկեղեցին անմասն չի մնացել նաեւ ազգային-ազատագրական շարժումներին մասնակցելուց, իսկ շատ հաճախ հենց ինքն է գլխավորել ժողովրդին՝ այստեղ եւս նահատակության պսակը կիսելով իր ազնվագույն զավակների հետ: Մեր օրերում եւս Հայոց Եկեղեցու սպասավորները, իրենց փառապանծ նախնյաց օրինակով, ոչ միայն զինվորի կարգավիճակով ծառայում են Հայոց բանակում, այլեւ որպես Հայ Եկեղեցու հոգեւոր խոսքի փոխանցողներ՝ իրենց չափազանց կարեւոր նպաստը բերում մերօրյա զինվորների հոգեւոր-բարոյական նկարագրի կերտմանը: Հոգեւորականությունն այսօր Հայոց բանակի լիիրավ մաս է կազմում, նրանք եւս զենքը ձեռքներին պաշտպանում են երկիրն ու հայրենին թշնամուց այնպես, ինչպես աշխարհականները. վկան հենց արցախյան գոյապայքարը: Վասն հայրենի հողի պաշտպանության շատ հոգեւորականներ ու ճեմարանականներ կռվեցին՝ ոմանք ընդմիշտ մնալով մարտի դաշտում:

Մի կարեւոր հանգամանք եւս. շատ զինվորներ հենց բանակում են հաղորդ դառնում քրիստոնեությանը, ազգային հոգեւոր տոներին ու ծեսերին, այստեղ են մկրտվում ու դառնում քրիստոնյա՝ զինվորագրվելով մեծն Վարդանանց սուրբ բանակին: Քչերին է հայտնի, թե զինված ուժերում հուսահատության մեջ ընկած որքան կյանքեր են փրկվում հոգեւորականի հետ շփումների արդյունքում: Քիչ չեն նաեւ դեպքերը, երբ հոգեւորականի օգնությամբ աղանդավոր, օտարին մանկուրտացած երիտասարդը վերադառնում Մայր Եկեղեցի ու արդեն գիտակցված զինվորագրվում Հայոց բանակին, ասել է թե՝ ազգային իր արմատներին՝ պատրաստ պաշտպանելու հայրենիքն ու հայրենին:

Անուրանալի է նաեւ այն դերակատարությունը, որ ունեն հոգեւորականները կալանավայրերում:

Ճակատագրի բերումով, հաճախ պատահական դիպվածով հանցանք գործած ու դատապարտված կանանցից ու տղամարդկանցից շատերը, դարձի գալով, ապաշխարելով, մեկընդմիշտ հեռանում են հանցավոր ճանապարհից, զղջում ու փոխում կյանքի ընկալումը՝ տուն ու ընտանիք, հանրային կյանք վերադառնալով:

Ժողովրդական իմաստությունն ասում է. «Այն աղբյուրից, որ ջուր ես խմում, ակունքը քար մի՛ նետիր»: Դարերի մեջ հենց մեր Եկեղեցին է եղել Հայոց այդ Ակունքը: Այդ ակունքի մի մասն այսօր Մաշտոցի անվան Մատենադարանն է՝ հիմնադրված 1921 թ.՝ Սբ Էջմիածնի մատենադարանի հենքի վրա: Այստեղ պահպանվող ձեռագրերի ու հնատիպ գրքերի գերակշիռ տոկոսը ոչ միայն Հայոց Եկեղեցու սեփականությունն է եղել, այլեւ հայ հոգեւորականության մտքի արգասիքը: Տառերի գյուտից մինչեւ առաջին տպագիր գիրքը, առաջին կրթարաններից մինչեւ առաջին բարձրագույն հաստատությունը Հայոց Եկեղեցու ներդրումն է ազգի կյանքում: Ժամանակին համապատասխան ու ժամանակի մեջ Եկեղեցին այսօր եւս չի դադարեցրել իր գրահրատարակչական գործունեությունը, ավելին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ 2006 թ. Մայր Աթոռում բացվեց հրատարակչական բաժինը: Բաժինն իր գործունեության ընթացքում լույս է ընծայել շուրջ 500 անուն գիրք: Ընդ որում՝ գրքերի հրատարակությունը համակարգված է, բացված են տարբեր մատենաշարեր՝ եկեղեցագիտական, պատմաբանասիրական, բնագրեր, մեկնողական, թարգմանական (գրաբարից եւ օտար լեզուներից), հայսմավուրքային, հայրենագիտական, Հայ Եկեղեցու հանրագիտարան, Հայ Եկեղեցու հայրեր, Ընդհանրական Եկեղեցու հայրեր, հոգեւոր ընթերցումներ, աղոթագրքեր եւ այլն:

Հրատարակչական բաժնի գործունեությունը չի սահմանափակվում միայն գրքերի հրատարակությամբ. բացվել են եւս երկու՝ աստվածաշնչային ուսումնասիրությունների եւ Հայ Եկեղեցու հանրագիտարանի ենթաբաժինները: Կարծում ենք՝ հարկ չկա նշելու, որ այսօր մեր հանրապետությունում դժվար է գտնել որեւէ հրատարակչություն՝ նման ծավալով:

Մեր՝ 1700 տարվա պատմություն ունեցող ազգային հոգեմտավոր ու բարոյական ողջ ունեցվածքը, վանական լինելով հանդերձ, երբեք չի սահմանափակվել կրոնականի նեղ սահմաններում, այլ հարաճել ու զարգացել է ժամանակի գիտական ու քաղաքակրթական նորագույն ուղիներով՝ զարմանալի նրբությամբ ու խորությամբ պահպանելով ազգային իր դեմքն ու դիմագիծը:

Ի վերուստ մեզ բաժին ընկած այս հողակտորը՝ մի կողմից բարենպաստ, մյուսից՝ անբարենպաստ իր աշխարհաքաղաքական դիրքով, պարտադրում է ոչ միայն չուշանալ, այլեւ լինել առաջիններից մեկը՝ դրոշակակիրը, որպեսզի չճզմվենք ուրիշների, օտարների մեծաքանակ ոտքերի տակ եւ դեռ ավելին՝ ստիպված չլինենք կուլ տալ նաեւ նրանց առաջնաերթի խեղդող ոտնափոշին: Ճակատային գծում լինելու համար բավական չէ միայն արի լինելը, անհրաժեշտ է նաեւ կրողը լինել այն նոր ու համարձակ գաղափարների, որոնց բարոյականությունը համահունչ է ազգային մտածողությանն ու կենսակերպին: Իր պատմությունն իմացող յուրաքանչյուր հայ լավ գիտի, թե դարեր շարունակ ինչ անասելի բեռ էր իր ուսերին կրում Հայ Եկեղեցին: Իսկ այսօր, չնայած ունենք ազգային պետություն ու պետականություն, սակայն Հայ Առաքելական Եկեղեցին կրկին ուշադրության կենտրոնում է պահում մեր գիտության ու մշակույթի ձեռքբերումները՝ իր կարելին ներդնելով այդ գործում:

Նորին Սրբությունը, եկեղեցական հրատարակություններից բացի, հովանավորում եւ ֆինանսական աջակցություն է բերում գիտական շատ գործերի տպագրման աշխատանքներին, գիտական ու մշակութային կազմակերպությունների զանազան ծրագրերին, երաժշտական համույթներին, իր բարոյական գնահատանքը մատուցում նաեւ մեր գիտության ու մշակույթի անվանի գործիչներին՝ գիտնականներին, ճարտարապետներին, շինարարներին, գրողներին, դերասաններին, նկարիչներին, երաժիշտներին՝ հայրապետական կոնդակներով նրանց կուրծքը զարդարելով Եկեղեցու մեծագույն պարգեւներով: Եվ այստեղ ամենեւին չկա

խտրականություն՝ տվյալ անձի գործն առնչվել է Եկեղեցուն թե ոչ, քանզի մեր Եկեղեցին, Աստծո Տուն լինելուց զատ, եղել է մշտապես նաեւ ազգային հաստատություն եւ աշխարհի բոլոր ծագերում ապրող իր զավակներին ոգեշնչել ազգայինի, այսօր նաեւ պետության ու պետականության պահպանման հանդեպ անգայթ նախանձախնդրություն:

Ի դեպ՝ Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության շրջանում հրապարակած կոնդակների թիվը (1107) կրկին աննախադեպ է մեր Եկեղեցում. առ այսօր դրանցից 20-ով շնորհվել են արքության պատիվ, 193-ով՝ «Սբ Գրիգոր Լուսավորիչ», 215-ով՝ «Սբ Սահակ — Սբ Մեսրոպ» եւ 639-ով՝ «Սբ Ներսես Շնորհալի» շքանշաններ, իսկ ազգային ու հոգեւոր նշանակալից իրադարձությունների եւ հոբելյանների առիթով հղվել է 40 կոնդակ: Ազգային եւ եկեղեցական հաստատություններին, մեր եկեղեցականներին ու հավատացյալներին շնորհվել է նաեւ 1997 հայրապետական օրհնության գիր:

Գաղտնիք չէ, որ դարեր շարունակ հայ ժողովուրդն իր հոգում պահել ու փայփայել է պետություն ու պետականություն ունենալու անասելի բաղձանքը: Այսօր այն իրականություն է, իսկ այդ իրականությունը կերտող ժողովրդի մեջ անգերազանցելի է Հայոց բանակի ներդրումը, ասել է թե՝ նաեւ զինվորականության, բանիմաց ու ինքնամոռաց սպայական կազմի նվիրումն ու ներդրումը: Ուստի պատահական չէ, որ Հայոց Եկեղեցու Գահակալի մեծարանքին են արժանանում նաեւ հայրենիքի պաշտպանները՝ մեր զինվորականները, ավելին՝ վիրավորում ստացած բազում զինվորներ Հայոց Հայրապետի աջակցությամբ են շարունակում իրենց հետագա բուժումը՝ անգամ օտարերկյա համապատասխան կլինիկաներում ու բուժական կենտրոններում:

Վազգեն Առաջինի գահակալման տարիներին՝ 1982 թ. հոկտեմբերի 11-ին, բացվեց «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատունը: Հայոց եկեղեցական արվեստի այս եզակի թանգարանում պահվում են դարերի խորքից մեզ հասած եզակի այն նմուշները, որոնք առավելապես պահպանվել են մեր վանական համալիրներում եւ եկեղեցիներում, ուր հիմնականում ստեղծվել են, անհատ մարդկանց տներում՝ բարուրված մետաքսի, կերպասի եւ ասեղնագործված թանկարժեք գործվածքներով՝ որպես սրբազան մասունքներ: Դրանք օտար զավթիչների ու թալանչիների աչքերին ու ձեռքերին անհաս մնացած մեր մեծ ժառանգության այն փշրանքներն են, որոնք լավագույնս վկայում են հայ ժողովրդի ստեղծագործ մտքի ու հանճարի մասին:

Բազմազան է գանձատան ցուցադրությունը՝ սրբապատկերներ, եկեղեցական հանդերձներ, վարագույրներ, խաչվառներ, սկիհի ծածկոցներ, գորգեր, վարդապետական, եպիսկոպոսական ու հայրապետական գավազաններ, եկեղեցածիսական սպասք, առարկաներ, հայ եւ օտարազգի նկարիչների գեղանկարչական ու գրաֆիկական գործեր, ժողովրդական արվեստի մեծարժեք նմուշներ:

Հայոց հայրապետների ու հոգեւորականության արվեստասիրության ոգին շարունակվում է: Վերջին

տարիներին կյանքի կոչվեց Խրիմյան Հայրիկի անունը կրող թանգարանը, որն առաջիկայում իր հարկի տակ է ընդունելու հայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու՝ Մայր Աթոռին նվիրաբերած գործերը: Այն ունենալու է արդի թանգարաններին հատուկ տեխնիկական բոլոր հնարավորությունները: Թանգարանն այսօր, շնորհիվ հայաստանցի եւ արտերկրում ապրող մեր հայրենակից նշանավոր արվեստագետների, նրանց ժառանգորդների եւ անհատ անձերի նվիրատվությունների, արդեն ունի 80 բարձրարժեք գործ:

Հաջորդ թանգարանը Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի օրոք հիմնված Մայր տաճարի թանգարանն է, ուր պահպանվում են մեր Եկեղեցու սրբազան մասունքներն ու եկեղեցական արվեստի անկրկնելի նմուշները:

Հին կաթողիկոսարանը՝ կառուցված Ղազար Ջահկեցի Կաթողիկոսի օրոք, շենքի վերականգնողական աշխատանքներից հետո վերածվեց կաթողիկոսական փակ թանգարանի, որը Մայր Աթոռի խիստ հետաքրքիր ու ինքնատիպ հավաքածուներից է: Հին Վեհարանի երկրորդ հարկում է գտնվում ընդունարանը, գահասրահը, որ կոչվում է նաեւ Ծաղկյա դահլիճ (որմնազարդել են Հովնաթանյան նկարիչները), Կաթողիկոսի պաշտոնական գրասենյակը, կաթողիկոսական բնակարանը, սեղանատունը եւ օժանդակ այլ սենյակներ: Պահպանելով Հին Վեհարանի ձեւավորումն ու կահավորանքը՝ թանգարանում պահպանվում են մեր լուսանուն հայրապետների անձնական իրերը, փաստաթղթերը, լուսանկարները: Մայր Աթոռում է գործում նաեւ Ռուբեն Սեւակի թանգարանը:

Վազգեն Վեհափառի գահակալության տարիներին, հիմնականում նվիրատվության կարգով, բազմաթիվ ձեռագրեր հանգրվանեցին Մայր Աթոռում՝ հիմք դնելով Մայր Աթոռի մատենադարանի, որը տեղակայված էր գանձատանը:

Իսկ 2012 թ. հոկտեմբերին արդեն Մայր Աթոռի տարածքում վեր խոյացած հրաշակերտ շինությունում տեղի ունեցավ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի բացումը:

Այսօր գրադարանն ունի 45 000-ից ավելի գիրք, այդ թվում՝ ավելի քան 325 կտոր հնատիպ գիրք:

Բացի զուտ գրադարանային աշխատանքից՝ կենտրոնն ունի նաեւ գիտական ուղղվածություն, այստեղ ընթերցողներն ստանում են համապատասխան տեղեկատվություն, մասնակցում տեղում կազմակերպվող բազում գիտաժողովների:

Շարունակելով ասենք՝ ցավալի, բայց փաստ էր, որ ավանդական Եկեղեցիները դարերի ընթացքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն միշտ էլ վերապահությամբ են վերաբերվել՝ չիմանալով կամ չուզենալով իմանալ Հայ Եկեղեցու ճշմարիտ Վարդապետության մասին: Այս բացը կարող էր լրացվել միայն միջեկեղեցական հարաբերությունների ընդլայնմամբ, համգործակցությամբ, համատեղ շփումների միջոցով: Սա հստակորեն գիակցեցին թե՛ Վազգեն Ա Հայրապետը եւ թե՛

Գարեգին Առաջինը: Սակայն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր գահակալության առաջին իսկ տարվանից սկսեց առավել ակտիվորեն ներգրավվել այս գործընթացում: Հաճախակի այցերը քույր Եկեղեցիների պետերին, նրանց հետ փոխընդունելի համաձայնագրերի ստորագրումը, համատեղ հայտարարությունները հիմք դրեցին նոր ու հետաքրքիր, փոխշահավետ հարաբերությունների՝ ի նպաստ ոչ միայն քրիստոնեական Եկեղեցիների փոխճանաչման ու ընդունման, այլեւ տարբեր աշխարհների փոխըմբռնման, փոխօգնության ու փոխադարձ հարգանքի, որոնց շնորհիվ էլ ստեղծվեցին առավել բարենպաստ հնարավորություններ՝ մարդկության առաջ ծառացած բարդ ու խրթին խնդիրները լուծելու համար:

Նման մոտեցումների եւ ակտիվ շփումների արդյունքում միայն վերջին 20 տարվա ընթացքում Հայաստան այցելեցին ոչ միայն ավանդական Եկեղեցիների գրեթե բոլոր գահակալները եւ իրենց խոնարհումը բերեցին մեր Եկեղեցու սրբություններին (մի բան, որ կրկին աննախադեպ էր), այլեւ Մայր Աթոռում հյուրընկալվեցին այլ կրոնների շատ առաջնորդներ: Պետք է խոստովանել, որ մեր ողջ պատմության ընթացքում նման երեւույթ երբեք չէր եղել:

Ուզում ենք անդրադառնալ մի փաստի եւս: Մենք սիրում ենք կրկնել, որ մշակութային ժողովուրդ ենք եւ մշտապես հպարտանում ենք մեր ոչ միայն միջնադարյան եկեղեցիներով ու վանքերով, ոչ միայն Մատենադարանով, այլեւ Ազգային պատկերասրահով, Ազգային գրադարանով, Պատմության թանգարանով եւ այլն՝ մոռանալով այն կարեւոր հանգամանքը եւս, որ պետական այս օջախներում հանգրվանած հավաքածուների գերակշիռ մասը Հայ Առաքելական Եկեղեցու սեփականությունն է եղել:

2015 թվականի ապրիլի 24-ին համայն հայությունը պատրաստվում էր վկայակոչել Հայոց ցեղասպանության 100-ամյակը՝ իր հարգանքի տուրքը մատուցելով թուրքական յաթաղանին զոհ գնացած միլիոն ու կես հայությանը:

2014 թ. նոյեմբերի 11—13-ը Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսաց ժողովը՝ գլխավորությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, քննության առավ Հայ Եկեղեցում սրբադասման կանոնի վերականգնման եւ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման հարցը եւ ընդունեց որոշում՝ 2015 թ. ապրիլի 23-ին կատարել ցեղասպանության զոհերի սրբադասման արարողություն՝ սահմանելով ապրիլի 24-ը իբրեւ «Յիշատակ սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս Ցեղասպանութեանն Հայոց վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:

Պետք է ընդունել, որ սա հիրավի պատմական եւ հույժ կարեւոր քայլ էր ոչ միայն մեր ժողովրդի, այլ ցեղասպանությունները մերժող մարդկության համար:

Սա նաեւ Հայ Եկեղեցու՝ իր նահատակ զավակների հիշատակի հանդեպ ունեցած ամենանվիրական վերաբերմունքի դրսեւորումն էր՝ 1921 թվականի Գեւորգ Ե Կաթողիկոսի՝ ապրիլ 24-ը «Տօն Ազգային-յիշատակ բիւրաւոր նահատակաց մերոց յընթացս համաշխարհային պատերազմին» սահմանումից եւ եկեղեցական օրացույց ներմուծումից ի վեր:

Անբարենպաստ հանգամանքների բերումով՝ մեզանում կանգ առավ վանական ծաղկուն կյանքի փորձառությունը, ինչը Եկեղեցու խիստ կարեւոր առաքելություններից մեկն է: Կորցրած ավանդույթի փշրանքներն ի մի բերելով՝ Նորին Սրբությունը տարիներ առաջ հիմք դրեց կանանց կուսանոցի վերականգնմանը, իսկ այսօր աշխատանքներ են տարվում վերականգնելու նաեւ արանց վանքերը: Սա եւս ոչ պակաս դժվարին գործ է, բայց Հայոց Հայրապետի անկոտրում կամքը հաշվի առնելով՝ այս մտահղացումը նույնպես անպայմանորեն կյանքի է կոչվելու:

Ուստի, մեր ավելի քան 1700-ամյա Եկեղեցուն՝ իր գործունեության ողջ կտրվածքով, ազգին տված իր գիտական, հոգեւոր ու մշակութային ողջ ժառանգությամբ բերել եւ այսօր մեզանում գործող այլ կրոնական կազմակերպությունների հետ իրավունքային մեկ հարթության

մեջ դնելը կնշանակի ունենալ կրկին անհեռատես ու հակաազգային քաղաքականություն: Համահարթեցումը վտանգավոր մտայնություն է, վտանգավոր քաղաքականություն:

Հայոց Եկեղեցուն աջ ու ձախ գանահարողները պետք է իմանան, որ աշխարհում չկա մի Եկեղեցի, որ թերություններ ու թերացումներ չունենա, քանզի Եկեղեցին կենդանի օրգանիզմ է՝ բաղկացած կենդանի՝ կատարելության ձգտող, բայց ոչ կատարյալ մարդկանցից: Մեր ճիպոտների տակ սեփական «անառակ որդու» պատկերը թաքցրած՝ կարող ենք գոհություն պարգեւել սոսկ մեր նմաններին, բայց ոչ Եկեղեցու ճշմարիտ զավակներին, քանզի ճշմարիտ զավակը նախընտրում է իր օգնությունն ու օգտակարությունը բերել ավելի ազնիվ միտումով ու ավելի ազնիվ ճանապարհով: Եկեղեցին ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր հոգեւոր Մեծ Տունը, եւ նրա ամրությունն ու հզորությունը մեզանից՝ նրա զավակներից են կախված եւ ոչ միայն Եկեղեցու գահակալից ու մի բուռ հոգեւորականներից: Ուստի հարկ է, որ մեկ-մեկ էլ մենք մեզ հարց տանք, թե ինքներս ինչ ենք անում՝ մեր ցանկալի տեսլականին հասնելու համար: Մեր ժողովրդի իմաստությունն ասում է. «Երկար ու դժվարին ճանապարհն անվտանգ ու ապահով անցնելու համար հավելյալ տրեխներ պետք է ունենաս»: Երբ ժամանակի անբարենպաստ ճանապարհներին կորցրեցինք մեր ամենակարեւոր «տրեխը»՝ պետականությունը, մեր «հավելյալ տրեխը» դարձավ Հայոց Եկեղեցին եւ բերեց-հասցրեց մեզ այսօրվան, իսկ, Աստված մի արասցե, վաղը... Մեր իսկ պատմությունն է մեզ հուշում, ինչու չէ՝ նաեւ պարտադրում մեր «հավելյալ տրեխը» աչքի լույսի պես պահպանելու անհրաժեշտության մասին:

Ուստի ամփոփելով ասենք, որ մեր Եկեղեցու գործունեության այս համառոտագրումը շատ բան կարող է ասել հայոց Հավատի Տան ու նաեւ նրա Հովվապետի անձի մասին, որը նախընտրում է իր կարողությունների ու հնարավորությունների սահմաններում աստվածսիրության ու հայրենասիրության իր ողջ պաշարը, իր դարավոր Եկեղեցու «սնունդը» ժողովրդին մատուցել իրական գործերով եւ ոչ թե կեղծահունչ ու սին քաղցրախոսությամբ, որը գիտակցաբար նախընտրում է լինել պետականության կողքին՝ անկախ նրանից, թե տվյալ պահին քաղաքական որ ուժն է վարում պետության ղեկը, քանզի Հայոց Հայրապետը քաջ գիտի, որ մեր պատմության լավագույն էջերը կերտվել են այն ժամանակ, երբ Եկեղեցին ու պետությունը գործել են միասնաբար, ձեռք ձեռքի տված:

Ուստի Եկեղեցին ազգի կյանքից դուրս մղելու, Եկեղեցին անհիմն հեղինակազրկելու անխոհեմ ու անհեռատես որոշ մարդկանց եւ ուժերի փորձերը մեկընդմիշտ ձախողված են: Ցավոք, նաեւ շատ ու շատ բաներ են ձախողված մեզանում, եւ այսօր կրկին մեզ անհրաժեշտ են «հավելյալ տրեխներ»: Մեզ անհրաժեշտ է ցախավելվել եւ ոչ թե խեղված ժողովրդավարության կացնի տակ ճյուղ առ ճյուղ թշնամու կրակի կպչոնը դառնալ:

«Ժողովրդավարության մեր ճանապարհը լուսավորված եւ ուղիղընթաց կլինի, երբ մեր կյանքի անկապտելի մասը դարձնենք Ավետարանի պատվիրաններն ու պատգամները, ապրենք քրիստոնեական արժեքներով, որոնցից հարկադրված հեռու ենք եղել տասնամյակներ շարունակ: Արդարությունը, օրենքն ու իրավունքը Աստծո եւ միմյանց հանդեպ մեր սիրո արգասիքներն են, որ մեր հոգիներից պիտի բխեն, որպեսզի իրականություն դառնան եւ առաջնորդեն հասարակական մեր կյանքը ու ամրապնդեն մեր պետականության հիմերը...

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, որ պատմության դժվարին ժամանակներում վառ է պահել ազատության սերը ժողովրդի հոգում եւ կրողը եղել ազգային պետականության վերականգնման տեսիլքի, իր ողջ կարողությամբ մշտապես զորակցելու է հայոց պետականության առաջընթացին ու հզորությանը՝ հավատարիմ իր դարավոր, նվիրական առաքելությանը Աստծո, Հայրենիքի եւ ազգի առջեւ» (Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս):

Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ՀԱՅՈՑ 132-ՐԴ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Հայոց պատմության ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցին իր վեհ կոչման մեջ միշտ հանդես է եկել որպես անփոխարինելի պատվար եւ ուժ նույնիսկ պատմական ամենաարյունալի իրադարձությունների հաղթահարման ճանապարհին: Հայոց Եկեղեցին փոխարինել է հայոց պետականությանը՝ դառնալով դպրության, մշակույթի, գիտության ու հավատի հենասյունը, եղել է հայ մարդու հայ մնալու սրբալույս ավազանը: Իր գմբեթների վեհությամբ, իր անշեջ կերոնների լույսով միշտ վառ է պահել ժողովրդի հավատի, հույսի հավերժության ջահը՝ այն հասցնելով մինչեւ մեր օրեր:

Դժվար կլիներ հայ ժողովրդի մաքառումը, անհնար՝ նրա գոյությունը, եթե պատմական դաժան ճակատագիր ունեցող ժողովրդին Աստված չպարգեւեր քրիստոնեական հավատի ու Եկեղեցու այնպիսի նվիրյալներ, ինչպիսիք եղան մեր հոգեւոր հայրերը, մեր ազգասեր ու հայրենանվեր կաթողիկոսները: Հավանաբար հենց այդտեղ էլ պիտի փնտրել մեր ժողովրդի՝ մոխիրներից վեր հառնելու առեղծվածի գաղտնիքը, քանի որ ապրելով թշնամի ժողովուրդներով շրջապատված աշխարհագրական անբարենպաստ տարածաշրջանում եւ ունենալով պատմական դաժան ճակատագիր՝ այսօր հայ ժողովուրդը կա, ապրում ու բարգավաճում է քաղաքակիրթ ժողովուրդների կողքին: Ապրում է որպես իրավահավասար եւ անկախ պետականություն ունեցող հնագույն ազգ: Եվ մեր գոյության, աշխարհին մեկնած մեր հավերժության հանճարի համար թերեւս պարտական ենք մեր անշեղ հավատին եւ այդ հավատի նվիրյալներին՝ մեր երջանկահիշատակ հայրապետների, բաձրաստիճան հոգեւոր այրերի սուրբ ու նվիրական փաղանգի շողշողուն դեմքերին: Իրենց կյանքն ու գործը լույս դարձրած՝ նրանք ուղղորդել են մեզ խավարի ու բռնությունների միջով՝ երբեք թույլ չտալով, որ անհավատությունը խառնվի մեր հավատին ու ինքնությանը…

Վերոնշյալ մշտահոլով ու նվիրական խոսքերն ասվել են հայոց գրեթե բոլոր հայրապետների հասցեին, ասվել են գրեթե բոլոր հայրապետների շուրթերից, եւ այդպես գեղեցիկ եւ ամուր կապերով հյուսվել է առ Աստված ձգվող հայոց հավատի հարյուր երեսուներկու ոսկյա օղակներից կազմված ամրակուռ շղթան:

Բազում են մեր ազնվության վկայականներն աշխարհի առաջ, եւ այդ վկայությունների խտացումը մեր քրիստոնեական հավատն է, մեր Եկեղեցին, նրա տարիքը եւ նրա հոգեւոր այրերի վարքը, այն երեւելիների, որոնք, ազգի ու պետության հետ ձեռք ձեռքի տված, անցել են մեզ բաժին հասած ամենաանհավանական փորձությունների ու փոթորիկների միջով՝ ժողովրդի պատմության նավը դուրս հանելով բարեհուսո ափ:

Ահա այս նույն գերազնիվ առաքելությամբ էլ հանդես եկավ Գարեգին Երկրորդ Հայրապետը՝ հայոց հավատի երկնահաս շղթայի հարյուր երեսուներկու ոսկե օղակը՝ ի վերուստ օժտված ժողովրդի հոգու եւ մտքի թարգմանը լինելու դժվարին, բայց աստվածընծա շնորհով:

Հայոց 132-րդ Հայրապետը գահ բարձրացավ հայ ժողովրդի եւ հայկական պետականության համար խիստ ծանր ու պատասխանատու իրավիճակում: Ընտրության օրը՝ հոկտեմբերի 27-ին, Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչության հետեւանքով սպանվեցին պետական այրեր՝ Ազգային ժողովի նախագահը, վարչապետը եւ քաղաքական այլ գործիչներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 1999 թ. հոկտեմբերի 26—28-ը տեղի ունեցած ազգային-եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Գարեգին արք. Ներսիսյանը՝ վերանվանվելով Գարեգին Երկրորդ:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծնվել է 1951 թ. Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում: Նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում: 1965 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարան: 1970 թ. դեկտեմբերի 25-ին՝ Սուրբ Ստեփանոս Նախասարկավագի տոնի օրը, ձեռնադրվել սարկավագ: 1971 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանը եւ նշանակվել տեսչի օգնական՝ միաժամանակ դասավանդելով «Նոր Կտակարան» առարկան: 1972 թ. Տիրան արք. Ներսոյանի ձեռամբ ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Գարեգին աբեղա: Նույն թվականին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ մեկնել է Վիեննա՝ ուսումը շարունակելու Վիեննայի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում: 1975 թ. նշանակվել է Գերմանիայի հայ համայնքի հոգեւոր հովիվ, միաժամանակ շարունակել աստվածաբանական ուսումը Բոննի համալսարանում:

1979 թ. վերադարձել է Մայր Աթոռ եւ Վազգեն Ա Կաթողիկոսի տնօրինությամբ մեկնել Զագորսկ՝ ուսումնառությունը շարունակելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր ակադեմիայի ասպիրանտուրայում: 1980 թ. նշանակվել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնական, 1983 թ. ապրիլին՝ առաջնորդական փոխանորդ: Նույն

տարվա հոկտեմբեր ամսին ձեռնադրվել է եպիսկոպոս, իսկ 1992 թ.՝ ստացել արքության պատիվ եւ տիտղոս: 1989 թ. Արարատյան հայրապետական թեմի հովանու ներքո Գարեգին արք. Ներսիսյանը հիմնել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը:

1992 թ. նրա ջանքերով մայրաքաղաքում գտնվող նախկին պիոներ-պալատներից երեքը վերակազմավորվել են իբրեւ հայորդյաց տներ, որտեղ հազարավոր երեխաներ ստանում են հոգեւոր ու գեղագիտական կրթություն: 1990 թ. Արարատյան հայրապետական թեմում հիմնել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, որը համակարգում է Եկեղեցու կողմից թեմի տարածքում իրականացվող քրիստոնեական դաստիարակությունը հանրակրթական 56 կիրակնօրյա դպրոցում: 1990 թ. Նորին Սրբությունը Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ է: 1995 թ.՝ կաթողիկոսական ընտրության ժամանակ, Գարեգին արք. Ներսիսյանը հավանական թեկնածուներից մեկն էր: Ընտրության երրորդ փուլում նա հանեց իր թեկնածությունը՝ հօգուտ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի: 1998 թ. Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից նշանակվել է կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ: 1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովում ընտրվել է Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս, իսկ նոյեմբերի 4-ին ստացել է կաթողիկոսական ձեռնադրություն եւ օծում:

Գարեգին Բ Հայրապետն առ այսօր պարգեւատրվել է Հորդանանի բարձրագույն՝ Ա. կարգի շքանշանով (2000 թ.), «Բեթղեհեմ—2000», Ռումինիայի ազգային բարձրագույն պարգեւով՝ «Ռումինիայի աստղ» շքանշանով (2000 թ.), Ուկրաինայի Հանրապետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» 5-րդ աստիճանի շքանշանով (2001 թ.), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի կոմանդորի (2001 թ.), Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Անդրեաս առաքյալի բարձրագույն շքանշանով (2004 թ.), Ռուսաստանի Դաշնության «Բարեկամության շքանշանով» (2006 թ.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով (2007 թ.), Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2009 թ.):

2009 թ. պարգեւատրվել է «Ուղղափառ ժողովուրդների միասնության ամրապնդման գործում հատկանշական գործունեության, հասարակության կյանքում քրիստոնեական արժեքների հաստատման եւ ամրապնդման համար» Ալեքսի Բ Պատրիարքի անվան մրցանակով: 2001 թ. Նորին Սրբությանը շնորհվել է Արցախի պետական համալսարանի, իսկ 2004 թ.՝ Երեւանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: Միջազգային ինֆորմատիզացիայի ակադեմիայի եւ ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի կողմից Վեհափառ Հայրապետն առաջադրվել է վերոհիշյալ ակադեմիայի անդամ, իսկ 2001 թ. ակադեմիայի տնօրինության կողմից Նորին Սրբությանը շնորհվել է փիլիսոփայության դոկտորի կոչում: 2003 թ. Ամենայն Հայոց Հայրապետին շնորհվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամի կոչում: 2008 թ. Նորին Սրբությանը շնորհվել է Սալեզիանի Պապական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Նորին սրբությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, Հայկական բարեգործական ընդհանուր միության հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամ, ինչպես նաեւ «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի նախագահն է:

Հայրապետական անդրանիկ՝ 2000 թ. փետրվարի կոնդակում անդրադառնալով հոկտեմբերի 27-ի ողբերգությանը՝ Գարեգին Բ-ն համազգային մտահոգության եւ անձնական պատասխանատվության կոչով դիմեց հանրությանը՝ հաղթահարելու ներքաղաքական լարվածությունը, ամրապնդելու երկրի կայունությունն ու անվտանգությունը՝ որպես հետագա զարգացման եւ առաջընթացի հիմնարար պայման:

Կարելի է անվերջ խոսել Վեհափառի վաստակի, գործունեության եւ թողնելիք ժառանգության մասին: Մեզանում նա մնում է որպես իմաստուն ու նվիրյալ Հայրապետ, օտարների համար՝ որպես էկումենիկ շարժման,

քույր Եկեղեցիների հետ համագործակցության ու երկխոսության խորացման ջատագով, որպես հզոր կամքի եւ ոգու տեր անհատականություն, որի պայքարի անդաստանը հոգեւոր ծառայությունն է: Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետը եկավ՝ կատարելու պատմականորեն կարեւորագույն եւ ազգանպաստ մի առաքելություն, որի մեջ իրենց հովվապետական անմնացորդ ու անձնուրաց նվիրումն էին բերել Հայ Առաքելական Եկեղեցու հայրերը, մեր լուսավոր ու արժանահիշատակ հովվապետերի մի ամբողջ լուսասփյուռ ու ջինջ համաստեղություն՝ սկսած առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոս սուրբ Գրիգոր Լուսավորչից: Գարեգին Երկրորդը գահին բազմեց՝ իբրեւ արժանի հաջորդն իր նախորդների, իբրեւ Հայոց Հայրապետական Աթոռի երախտագետ ու խոնարհ ժառանգորդը:

Նա գահակալությունից կարճ ժամանակ անց ուխտագնացության է մեկնել տերունական սրբավայրեր՝ Հորդանան ու Երուսաղեմ:

Գահակալությանը հաջորդող ամիսներից սկսվեցին Գարեգին Բ Հայրապետի հովվապետական այցելությունները Հայոց Եկեղեցու թեմեր: Նորին Սրբությունը եղավ Շիրակի եւ Արցախի (հուլիս, սեպտեմբեր, 2000 թ.), ԱՄՆ-ի արեւմտյան, Կանադայի եւ ԱՄՆ-ի արեւելյան հայոց թեմերում (մայիս, 2001 թ.)՝ ամենուր իր ներկայությամբ եւ օրհնությամբ մխիթարություն եւ հոգեւոր խնդություն բերելով հավատավոր բազմահազար հայորդիներին:

Նորին Սրբությունն այցելել է նաեւ Ֆրանսիա (դեկտեմբեր, 2001 թ.) եւ Ավստրիա (նոյեմբեր, 2001 թ.): 2004 թ. մայիսի 4—25-ը Գարեգին Բ Կաթողիկոսը հովվապետական անդրանիկ այցով եղավ Հարավային Ամերիկայի հայոց թեմերում՝ իր այցելությամբ հոգեւոր նոր վերազարթոնք եւ խանդավառություն պարգեւելով տեղի հայ հավատացյալ ժողովրդին: Նույն թվականի հունիսի 14—18-ը Վեհափառ Հայրապետը հովվապետական այցով եղավ նաեւ Անգլիայում:

Վեհափառ Հայրապետը հովվապետական այցերով եղել է նաեւ հայաստանյան թեմերում՝ ամենուր իր

նշանակալի այցելություններով հոգեւոր աշխուժություն, մխիթարություն եւ հայրապետական օրհնություն բերելով հավատավոր հայորդիներին:

Լինելով իմաստուն ու նվիրյալ Հայրապետ՝ Հայոց Հայրապետը մեծ դերակատարում է ունեցել Հայ եւ Ռուս Եկեղեցիների հարաբերությունների զարգացման գործում: 2000 թ. Ալեքսի Բ Պատրիարքի հրավերով Գարեգին Բ Կաթողիկոսի՝ Մոսկվա կատարած այցից հետո՝ 2001 թ., Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետն այցելեց Հայաստան՝ պաշտոնապես մասնակցելու Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված միջոցառումներին: 2000 թ. Ռուս Եկեղեցու երջանկահիշատակ Ալեքսի Բ Պատրիարքը մասնակցել է Ս. Պետերբուրգի Սուրբ Կատարինե եկեղեցու օծման արարողությանը, Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու օծմանը: 2004 թ. Ալեքսի Բ Պատրիարքը Ամենայն Հայոց Հայրապետի հետ մասնակցել է Մոսկվայում վեր խոյացող հայկական Սուրբ խաչ եկեղեցու հիմնարկեքին:

Երկու միլիոն հայ է ապրում Ռուսաստանում: Հայ Եկեղեցին այս երկրում ունի թեմեր՝ բազմաթիվ եկեղեցիներով, կրթական ու մշակութային

հաստատություններով: Հայ հոգեւորականները համագործակցում են Ռուս Եկեղեցու սպասավորների հետ, նրանց հետ կազմակերպում կրթական, մշակութային միջոցառումներ: 2011 թ. Գյումրու ռուսական զորամասում վերաբացվեց 1920 թ. թուրքերի հրկիզած եկեղեցին:

Վերոնշյալ հարաբերություններում կարեւոր ու վճռորոշ նշանակություն ունեն երկու Եկեղեցիների պետերի բարեկամությունն ու եղբայրական կապերը, փոխայցելությունները, համատեղ անցկացրած միջոցառումները:

Միջեկեղեցական կապերի ամրապնդման նպատակով Վեհափառ Հայրապետն այցելել է քույր Եկեղեցիներ եւ նրանց պետերին: Նորին Սրբությունն այցելել է Ռուս Ուղղափառ Եկեղեցի եւ նրա գահակալ՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ին (2000 թ.), Վրաց Ուղղափառ Եկեղեցի եւ նրա գահակալ Իլյա Բ Կաթողիկոս-Պատրիարքին (2000 թ.), Ռումին Օրթոդոքս Եկեղեցի եւ նրա գահակալ Թեոկտիստ Պատրիարքին (2000 թ.), Ղպտի Ուղղափառ Եկեղեցի եւ նրա գահակալ Շենուդա Գ Պատրիարքին (2000 թ.), Եթովպիայի Թեւահեդո Եկեղեցի եւ նրա գահակալ Աբունա Պաուլոս Պատրիարքին (2000 թ.), Հռոմի Կաթոլիկ Եկեղեցի եւ նրա գահակալ Հովհաննես Պողոս Բ Պապին (2000 թ.), Բուլղար Ուղղափառ Եկեղեցու գահակալ Մաքսիմ Պատրիարքին (2002 թ.), Անգլիական Եկեղեցու գահակալ դր. Ռոուան Վիլյամսին (2004 թ.):

Վեհափառ Հայրապետը հանդիպել է նաեւ օտար կրոնների ներկայացուցիչների եւ կրոնապետերի հետ: 2000 թ. Նյու Յորքում Գարեգին Բ Հայրապետը մասնակցել է ՄԱԿ-ի կազմակերպած կրոնական առաջնորդների՝ հազարամյակի Խաղաղության համաշխարհային կոնֆերանսին եւ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում զեկուցում կարդացել «Դեպի ներողամտություն եւ հաշտություն» թեմայի շրջանակներում:

Առ այսօր Նորին Սրբությունը հանդիպել է Ալ Ազհարի շեյխ մեծ իմամ Ալ Թանտաուիի, Եգիպտոսի Հանրապետության մուֆթիի, Կովկասի մուսուլմանների հոգեւոր պետ շեյխ ուլ-իսլամ Ալլահշյուքյուր փաշա Զադեի հետ:

Թերթելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի կյանքի ու հոգեւոր գործունեության լուսավոր էջերը՝ մենք հաղորդակից ենք դառնում Հայ Առաքելական Եկեղեցու ամենանվիրական անձանցից մեկի վարքին, Հայոց Եկեղեցու ականավոր եւ արժանահիշատակ հոգեւոր այրերից մեկին:

Գահակալության գալով պատմական բարդ ու խռովահույզ ժամանակաշրջանում՝ Կաթողիկոսը մեծ ճիգերի եւ անձնազոհ վարքի շնորհիվ իր ուսերի վրա կրեց ծանր խաչը: Կարծում ենք՝ Գարեգին Երկրորդը, գահակալելով 22 տարի, իր ազգանվեր գործունեությամբ ու վարքով Հայոց Եկեղեցու պատմության մեջ գրավել է ամենապատվավոր տեղերից մեկը՝ դառնալով հավատի հզոր հենայուներից մեկը, որի շնորհիվ կանգուն է մեր Եկեղեցին: Անուրանալի են նրա ջանքերն ու գործը հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, հոգեւոր նշանավոր գործիչների աշխատությունների հրատարակման, հոգեւոր-կրթական հաստատությունների արդյունավետ կազմակերպման գործում:

Գարեգին Բ Հայրապետի գահակալության օրոք միանշանակ առաջընթաց ապրեցին Հայոց Եկեղեցու հոգեւոր-կրթական հաստատությունները: Վեհափառ հոր ջանքերով վերաշխուժացան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթարանները՝ Հառիճի ընծայարանը, Սեւանի Վազգենյան դպրանոցը եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը: Հոգեւոր կրթարանների առաջընթացը կապված էր հատկապես բարձրակարգ դասախոսների ընտրության եւ ուսումնական նոր ծրագրերի մշակման հետ, որոնք կատարվեցին Գարեգին Բ Հայրապետի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական հագեցած ծրագիրը նկատի ունենալով, ինչպես նաեւ արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաների ուսումնառությունը շարունակելու հնարավորությունն առավել ընդլայնելու նպատակով՝ Նորին Սրբությունը դիմեց ՀՀ կառավարությանը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը ճանաչելու որպես բարձրագույն ուսումնական հաստատություն:

Արդյունքում Գեւորգյան հոգեւոր ճեմարանը դարձավ պետականորեն ճանաչված աստվածաբանական համալսարան, իսկ Հառիճի ընծայարանը եւ Վազգենյան դպրանոցը դարձան նրա մասնաճյուղերը՝ Շիրակի եւ Գեղարքունյաց թեմերում: Այս ամենը, ինչ խոսք, պամանավորված էր Կաթողիկոսի անձով, սակայն չպետք է մոռանալ պատմական այն հանգամանքներն ու իրավիճակը, որում հայտնվել էր Հայաստանը 20-րդ դարասկզբին:

Վեհափառ Հայրապետը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսուցչապետն է: Վեհափառ Հայրապետի մանկավարժական-դասախոսական գործունեությունն սկսվել է դեռեւս սարկավագության տարիներից: Ներկայումս Նորին Սրբությունը ճեմարանում դասախոսում է «Քարոզխոսություն» առարկան՝ իր սաներին սովորեցնելով Աստծու խոսքի քարոզչության եւ հոգեւոր ճշմարտությունները հավատացյալներին մատուցելու սկզբունքներն ու միջոցները: Ամենատարբեր առիթներով իր քարոզներում եւ զրույցներում նա հազարաձայն ու հազարաձեւ հոլովույթներով կրկնում էր Հայ Եկեղեցու եւ հայ մարդու հավատի պահպանման ու ամրապնդման աստվածահաճո առաքելությունը:

Նորին Սրբությունը մեծապես կարեւորում է ճեմարանավարտների կրթության շարունակումն այլ երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հոգեւոր-կրթական հաստատությունների հետ սերտ աղերս ունեն հայորդյաց տները: Հմուտ ուսուցիչների եւ մանկավարժների ջանքերով առավել զարգանում են հայորդյաց տներ հաճախող երեխաների ու պատանիների ստեղծագործական ունակությունները, միաժամանակ նրանք ստանում են նաեւ քրիստոնեական դաստիարակություն:

Գահակալության առաջին իսկ տարում Վեհափառ Հայրապետը հիմնադրեց Գարեգին Ա-ի անվան աստվածաբանական-հայագիտական կենտրոնը, «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը, որի հարուստ գրադարանը մեծապես նպաստում է Մայր Աթոռի միաբանների գիտական եւ աստվածաբանական մտքի զորացմանը: Կենտրոնում աշխատելու եւ գրականության հարուստ հավաքածուից օգտվելու հնարավորություն է ընձեռվել նաեւ հայ եւ օրտարազգի մտավորականությանը: Գարեգին Երկրորդը շատ բան վերափոխեց Հայաստանյաց Եկեղեցու կամարների ներսում: Նրա օրոք հիմնվեցին նոր թեմեր: Գարեգին Երկրորդն իր գործունեությամբ շենացրեց Հայ Առաքելական Եկեղեցու անդաստանը՝ դառնալով մեր միասնության, համերաշխության, փոխըմբռնման, կիսատ երազների իրականացման առաքյալը:

2001 թվականը յուրատեսակ նշաձող էր Հայ Եկեղեցու անցած 1700-ամյա ճանապարհին: 1700-ամյա հոբելյանը նշվեց Հայոց Եկեղեցու եւ ողջ քրիստոնյա աշխարհի կողմից: Գարեգին Երկրորդ Հայրապետը դարձավ Հայաստանը Սփյուռքի հետ կապող այն օղակը, որը հավերժացրեց քրիստոնեության ընդունման 1700-ամյակի հոբելյանը՝ որպես ամբողջ աշխարհի քրիստոնյա մարդկության վերածննդի տոն:

Հոբելյանական տարվա ընթացքում եղան ուխտագնացություններ, հանդիպումներ, գիտաժողովներ,

կրթամշակութային բազմաթիվ միջոցառումներ: 1700-ամյակի ծիրից ներս միջոցառումներից հիշատակելի է Գարեգին Բ Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր (2001 թ. ապրիլ), որտեղ՝ Ս. Նահատակաց եկեղեցում, Հայոց Հայրապետը մատուցել է սուրբ Պատարագ: 2001 թ. հուլիսին Վեհափառ Հայրապետն աշխարհասփյուռ հայ երիտասարդներին կոչ արեց համախմբվելու Սուրբ Էջմիածնում իբրեւ ուխտավորներ: Պատմական նշանակություն ունեցող երիտասարդական ուխտագնացությանը իր մասնակցությունը բերեց Հայաստանի եւ Սփյուռքի ավելի քան 2000 երիտասարդ: Նույն թվականի սեպտեմբեր ամսին Նորին Սրբությունը հյուրընկալեց քրիստոնեական Եկեղեցիների հոգեւոր պետերին, որոնք իրենց մասնակցությունը բերեցին 1700-ամյակի առթիվ կազմակերպած տոնակատարություններին: 2003 թ., Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ, մեծ շուքով նշվեցին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700-ամյակը եւ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագրքի 1000-ամյակը:

Գարեգին Բ Հայրապետի գահակալությունից հետո օծվել են նորանոր եկեղեցիներ, դրվել են նոր եկեղեցիների հիմքեր:

Վեհափառ Հայրապետի ձեռամբ մասնավորապես օծվել են Սպիտակի Ս. Հարություն, Երեւանի Ս. Սարգիս, Վայքի Ս. Տրդատ, Տաշիրի Ս. Սարգիս, Մալիշկայի Ս. Աննա, Չարենցավանի Ս. Ամենափրկիչ, Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի, Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց, Առինջի Ս. Աստվածածին, Գյումրիի Ս. Հակոբ, Մարմարաշենի Ս. Գեւորգ նորակառույց եկեղեցիները, ինչպես նաեւ Երեւանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու զանգակատունը, Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկ քաղաքի Ս. Սարգիս, Պյատիգորսկ քաղաքի Ս. Սարգիս, Լվովի Ս. Աստվածածին եկեղեցիները: Վերասրբազործվել են Դվինի Ս. Հարություն, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե, Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցիները, Սաղմոսավանքը, Ծաղկաձորի Կեչառիսի վանական համալիրը, Լոնդոնի Ս. Եղիշե, Ապարանի Ս. Խաչ եկեղեցիները: Վեհափառ Հայրապետի ձեռամբ վերասրբազործվել են ՀՀ Մասիս քաղաքի Ս. Թադեոս եկեղեցու հիմքերը:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում կառուցվել են Բաց խորանը եւ Սուրբ Էջմիածնի նոր գլխավոր մուտքը, որը կրում է ս. Գրիգոր Լուսավորչի անունը: 2001 թ. սեպտեմբերի 23-ին Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարվել է Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծումը:

Կաթողիկոսի հայրապետության օրոք բարենորոգվել եւ վերակառուցվել են խոնարհված բազմաթիվ եկեղեցիներ: Կաթողիկոսը հաճախ անձամբ հետեւել է շինարարական աշխատանքների ընթացքին եւ ոգեշնչել շինարարներին: Եկեղեցաշինական հսկայածավալ աշխատանքներն առ այսօր շարունակվում են ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի:

Թումանյանական զորություն կա նրա մեջ, որը մեր ազգային հույզերի, զգացումների ու խոհերի արդյունք է: Նա չի դավաճանել ազգային ոգուն: Հայոց Հայրապետի բնորոշմամբ «գործը մարդու երկրային անմահության այցեքարտն է»: «Երկնային անմահություն Աստված շնորհում է բոլորին, մեծ կոչենք նրան, որն իր գործով կարժանանա նաեւ երկրային անմահության…»,— տիեզերքում հնչում են անմահ լոռեցու խոսքերը: Հենց այս խոսքով էլ առաջնորդվում է Գարեգին Երկրորդը՝ իրականացնելով եկեղեցաշինական լայնածավալ գործունեություն:

Գարեգին Երկրորդը Մայր Աթոռում բացված Քրիստոնեական քարոզչության եւ դաստիարակության կենտրոնի միջոցով տարածել է քրիստոնեական լույսը: Կաթողիկոսի ջանքերով մեծ թափ առավ քրիստոնեական գրականության հրատարակման գործը: Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ տպագրվել է կրոնաճանաչողական, հայագիտական, գրական-պատմական շուրջ 400 գիրք: Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը լույս է ընծայել «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը: Նշանակալից երեւույթ

պիտի համարել Մ. Օրմանյանի «Ազգապատում» մենագրության վերահրատարակությունը 2001 թ.:

2009 թ. Էջմիածնում հրատարակվեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի «Ազատություն եւ պատասխանատվություն» գրքի հայերեն թարգմանությունը:

2010 թ. գարնանը տեղի ունեցավ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի այցը Հայաստանի Հանրապետություն: Նրա երկու արժեքավոր աշխատությունները թարգմանվել են հայերեն եւ պահվել Սուրբ Էջմիածնի թանգարանում:

Գարեգին Երկրորդը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կարեւոր քայլ է համարում ազգային առաջնահերթ նպատակին հասնելու ճանապարհին: Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը՝ որպես արդարության իրագործման եւ իրավունքների հաստատման ազդեցիկ օրինակ, կնպաստի ապահով ու արդար աշխարհի կերտմանը:

Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Վատիկանում՝ Սուրբ Պետրոսի տաճարում, Հռոմի Ֆրանցիսկոս Պապի կողմից մատուցված Պատարագի ընթացքում ասված իր խոսքում ընդգծել է.

«Այս իմաստով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հրավեր է աշխարհին անտարբեր չցոնվելու մարդկային տառապանքի ու նորօրյա նահատակությունների հանդեպ եւ գործադրելու առավել ջանքեր՝ դադարեցնելու եւ կանխելու համար մարդկության դեմ գործվող ոճիրները: Սա է այն պտուղը, որ պիտի աճի նահատակության արմատից:

...Նարեկացի ծնած մեր ժողովուրդը քրիստոնեական հավատքի եւ ազգային ինքնության համար իր պատմության ընթացքում բազում արհավիրքներ է տեսել, փորձությունների դիմակայել: Մեկ դար առաջ Օսմանյան Թուրքիայում մեր ժողովրդի հանդեպ իրագործվեց ցեղասպանության ահռելի ոճիրը: Կանխամտածված ծրագրով, աննկարագրելի դաժանությամբ սպանվեցին մեկ եւ կես միլիոն հայեր: Հինավուրց մեր ժողովուրդը արմատախիլ արվեց իր նվիրական բնօրրանից՝ պատմական հայրենիքից եւ տարագիր ստիպվեց տարբեր երկրներում: Ավերվեց, ոչնչացվեց, բռնագավթվեց քրիստոնեական մեր դարավոր ժառանգությունը,— հայտարարել է Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շարունակելով.— Ոչինչ, սակայն, ո՛չ տառապանք, ո՛չ հալածանք, ո՛չ անգամ մահ չսասանեցին մեր ժողովրդին եւ չհեռացրեցին իր սուրբ հավատքից: Ազգովի նահատակության հոգեւոր սխրանքի ողջ մեծությունն է այսօր պատկերվում մեր առջեւ, որը դրսեւորեց մեր ժողովուրդը՝ կրկին հռչակելով դեռեւս 5-րդ դարում սահմանած իր ինքնության բանաձեւը, որ քրիստոնեությունն ունենք ոչ իբրեւ հանդերձ, այլ իբրեւ մաշկի գույն (Եղիշե պատմիչ):

...Աստծո գթառատ ողորմությամբ մեր ժողովուրդը ուղղել է եղեռնահար մեջքը, նոր կյանք վերընձյուղել Սփյուռքի համայնքներում եւ Հայաստանի արեւելյան հատվածում վերականգնված պետականության հովանու ներքո: Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերտել է՝ դիմակայելով բազում զրկանքների ու դժվարությունների: Այսօր էլ մեր ժողովուրդն ապրում է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման մեջ, պայքարում Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ կյանքի համար եւ արդարության հաղթանակի հավատով շարունակում ջանքերը հանուն իր իրավունքների, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման եւ իր արդար պահանջատիրության:

...Ժամանակին մարդկությունը չկարողացավ կանխել Հայոց ցեղասպանությունը, վերացնել դրա հետեւանքները եւ ականատեսը եղավ Հոլոքոստի, Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի եւ այլ ցեղասպանությունների: Այսօր էլ հակամարտությունների, պատերազմների, ահաբեկչությունների պատճառով մարդիկ ու ազգեր նեղության ու կարոտության մեջ են, հալածվում ու իրենց կյանքով են վճարում հավատքի համար,— նկատել է Գարեգին Երկրորդը:

...Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով մատուցված այս Սրբազան Պատարագին, մեր նահատակների նվիրական հիշատակի առջեւ մենք երախտագետ զգացումով ենք անդրադառնում, որ Ձերդ Սրբության

երանաշնորհ նախորդներից Բենեդիկտոս 15-րդ Պապը բողոքի ձայն բարձրացրեց ընդդեմ հայերի ցեղասպանության, իսկ սուրբ Հովհաննես Պողոս Երկրորդ Պապը Մեզ հետ համատեղ հայտարարությամբ 2001 թվականին ճանաչել եւ դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Այս առումով կարեւոր նշանակություն ունի նաեւ Վատիկանի արխիվներում պահվող փաստաթղթերի հրապարակումը: Մեր ժողովուրդը շնորհակալությամբ է հիշում բոլոր նրանց, ովքեր ոչ միայն բարձրաձայնեցին Հայոց ցեղասպանության մասին եւ դատապարտեցին, այլ նաեւ մարդասիրական առաքելություններ իրականացրեցին՝ խնամելով որբերին, ապաստան տալով վերապրածներին, օգնելով հաղթահարել բազմատեսակ դժվարությունները»:

Նա հայտնել է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ապրիլի 23-ին աղոթական մասնակցությամբ քույր Եկեղեցիների, բարձրաստիճան հյուրերի ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բազմահազար զավակների՝ սրբադասվելու են վասն հավատո եւ վասն հայրենյաց մարտիրոսության պսակն ընդունած մեր բյուրավոր նահատակները:

Պատարագի ժամանակ խոսքով է հանդես եկել նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Առաջին Կաթողիկոսը: Սրբազան արարողության ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու հայրերից սուրբ Գրիգոր Նարեկացին Կաթոլիկ Եկեղեցու կողմից հռչակվել է «Եկեղեցու վարդապետ»:

Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվել է հոգեհանգստյան արարողություն՝ Մեծ եղեռնի նահատակների համար:

Պետություն—Եկեղեցի հարաբերություններում որոշակի փոփոխություններ նկատվեցին 2018 թվականի մայիսից, երբ Թավշյա հեղափոխությունից հետո անտեսվեցին ազգային արժեքները, եւ որոշակի խմբերի կողմից շարժում սկսվեց Հայոց Հայրապետի դեմ: Հարց բարձրացվեց հանրակրթական դպրոցի պարտադիր առարկայացանկից հանել «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան: Հայոց արժեքների պահպանման համար պայքարում Հայոց Հայրապետը կարողացավ դիմագրավել այդ ուժերին եւ տեղի չտվեց՝ մնալով հաստատակամ մինչեւ վերջ:

2019 թ. հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում անցկացվող «Եկեղեցին եւ ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ եւ մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովի ժամանակ Գարեգին Երկրորդն ընդգծեց հայոց արժեքային համակարգում ընտանիքի առանցքային դերը. «Արդի աշխարհում վտանգվում են ընտանիքի եւ նրա առաքելության մասին ընկալումները: Տարածում են գտնում ընտանիքի նվիրական գաղափարն աղճատող եզրույթներ եւ հասկացություններ,

որոնք ներկայացվում են իբրեւ ժամանակակից կյանքի թելադրանքներ: Մտայնության ու բարքերի այսօրինակ այլափոխումը հաճախ քողարկվում է անհատի ազատության եւ իրավունքների լույսի ներքո՝ խեղաթյուրելով ընտանեկան կյանքի իրական արժեքն ու բացառիկությունը:

Եկեղեցու տեսակետներն ընտանիքի վերաբերյալ հիմնված են ոչ թե մարդկային փոփոխվող կենսակերպի եւ մտայնությունների, այլ Աստծու կենարար խոսքի ու հայտնության վրա: Ընտանիքի մասին քրիստոնեական վարդապետությունը ձեւավորվել է աստվածադիր օրենքի համաձայն՝ հաստատելով ամուսնության սրբությունն ու արժեքը (Եբր. ԺԳ 4): Սուրբ Գիրքը հստակ ընդգծում է ամուսնության եւ ընտանիքի նվիրականությունն ու նպատակները: Աստված ստեղծեց մեր նախածնողներ Ադամին եւ Եվային այր ու կին (Ծնն. Ա 28): Տղամարդու եւ կնոջ միության սրբագործությամբ Տերն ընտանիքը դարձրեց նվիրական օջախ, որի հարկից ներս արարչագործությունն է շարունակվում: Եկեղեցին Սուրբ պսակի խորհրդով օրհնում է ընտանիքի կազմությունը:

...Ընտանիքի առջեւ ծառացած հիմնախնդիրները վեր հանելու, անդրադարձ կատարելու եւ հաղթահարելու տեսլականով Մենք 2019 թվականը հռչակեցինք Ընտանիքի տարի, որպեսզի այդ առումով իրագործվեն առավել նպատակային քայլեր ու նախաձեռնություններ:

…Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իրականացնում է սոցիալական մի շարք ծրագրեր: Մայր Աթոռի միաբանական ժողովի մասնակիցներն այցելել են Հայաստանի տարբեր շրջաններում ապրող կարիքավոր ընտանիքներին՝ բերելով իրենց օրհնությունն ու Եկեղեցու նյութական աջակցությունը: …Այս ծրագրերը շարունակական են, որոնց ընթացքը պիտի նշանավորվի ամավերջին՝ ընտանիքների օրհնության հատուկ արարողությամբ»:

Հայ ժողովրդին ու նրա Հայրապետին մեծ վիշտ պատճառեց Արցախյան 44-օրյա պատերազմը: 2020 թ. դեկտեմբերին Սուրբ Գայանե վանքում Վեհափառը ներկա է գտնվել սուրբ Պատարագին, որի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, զոհված հերոսների համար կատարվել է հոգեհանգստյան արարողություն: Արարարողությունից հետո Նորին Սրբությունն իր խոսքն է ուղղել հոգեւոր դասին, ներկա բարեպաշտ հավատացյալներին եւ համայն հայ ժողովրդին.

«Այսօր վերստին ոգեկոչում ենք լույս հիշատակը հայրենիքի համար զոհված մեր զինվորների, աշխարհազորայինների եւ զորահրամանատարների, որոնք արցախյան պատերազմում խիզախաբար պայքարեցին անարգ թշնամու դեմ եւ իրենց թանկագին արյան հեղումով ընդունեցին նահատակության անթառամ պսակը: Քաջարի սխրագործություններով նրանք անմահացան մարտի դաշտում եւ ժառանգեցին հավիտենական կյանքի պարգեւը, ինչպես խոստացավ մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ ասելով. «Արդ, Ես նրանց հավիտենական կյանք կտամ, եւ նրանք հավիտյան չեն կորչի» (Հովհ. Ժ 28):

Տերունավանդ խոստումին ապավինած՝ մեր սիրասուն զավակներն իրենց կյանքն ընծայեցին հայրենիքին եւ անօրինակ սխրանքներով զարդարեցին հայոց ազատամարտի նորագույն էջերը: Հայ ժողովուրդը կրկին հերոսներ ծնեց, ովքեր բարձր ու լուսաշող տեղ գրավեցին հայոց

տարեգրության մեջ եւ երկնքում դասվեցին բոլոր ժամանակներում վասն հավատոր եւ վասն հայրենյաց մարտնչած ու նահատակված քաջերի կողքին: Մեր հերոսները զոհվեցին արցախահայության ազատ ապրելու արդար իրավունքի եւ հայրենիքի խաղաղ, ապահով եւ բարօր կյանքի տեսիլքով՝ պատգամելով մեզ աննկուն լինել ոգով եւ արիաբար պայքարել՝ հանուն մեր ազգային նպատակների իրագործման:

Սիրելինե՛ր, վիշտն ու սուգը Աստված փարատում է Իր սուրբ հոգու մխիթարությամբ եւ սփոփիչ զորությամբ: Նա շնորհն ու կարողությունն է պարգեւում, որ վեր հառնենք նեղություններից ու դժվարություններից, Քրիստոսի նման հարություն առնենք մեր պատմության հերթական Գողգոթայից եւ վկայենք աշխարհասփյուռ մեր ժողովրդի ներուժը, աստվածապարգեւ մեր հավատն ու ամուր կամքը, նոր կյանք կառուցելու մեր եզակի վճռականությունը:

Համազգային ուժերով եւ միասնական ոգով ներքին ու արտաքին մարտահրավերներին դիմագրավումը, քաղաքական եւ հասարակական ճգնաժամի հաղթահարումը պիտի լինեն մեր արժանի տուրքն ու խոնարհումը նահատակ հայորդիների շիրիմներին: Ներկա բարդ իրավիճակում զգաստության եւ ողջախոհության պահպանումը, մեր նահատակների կորուստը արժանավայել սգալը եւ սուգը չքաղաքականացնելը պիտի լինեն նվիրական հարգանքի ճշմարիտ արտահայտությունը մեր հերոսների անմոռաց լույս հիշատակի առջեւ: Ազգային համերաշխությամբ ու համընդհանուր շահերի վեմ գիտակցությամբ ապրելու ու արարելու մեր ընթացքը պիտի լինի պատվաբեր շարունակությունը մեր զավակների քրիստոսանման անձնազոհության...»:

Կաթողիկոսը մտահոգվել է հայրենիքում տեղ գտնող տագնապալի վիճակով եւ ուղերձ է հղել ներքաղաքական իրավիճակի կապակցությամբ, հանդիպել է վարչապետ Ն. Փաշինյանի հետ: Ազգային ժողովին կոչ է արել գործել ամենայն պատասխանատվությամբ, ականջալուր լինել ժողովրդի ձայնին: Կաթողիկոսի ուղերձին միացան նաեւ ՀՀ նախագահը, մտավորականներից շատերը:

Լինելով հավատավոր ժողովրդի հովիվը՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր մեջ ամփոփում է ժողովրդի ու կյանքի փորձառությունը: Ծանոթանալով նրա կյանքի ու գործունեության մանրամասներին՝ կարող ենք փաստել, որ հանձին Գարեգին Երկրորդի՝ գործ ունենք իմաստուն, գործունյա, ազգային արժեքների պահապան եւ հոգեւոր գործի նվիրյալ անհատականության հետ:

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկան

ՎԵՀԱՓԱՌԻՆ ԱՉՔԵՐԸ

Ով չի գիտեր, որ աչքերը հոգու պատուհաններն են, ուրկէ դուրս կը նայի ներքին մարդը եւ դուրս կը ճառագայթէ հարուստ տուեալներ իր էութեան մասին: Մարդկային յարաբերութիւններու լաբիրինթոսին մէջ մեր անցուցած տարիները մեզի կը սորվեցնեն, որ եթէ մէկը ճանչնալ կուզենք, պէտք է անմիջապէս անոր աչքերուն նայիլ՝ երբեմն ուղղակի, երբեմն փախուցիկ ակնարկներով, ու թափանցել այդ անձին իսկութեանը եւ հոնկէ քաղել չարտասանուած ճշգրիտ տեղեկութիւններ: Երբ հանդիպին երկու հոգի, անոնց աչքերուն միջեւ կը սկսի ճշմարտութեան հոսանք մը, որ ակամայ կը մատնէ հոգիի ներքին պարունակութիւնը միւսին:

Վեհափառ Հայրապետի ալ ամենէն դիւրամատչելի կողմն իր աչքերն են, որոնք անմիջապէս կը մատնեն անոր հոգու բարութիւնը, զոր նոյնիսկ իր գործի բերմամբ երբեմն ուզէ քօղարկել՝ խստութեան, բարկութեան եւ կամ դժգոհութեան ցուցմունքներով: Ես չորս տարիէ ի վեր այդ աչքերուն մօտէն նայելու բախտաւորութիւնը ունեցայ եւ հոն տեսայ անոր հոգու ճառագայթող նշոյլները, որոնք կը տարածուին ամբողջ ազգի մը վրայ՝ որպէս օրհնութիւն: Վեհափառը երբ հանդիպի իր ժողովուրդին հետ այլազան առիթներով, անմիջապէս կը վառուին իր աչքերուն մէջ փարոսի մը զոյգ աշտանակները, եւ երբ իր ձեռքերովը չի կարող հպելու անոնց՝ կ'ուղարկէ սիրոյ ջերմ շողարձակումներ դէպի այդ կողմը, եւ այդ լոյսը տեսնողները մխիթարուած կը զգան: Տարիներ առաջ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցելութիւն մը տուած էր Պոլիս, ուր համայնքին յիշողութեան մէջ պեղուած են անոր ժպտուն աչքերը, որոնց մասին տակաւին կը խօսուի վառ գովեստներով:

Երբ իր ծրագիրներու մասին կը խօսի, Վեհափառ Տիրոջ աչքերուն մէջ գոյացած շողանքը հիանալի է: Իր աչքերը կը սեղմէ քիչ մը, գլուխը վեր կը բարձրացնէ

թեթեւակի, եւ ահա՛ հոն են բոլորը, օդին մէջ առկախեալ ու արդէն աւարտուած վիճակով պսպղուն կը շողան ադամանդեայ տեսիլքները ամբողջ: Մանրամասնութիւնները կը յստականան հետզհետէ իր մտքի ծալքերուն մէջ լուսագիծերով պատկերաւորուած, զոր դուք ալ կը սկսիք տեսնելու եւ խանդավառուելու Վեհին հետ միասին: Իր չհամոզուած գործին երբեք ձեռք չի տար, կտրուկ «ո՛չ» մըն է պատասխանը՝ անշրջելի համառութեամբ մը: Իսկ համոզուած գործերուն վրայ կ'արձակի ամենայն վճռականութեան, եւ իր աշխատելու ախորժակը վարակիչ է, ու երբեք առանձին չմնար, երբ գործի մը ձեռք տայ: Ուրիշներ կու գան անմիջապէս եւ կը համախմբուին անոր տեսիլքներու շուրջը՝ մաս կազմելու համար ազգօգուտ ծրագիրներուն, ինչպէս մրջիւնները կաթիլ մը մեղրին շուրջ հաւաքուած ըլլային: Հզօր մագնիս մըն է նա՝ բոլոր մեխերը ի մի հաւաքող՝ Թորգոմեան Տան ինկած պատերը վերակերտելու համար:

Հաճոյքները կը տարբերին աչքերու գոյնի վերաբերեալ. կանանչ, կապոյտ կամ սեւուկ աչքեր: Ըստ իս, ամէնէն գեղեցիկ աչքերն անոնք են, որոնք ուրախութեան երփներանգ գոյներով կը զարդարուին եւ գեղեցիկ

ժպիտով մը կը զետեղուին երեսի շրջագիծին մէջ: Անոնք են օրհնութիւն այս տխուր աշխարհին համար եւ խրախճանքի սեղան՝ յոգնաբեկ հոգիներուն առջեւ սարքուած: Բայց ինչպէ՞ս ձեռք բերել այդ ուրախ նայուածքը, որուն գաղտնիքը Վեհափառ Տէրն իմանալու է անպայման:

Երբ երախայ էի հինգ-վեց տարեկան, հայրս հեծելանիւ մը գնած էր ինծի՝ երեք անուաւոր: Մեծ խանդավառութեամբ կը քշէի նոր խաղալիքը պարտէզին մէջ: Հայրս նստած ուրախութեամբ կը դիտէր ինծի: Անոր ժպտացող աչքերուն մէջ աւելի հրճուանք կար, քան իմինիս: Կը յիշեմ, զարմացած էի մտածելով, թէ արդեօք ինչո՞ւ հայրս այնքան ուրախ էր, քանի որ ես էի հեծելանիւը վայելողը, իսկ ինքը կը նստէր պարզապէս եւ զիս կը դիտէր: Տարիներ յետոյ սորվեցայ ուրախութեան այն գաղտնիքը, որ Տէր Յիսուս կը յայտնէր՝ ըսելով. «Տալը աւելի երանելի է, քան առնելը»:

Ես հօրս այդ գոհունակ ժպիտին եւ ուրախ նայուածքին յար եւ նմանը յաճախ կը տեսնեմ Վեհափառ Հայրապետի աչքերուն մէջ, երբ ան ներկայացնէ իր մէկ ձեռնարկը յօգուտ ուրիշներուն՝ ըլլայ ան նորաշէն եկեղեցի մը, վերականգնուած վանք մը, հայորդեաց տուն կամ հիւրանոց մը: Եթէ բախտը ունեցէր էք Վեհափառի հետ շրջելու շինարարութիւնները, կը զարմանաք՝ տեսնելով անոնց մէջ դրած իր սրտմաշումը, հոգածութիւնն ու խնամքը: Իր սեփական տունը ըլլար՝ հաւանաբար այնքան բծախնդրօրէն չէր միջամտեր գործընթացին: Բայց ուրիշներ պիտի վայելեն այս բոլորը, եւ «ուրիշ»-ը սուրբ է Գարեգին Կաթողիկոսի համար, նոյնիսկ չգիտէր, թէ ովքեր են այդ անծանօթ ուրիշները:

Ուրիշներ պիտի ապրին իր կառուցած այդ սենեակներուն մէջ եւ պիտի գտնեն դրախտէն անկիւն մը, ովասիս մը անապատին մէջ: Անծանօթ ուրիշներ, որոնք «փառք Քեզ, Տէ՛ր Աստուած» պիտի ըսեն ննջելէ առաջ եւ պիտի տեսնեն սուրբ երազներ: Պատուհաններէն ուրիշներ պիտի նային դուրսը եւ պիտի վայելեն արեւի լոյսն ու գարնանային ծաղկումը ծառերուն վրայ: Ուրիշներ պիտի լեցնեն շքեղօրէն զարդարուած արդի գրասենեակները եւ հոնկէ պիտի տնօրինեն Սուրբ Եկեղեցւոյ ապագան: Ուրիշներուն մանուկները արուեստ պիտի սորվին հոն, թերեւս հացի միջոց մը պիտի ճարեն իրենց աղքատ ընտանիքին համար, եւ երիտասարդներ հայոց լեռներու խրոխտ պարերով պիտի ցնծան ձեռք ձեռքի տուած եւ միաբերան պիտի երգեն հայուն հպարտ քայլերգը՝ լուսաւոր առաւօտներու համար: Բիւր բիւրոց հաւատացեալներ պիտի ծնրադրեն նորակերտ եկեղեցիներուն մէջ եւ զրոյց պիտի բռնեն իրենց Արարչին հետ ի խորոց սրտի եւ վառ պիտի պահեն Լուսաւորչի կանթեղը՝ իրենց հաւատքի արտասուքներով: Ուրեմն ինչպէ՞ս չհրճուի Հայրապետի հոգին իր ձեռքերու արդար վաստակովը, եւ ինչո՞ւ չխնդայ աչքերուն բիբը լիակատար բերկրանքով եւ գալիք բիւր սերունդներուն առջեւ սեղան սարքելու գիտակցութեամբ: Ստուգիւ, ան լաւ գիտէ երանութեան գաղտնիքը, որ թաղուած է իր աչքերուն մէջ ու զայն կը փոխանցէ բոլոր անոնց, որոնք իրեն մօտեն նայելու բախտը կ՚ունենան:

Վեհափառի աչքերուն մէջ գոյացած բարին, սակայն, տկար չէ երբեք, այլ զօրութեամբ է գօտեպնդուած եւ երկիւղ կ՚ազդէ խորամանկներուն, որոնք կը սպասեն գտնել իրենց դիմացը միայն երկինք դիտող հոգեւորական մը: Պահ մը միայն աղաւնիներ կը թռչին մեր Հայրապետի աչքերուն մէջ, իսկ միւսին՝ երեց աղուէս մը կը քննէ ամէն ինչ խորագիտաբար: Վեհափառի աչքերը բարի են յիրաւի եւ բարին կ՚որոնեն ամէնուրեք: Սակայն եւ այնպէս անոր նրբանկատ աչքերուն համար անկատար գործը աններելի մեղանչում մըն է՝ գործուած բարիին դէմ: Ուստի պէտք է, որ վատը փուլ գայ անպայման, եւ կատարեալը վերակառուցուի անոր տեղը՝ ինչ որ ալ ըլլայ անոր գինը:

Վեհափառ Հայրապետը կը կամի իր ներկայութիւնը զգալի դարձնել ամէն տեղ: Անոր համար պահակ դրած է իր մշտարթուն աչքերը ամենուս վրայ: Մենք՝ Մայր Աթոռիս բոլոր պաշտօնէութիւնը լաւ կը զգանք, որ անոր ամէնարթուն նայուածքները կը հետեւին մեզի եւ կը պահաջեն մեզմէ գործ, կատարեալ գործ եւ մեր պարտականութիւններուն անթերի լրացումը: Իր պողպատեայ կամքին եւ հետեւողականութեանը շնորհիւ

կը բարձրանան յետեւ յետեւէ Հայոց Եկեղեցւոյ «եօթը հրաշալիքները», ե՛ւ աւելին: Դժգոհներ կրնան ըլլալ, ի հարկէ, իր հետապնդող կամքէն ձանձրացողներ, բայց օր մը պատմութիւնը պիտի գրէ, որ Գարեգին Կաթողիկոսն իր գործերն աւազի վրայ չէ գրած, այլ պեղած է ժայռի վրայ: Թուլակամները պիտի լռեն տարիներ յետոյ, սրբուելով պիտի անհետանան աշխարհի երեսէն իրենց գանգատներով միասին, եւ սակայն քարերը պիտի շարունակեն խօսիլ, ինչո՞ւ չէ՛, երգել մեծ շինարարի մը արդար փառքը:

Վեհափառի հայեացքը կը տարածուի նաեւ ժամանակի մէջ՝ յետեւ եւ առաջ շարժելով լոյսի արագութեամբ: Լուսաւորիչէն սկսեալ բոլոր հայրապետներու սրբազան տեսիլքով օծուած է լիովին, եւ Թարգմանչաց վարդապետներու հոգիով կը հրդեհուին բոլոր ծրագիրները օր ու գիշեր: Իր շուրջը կը նայի, աւերակներ կը խոխորտան ամեն կողմ. պատմութեան տխուր ժառանգը: Բայց Վեհը կը պնդէ տեսնել մոխիրներու յարութիւնը՝ փիւնիկի նման: Խոնարհուած վանքերը եւ տաճարները պիտի արթնանան իրենց դարաւոր քունէն ամբողջական փառքով եւ իրենց զանգակներու ղողանջովը պիտի արթնցնեն իր խորունկ նիրհէն հայկազեան տոհմը, եւ դպրոցական մանուկներու շրթները կրկին պիտի օրհներգեն. «Փա՛ռք Սուրբ Խաչիդ, Ալելուիա»: Այո՛, վրէժ մը կայ Վեհափառի աչքերուն մէջ կուտակուած, մեր բոլորի վրէժը անոնց դէմ, ովքեր ուխտած էին կարմիր հայհոյանքով աշխարհի երեսէն սրբել Խաչեալին յիշատակը:

Բողոք մը կայ Հայրապետին աչքերուն մէջ: Ինչո՞ւ Հայոց Եկեղեցին չունենայ հազարաւոր սպասաւորներ, որոնք օժտուած ըլլային բոլոր բաղձալի հանգամանքներով՝ ի պատասխան արդի ժամանակներու բոլոր պահանջներուն: Արտասահման ուսման համար իր ուղարկած բոլոր հոգեւորականներուն մեծամեծ յոյսեր կապած է ան: Անոնց վերադարձը կը սպասէ անհամբեր, կարծես թէ հողագործ մը ուշացած անձրեւները կը սպասէ երաշտահար դաշտերուն մէջտեղը կանգնած եւ աղերսագին կ՚աղօթէ ապրիլեան ամպերուն օրհնաբեր վերադարձին համար: Ինչո՞ւ չողողել հրապարակը հոգեւոր գրականութեամբ եւ չսորվեցնել համր շրթունքներուն խօսիլ երկինքի լեզուն հայերէնով նաեւ: Ինչո՞ւ հայը զրկուած մնայ Քրիստոսի Բարի Լուրէն եւ անյոյս թափառի անհաւատութեան ճահիճներուն մխրճուած:

Վերջին տարիներուն մենք շատ բան կը պարտինք այս հսկուն աչքերուն, որոնց ճառագայթումով կը կանանչին խոպան մնացած Եկեղեցւոյ դաշտերը մեր: Սակայն Հայրապետն այսպէս նայելու չսկսաւ, հարկաւ, Կաթողիկոս դառնալէն յետոյ: Շատ կանուխէն սորված ըլլալու է, շատ կանուխէն, թերեւս իր երիտասարդութեան, նոյնիսկ իր մանկութեան օրերուն ձեռք բերած ըլլալու է տիեզերքը հաւատքի հեռադիտակով դիտելու սովորոյթը: Համայնավարութեան տարիներուն երիտասարդի մը հոգեւոր ասպարէզն ընտրելը ինքնին հրաշքի համազօր եղելութիւն մըն էր արդէն՝ առանց չափազանցութեան: Անոր ժամանակակից եկեղեցականները Խորհրդային Միութեան տարիներուն եղան օրհնեալ սերունդ մը, եղան նաեւ ամէնէն քիչ ե՛ւ ամէնէն սխալ հասկցուած հոգեւորականներ, ովքեր կորուստէ փրկեցին մեր դարաւոր, մեր փառաւոր եկեղեցական ժառանգութիւնը եւ կրեցին զայն մեր ապահով օրերուն համար՝ անաստուածութեան կարմիր հրդեհին ընդմէջէն անցընելով անվթար: Տակաւին պատանի մը՝ ինչպէ՞ս ունեցաւ

Վեհափառը Երկաթեայ Վարագոյրը ծակող աչքեր: Ո՞վ սորվեցուց անոր երկինք ուղղել իր նայուածքը՝ հոգիի ազատութիւնը հետապնդելու համար, երբ ամէն մարդուն հայեացքը գետին կը սողոսկէր նիւթապաշտ որոնումներով: Առանց վարանումի կրնանք ըսել, որ Հայրապետն իր խնկասփիւռ ծնողներէն ժառանգած է իր հոգետես աչքերը: Փառք Աստուծոյ, միշտ եղած է Հայաստանի մէջ հաւատացեալ «մնացորդաց» մը, ինչպէս Եղիայ մարգարէի օրերուն, ովքեր Բաաղի կուռքին չերկրպագեցին՝ մերժելով ծունկի գալ անոր առջեւ՝ ի տես բոլոր ճնշումներուն, դիմադրեցին բոլոր սպառնալիքներուն՝ սուրբ համառութեամբ մը, այո՛, խենդութեան համազօր սխրանքով մը:

Աստուած առողջ պահէ՛ Վեհափառ Հայրապետի աչքերը, եւ միշտ պայծառատես, որովհետեւ միայն իրեն համար չի նայիր, այլ ամբողջ ազգի մը համար կը դիտէ հորիզոնները՝ իր կոպերը մշտապիրկ: Որովհետեւ պարտաւոր է հեռատես ըլլալու՝ ահազանգի փողը հնչեցնելու համար, եթէ հարկ ըլլայ կանուխէն: Վերատեսուչ եւ վերահսկիչ է կարգուած Քրիստոսի փառաւոր Տունը՝ Սուրբ Եկեղեցին տնտեսելու համար: Որքան ալ զօրաւոր ըլլան, սակայն, երկու աչքեր չեն բաւեր այս ահարկու գործին լիակատար յաջողութեանը համար: Պէտք

ունի Հայրապետը մեր միլիոնաւոր աչքերուն նաեւ: Եկէք իր աչքերուն մէջ ցոլացող գեղեցիկ լոյսէն ներշնչուելով՝ մենք ալ սրբագործենք մեր աչքերը՝ տեսնելու համար ընդարձակ կարելիութիւնները ծառայութեան եւ աշխարհը կերպարանափոխման:

Սահակ եպս ՄԱՇԱԼԵԱՆ
(հիմա՝ Պոլսո Հայոց Պատրիարք)

Խոսքը վերցված է «ՔՀ»-ի նախորդ համարներից

ՈԳՈՒ ՇԻՆԱՐԱՐԸ

Ի՜նչ վատ է, որ կարող էինք ավելի լավը լինել եւ չե՜նք, եւ ի՜նչ լավ է, որ կարող էինք եւ չլինել եւ ե՜նք:

Հ. Մաթեւոսյան

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր կենդանության օրոք արդեն իսկ ժողովրդի կողմից կնքվել է Շինարար տիտղոսով՝ հանգույն Ներսես Գ Շինող (641—661) եւ Վազգեն Ա Շինարար (1955—1994) հայրապետների: Գարեգին Բ-ին տրված գնահատականն անվիճելիորեն արդարացված է: Հայաստանի թեմերով մեկ ընթացող եկեղեցաշինության աննախադեպ ծավալը, բայց մանավանդ հայ հոգեւոր կյանքի սիրտը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անդադար ծաղկումն ու ընդարձակումը, անխոս, վկան եւ հայտարարն են ասվածի: Պատահական չէ, որ վերջին տասնամյակում օտար այցելուների եւ զբոսաշրջիկների կողմից Մայր Աթոռ Ս. Էջմիածինը բնորոշվում է որպես հայոց Վատիկան…

Արտաքին հայացքից թվում է, թե ամեն բան ճիշտ է. թե՛ ժողովրդի գնահատականը, որ տեսել եւ արժեւորել է Հայոց Եկեղեցին բարձրացնելու՝ իր հայրապետի անխոնջ ջանքերը եւ թե՛ օտարների բնորոշումը, որոնց Ս. Էջմիածինն իր զորեղ տեսքով հիշեցնում է մեկ միլիարդից ավելի հետեւորդ ունեցող Կաթոլիկ Եկեղեցու կենտրոնը՝ Վատիկանը: Ավելին. ասվածից ելնելով՝ աներկբա է նաեւ, որ պատմության ընթացքում Հայոց 132 կաթողիկոսներից ընդամենը երկուսն են վաստակել Շինարարի ժողովրդական գնահատականը: Եվ երրորդն այդ շարքում Գարեգին Երկրորդն է՝ իր տեսանելի ներդրումով: Ակնհայտորեն այդ պատվավոր շարքում հայտնվելն արդեն իսկ մեծ ձեռքբերում է՝ թե՛ ցանկացած հոգեւոր առաջնորդի համար եւ թե՛ Եկեղեցու: Այլ խոսքով՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդեն իսկ իր արժանի տեղն է գրանցել 132-ի շարքում: Եվ պետք է խոստովանել, որ շատերին չէ, որ հաջողվել է նման արդյունք ապահովել: Արդար եւ անաչառ հայացքը չի վիճարկի ասվածի ճշմարտացիությունը: Բայց միեւնույն ժամանակ Գարեգին Բ Կաթողիկոսի գործունեության հետեւողական վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ այս ճշմարտությունն ստվերում է թողնում ավելի մեծ մի ճշմարտություն: Փաստերի ի մի բերումն ու համադրությունը բացահայտում է, որ Գարեգին Բ Հայրապետը Շինարար է ոչ միայն բառի ուղիղ, ստուգաբանվող իմաստով, այլեւ՝ այլաբանական, ասել է թե՝ Ոգու Շինարար:

Զարթիք փառք իմ, զարթիք. եւ ես զարթեայց առաւօտուց. ալելուիա:

Ոգու Շինարար Հայրապետի մասին խոսքը ես կսկսեի հոգեւորականաց պատրաստության ոլորտից, որի սկիզբն ու մեկնարկը նա տվեց 1990 թ. Վազգենյան հոգեւոր դպրանոցով՝ դեռեւս Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ եղած տարիներին:

Դպրանոցի հիմնադրումը նպատակ էր հետապնդում լրացնել հոգեւորականաց այն բացը, որ տասնամյակներ շարունակ խորհրդային կարգերի բերումով առաջացել էր Հայոց Եկեղեցում՝ ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի: Բայց մանավանդ ու առավել եւս նոր որակի

բարձրացնելու Հայոց Եկեղեցու հոգեւորականց կրթության գործը՝ գալիք 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ հոգեւոր հովիվների եւ առաջնորդների նոր սերնդով ապահովելով աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Այդպիսին էր ապագա Հայրապետը՝ օժտված ժամանակի նշանները կարդալու աստվածատուր շնորհով:

Վազգենյան դպրանոցով սկսված ոգու շինարարության գործն առավել մեծ թափ եւ ընթացք ստացավ, երբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդը 1999 թ. ազգի մեծամասնության քվեով ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Նորընտիր Հայրապետի առաջին գործը եղավ իր անմիջական ուշադրության կենտրոնում պահել Գեւորգյան հոգեւոր ճեմարանը: Գարեգին Բ Կաթողիկոսի հետեւողական ջանքերի շնորհիվ ճեմարանը դարձավ պետականորեն ճանաչված բուհ, որն այսօր իր դիմորդներին ապահովում է եռաստիճան կրթությամբ՝ բակալավր, մագիստրատուրա եւ ասպիրանտուրա: Ավելին՝ այսօր ճեմարանն իր կրթության որակով ոչ միայն չի զիջում հանրապետության մյուս բարձրագույն հաստատություններին, այլեւ հավակնում է նոր բարձունքների՝ ձգտելով ապագայում չափվել արտասահմանյան հեղինակավոր հոգեւոր կրթարանների հետ:

Հոգեւոր կրթությունը բարեկարգելու նպատակով, Գարեգին Բ Հայրապետի նախաձեռնությամբ, Գեւորգյան ճեմարանի շրջանավարտ միաբաններ եւ քահանաներ իրենց բարձրագույն ուսումը խորացրել եւ շարունակում են խորացնել արտասահմանյան բարձր համարում ունեցող բուհերում:

Ճեմարանի ներկան կարող է արդարացիորեն համեմատվել անցյալի ամենածաղկուն շրջանի հետ, երբ արտասահմանից վերադարձած միաբանները՝ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանցը, Երվանդ վրդ. Տեր-Մինասյանցը, Կոմիտաս վրդ. Սողոմոնյանը եւ նշանավոր այլ մեծություններ դասավանդում էին իրենց սնած եւ կրթած հաստատությունում, կազմում եւ հրատարակում դասագրքեր: Այսօր եւս արտերկրում իրենց կրթությունը խորացրած միաբաններն ու քահանաները լծված են նոր սերնդի հոգեւորականության կրթության վեհ եւ պատասխանատու գործին, կազմում են դասագրքեր եւ ուսումնական ձեռնարկներ, հրատարակում գիտական հոդվածներ եւ ուսումնասիրություններ:

Միով բանիվ՝ Մայր Աթոռի միաբանության, այլեւ քահանայից դասի մտավոր մակարդակը Հայոց Եկեղեցու պատմության վերջին քսանամյակում որոշակիորեն որակապես աննախադեպ թռիչք է արձանագրել Գարեգին Բ Հայրապետի նախանձախնդիր ջանքերի եւ հետեւողականության շնորհիվ: Հայրապետի կողմից չի խնայվում ոչինչ հայ հոգեւորականի կերպարը բարձրացնելու համար:

Այո՛, իր մեծ նախորդների՝ Մովսես Գ Տաթեւացի (1629—1632) եւ Գեւորգ Դ Մեծագործ (1866—1882) Հայրապետների նմանողությամբ Գարեգին Բ Հովվապետը նույնպես ազգային Եկեղեցու հարատեւումը տեսնում է սահակ-մեսրոպյան ավանդների շարունակականության, դրանց վերընձյուղման մեջ: Ահավասիկ այս լույսի ներքո պետք է մեկնաբանել, թե ինչու նրա կողմից Հայոց Եկեղեցու վերածնության ելակետ ընտրվեց հոգեւորականաց կրթությունը որակապես բարձրացնելու, այն հաստատուն հիմերի վրա դնելու ուղին, որը, ինչպես մեծանուն պոետը կբնորոշեր՝

Մի ուղի դժվար ու անչափ վե՛հ:

Զարթիք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիոնի. ալելուիա:

Գարեգին Բ Հայրապետի տեսլականում Ոգու Շինարարության առանցքային մեկ այլ ասպարեզ էր մանուկ եւ պատանի սերնդի քրիստոնեական կրթության եւ դաստիարակության կարեւոր գործը, որին նա ձեռնամուխ էր եղել դեռեւս իր առաջնորդության տարիներից: Խոսքը հայորդյաց տների՝ այսօր արդեն աճող ցանցի մասին է, որտեղ մեր մանուկներն ու պատանիները խորամուխ են լինում արհեստների եւ արվեստների մեջ՝ զուգահեռ ստանալով քրիստոնեական դաստիարակություն, այն, ինչ դարերի փորձությամբ հայի ազգային ինքնության հիմքն ու արմատն է կազմում:

Ուրախությամբ պետք է արձանագրել, որ հայորդյաց տուն կոչվող կառույցը լիովին արդարացրեց իր հիմնադրի հույսերը՝ դառնալով տաղանդի բացահայտման մի յուրահատուկ միջավայր մատաղ սերնդի համար: Շնորհալի բազում մանուկներ եւ պատանիներ արհեստի եւ արվեստի իրենց մկրտությունն ստացել են հայորդյաց տներում:

Այն կարեւոր առաքելությունը, որ Հայաստան աշխարհի անկախության արշալույսին հայորդյաց տուն հաստատությունն ստանձնեց աճող սերնդի կրթության եւ դաստիարակության ասպարեզում, դեռեւս սպասում է իր արժանի գնահատականին:

Զարթիք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրըն լուսոյ. ալելուիա:

Մատաղ սերնդի կրթության եւ քրիստոնեական դաստիարակության շնորհակալ գործը Ոգու Շինարար Հայրապետի տեսլականում չէր սահմանափակվում զուտ հայորդյաց տուն հաստատության առաքելությամբ: Դրա բնական շարունակությունը եղավ Ամենայն Հայոց Հայրապետի հանձնառությամբ «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի ներմուծումը հանրակրթական դպրոցի ծրագիր:

Այս նախաձեռնությունը միտված էր աճող սերնդի մեջ դաստիարակելու այն գիտակցությունը, որ դարերի հոլովույթում Հայոց Եկեղեցու անդուլ մաքառման շնորհիվ է պահպանվել հայի կենսունակության խորհուրդը, որ, հակառակ պատմության փոթորիկների, նա երբեք չի դադարել լինել հայ ժողովրդի ազատության հույսի սերմնացանն ու ցեղի ոգու հոգեշունչ ռազմիկը: Նրա խորանից է խրթին խավարում հնչել մեր ինքնության հիմնը, դարձել խոհ եւ պայքար՝ ճեղքելով լույսի ճանապարհը:

Այսօր էլ Հայոց Եկեղեցին է այն կամուրջը, որ կապում է աշխարհասփյուռ հայությանը հայրենի հողին, նա է ազգի եւ ազգայինի շարունակականության երաշխավորը, մեր լինելության վառ երազի արթուն պահապանը, մեր ինքնության անխորտակ սյունն ու հենարանը:

Այս գիտակցությունն է մեր հաղթանակների գրավականը, սա է մեր ուղին, կամ ինչպես բանաստեղծն է ասում՝ **Մրրիկով կերտուած վէպը մեր սրտի**:

Կրթության ոլորտում իրականացված Ոգու Շինարարության մասին խոսելիս չենք կարող չանդրադառնալ Մայր Աթոռի համակարգում գործող Էօրնեկյան հանրակրթական եւ Հառիճի Թրբանճյան ընծայարան ավագ դպրոցներին: Հիշյալ հաստատությունների հաջող ընթացքը հուշում է, որ այդ գաղափարը կունենա իր հետագա զարգացումը, որը հանրակրթական նոր մշակույթ է բերում մեր կրթության ոլորտ, մի մշակույթ, որտեղ ազգային արժեքների հանդեպ յուրահատուկ վերաբերմունք է դաստիարակվում հայ պատանու հոգում:

Զարթիք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալելուիա:

Գարեգին Բ Հայրապետի ոգեկերտման նշանակալի ձեռնարկներից է նաեւ բարեսիրության ոգու վերաարթնացումը մեր ժողովրդի զավակների սրտում ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի: 1988 ի երկրաշարժը, Արցախյան ազատագրական պայքարը, նորանկախ Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերները ժողովրդի կյանքում ուղեկցվում էին երկրի տնտեսության համար սոցիալապես ծանր ցնցումներով՝ ի հայտ բերելով գործազրկություն, աղքատություն եւ արտագաղթ…

Հայոց Եկեղեցու հայրապետներն ու վարդապետները բոլոր ժամանակներում էլ քաջալերել են մերձավորի հանդեպ կարեկցանքը՝ *սերը, գութը եւ ողորմությունը հոչակելով առավել շահավետ եւ օգտակար, քան վարձատրության արժանի բոլոր առաքինությունները…* Ահավասիկ այս մտայնության վերարծարծմանն էին ուղղված հայ սրտի անդաստանում բարեսիրության հունդեր սերմանելու Գարեգին Բ-ի անդուլ ջանքերը:

Դեռեւս Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ եղած շրջանից ապագա Հայրապետը ՀԲԸՄ-ի աջակցությամբ հայորդյաց տների հովանու ներքո սկիզբ է դնում բարեգործական ճաշարան կոչված հաստատության գործունեությանը, որտեղ ամենօրյա սնունդ էին ստանում անապահով, սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչները՝ ծերեր, միայնակներ, աղքատներ:

Այսօր արդեն բարեգործական ճաշարանների մի ողջ ցանց է գործում Հայաստանի հանրապետությունով մեկ, որոնք սնունդ են մատակարարում հազարավոր կարիքավորների: Հայրապետի տեսլականն է, որ Հայաստանի յուրաքանչյուր քաղաք ապահովված լինի նման ճաշարանով, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, մեր ժողովրդի որեւէ զավակ անտեսված չլինի համապատասխան ուշադրությունից, խնամքից:

Անապահովների հոգածությանը զուգահեռ Գարեգին Բ Հայրապետը մեծ կարեւորություն է տալիս նաեւ խնամքի կարոտ երեխաների կրթության եւ դաստիարակության գործին: Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո գործում են խնամքի երկու՝ *Քյուրքչյան* եւ *Նագաշյան մանուկների տուն* երեխաների աջակցության կենտրոնները: Հայրապետի բարեսիրական աստվածահաճո ձեռնարկների շարքում իր արժանի տեղն է գրավում նաեւ 2006 թվականին մեկնարկած «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. կառուցենք հավատով» տնաշինական ծրագիրը: Այն նախատեսում էր 3 տարվա ընթացքում, աշխարհասփյուռ հայոց թեմերի թվին համազոր, տարին 37 տուն կառուցել՝ Հայաստանի տարբեր մարզերում տնազուրկ եւ կարիքավոր ընտանիքների համար:

Այս ծրագրի իրագործումը բնականաբար հայ հասարակության ընկալումներում ընդարձակեց բարեսիրության սահմանները՝ ուշադրություն հրավիրելով կարիքավոր ընտանիքներին բնակարանով ապահովելու անհրաժեշտության վրա: Շատ կազմակերպություններ եւ անհատ բարերարներ, խանդավառված այս գաղափարով, իրենց բարեգործական ծրագրերում սկսեցին կարեւորել այս հիմնախնդիրը նույնպես:

Աղետի գոտի… 1988 թվականի ավերիչ երկրաշարժն իր անջնջելի հետքն է թողել այսօրվա մեր հասարակության վրա, կարելի է անգամ պնդել, որ դեռեւս լիարժեքորեն չենք ազատվել աղետի գոտի ունենալու բարդույթից: Ուրախությամբ պետք է արձանագրենք, որ Գարեգին Բ Հայրապետի բարեսիրական գործունեությունը չի շրջանցել նաեւ հատուկ հոգածության կարիք ունեցող աղետի գոտու բնակիչներին: Հայրապետի անմիջական նախաձեռնությամբ մեկ տասնյակը գերազանցող բնակարաններ են նվիրաբերվել 1988-ի ավերիչ երկրաշարժից տուժածներին: Ավելին՝ Գարեգին Բ Հայրապետը Լուսավորչի գահին բազմելուն պես իր անմիջական ուշադրության ներքո առավ աղետի գոտի հանդիսացող Շիրակի եւ Գուգարաց թեմերը: Պատահական չէ, որ առաջինն այս տարածաշրջաններում հիմնվեցին հայորդյաց տներ եւ բարեգործական ճաշարաններ:

Ու փլատակներդ ահա կը հարթվին քիչ առ քիչ...

Ակնհայտորեն Հովվապետի հոգածու հայացքի ներքո հասարակության բոլոր խոցելի խմբերն են: Եվ Գարեգին Բ Հայրապետի ջանքերով սկսված բարեսիրության մշակույթի զարգացումն անմիջական արձագանքն է Դ դարում Ներսես Մեծ (353—373) Հայրապետով Հայոց Եկեղեցում սկզբնավորված մարդասիրական ավանդույթների:

Բարեսիրության ոգու վերակերտումը, սակայն, Գարեգին Բ Հայրապետի մտահորիզոնում չսահմանափակվեց զուտ բարեգործական ճաշարանով եւ մանուկների խնամքի կենտրոններով, կարիքավորներին բնակարանով ապահովելու ծրագրով: 2013 թ. Մայր Աթոռ

Ս. Էջմիածնում Վեհափառը հիմնում է Սոցիալական ծառայության կենտրոնը:

Այս կենտրոնի առաքելությունն է հասնել ամենուր բոլոր տեսակի կարոտյալներին՝ աղքատին, հիվանդին, կարիքի մեջ հայտնվածին: Մի խոսքով՝ բոլոր նրանց, ովքեր օգնության ակնկալիք ունեն: Այս համատեքստում չենք կարող չանդրադառնալ, որ 2020 թ. համավարակին ինչ կարեւոր ներդրում ունեցավ Մայր Աթոռի սոցիալական ծառայության կենտրոնը՝ պետության կյանքում ստեղծված դժվար կացությունը հաղթահարելու առումով: Այսօր էլ իր Հովվապետի կոչին ընդառաջ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թեմերն ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի շարունակում են իրենց օժանդակությունը ցուցաբերել հայրենի իշխանություններին, մեր ժողովրդի զավակներին:

Հայրապետի կողմից ազգային կյանքում իրականացվող բարեսիրական միջոցառումների ցանկը կարելի է երկարացնել: Այստեղ մասնավորապես կուզենայի հիշատակել Արցախում եւ Հայաստանի սահմաններում թշնամու գնդակից վիրավորված հայ զինվորի հանդեպ Հայրապետի կողմից ցուցաբերվող վերաբերմունքի մասին: Վեհափառի միջնորդությամբ շատ զինվորականներ են արտասահմանյան տարբեր երկրներում բուժում ստացել, վերադարձել կյանքի բնականոն հունին:

Զարթիք վառեալ լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն. ալելուիա:

Այսօր ժամանակն է այլեւս Ոգու Շինարար Հայրապետի մասին խոսելու՝ առիթ տալով մեր ժողովրդին լավագույնս ճանաչելու Լուսավորչի գահի 132-րդ արժանի ժառանգորդին, իր հոտի արթուն հովվին եւ անխոնջ մշակին:

Պատմությունից հայտնի է, որ մեր ազգային ձախողումների եւ դժբախտությունների հիմնական պատճառն անմիաբանությունն է: Պատմական օրինաչափություն է նաեւ, որ մեր միաբանության ուղին միշտ հաղթանակով է պսակվել: Եվ բնավ պատահական չէ, որ հայոց գրավոր մշակույթի ի հայտ գալուց սկսյալ հայի համար գերագույն ձգտում, իդեալ է մնացել ազգային միասնության գաղափարը... Պատմական փորձը վկայում է, սակայն, որ այդ իդեալի կենսագործման հիմնական խոչընդոտը եսասիրությունն է, նախանձը, որոնք դժբախտաբար թույլ չեն տալիս մեզ վեր կանգնելու ազնական շահից եւ փառասիրությունից, համախմբելու մեր ուժերն ու հնարավորությունները համազգային վեհ նպատակների շուրջ: Գեւորգ Դ Մեծագործ Հայրապետը խորությամբ է ընկալել մեր ազգի ամբողջականությունը խաթարող այդ մարտահրավերները, երբ ավելի քան հարյուրամյա հեռավորությունից ցավ ի սիրտ նկատում է. *«Հայուն յետադիմութեան եւ թշուառութեան միակ պատճառը նախանձութիւնն է, այո՛, նախանձն է, որ իւր ընկերին փառքը ջնջել կուզէ, հայր անոր համար թշուառացած է, որ իւր ընկերին փառքը իւրը չհամարիր»:*

Ակամայից մտածում ես՝ միգուցե սա՞ է պատճառը, որ մեծությունների գնահատականը ավանդաբար թողնվում է պատմությանը:

Մենք կդառնանք միասնական, կհամախմբվենք մեծ նպատակների դրոշի ներքո միայն այն ժամանակ, երբ մեր մեջ արթնանան հայորդյաց յուրաքանչյուր ձեռքբերում ազգինը համարելու լայնախոհ գիտակցությունը, մեծ ազգայինը նեղ անձնականից վեր դասելու կամքը:

Տրդատով եւ Լուսավորչով սկզբնավորված, սահակ-մեսրոպյան սրբոց թարգմանչաց դպրոցով ազգային նկարագիր զգեցած, Վարդանանց «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեայց» նշանաբանով ակոսված ոսկե ուղու հավատարիմ եւ հմուտ շարունակողն է այսօր Գարեգին Բ Ամենայն Հայոցը:

Իր մեծ նախորդների նման նա նույնպես մշտապես առաջնորդվել է այն բարձր գիտակցությամբ, որ ազգօգուտ ցանկացած բարի գործ եւ ձեռնարկ հավասարապես յուրաքանչյուր հայինն են, սերունդների անկողոպտելի սեփականությունը:

Ահավասիկ այս մտածողության կենսագործման մեջ է թաքնված մեր միասնականության գաղտնիքը, սա է այն գրանիտե ուղղափառ այունը, որի վրա երկնասլաց վեր է խոյանում ազգի լինելության բազմաշտարակ շինվածքը:

Գարեգին Բ Կաթողիկոսի նախաձեռնությամբ սկիզբ դրված Ոգու Շինարարության տեսլականույց ընթացքն անխոս հայտարարն է Ամենայն Հայոց հոգեւոր հովվի աննկուն հայրենասիրության, նրա առաջնորդությամբ Հայոց աշխարհի լուսարձակվող խորհուրդը հավերժացնող մեր համառ երթի. *«Ի՜նչ վատ է, որ Հայոց երկհազարամյա պատմության մեր քարավանը չի գալիս հայոց արքաների իրարահաջորդ կյանքերի ու գործերի ազուցմամբ, բայց, եւ ի՜նչ մխիթարիչ է, որ այդ պատմությունը մի անընդմեջ երթ է դառնում Հայոց հարյուր երեսուներկու — Հայոց մեր մեջ անպատկերացնելի մի թիվ - հար-յո՛ւր ե-րե-սուներ-կո՛ւ — Վեհի տիրական մաքառումով ու բազում առաքինությամբ եւ նույնքան էլ բեկումով ու վիատությամբ, բայց երբե՛ք ինքնուրացմամբ, որ ազգուրացում ու այսօրվա մեջ մեր երկրի ու մարդու չգոյություն էր նշանակելու»:*

Արդ, երկար կյանք եւ բարի օրեր մաղթենք Ամենայն Հայոց Հայրապետին՝ մեր ազգային իղձերի եւ նպատակների անզիջում ջահակրին՝ դարերի հոլովույթից հոսող շարականագրի խոսքերով դիմելով Ամենախնամ Տիրոջը՝



Զհայրապետս մեր կեցո եւ ի շնորհս Քո փայլեցո,
Ի փառս Սուրբ Երրորդութեան այժմ ու յաւէտ եւ յաւիտեան.

Գեւորգ եպիսկոպոս ՍԱՐՈՅԱՆ

ԵՎ ԼՈՒՅՍ ԱՆԻ ՔՈ ԱՊՐԱԾ ՕՐԵՐԻՆ ՔՈ ԽՂՃՄՏԱՆՔԻ ԱՆԿԵՂ ՄՈՐԵՆԻՆ

«Անցյալի ժառանգությունը պատմականորեն կազմավորված, ամրապնդված այն ոգեկան պատվանդանն է, որի վրա հենվում է մի ժողովուրդ, եւ որի արմատներից նա տեւապես ավիշ ու սնունդ է ստանում: Անցյալի ժառանգությունն այն ոգեկան ուժականությունն է, որ ներկայի վրայով ապագայի դռներն է բացում... Սակայն ճշմարիտ է եւ այն, որ երբ մի ժողովուրդ կանգնած է մնում անցյալի ժառանգության վրա՝ առանց ներկա լիությամբ ու ստեղծագործորեն ապրելու, առանց նոր խոսք ասելու, առանց նոր արժեքներ ստեղծելու նոր ժամանակների տարազով, այդ ժողովրդի առաջ փակվում են դեպի ապագա տանող դռները»:

Վազգեն Վեհափառ

Հիրավի, որքան գեղեցիկ է արժանահիշատակ Հայրապետի խոսքը, որքան խորիմաստ, որքան պատկերավոր եւ միեւնույն ժամանակ՝ անկրկնելի:

Հայոց հայրապետներից շատերը՝ իբրեւ Հայոց աշխարհի հովիվներ ու բարի սերմնացաններ (ինչպես որ բանաստեղծն է իրավամբ նկատում.

«Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի

Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում»), այս հավատամքով է, որ՝ «Թէ թողուս դոցա՝ թո՛ղ, ապա թէ ո՛չ՝ եւ զիս ջնջեա՛ ի գրոյն կենաց» (Ելք ԼԲ 32), բացել են իրենց բանավոր հոտի առաջ դեպի ապագա տանող դռները «դաժան դարերի ամե՛ն մի ժամի»՝ ի մտի եւ արյան մեջ ունենալով Եկեղեցու անկախության գաղափարը:

Եվ այս ամենը հենց միայն ա՛յն պատճառով, որ պարզապես անկարելի է հետ մնալ հանուր մարդկության «ապրելակերպի ու մտածելակերպի ընդհանուր աստիճանից»: Հենց միայն ա՛յն պատճառով, որ «ով պատմութիւն ունի, չի կարող յետ չնայել», եւ գուցե հենց այն պատճառով, որ «ոչ միայն որ գործենն՝ պարտական են, այլեւ որ յանձն առնուն»:

Այս հարթության վրա հետաքրքրական է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի նվիրյալ միաբաններից՝ Կարապետ եպս Տեր-Մկրտչյանի հետեւյալ դիտարկումը. «Հայրապետության աթոռ եւ վերին նախասահմանությամբ հայոց եկեղեցական կյանքի կենտրոն լինելն այնպիսի գաղափարներ չեն, որ դյուրավ ըմբռնվեն հասարակ ժողովրդի կողմից եւ առանձին գրավչություն ունենան»: Ասել է թե, ժամանակի քաղաքականության բերմամբ, երբեմն կամ հաճախ ժողովուրդը կարող է եւ բավարար հեղինակության վրա չտեսնել այն բազմակողմանի դերը, որը, ինչպես փաստում է մեր պատմական անցյալը, ստանձնել է «Հայոց եկեղեցական կյանքի կենտրոնը», եւ երկրորդը, որ սերտորեն առնչվում է նախընթացին. հայ ազգի անցյալ ու ներկա հոգեւոր կյանքի մի շարք իրողություններ գալիս են հավաստելու, որ մեզանում տիրապետող է դարձել եւ այն մտածումը, որ հարկ է առանց այլեւայլությանց ընդունելու այն ամենը, ինչը հավասարապես կենդանի իրողություն է եւ միաժամանակ նախանձախնդրության արդյունքը՝ ա՛յն համերաշխ վկայությամբ, թե՝

«Չէ՞ որ ինչ-որ տեղ փոքրերս ու Մեծը դ
Հավասարվում ենք, դառնում աջակից.
— Դու գործն ես արել,
Մենք... հանձն ենք առել...» (Պ. Սեւակ)՝ ընդհանուր համագումար ունենալով այն, ինչն այլ բան չէ, եթե ոչ սրբազան հանձնառություն:

Իրողությունն այն է, սակայն, որ այս ամենը մեզանում երբեք էլ չի դադարել, որով՝ «...Առայժմ մենք մեր աչքերն ենք փակում,
Բայց փակում այնպես,

Ինչպես փակում են մարդիկ մատները,
Եվ ստացվում է դրանից... բռունք»
(Պ. Սեւակ):

* * *

«Հոգեկան սննդառության» այս միանգամայն ինքնօրինակ եւ ո՛չ ինքնաբավ «գործընթացը», թերեւս, ժամանակ առ ժամանակ խաթարվել է «թղթե վարդերով ու աստղերով», «երեւակայության ու չափազանցության» անհավասարակշիռ փոխհարաբերություններով, եւ այդուամենայիվ («Եվ ելել ենք մենք մեր այգաբացով,
Մեր ուժով համակ, վաստակով արդար,
Ջնջելու չարիքն այդ արյունացոլք,
Կոտրելու վերջին այդ կեռը խարդախ» (Պ. Սեւակ)),

կրոնական զարգացման ճանապարհին, «լուսավորության հնարքը» որոնելիս, արդյունքում «մտադրությունն» ու «պատասխանելիքը» «ինչության» մեջ հայտնաբերել են առավել կարեւոր «որպիսությունը»:

Եվ այս ամենը ո՛չ պատահականորեն. Հայոց հայրապետները մեկ անգամ չէ, որ հանուր մարդկության լուսավոր գագաթները պայծառակերպել են հայ ժողովրդի անցած ճանապարհի որքան վառ ու անօրինակ, նույնքան էլ անկրկնելի ու յուրովանն արտահայտություններով, իրենց արյան եւ քրտինքի մեջ ունենալով. *«Պահիր հավատարմությունդ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, ավանդդ սրբորեն պահպանիր ու փոխանցիր քո զավակներին եւ մի մոռացիր հայրենի հողիդ մի անկյունում վերադարձիդ սպասող պապերիդ շիրիմները»* (Գարեգին Բ):

Բոլոր դեպքերում մեր ժողովուրդը «հաճախ մեռել է ապրելու մտադրությամբ, բայց մեռնելու մտադրությամբ չի ապրել երբեք...»: Վեր ժամանակի անցողականից, ինչպես ժամանակին Եղիշեն է նկատել, մեզանում ծնվել են «բազում սուրբ հայրեր ու նահատակներ»՝ հավատքով հաղթող Եկեղեցու սյուները լինելու համար: Այլ խոսքով՝ հայոց առաջին լուսավորիչների եւ առաջին հայրապետների երազանքը վաղուց արդեն անհերքելի իրողություն է՝ Հայ Եկեղեցին եւ հայ ազգը նույնն են: «Այստեղ՝ Արարատի դիմաց, ի տես Սուրբ Գրիգոր Լուսավորչի իջավ Աստվածորդին եւ հաստատեց հայոց Բեթղեհեմը, որպեսզի Իջման Սուրբ Սեղանից հանուր հայ կյանքի վրա սփռվեն բեթղեհեմյան Լույսի սիրո շողերը: Իջավ՝ ոսկե մուրճի կնիքով դրվագելով համազգային մեր դարձի խորհուրդը, որպեսզի Սուրբ Էջմիածնով հարատեւի ժողովուրդը մեր ու միավորյալ մնա՝ թեկուզ մասնատված ու աշխարհասփյուռ» (Գարեգին Բ):

* * *

«Լուսաւորչի մեծի յաթոռ բազմեալ ես,
Հայաստանեայցս հանուրց հայր կոչեցեալ ես»:

«Մեր պատմությունը մեր սրտերում քանդակվածդաջված է նաեւ ազատագրական պայքարի ձգտումով, սխրանքներով, հայտնի ու անհայտ հազարավոր քաջերի, նահատակ հերոսների անուններով: Այն գրված է քանդված տունը վերակառուցելու, հայրենի ծուխը ծխելու, հայրենի մշակույթը ծաղկեցնելու հայրենասիրությամբ, որի առանցքում հայ հոգուց անջնջելի Արարատն է՝ ժայռացած մեր ինքնությունը, խորհրդանիշը մեր հայրենիքի ու արդար դատի եւ Սուրբ Էջմիածինը՝ խորին խորհուրդը մեր ինքնության» (Գարեգին Բ):

Ահավասիկ այս համոզումով, այս հավատամքով եւ այս պատգամով է, որ շուրջ քսան տարի առաջ ազգիս Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանձն առավ Հայ Եկեղեցու նավը՝ իբրեւ անցյալի վե՛հ ժառանգություն՝ նոր խոսքով ու նոր արժեքների ոգեկոչմամբ՝ հանձնառու բազում զոհողությունների ու դժվարությունների, հայրենասիրության բնական ամենախոր գիտակցումով եւ հոգեւորի ճանաչողությանը նախանձախնդիր: Եվ այս ամենն ընդհանուրի մեկ մասնիկը լինելու զգացողությամբ ու ապրումով, արդարության, օրենքի եւ իրավունքի, քրիստոնեական արժեքների, հասարակական մեր կյանքի ու պետականության ամրապնդման տեսլականով: Եվ ինչպես որ ինքը՝ Վեհափառն է նկատել տալիս. «Աստված կարգեց մեզ Իր այգու մեջ պտղաբեր լինելու... Հավատով հաստատենք մեր ընթացքը դեպի ակունքը կյանքի, ակունքն ամենայն բարյաց ու շնորհաց, Աստծուն ընտրենք մեր բոլոր գործերին զորակից... Աղոթենք, որ Տիրոջ օգնությամբ հավատը նորոգի մարդկային հոգիները... Եվ թող մեր հավատից ծնված գործերն ուղղորդեն վերածննդի նոր ճանապարհը հայության կյանքի, մեր Հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու»:

«Գտա այնոցիկ, որ զիս ո՛չ խնդրեին, եւ յայտնի եղէ այնոցիկ, որ զիս ո՛չ ճանաչէին» (Ես. ԿԵ 1, Հռոմ Է 70):

Ամենայն իրավամբ մի առանձին շնորհ, նախախնամության մի առանձին տնօրինություն կարելի է համարել Վեհափառ Հայրապետի գահակալությունը: Ընտրությունից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետն իր ողջ եռանդով ձեռնամուխ եղավ եկեղեցական ներքին եւ արտաքին կյանքի կազմակերպմանը՝ կարեւորելով ուսումնակրթական հաստատությունների դերն ապագա հայ կյանքում: Այսօր արդեն Գեւորգյան հոգեւոր ճեմարանը բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ ունի եւ աստվածաբանական համալսարան է, որտեղ դասավանդում են ճանաչված մասնագետներ, մշակվում եւ նորացվում են ուսումնական ծրագրերը: Ճեմարանի սաներից շատերն իրենց կրթությունը շարունակում են արտերկրյա (Ռուսաստան, ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա, Իտալիա, Հունաստան, Սիրիա եւ այլն) բարձրագույն հոգեւոր հաստատություններում: Առանձնակի ուշադրություն է դարձվում մեր եկեղեցական հայրերի գրական ժառանգության հրատարակությանը: Պարբերաբար կյանքի են կոչվում եկեղեցագիտական, աստվածաբանական, ինչպես նաեւ հայ կյանքին վերաբերող բարձրարժեք այլ աշխատություններ: Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին կրթվել է եւ կրթվում է հոգեւորականների մի ողջ սերունդ, որոնցից շատերը կոչված են պահպանելու մեր ինքնությունը եւ բազմապատկելու ազգային-եկեղեցական, մշակութային, կրոնական առաջընթացը՝ ոչ միայն հայրենիքում, այլեւ աշխարհի բոլոր այն ծագերում եւ անկյուններում, որտեղ ապրում եւ արարում է հայ մարդը: Հոգեւոր-կրթական հաստատությունների կողքին իրենց առաքելությունն են իրականացնում հայորդյաց տները, երիտասարդաց միությունները եւ մի շարք այլ հաստատություններ, որոնք կոչված են հայ մանուկների մեջ դաստիարակելու քրիստոնեական կյանքի եւ կենցաղավարության դարավոր ավանդույթները: Նորին Սրբության նախաձեռնությամբ եւ ՀԲԸՄ-ի աջակցությամբ խնամքի կարոտ կարիքավոր տարեցներին օգնելու նպատակով գործում են բարեգործական ճաշարաններ: Ծրագրվում են նորանոր աշխատանքներ՝ վանական կյանքի վերահաստատման առնչությամբ: Մեր երանաշնորհ հայրապետներից քչերն են կարողացել իրենց վերապահել այսպիսի «շքեղություն», այն էլ՝ այսքան կարճ ժամանակահատվածում: Դիպուկ ենք նկատում երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հետեւյալ մտածումը. «Մենք չափազանց մխիթարված կլինենք, եթե մի կաթիլ լույս մեզնից հետո ավելանա մեր բազմադարյան Եկեղեցու պատմության գանձարանի մեջ, եւ մի շողով ավելի ճառագայթի Լուսավորչի անմար կանթեղը»:

Այսօր առավել, քան երբեւէ Հայ Եկեղեցին իր ծառայական կերպի մեջ է: Հայ հոգեւորականն ամենուր ներկա է մեր ժողովրդի կյանքում. «Վասն որոյ ճանաչել մարդի հոգին եւ նրա բոլոր կարողութիւնները, հիմնական տեղ

է բռնում բոլորի համար, որոնք կամենում են գիտնական ճանապարհով ընթանալ, այլեւ նոցա համար, որոնք փափագում են քաղաքակրթութեան պտուղները վայելել, եւ ոչ թէ խոպան հող լինել լուսաւոր սերմերի առաջ» (Ա. Տեր-Միքելյան):

Հայոց բանակում այլեւս կանոնակարգված են հոգեւոր սպասավորի տեղն ու դերը: Հայ հոգեւորականն այցելում է դպրոց, հիվանդանոց, քրեակատարողական հիմնարկներ: Արժանահիշատակ է Վեհափառ Հայրապետի՝ գիտության, արվեստի, պետական ու եկեղեցական գործիչների վաստակի գնահատումը: Հայրապետական տնօրինությամբ Սբ Աստվածածնի Ավետման տոնը հռչակվել է Մայրերի, Սբ Սարգիս զորավարի տոնը՝ Երիտասարդների, Տյառնընդառաջը՝ Նորապսակների, Ծաղկազարդը՝ Երեխաների օրհնության օր: Առաջին անգամ է մեզանում, որ Հայ Եկեղեցին այսչափ տեսանելի ներկա է մեր ժողովրդի կյանքում, եւ թերեւս առաջին անգամ է, որ մեր ժողովուրդն այսչափ կարեւորում է իր Եկեղեցու ներկայությունը, այսչափ զգացականորեն գնահատում եւ արժեւորում եկեղեցական տոների ու խորհուրդների կարեւորությունը:

Եկեղեցական բազմակողմանի բարեկարգությանց շնորհիվ այսօր արդեն տեսանելի է Հայ Եկեղեցու վաղվա՛ օրը, ինչը որքան որ կարեւոր է ու առանցքային մեր ժողովրդի կյանքում, նույնքան էլ՝ պատասխանատու.

«Ծնվում է, աճում է մի բան յուրաքանչյուր վայրկյան կյանքում.
Մեռնում է, կորչում է մի բան յուրաքանչյուր վայրկյան կյանքում.
Բայց ծնվողը — ծնվում է պայքարով, պայքարո՛վ է մեռնում եւ մեռնողը, —
Եվ այսպես — կոփվում է ապագան յուրաքանչյուր վայրկյան կյանքում» (Ե. Չարենց):

Վեհափառ Հայրապետը մեծապես նախանձախնդիր է նաեւ եկեղեցաշինության բնագավառում: Նրա հայրապետության ընթացքում Հայաստանում ու արտերկրում օծվել ու կյանքի են կոչվել բազում եկեղեցիներ, մատուռներ ու զանգակատներ: Հուրախություն մեր ժողովրդի՝ եկեղեցաշինական աշխատանքները հիշյալներով չեն սահմանափակվում: Հայոց Հայրապետը հիրավի «Մեծ Շինարար է»:

«Աշխարհագրական հեռաւորութիւնները, քաղաքական տարբերութիւնները, մշակութային եւ կենցաղային այլազանութիւնները չեն կրնար վնաս բերել սրտի, մտքի, հոգիի, ճակատագրի միութեան, եթէ հաղորդութիւնը ըլլայ շարունակական եւ խոհական, միշտ փոխադարձ հասկացողութեան ոգիով զսպանակուած» (Գարեգին Ա):

Ժամանակակից էկումենիզմի ճգնաժամի պայմաններում Հայոց Հայրապետը կարեւորում է Հայ Առաքելական Սբ Եկեղեցու համագործակցությունը ԵԿՀ-ին՝ գործուն մասնակցություն ցուցաբերելով միջքրիստոնեական երկխոսության հնարավորությունների ընդլայնմանը եւ ընդհանրապես աշխարհում խաղաղության պահպանմանը:

Բազմակողմանի հանդիպումներ՝ ուղղված քրիստոնյա եւ այլադավան ժողովուրդների բարեկամությանը, հաշտության հաստատումն ու ապահովումը հարեւան երկրների միջեւ, մշակութային արժեքների հանդեպ «աստվածընդդեմ երեւույթների», վանդալիզմի դրսեւորումների կանխումն ու բարոյական արժեքների հաստատումը: Զանազան ծրագրեր միջպետական մակարդակով՝ երկրների միջեւ բարեկամական կապի ջերմացման ու ամրապնդմանն ուղղված: Փոխադարձ այցելություններ քրիստոնյա եւ մահմեդական աշխարհի հոգեւոր գործիչների հետ, ջերմ բարեկամական, միջկրոնական երկխոսության եւ համագործակցության խթանում: Այս ժամանակահատվածում տեղի են ունեցել մի շարք համագումարներ՝ համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների, ինչպես նաեւ մի շարք կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ՅՈՒՆԵՍԿՕ) ներկայացուցիչների միջեւ՝ կանխելու քաղաքական բախումները:

Վեհափառ Հայրապետը մշտապես կարեւորում է մեր ժողովրդի անցած ճանապարհն ու 1915 թ. ցեղասպանության ճանաչման խնդիրը, Հայաստան—Սփյուռք

հոգեւոր-ազգային կյանքի ու զարթոնքի ամրապնդումը, հայոց գիտական ու մշակութային կյանքի առաջխաղացումը՝ հանուր մարդկության դիտակետի վրա:

Վեհափառ Հայրապետը մի շարք երկրների, մի շարք հաստատությունների, գիտաուսումնական հաստատությունների պատվավոր անդամ է, փիլիսոփայության դոկտոր: Նորին Սրբությունը պարգեւատրվել է մի շարք երկրների (Հորդանան, Պաղեստին, Ռումինիա, Ուկրաինա, Ֆրանսիա, Ռուսաստան) բարձրագույն պարգեւներով ու շքանշաններով: Արդարեւ որքան մեծ է Վեհափառ Հայրապետի դերը՝ ի շինություն աստվածակառույց մեր Սուրբ Եկեղեցու, ի պահպանություն հայ հոգու փրկության, եւ ինչպիսի մեծագործ ջանքեր կան դեռեւս ապագայում՝ ի վայելումն ազգիս հայոց: Վեհափառ Հայրապետի գահակալության այս հոբելյանը որոշ առումով կարելի է նկատել իբրեւ ազգային տոնախմբության եւ զարթոնքի տոն, որովհետեւ ողջ հայ ժողովուրդն ունի մեկ Մայր Աթոռ, մեկ Էջմիածին, մեկ Ամենայն Հայոց Հայրապետ, որ հիրավի իր հայրական ջերմ վերաբերմունքով, անձանձիր նվիրումով, անսպառ եռանդով, սահուն ու անշտապ կյանքի է վերածում այնպիսի երազներ եւ այնպիսի սիրահոժար ոգեւորությամբ, որ, ինչպես ժամանակին նկատել է Հայ Եկեղեցու մեծագույն մտածողներից մեկը, բովանդակությունը գերազանցում է ժամանակը: Եկեք մենք էլ, սիրելինե՛ր, իբրեւ հարազատ զավակները մեր Մայր Եկեղեցու, խոնարհ երախտագիտությամբ շնորհավորենք Հայոց Հայրապետին եւ վերանորոգված սրտով, ուխտյալ պարտաճանաչությամբ եւ ամբողջանվեր ծառայասիրությամբ միաբանենք մեր խոսքն ու շնորհակալության զգացողությունները՝ յուրաքանչյուրս մեր

պարտականությունների ամբողջական գիտակցությամբ՝ մեր հայրենին պահպանելու եւ մեր ապրած օրն արգասավոր դարձնելու համար: Սա թերեւս քրիստոնեական մեր կենցաղավարության մեջ ամենամեծ զոհողությունն է, ամենատեսանելի էականն ու ամենափնտրելի վարձատրությունը: Եվ թող Մեծն Աստծո ամենատես Աչքը հովանի ու պահապան լինի Հայոց Հայրապետին՝ հովվելու յուր հավատացելոց Հայաստանում, Արցախում եւ ամբողջ աշխարհում: Ամեն:

Իսահակ վարդապետ ՊՈՂՈՍՅԱՆ

Խոսքը վերցված է «ՔՀ»-ի նախորդ համարներից

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Գարեգին Բ Հայրապետի գահակալության շուրջ 20 տարվա ընթացքում, ի շարս Մայր Աթոռի այլեւայլ կառույցների, որ գտնվում են Վեհափառի ամենօրյա հոգածու ուշադրության ներքո, առանձնահատուկ տեղ ունի Գեւորգյան ճեմարանը՝ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու հոգեւոր գլխավոր դարբնոցը:

Պատմական դժվարին, սակայն փառահեղ ուղի է անցել հայոց աշխարհի առաջին բարձրակարգ կրթօջախը: 1874 թ. սեպտեմբերի 28-ին Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի ջանքերով հիմնված այս հաստատությունը մշտապես եղել է մեր հետագա հայրապետների խնամքի եւ զուրգուրանքի առարկան:

Մեծ է եղել նաեւ մեր ժողովրդի սերը Գեւորգյան ճեմարանի հանդեպ, այնքան մեծ, որ նրա բացումը վերաճել է ժողովրդական տոնախմբության: Ահա թե ինչ է գրում իր հուշերում ճեմարանի առաջին սաներից մեկը՝ Տ. Խորեն (Համբարձում) ավ. քահանա Ստամբոլցյանը (1858—1927). «... ս. Պատարագից յետոյ եկեղեցական թափորով, Վեհափառ հայրապետի գլխաւորութեամբ եկան ճեմարան, մաղթանք կատարեցին, ճառեր արտասանեցին, շնորհաւորութիւններ եւ ճաշկերոյթ, երեկոյեան էլ հրավառութիւն տեղի ունեցաւ: Վանքի բակում, լճի ափին եւ գիւղամէջ լցւած ուխտաւորները ամեն կողմ դափ ու զուռնայով

ուրախութիւն էին անում, եայլի երգում ու պարում կէսգիշերից անց...»: Սակայն ուրախությունը կարճ է տեւում.

«Երկու շաբաթ հազիւ էր անցել, երբ մի սեւ առաւօտ՝ հոկտեմբերի 14-ին, լուր տարածւեց, որ ճեմարանը այրւում է, եւ սոսկալի իրարանցում տեղի ունեցաւ: ...Հետզհետէ ահագին բազմութիւն հաւաքւեց, ամէն կերպ աշխատում էին իրերը դուրս կրել եւ կրակը հանգցնել: Այնտեղ էր եւ Վեհափառ հայրապետը բարձր հոգեւորականներով ու պաշտօնական անձերով շրջապատւած: Պէտք էր տեսնել, թէ ծերունի հայրապետը որպիսի ցաւալի ճիչեր էր արձակում եւ ձգտում մտնել ճեմարան, բայց շրջապատողները չէին թողնում: Մինչեւ երեկոյ հազիվ կրակը հանգցրին, բայց արդէն կէս մասից աւել այրւել էր...»: Բայց կարճ ժամանակ անց ճեմարանը կրկին վերակառուցվեց եւ բացեց իր դռները հայ ուսումնատենչ պատանիների առջեւ: Բավական է թվարկել ճեմարանի նախկին դասախոսների ու սաների նվիրական անունները, որ յուրաքանչյուր հայի սիրտ լցվի ազգային արժանապատվության վեհ զգացումով. Մեծն Կոմիտաս, Կարա-Մուրզա, Վարդգես Սուրենյանց, Եղիշե Թադեւոսյան, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Կարապետ Տեր-Մկրտչյան, Գարեգին Հովսեփյան, Գարեգին Լեւոնյան, Հ. Հովհաննիսյան, Ս. Մանդինյան, Կ. Կոստանյան, Ա. Շահմուրադյան եւ մեծագործ այլ հայորդիներ:

1917 թ. դեկտեմբերի 21-ին Գեւորգյան ճեմարանը փակվեց... եւ միայն տարիներ անց՝ 1949 թ., Գեւորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի մեծագույն ջանքերի գնով, ճեմարանը վերստին բացվեց՝ շարունակելու իր վսեմ առաքելությունը:

Հետագայում Գեւորգյան կրթօջախի հեղինակությունն ու վարկը մեծապես բարձրացան Վազգեն Ա եւ Գարեգին Ա մեր երջանկահիշատակ Կաթողիկոսների օրոք: Ստեղծվեցին պայմաններ ուսանողների դասընթացն ու հանգիստը պատշաճ կազմակերպելու համար: Մասնավորապես Գարեգին Ա Հայրապետի գահակալության տարիներին կառուցվեց ճեմարանի հանրակացարանի շենքը:

Նրանց գործը շարունակեց Գեւորգյան ճեմարանի նախկին սան՝ այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը:

Վեհափառի ջանքերով, ՀՀ կառավարության որոշմամբ, ճեմարանը 2002 թ. հունիսի 19-ին ստացավ բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ, որը ճեմարանի տեսչությանը հնարավորություն տվեց ճեմարանականների ուսումնառությունը դնել ավելի ամուր հիմքերի վրա: Ստեղծվեցին մասնագիտական չորս ամբիոններ՝ աստվածաբանության, եկեղեցագիտության, լեզվաբանության, պատմության եւ իմաստասիրության, որոնց շնորհիվ համապատասխան առարկաների ուսուցումը դարձավ ավելի հիմնավոր եւ ըստ համալսարանական չափանիշների:

Այսօր Գեւորգյան ճեմարանում ուսանում են մեր Եկեղեցու բազմատասնյակ ապագա հոգեւորականներ, դասավանդում են հանրապետության գիտական տարբեր հիմնարկների ու բուհերի առաջատար մասնագետներ: Ճեմարանի ուսանողներն ապահովված են կենցաղի եւ ուսման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով:

Գարեգին Բ Հայրապետի ջանքերով կատարվեցին նաեւ ճեմարանի հիմնովին վերանորոգման աշխատանքները: Եվ 2004 թ. օգոստոսի 5-ին տեղի ունեցավ Գեւորգյան ճեմարանի (բարերարներ՝ Գեւորգ եւ Սիրվարդ Հովնանյաններ) հանդիսավոր բացումը: Արարողության ժամանակ արտասանած իր խոսքում Վեհափառը նշեց. «Այսօրվա ուրախությունն աղոթք է դարձել մեր հոգում մեր երջանկահիշատակ նախորդ Հայրապետների համար, որոնց տեսիլքն ու երազն է եղել տեսնել վերաբացված դռներն այս պատմական հաստատության, տեսնել զորացած ու անշեղ ընթացող մեր Եկեղեցին: Քանզի նրանով են ապրել եւ պահպանել իրենց ինքնությունը մեր նախնիք, նրանով են հայաշունչ ոգով կրթել ու դաստիարակել իրենց զավակներին»:

ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑ

Հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ իր հոգեւոր, գիտական եւ մշակութային անուրանալի դերակատարումն ունեցող Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կողքին 1990 թ. Սեւանա կղզու ստորոտում, նախաձեռնությամբ եւ անմիջական ջանքերով Արարատյան հայրապետական թեմի այն ժամանակվա առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի (հիմա՝ Գարեգին Բ Կաթողիկոս), բացվեց հոգեւոր-կրթական մի նոր հաստատություն եւս, որը հետագայում անվանվեց երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի անունով:

Անցյալ ոչ այնքան հեշտին շուրջ 20 տարվա դասընթացներն ու դասավանդված առարկաները տվել են այն բոլոր հիմքերը, որ Սեւանի Վազգենյան դպրանոցի շրջանավարտներն ու ուսանողները կարողանան իրենց գիտական ուսումնասիրություններով ու հրատարակած նյութերով մեծ նպաստ բերել ոչ միայն հայագիտությանն ու աստվածաբանությանը, այլեւ բանասիրությանն ու գիտության հարակից ճյուղերին: Նրանք այսօր արդեն արժանի հետնորդներն են սահակ-մեսրոպյան փառահեղ հոգեկերտումի, Սեւանում հիմնված վարդապետարանի ու բարձրագույն դպրոցի սրբազան ավանդների: Արժե նշել, որ 2004 թ. հոկտեմբերի 5-ին, Հայ Եկեղեցու ազնիվ բարերարներ տեր եւ տիկին՝ Գառնիկ եւ Անի Յակուբյանների բարերարությամբ, բացվեց Վազգենյան դպրանոցի նոր, եռահարկ մասնաշենքը:

Իսկ թե ինչպես, ինչ գնով ու ջանքերով, բարոյահոգեբանական ինչպիսի մթնոլորտում ի սկզբանե ձեւավորվեց ու կյանք մտավ դպրանոցը, Վեհափառ Հայրապետից լավ ոչ ոք չի կարող ներկայացնել: Ուստի

նպատակահարմար գտանք խոսքը տալ հենց իրեն՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին.

«Ինձ համար առանձնակի ուրախության, հուզումի, բերկրանքի պահ է...

Գեղեցիկ հուշեր այս պահին զծագրվում են իմ մտապատկերի առջեւ, որոնցից մի քանիսը կուզեմ փոխանցել ձեզ: Տարիներ առաջ, երբ այցելեցի Սեւանա կղզի, Խրիմյան Հայրապետի ընծայարանի շենքի առջեւ, հայացքս հառած բարձունքում մենավոր կանգնած, կարծես որբացած հայոց վանքերին, հանկարծ մտածում եւ ներշնչանք ունեցա՝ հոգեւոր-կրթական հաստատությամբ օժտելու այդ մենաստանը, այդ կղզին: Խնդրանքս ներկայացրեցի երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ստանալով Հայոց Հայրապետի օրհնությունը՝ ձեռնամուխ եղա դպրանոցի հիմնադրման գործին: Ընդունելության քննություններն արդեն ավարտված էին Գեւորգյան ճեմարանում, շուրջ 23 սան դուրս էր մնացել: Վերցրեցի նրանց, եւ գնացինք: Միայն չորս պատ ունեինք եւ երկրաշարժի օրերից օգնություն ստացած երկհարկանի մահճակալներ...

Նրանցից երեքը միայն առաջին տարում ունեցան Սեւանի Վազգենյան դպրանոցի շրջանավարտ լինելու շնորհը, մնացյալները եկան հետո՝ հաջորդ տարի:

Ես անչափ ուրախ եմ եւ փառք ու գոհություն եմ առ Աստված բարձրացնում, որ կայացավ Վազգենյան դպրանոցը, եւ անհուն միխիթարություն եմ ապրում այն զգացումից, որ երկնքից այս պահին այստեղ են իրենց հայացքն ուղղել եւ բերկրանք են ապրում երջանկահիշատակ մեր նախորդները՝ Վազգեն եւ Գարեգին Առաջին Կաթողիկոսները:

Մեր երազը դարձավ իրականություն՝ շնորհիվ անձնվեր մանկավարժների, շնորհիվ քաջ, արի, նվիրյալ մեր սաների: Բազում փորձությունների, վտանգների միջով անցավ կրթական մեր կյանքը Սեւանի դպրանոցում. եղան պահեր, երբ թվում էր, թե պիտի փակվի, լուծարվի կրթական այդ հաստատությունը, բայց սերը, երազը, նպատակը, տեսիլքը, որ ունեին դպրանոցի սաներն ու դասախոսական կազմը, նրանց ոգի հաղորդեցին, ուժ եւ կամք պարգեւեցին՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները...

Իրապես, բազում դժվարությունների հաղթահարումով կյանք առավ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը եւ սերունդ պարգեւեց Հայաստանյայց Առաքելական մեր Եկեղեցուն եւ մեր ժողովրդին:

Մենք մխիթարված ենք մեծապես՝ տեսնելով ոգին այդ արիության, տեսնելով պատասխանատվության բարձր գիտակցությունն ու հայրենասիրությունը Սեւանի դպրանոցի շրջանավարտների:

Արցախում ընթանում էին ազատագրական մարտերը, բարձրացա Սեւան՝ հանդիպելու սանուց հետո, ուսանողները ներկայացան ինձ, եւ նրանցից մեկը խոսք խնդրեց եւ հանուն իր ընկերների հայտնեց ինձ, որ որոշել են բոլորը միասին կամավոր մեկնել Արցախ. մեղքի զգացումը ծանրացած է իրենց սրտի վրա. իրենց եղբայրներն այնտեղ կռվում են, իսկ իրենք այստեղ՝ ուսանողական նստարանների հետեւ, կրթության, գիտության են նվիրել իրենց անձերը: Կարող եք պատկերացնել իմ վիճակը. քարոզում ենք՝ որպես առաջնորդ, ունենալ հայրենասիրական ոգի, ունենալ նվիրում դեպի հայրենիքը եւ դեպի ժողովուրդը եւ հիմա այդ ոգու դրսեւորման առջեւ ենք կանգնած, եւ պետք էր վճիռ կայացնել: Անշուշտ ժամանակ էր պետք շահել, նվիրական էր նրանց զգացումը, եւ շատ նուրբ էր պահը: Խնդրեցի, որ մի քանի օր համբերեն, որ ես կարողանամ իրենց խնդրանքը ներկայացնել Հայոց Հայրապետին՝ Վազգեն Ա Կաթողիկոսին՝ անշուշտ բացատրելով նաեւ, որ նվազ կարեւոր մարտ ու պայքար չէ, որ իրենք մղում են Սեւանա մենաստանում, որ վաղը իրենք, ավարտելով կրթական այդ հաստատությունը, լինելու են մարտիկներ արի, քաջ, նվիրյալ մարտիկներ մեր ժողովրդի հոգեւոր պայքարում: Այս եղավ խորհուրդը նաեւ Վազգեն Վեհափառ Հայրապետի:

Այսօր, երբ տարիներ են անցել, բնականաբար իմ հոգին լցված է անհուն երախտագիտության զգացումով, եւ ես ուզում եմ մեկ առ մեկ իմ շնորհակալությունը հայտնել, երախտագիտությունը բերել նրանց, ովքեր իրենց ներդրումն ունեն Սեւանի Վազգենյան դպրանոցի կյանքում՝ դասախոսներից մինչեւ բարեգործներ» (վերցված է 2000 թ. Վազգենյան դպրանոցի 10-ամյակին նվիրված հանդիսությունում արտասանած խոսքից):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՀԲԸՄ-Ի ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏՆԵՐ

Ա՛ր Եկեղեցու նվիրական առաքելություններից մեկը հայ մանուկների՝ ապագա սերնդի արժանապատիվ դաստիարակությունն է, Աստծուն, Եկեղեցուն, ազգին ու հայրենիքին նվիրված հայի կերտումը: Այդպես է եղել անցյալում, այդպեսէ նաեւ այսօր: Ահա այս նախանձախնդրությամբ ու տեսլականով, երկրի համար ծանր ու դժվարին 1993 թվականին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի (այն ժամանակ՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյան) ձեռնարկումով եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության (նախագահ՝ Լուիզ Մանուկյան Սիմոն) ֆինանսական հովանավորությամբ՝ Արարատյան հայրապետական թեմն ստանձնեց Երեւանի Նոր Նորքի, Արաբկիրի եւ Մալաթիայի մանկապատանեկան ստեղծագործական նախկին կենտրոնների (պիոներպալատներ) տնօրինությունը՝ վերանվանելով դրանք «հայորդյաց տներ»:

Նախկին պիոներպալատների շենքերն ու շինությունները հիմնովին վերանորոգվեցին, բարեկարգվեցին ներքին տարածքները, դասասենյակները, սպորտային եւ հանդիսությունների դահլիճները ձեւափոխվեցին ու հարդարվեցին արդի պահանջներին համապատասխան կահավորանքով, ապահովվեցին մասնագիտական գործիքներով, նյութերով, տեխնիկական միջոցներով: Այստեղ՝ այս հիրավի անկրկնելի կրթօջախներում, երեխաներն սկսեցին ուսանել արվեստի, տարբեր արհեստների, սպորտային եւ գիտատեխնիկական դասարաններում:

1999-ի դեկտեմբերից, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, հայորդյաց տները եւ Քանաքեռում գործող մանրանկարչության արվեստի կենտրոնը առանձնացվեցին Արարատյան հայրապետական թեմից եւ դարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակառույցներ: Իսկ 2003-ի հունվարից, ՀՀ կառավարության որոշմամբ, Արաբկիրի, Մալաթիայի եւ Նորքի հայորդյաց տների շենքերն ու շինությունները սեփականության իրավունքով հանձնվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

2003-ի մարտից Մայր Աթոռի հովանու ներքո անցավ 2002-ից Գուգարաց թեմում գործող Վանաձորի հայորդյաց տունը (հովանավորներ՝ Սարգիս եւ Ռուբ Բեղեւյաններ): Իսկ 2003-ի մայիսից հայորդյաց տան կարգավիճակ ստացավ Էջմիածնի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը (հովանավորներ՝ Հրաչ եւ Սյուզաննա Թուֆայաններ): Հայորդյաց տների կազմում են նաեւ Էջմիածնի ծերանոցը, հայորդյաց տների հյուրատունը եւ Աղվերանի «Մասիս» պանսիոնատը:

Այսօր էլ ՀԲԸՄ-ն շարունակում է հովանավորել հայորդյաց տների գործունեությունը՝ նորընտիր նախագահ Պերճ Սեդրակյանի գլխավորությամբ: ՀԲԸՄ-ի ֆինանսական աջակցությունը հնարավորություն է տալիս հայորդյաց տների մոտ 3500 սաներին հիմնավոր կրթություն ստանալու մասնագիտական տարբեր ոլորտներում: Նրանց ուսումնառության գեղարվեստական բարձր մակարդակն ապահովելու նպատակով գործում է գեղարվեստական խորհուրդ, որը կազմակերպում է դասալսումներ, ստուգայցեր, բաց դասեր, բանավեճեր:

Կրթօջախներում աշխատանք է տարվում ստեղծելու դպրոցական համակարգ: Դասավանդվող առարկաների ծրագիրը տարեցտարի բարդանում է, եւ երեխան հաջորդ դասարան է փոխադրվում ավարտական քննություն հանձնելուց հետո: Հարկ է նշել, որ դասապրոցեսում հաշվի են առնված պետական, մասնագիտական, բժշկական բոլոր նորմերն ու պահանջները: Եվ ստացած կրթությունը երեխաներին լիարժեք հնարավորություն է տալիս հետագայում շարունակելու ուսումը հանրապետության տարբեր բուհերում: Արդեն իսկ հայորդյաց տների շրջանավարտներից շատերն ընդունվել են բուհ՝ իրենց նախընտրած մասնագիտությունն ուսանելու:

Դասավանդման ընթացքում հաշվի են առնվում նաեւ ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի օրավուր աճող պահանջները: 2002-ի սեպտեմբերից Արաբկիրի եւ Նորքի հայորդյաց տներում բացվեցին համակարգչային դասարաններ: Ամերիկահայ բարերար Սեմ Սիմոնյանի հովանավորությամբ երկու հայորդյաց տներում տեղադրվել է Pentium 4 տիպի 60 համակարգիչ: Իսկ 2004-ի ապրիլից համակարգչային դասարաններ բացվեցին նաեւ Մալաթիայի հայորդյաց տանը, ուր տեղադրվել է 20 համակարգիչ:

Կրթօջախներում առաջնային է նաեւ հոգեւոր դաստիարակությունը: Հայորդյաց տուն հաճախող բոլոր սաները պարտադիր ստանում են հոգեւոր կրթություն: Նրանք իրենց մանկավարժների հետ մասնակցում են եկեղեցական տոնական արարողություններին, ուսանում Հայ Եկեղեցու պատմություն, ծանոթանում ավետարանական պատումներին, այցելում են թանգարաններ, գրադարաններ, թատրոններ, հանդիպում հոգեւորականների, մտավորականների, հայոց բանակի մարտիկների, ծերանոցաբնակ ծերերի հետ: Հայորդյաց տներին կից գործում են նաեւ Եկեղեցասեր երիտասարդների միություններ:

Իրենց ամենօրյա աշխատանքին զուգահեռ հայորդյաց տները լուծում են նաեւ սոցիալական խնդիրներ:

Այսօր համակարգում աշխատանքով ապահովված է շուրջ 350 մարդ: Վեհափառ Հայրապետի ջանքերով

բոլոր հայորդյաց տներում, ինչպես նաեւ Հրազդան եւ Սեւան քաղաքներում գործում են նաեւ աղքատասիրաց ճաշարաններ: ՀԲԸՄ-ի ֆինանսավորմամբ այդ ճաշարանները հոգում են շուրջ 1200 կարիքավոր միայնակ ծերի հանապազօրյա հացի խնդիրը: Նրանցից շատերը, որ ժամանակին տարբեր բնագավառների մեր գործիչներն են եղել, այսօր հոգատարության կարիք ունեն եւ գտնվում են սրտացավ ուշադրության կենտրոնում:

Հայորդյաց տների սաների մեջ մեծ թիվ են կազմում զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով, ինչպես նաեւ բազմազավակ ընտանիքների երեխաները, որոնք օգտվում են զանազան արտոնություններից:

Ուսումնառությունից բացի՝ հայորդյաց տների երեխաները հնարավորություն ունեն կազմակերպելու իրենց ակտիվ հանգիստը:

Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ եւ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ ամեն ամառ Աղվերանի «Նարինե» ճամբարում իրենց ամառային հանգիստն են անցկացնում հայորդյաց տների՝ ուսման առաջադիմությամբ, ստեղծագործական հաջողություններով աչքի ընկած եւ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները:

Երեխաների աշխույժ հանգիստը կազմակերպելու նպատակով, Վեհափառ Հայրապետի հոգածությամբ, Նորքի հայորդյաց տանը կից (հովանավոր՝ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ) եւ Էջմիածնի «Ներսիսյան» անտառ-պուրակում (հովանավոր՝ «Գուլամերյան» հիմնադրամ) բացվել են նաեւ խաղահրապարակներ՝ հագեցած բազմապիսի խաղասարքերով:

Հայորդյաց տներում ամեն տարի իրագործվում են նորանոր ծրագրեր, կազմավորվում նոր դասարաններ: Ուրախալի է, որ ծնողները, իրենց զավակներին ուղեկցելով կրթօջախ, իրենք եւս ցանկանում են մասնակից լինել նրա կյանքին: Այդպես՝ ընդառաջելով նրանց առաջարկ-խնդրանքին՝ 2003-ի սեպտեմբերից Նորքի հայորդյաց տան սպորտային սրահը մարզասարքերով կահավորվեց այնպես, որ ոչ միայն օգտվեն երեխաները, այլեւ մեծահասակները: Ի դեպ՝ այստեղ արժե հիշատակել այն փաստը, որ այս հայորդյաց տունը միակ հաստատությունն է ոչ միայն մեր հանրապետությունում, այլեւ տարածաշրջանում, ուր պատրաստում են կրկեսային արտիստներ: Նրանց զգալի մասն արդեն իր ստեղծագործական աշխատանքն է իրականացնում մեր Կրկեսի ազգային թատրոնում:

Ուսումնառությունից բացի՝ ամեն տարի հայորդյաց տներում կազմակերպվում են զանազան մեծ ու փոքր միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, սպորտային մրցումներ, բարեգործական եւ տարեվերջյան հաշվետու համերգներ, ուխտագնացություններ: Երեխաները մասնակցում են հանրապետական եւ միջազգային տարբեր ցուցահանդես-մրցույթների, մրցումների, համերգների ու արժանանում մրցանակային բարձր տեղերի, պարգեւների:

Եվ այսօր կարող ենք վստահորեն փաստել, որ իրենց կենսագրությամբ, ազգաշեն գործունեությամբ հայորդյաց տները խոսուն վկայությունն են այն իրողության, որ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի խոհն ու տեսլականը՝ հայ մանուկի ներկան ու ապագան ճիշտ հուն բերելու, իմաստավորելու նրա առօրյան, արդեն իրողություն են, օրինակելի իրագործում:

Վերջին տարիներին հայորդյաց տների համակարգն ընդլայնվեց նոր հաստատություններով. կյանք մտան Աշտարակ եւ Գյումրի քաղաքների հայորդյաց տները:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ (2000—2021 ԹԹ.)

Համաշխարհայնացման (գլոբալիզացիա) գործընթացն ու նեոլիբերալիզմի գաղափարախոսության նպատակային եւ ուղղորդված քարոզչությունը նորանոր խնդիրներ են առաջացրել: Միանգամայն նոր մարտահրավերների առջեւ է կանգնել մարդկային ողջ հասարակությունը, նոր «կանոնների» են ենթարկվում միջանձնային, միջմշակութային եւ միջկրոնական հարաբերությունները: «Առանց սահմանների՝ բաց հասարակության» ձեւավորումն ուղեկցվում է բարոյական սկզբունքների ոտնահարմամբ, ազգային եւ կրոնական ավանդական արժեքների ոչնչացմամբ, ազգային ինքնագիտակցության ու նկարագրի խեղմամբ: Եվ արդեն ակնհայտ է, որ համաշխարհայնացումը ոչ թե տարերային եւ անկառավարելի գործընթաց է, այլ նպատակային քաղաքականություն՝ ուղղված ազգերի ինքնուրույնության, նրանց պատմության, մշակութային համակարգերի, առանձնահատկությունների դեմ: Ստեղծված իրավիճակում՝ նոր աշխարհակարգի պայմաններում, առավել է կարեւորվում հոգեւոր կառույցների՝ որպես ազգային ավանդական արժեքների պաշտպանների դերակատարումը: Բացի այդ՝ աշխարհի տարբեր հատվածներում այսօր բռնկվող պատերազմները, վերջնական լուծում չստացած ծխացող հակամարտությունները, կրոնական արմատականությամբ կամ ծայրահեղականությամբ «արդարացված» ահաբեկչություններն ու աննկարագրելի վայրագությունները, կրոնական եւ ազգային (էթնիկ) ատելությամբ հրահրված բազմաթիվ հանցագործությունները, ազգամիջյան ու միջկրոնական առճակատումներն ընդգծում են միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսությունների առանձնակի նշանակությունը: Սույն գործընթացում իր որոշակի առաքելությունն ունի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Հայոց հայրապետների միջեկեղեցական գործունեության կարգախոսը եղել է Օգոստինոս Երանելու խոսքը, որը ԺԱ դարում, իբրեւ Հայ Եկեղեցու դիրքորոշում, հաստատեց երջանկահիշատակ Ս. Ներսես Դ Շնորհալին (1166—1173 թթ.)՝ *«Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս, սէր յամենայնի»*: Հայոց Եկեղեցին, հավատարիմ Տիրոջ խոսքին եւ իր կոչմանը, միշտ հանդուրժող ու խաղաղասեր է եղել, ուստի ջերմ հարաբերություններ է հաստատել բոլոր Եկեղեցիների հետ՝ միեւնույն ժամանակ անսասան պահելով առաքյալներից ժառանգած Սրբազան ավանդությունն ու վարդապետությունը: Միջեկեղեցական եւ էկումենիկ գործունեության՝ իր երջանկահիշատակ նախորդների հաստատած ավանդույթներով է առաջնորդվում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ըստ էության՝ Հայոց Եկեղեցին կանգնած է ժամանակակից այն մարտահրավերների առջեւ, որոնց դեմ փորձում է պայքարել քրիստոնեական ողջ աշխարհը: Վեհափառ Հայրապետն անդրանիկ կոնդակում հստակ արտահայտել է իր դիրքորոշումը միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերությունների հաստատման վերաբերյալ. *«Շարունակելու ենք գործուն մասնակցութիւն ունենալ միջեկեղեցական կեանքում՝ հաւատարիմ համայն աշխարհում խաղաղութեան պահպանման, ժողովուրդների՝ եղբայրական սիրով համագործակցութեան մեր Եկեղեցու աւանդներին: Նոր ժամանակների տարաբնոյթ մարտահրաւէրների առջեւ քրիստոնէական քոյր Եկեղեցիների հետ մեր ջանքերը միաւորած՝ հետեւողականօրէն իրականացնելու ենք հոգեւորի լոյսով մարդկութեան կեանքի իմաստաւորման սուրբ առաքելութիւնը՝ յանուն քրիստոնէական սկզբունքների կենսագործմամբ բարու յաղթանակի եւ համընդհանուր երջանկութեան»* («Էջմիածին» ամսագիր, 2000, Բ., էջ 3—9):

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր նախորդներից ժառանգած էկումենիկ-միջեկեղեցական գործունեության արժեքավոր փորձառությանը հավատարիմ մնալով, նոր էջ է բացել Հայ Եկեղեցու մերօրյա պատմության մեջ: Նրա հայրապետության շրջանում առավել են ամրապնդվել եւ սերտացել հարաբերություններն ու համագործակցությունը քրիստոնեական բոլոր Եկեղեցիների հետ: Այդ էր վկայում Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններին քրիստոնեական գրեթե բոլոր Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների, միջազգային կառույցների ներկայացուցիչների, կրոնական եւ էկումենիկ տարբեր կազմակերպությունների ղեկավարների մասնակցությունը (*տե՛ս Դավիթ սրկ. Միքայելյան, 1700-ամյակի տոնակատարությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», 2001, Թ., էջ 32*):

Այսպես՝ 2001 թ. սեպտեմբերի 25-ին, Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված տոնակատարություններին

մասնակցելու նպատակով, ՀՀ նախագահի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով, Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հռոմի սրբազան քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապը (*առավել մանրամասն տե՛ս Արթուր սրկ. Հովհաննիսյան, Հռոմի սրբազան քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ-ի այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», 2001, Թ., էջ 53*):

Նշենք, որ պատմության մեջ առաջին անգամ Կաթոլիկ Եկեղեցու սրբազան քահանայապետն այցելեց Հայաստան. եկավ սիրո եւ օրհնության իր խոսքը փոխանցելու մեր ժողովրդին, գլուխ խոնարհելու քրիստոնեական համամարդկային մեր արժեքների առջեւ, ողջ հայության սրբություն սրբոց Միածնաէջ Մայր տաճարում՝ Իջման Սուրբ Սեղանի առջեւ, երկրպագելու եւ աղոթք վերառաքելու առ Աստված՝ պատմության մեջ մի նոր ու փառավոր էջ բացելով Հայ Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների համագործակցության համար: Կաթոլիկ Եկեղեցու հոգեւոր առաջնորդի այցը Հայաստան եւ Սուրբ Էջմիածին, անշուշտ, պատմական իրադարձություն էր. Հովհաննես-Պողոս Բ Պապը մեկ անգամ եւս արժեւորեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարումը քրիստոնեության պատմության կերտման գործում. *«Ձերդ Սրբություն Գարեգին Կաթողիկոս, եղբայրական սիրով ի Տեր ողջագուրում եմ Ձեզ եւ Եկեղեցին, որը նախագահում եք: Առանց Ձեր քաջալերանքի ես այժմ այստեղ չէի լինի՝ որպես ուխտավոր հոգեւոր ուղեւորության մեջ, որ գալիս է մեծարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քրիստոնեական կյանքի բացառիկ վկայությունն այսքա՛ն երկար դարերի ընթացքում եւ հատկապես քսաներորդ դարում, որը ձեզ համար եղավ սարսափի եւ տառապանքի աննկարագրելի ժամանակաշրջան:*

Համայն Կաթոլիկ Եկեղեցին կիսում է Ձեր եւ բոլոր հայերի անհուն ուրախությունը՝ այս մեծապես սիրեցյալ երկրում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով» («Էջմիածին», 2001, Թ., էջ 53—63):

2001 թ. նոյեմբերի 3—5-ը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով, Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Կ. Պոլսի տիեզերական պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա-ն:

Այս այցելությունը եւս հաստատեց, որ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյա տոնակատարություններն ունեն ոչ միայն համահայկական, այլ նաեւ համաքրիստոնեական եւ միջազգային հնչեղություն (*«Էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 5—24*):

Նշենք նաեւ, որ Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին պատմության մեջ առաջին անգամ Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելել

քրիստոնեական աշխարհում հեղինակություն վայելող բազմաթիվ հոգեւոր առաջնորդներ:

Գարեգին Բ Հայրապետի հովվապետության շրջանում Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների փոխադարձ այցելությունները դարձել են առավել հաճախակի եւ արդյունավոր: Միջեկեղեցական հանդիպումներն ու քննարկումներն ավարտվում են հուշագրերի, հռչակագրերի, հայտարարությունների կամ ուղերձների ստորագրմամբ, քրիստոնեական սիրո եւ վստահության մթնոլորտի ձեւավորմամբ, հետագա փոխգործակցության համար անհրաժեշտ պայմանների հաստատմամբ: Ընդլայնվել են հարաբերությունները քույր Եկեղեցիների, կրոնական եւ էկումենիկ բոլոր կազմակերպությունների, նաեւ մյուս կրոնների հոգեւոր առաջնորդների հետ, ինչն էական նշանակություն ունի ազգամիջյան եւ միջմշակութային հարաբերությունների հաստատման, ինչպես նաեւ միջկրոնական երկխոսության ծավալման տեսանկյունից:

Նշենք նաեւ, որ միանգամայն նոր բովանդակություն եւ որակ է ստացել Կաթոլիկ Եկեղեցու հետ համագործակցությունը: Արեւելյան միաբնակ Եկեղեցիների հետ հարաբերություններն առավել սերտ ու գործնական են դարձել: Ամենայն Հայոց Կաթողիկոսն էկումենիկ միության եւ միջեկեղեցական համագործակցության նախապայման է համարում դավանաբանական սեփական սկզբունքների անխախտ պահպանումն ու եկեղեցական Ավանդության անսասանության ընկալումը:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հովվապետի եւ քրիստոնեական մյուս Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների փոխադարձ այցելություններն ու հանդիպումները խիստ տարաբնույթ եւ բազմաթիվ են, ուստի մեր հոդվածի ծավալային սահմանափակությունը նկատի ունենալով՝ կփորձենք ներկայացնել այդ ընդարձակ համապատկերից միայն որոշ դրվագներ:

Համայնավարական կարգերի փլուզումից հետո՝ հետխորհրդային շրջանում, որակական ու բովանդակային առումով նոր շրջափուլ սկսվեց Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների համար: Պատմաքաղաքական որոշակի փոփոխությունների պայմաններում սերտ համագործակցություն ծավալվեց երկու Եկեղեցիների միջեւ: Այսպես՝ 2000 թ. փետրվարի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի եղբայրական հրավերով, մեկնեց Մոսկվա:

Հայ հոգեւորականների պատվիրակության այցը Ռուս Ուղղափառ Եկեղեցու աթոռանիստ, Նորին Սրբության գնահատմամբ, քույր Եկեղեցիների հոգեւոր պետերի եղբայրական սիրո ու հարգանքի արտահայտությունն էր:

Հոգեւոր առաջնորդներն իրավամբ նշեցին, որ 70 տարվա անհավատության մթնոլորտի պատճառով երկու Եկեղեցիներն անցել են փորձությունների միեւնույն ճանապարհը: Նրանք, կարեւորելով Հայաստանում եւ Ռուսաստանում աստվածամերժության պարտադրանքով փակված կամ խոնարհված եկեղեցիների վերականգնումը, այնուամենայնիվ, իբրեւ առաջնային խնդիր, անդրադարձան այն ծրագրերին, որոնք կոչված են նորոգելու, վերակենդանացնելու քրիստոնյաների աղճատված հոգիներն ու նրանց՝ Քրիստոսի Եկեղեցի վերադարձնելու (*«Էջմիածին», 2000, Գ., էջ 3–19*):

2000 թ. օգոստոսի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա: Հաջորդ օրը՝ օգոստոսի 18-ին, Վեհափառ Հայրապետի եւ Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի մասնակցությամբ հայկական խաչքար տեղադրվեց նորակառույց Ս. Ամենափրկիչ եկեղեցու առջեւ՝ ի նշան երկու Եկեղեցիների բարեկամության: Խաչքարի տեղադրման հանդիսավոր արարողությունից հետո տեղի ունեցավ Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման արարողությունը (*«Էջմիածին», 2000, Թ., էջ 3*):

Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների հովվապետների հանդիպումներն ու արդյունավոր համագործակցությունը շարունակվեցին նաեւ հաջորդ տարիներին: Հիշատակենք այդ հանդիպումներից միայն որոշները. 2005 թ. մայիսի 31-ին Մոսկվայում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքին:

Հանդիպման ժամանակ երկու Եկեղեցիների հոգեւոր առաջնորդներն անդրադարձան եկեղեցական կյանքում արձանագրված հաջողություններին, Ռուսաստանի եւ Հայաստանի հոգեւոր վերազարթոնքին: Խոսվեց նաեւ երկու երկրներում իրականացվող մեծածավալ եկեղեցաշինության մասին (*«Էջմիածին», 2005, Զ., էջ 3*):

2010 թ. մարտի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով՝ պաշտոնական այցով, Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Ա-ն:

Կիրիլ Ա Պատրիարքը շնորհակալություն հայտնեց եղբայրական ջերմ ընդունելության համար: Անդրադառնալով քրիստոնեական հավատքի կարեւորությանը հայ ժողովրդի կյանքում՝ նա հիշատակեց Հայ Եկեղեցու մեծագույն սրբերին՝ ս. Գրիգոր Լուսավորչին ու Հռիփսիմյանց կույսերին, որոնք հավատքի սերմեր ցանեցին Հայաստանի օրհնյալ հողում:

Մարտի 18-ին՝ Ռուսաց Պատրիարքի պաշտոնական այցի վերջին օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Վեհարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետը եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ն ստորագրեցին համատեղ հայտարարություն (*«Էջմիածին», 2010, Գ., էջ 48–64*):

2016 թ. նոյեմբերի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկօրյա այցով մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի ծննդյան 70-րդ տարեդարձի հոբելյանական հանդիսություններին (*«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ (այսուհետեւ՝ ՔՀ), 2016, նոյեմբեր Բ, էջ 1—2*):

2019 թ. ապրիլի 2-ին Մոսկվայում՝ Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում, տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում հոգեւոր առաջնորդները գոհունակությամբ անդրադարձան միջեկեղեցական եւ միջազգային տարբեր հարթակներում երկու ժողովուրդների ու Եկեղեցիների միջեւ զարգացող փոխգործակցությանը՝ կրոնական, հասարակական հիմնախնդիրներին ընդառաջ (*ՔՀ, 2019, ապրիլ Ա, էջ 1*):

Արցախյան առաջին պատերազմից հետո առանձնակի կարեւորություն ստացան կովկասյան կրոնապետների հանդիպումներն ու քննարկումները, որոնք միտված էին ազգամիջյան հակամարտությունները եւ տարածաշրջանում ստեղծված ճգնաժամը հաղթահարելուն: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւս անմասն չմնաց նշյալ գործընթացից. բազմաթիվ հանդիպումներ կազմակերպվեցին Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Կովկասի ժողովուրդների վերին կրոնական խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր փաշա Զադեի միջեւ:

Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի նախաձեռնությամբ այդպիսի եռակողմ հանդիպում տեղի ունեցավ 2000 թ. նոյեմբերի 24-ին, որի ընթացքում քննարկվեցին արցախյան հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերը, հայ ռազմագերիների եւ անհետ կորած ազատամարտիկների դեռեւս չլուծված հարցը, իսկ վերջում ստորագրվեց համատեղ հռչակագիր, որով Անդրկովկասում եւ սահմանակից տարածքներում խաղաղության ամրապնդման կոչ էր արվում (*«Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 19—20*):

2003 թ. նոյեմբերի 26-ին Սուրբ Դանիելյան մենաստանում տեղի ունեցավ Կովկասի հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված քառակողմ հանդիպում՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Բ-ի եւ Անդրկովկասի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր փաշա Զադեի մասնակցությամբ: Մոսկվայում տեղի ունեցող միջկրոնական այս խաղաղարարական հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես նշեց. *«Արցախն իրականացնում է ինքնորոշման իր իրավունքը, որն աստվածատուր շնորհ է, որն իրավական հարաբերությունների տեսանկյունից ամրագրված է ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների երկու հիմնարար փաստաթղթերում՝ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրում» եւ «Սոցիալական ու մշակութային իրավունքների համաձայնագրում»: Եվ եթե Դուք, հարգարժա՛ն Շեյխ, բնորոշում եք Ադրբեջանն իբրեւ «օրենք ու մարդու իրավունքներ հարգող երկիր», ապա պիտի ընդունեք, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր նախնիների հողի վրա ազատ ապրելու աստվածաշնորհ իր իրավունքի տերն է…»* (*«Էջմիածին», 2003, Ժ.—ԺԱ., էջ 22*):

Քառակողմ հանդիպման ավարտին Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդները ստորագրեցին համատեղ ուղերձ՝ ուղղված իրենց երկրների հավատացյալներին: Հանդիպման նպատակը Կովկասի տարածաշրջանում հակամարտությունների հաղթահարումն ու խաղաղության հաստատումն էին (*«Էջմիածին», 2003, Ժ.—ԺԱ., էջ 18—25*):

2006 թ. հուլիսի 3-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի

կազմակերպած՝ հոգեւոր առաջնորդների գագաթնաժողովին: Ժողովի աշխատանքները տեւեցին մինչեւ հուլիսի 5-ը:

Վեհափառ Հայրապետը հուլիսի 4-ի իր ելույթում մասնավորապես ընդգծեց. *«Մենք պետք է խոստովանենք, որ մինչեւ մեր կողմից չեն դատապարտվի պատմական բոլոր չարագործությունները մարդկանց ու ազգերի նկատմամբ, ավերածություններն ու ցեղասպանությունները, կշարունակենք մնալ դրանց կրկնության վտանգի առջեւ, ինչի վկաներն էլ հաճախ դառնում ենք եւ այսօր....»* (*«Էջմիածին», 2006, Է.—Ը., էջ 6—10*):

Հուլիսի 5-ին տեղի ունեցավ համաժողովի եզրափակիչ նիստը, ընդունվեց սույն գագաթնաժողովի ուղերձը, որտեղ ներկայացված էին միջկրոնական երկխոսության եւ համագործակցության հիմնական կետերը:

Նշենք նաեւ, որ Վեհափառ Հայրապետը մշտապես միջազգային տարբեր ատյաններում եւ ամբիոններից բարձրաձայնում է Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման անհրաժեշտության մասին՝ ընդգծելով, որ միայն պատմական արդարության վերականգնման ճանապարհով է հնարավոր կանխել հետագա ողբերգությունները:

2010 թ. ապրիլի 26-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանեց Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու կրոնապետների համաշխարհային գագաթնաժողովին՝ նվիրված կրոնների եւ ավանդական արժեքների վրա համաշխարհայնացման ազդեցության խնդիրներին: Խոսելով համաշխարհայնացման վտանգների մասին՝ Վեհափառ Հայրապետն իրավամբ նկատեց. *«Մեր օրերում շարունակ առավել մեծ շրջագիծ ընդգրկող հաղորդակցության եւ համագործակցության գործընթացները քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, կրթամշակութային ու այլ ասպարեզներում եւ ժողովուրդների մեջ մշտապես սերտացող առնչություններն ու կապերը, ցավոք, դեռ չեն գծագրում հեռանկարն այնպիսի աշխարհի, ուր թագավորում են մարդասիրությունը, արդարությունը, աստվածաղիր պատվիրանն ու օրենքը, ուր գերագույն արժեք է մարդը, եւ հարգվում է նրա իրավունքը»* (*«Էջմիածին», 2010, Դ., էջ 28*):

Գագաթնաժողովի ընթացքում տեղի ունեցավ նաեւ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպում՝ մասնակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր փաշա Զադեի: Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին՝ մեծապես կարեւորելով խնդրի խաղաղ հանգուցալուծմանն ուղղված բոլոր ջանքերը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը եւ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահը ստորագրեցին համատեղ հայտարարություն:

Հայոց հնադարյա Եկեղեցու հեղինակության մասին են վկայում միջազգային եւ միջեկեղեցական տարբեր կառույցներին ու կազմակերպություններին մեր հոգեւորականների անդամակցումը. նշենք նաեւ, որ վերջին շրջանում Վեհափառ Հայրապետին են վստահվում միջեկեղեցական եւ միջազգային որոշ կազմակերպությունների ղեկավար ու պատասխանատու պաշտոններ: Այսպես՝ 2000 թ. օգոստոսի 19-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման արարողությանը ներկա գտնվելուց հետո, մեկնեց Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու կրոնապետների՝ ՄԱԿ-ի հովանավորությամբ կազմակերպված գագաթնաժողովին: Գագաթնաժողովի գլխավոր քարտուղար Բաուա Զեյնը Վեհափառ Հայրապետին ուղղված հրավեր-նամակում գրել էր. *«Ինձ համար մեծ պատիվ է արժանանալ Ձեր՝ իբրեւ աշխարհի ամենից հռչակավոր կրոնական առաջնորդներից մեկի մասնակցությանը կրոնական եւ հոգեւոր առաջնորդների՝ Հազարամյակի աշխարհի խաղաղության գագաթնաժողովին»* («Էջմիածին», 2000, Թ., էջ 6): Իսկ Հարավային Կորեայի Բուսան քաղաքում տեղի ունեցած՝ Եկեղեցիների

համաշխարհային խորհրդի համաժողովը 2000 թ. նոյեմբերի 4-ին Հայոց Հայրապետին ընտրեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ (ԵՀԽ, ութ տարի ժամկետով):

2001 թ. փետրվարի 23-ին Վեհափառ Հայրապետն անդրանիկ պաշտոնական այցով մեկնեց ԵՀԽ-ի պաշտոնատեղի՝ Ժնեւ:

Ժնեւում Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցավ ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի, սույն կառույցի ընդհանուր քարտուղարության, ինչպես նաեւ ԵՀԽ-ում Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

Ժնեւից Նորին Սրբությունը մեկնեց Լոնդոն՝ ներկա գտնվելու մարտի 1-ին Բրիտանական գրադարանում «Գանձերը՝ տապանից» ցուցահանդեսի բացմանը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին (*«Էջմիածին», 2001, Բ.—Գ., էջ 14—15*):

2006 թ. օգոստոսի 26—29-ը Ճապոնիայի Կիոտո քաղաքում տեղի ունեցավ «Կրոնները խաղաղության համար» կազմակերպության 8-րդ համագումարը, որին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մասնակցում էր առաջին անգամ:

«Կրոնները խաղաղության համար» կազմակերպությունը միջկրոնական խորհուրդների եւ խմբերի համագործակցություն է, որի նպատակն է խթանել փոխգործակցությունը ողջ աշխարհի կրոնական համայնքների միջեւ, ինչպես նաեւ նպաստել առկա հակամարտությունների վերացմանը՝ աշխարհում խաղաղությունն ամրապնդելու եւ կայուն զարգացում ապահովելու համար:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Եկեղեցիների եվրոպական կոնֆերանսի անդամ է 1977 թվականից: 2003 թ. հունիսի 25-ից մինչեւ հուլիսի 2-ը Նորվեգիայի Թրոնդհայմ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի (ԵԵԿ) 12-րդ գլխավոր ասամբլեան, որին մասնակցեց Հայոց Եկեղեցու պատվիրակությունը:

2005 թ. Մեծ եղեռնի 90-ամյակի առիթով ԵԵԿ-ն հայտարարությամբ դատապարտեց Հայոց ցեղասպանությունը եւ կոչ արեց անդամ Եկեղեցիներին այդ օրն աղոթել հայ նահատակների հոգիների խաղաղության համար:

«Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախումբն ստեղծվել է 1999 թ. ԵԵԿ-ի եւ Եվրոպայի էկումենիկ հանձնախմբի երկարատեւ աշխատանքի ու միավորման գործընթացի արդյունքում (*«Էջմիածին», 2007, Զ.—Է., էջ 144—146*):

2007 թ. հունիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսվեց Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի ժողովը, որին մասնակցում էր շուրջ 35 ներկայացուցիչ Եվրոպայի քրիստոնեական Եկեղեցիներից: Նույն օրը տեղի ունեցավ ԵԵԿ-ի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի ժողովի պաշտոնական բացումը: Հանձնախմբի անունից հանդես եկավ համանախագահ տիկին Անթիե Հայդեր Ռոթթվիլմը. նա շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռում կազմակերպված ջերմ ընդունելության եւ Հայոց Եկեղեցու հարուստ հոգեւոր ժառանգությանը հաղորդակցվելու հնարավորության համար: Օրվա նիստերի ընթացքում ժողովականներն առանձին աշխատանքային խմբերով քննարկեցին «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի առաջնահերթ խնդիրները (*«Էջմիածին», 2007, Զ.–Է., էջ 144*):

Վեհափառ Հայրապետն այս այցը նկատեց որպես եւս մեկ հնարավորություն՝ առավել լավ ճանաչելու Հայոց Եկեղեցին եւ նրա ներկայիս կացությունը: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությանը եւ հանգամանորեն ներկայացրեց Եկեղեցու առջեւ ծառացած խնդիրները, Հայ Եկեղեցու գործունեությունը քրիստոնեական դաստիարակության եւ հասարակական (սոցիալական) ոլորտներում (*«Էջմիածին», 2007, Զ.–Է., էջ 147*):

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն առանձնակի կարեւորում է քույր Եկեղեցիների եւ միջեկեղեցական կազմակերպությունների հետ կապերի առավել սերտացումն ու զորացումը՝ իր անձնական նկատելի նպաստը բերելով այս գործընթացում:

2010 թ. հունիսի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵՀԽ-ի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի գործադիր վարչության անդամներին (*«Էջմիածին», 2010, Զ., էջ 10*):

2012 թ. հունիսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության (Act Alliance) գլխավոր քարտուղար Ջոն Նդունային: «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնությունը 140 երկրում ունի 131 անդամ եւ գործունեություն է ծավալում արտակարգ իրավիճակներում, ինչպես նաեւ զարգացման ոլորտներում (*«Էջմիածին», 2012, Զ., էջ 4*):

2019 թ. սեպտեմբերի 25-ին «Կրոնները հանուն խաղաղության» միջազգային միության ընտրյալ ընդհանուր քարտուղար պրոֆ. Ազզա Քարամը եւ գործող ընդհանուր քարտուղար հայր Կեոիշի Սուգինոն պաշտոնական գրությամբ ծանուցեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ օգոստոսի 20—23-ը Գերմանիայի Լինդաու քաղաքում տեղի

ունեցած «Կրոնները հանուն խաղաղության» համաշխարհային 10-րդ համաժողովի ընթացքում Վեհափառ Հայրապետն առաջադրվել եւ աշխարհի 125 երկիր ու կրոնական տարբեր համայնքներ ներկայացնող 700 պատվիրակի կողմից ընտրվել է միության պատվավոր նախագահ:

Ինչպես նախորդիվ նշել ենք, նյութի ծավալի սահմանափակության պատճառով չենք կարող անդրադառնալ միջազգային ու միջեկեղեցական բոլոր հանդիպումներին եւ ընդունելություններին, ուստի ընտրողաբար ներկայացնում ենք որոշ դրվագներ: Նշենք նաեւ, որ փոխադարձ այցելությունները, ընդունելություններն ու բազմաբնույթ հիմնահարցերի քննարկումներն այսօր եւս շարունակվում են՝ տալով նշանակալի արդյունք եւ նպաստելով Հայոց Եկեղեցու միջեկեղեցական դերակատարման ամրապնդմանն ու միջազգային հեղինակության բարձրացմանը:

Արդեն նշել ենք, որ Հայ Առաքելական Սուրբ եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերությունները միանգամայն նոր ընթացք ստացան: Այսպես՝ 2000 թ. նոյեմբերի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուղեկցող պատվիրակության հետ մեկնեց Հռոմ՝ Հովհաննես-Պողոս Բ Պապին հանդիպելու եւ ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները Հայաստան տեղափոխելու, նաեւ Արեւելյան Եկեղեցիների աստվածաբանությանը, պատմությանն ու ծիսագիտությանը նվիրված գիտաժողովին մասնակցելու:

2014 թ. մայիսի 7-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եղբայրական այցով մեկնեց Վատիկան: Մայիսի 8-ին Առաքելական պալատում Վեհափառ Հայրապետը հանդիպեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու սրբազան քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապին:

Ֆրանցիսկոս Պապն անդրադարձավ Հայ Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկա փոխհարաբերություններին՝ գոհունակությամբ նշելով, որ վերջին տասնամյակներին դրանք առավել են սերտացել ու ջերմացել: Հռոմի սրբազան քահանայապետը նաեւ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ երկու Եկեղեցիների միջեւ երկխոսության զարգացմանը բերած կարեւոր զորակցության համար (*ՔՀ, 2014, մայիս Ա, էջ 1—2*):

Մեկ տարի անց՝ 2015 թ. ապրիլի 10-ին, Վեհափառ Հայրապետը, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հրավերով, եղբայրական այցով մեկնեց Վատիկան:

Ապրիլի 12-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում մասնակցեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Ս. Պետրոսի տաճարում Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի մատուցած ս. Պատարագին: Սրբազան արարողության ընթացքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հայր ս. Գրիգոր Նարեկացին Կաթոլիկ Եկեղեցու կողմից հռչակվեց «Տիեզերական Եկեղեցու վարդապետ»: Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի նահատակների (*ՔՀ, 2015, ապրիլ Ա, էջ 4—5*):

2016 թ. հունիսի 24-ին սկսվեց Հռոմի սրբազան քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի եռօրյա այցը Հայաստանի Հանրապետություն՝ «Այց առաջին քրիստոնյա երկիր» կարգախոսի ներքո:

Հունիսի 24-ի երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Հռոմի սրբազան քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հանդիպումը, որին ներկա էին Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը, Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասը, Հայաստանից ու Սփյուռքից ժամանած բարձրաստիճան պաշտոնյաներ եւ հյուրեր: Այս այցելությունը, հիրավի, պատմական նշանակություն ունեցավ երկու Եկեղեցիների հետագա համագործակցության եւ առավել ջերմ ու սերտ հարաբերությունների հաստատման համար:

Հունիսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի գահասրահում տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի համատեղ

հռչակագրի ստորագրման արարողությունը (*ՔՀ, 2016, հունիս Բ, էջ 1—11*):

2018 թ. ապրիլի 4-ի երեկոյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հրավերով ժամանեց Վատիկան՝ մասնակցելու ս. Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությանը (*ՔՀ, 2018, ապրիլ Ա, էջ 3*):

Նշյալ իրադարձությունները, անշուշտ, նոր էջ բացեցին Հայոց եւ Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերությունների բազմադարյա պատմության մեջ՝ առավել ամրապնդելով քրիստոնեական միասնության ոգին:

Վեհափառ Հայրապետի գահակալության ընթացքում բազմաթիվ հանդիպումներ, քննարկումներ եւ փոխադարձ այցելություններ են տեղի ունեցել նաեւ մյուս՝ Ռումին Ուղղափառ, Բուլղարիայի Ուղղափառ Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների հետ: Առավել ընդլայնվել ու սերտացել են հարաբերությունները դավանակից՝ Հնդիկ Մալանկարա, Եթովպիայի Թեւահեդո, Ասորի, Ղպտի Ուղղափառ Եկեղեցիների հետ:

Վեհափառ Հայրապետն իր միջեկեղեցական եւ միջկրոնական գործունեության ընթացքում տարբեր ատյաններում ու բազմաբնույթ քննարկումների ժամանակ մշտապես ընդգծել է, որ անթույլատրելի եւ դատապարտելի է կրոնական գործոնը քաղաքական շահերին ծառայեցնելը կամ կրոնական գաղափարախոսությունը շահարկելու միջոցով ազգամիջյան ատելություն քարոզելը, ահաբեկչական գործողություններ հրահրելը, ինչի ականատեսն ենք այսօր: Հենց այս շարակարգում պետք է գնահատել Հայոց Հայրապետի հանդիպումները Երուսաղեմի մուֆթի շեյխ Աբդլ Ազիմ Սալհաբիի հետ (*առավել մանրամասն տե՛ս «Էջմիածին», 2000, Ա., էջ 70—71*): Շեյխ Աբդլ Ազիմ Սալհաբին բարձր գնահատեց Վեհափառ Հայրապետի այցը եւ ժամանակի բոլոր դժվարությունները միասնաբար հաղթահարելու ցանկություն հայտնեց: Հայոց Հայրապետն իր երախտագիտությունը հայտնեց եւ խոսեց արաբ ժողովրդի՝ պատմական ողբերգական հանգրվաններում հայ ազգին ցուցաբերած զորակցության եւ ջերմ վերաբերմունքի մասին: Նա նաեւ նշեց. *«Մենք հավատում ենք, որ նոր դարաշրջանը պիտի լինի հոգեւոր արժեքների վերակենդանացման եւ տարբեր ժողովուրդների համերաշխության շրջան, որի ճարտարապետները մենք ենք լինելու»* («Էջմիածին», 2000, Ա., էջ 70): Նույն հանդիպման շրջանակում 2000 թ. հունվարի 24-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց հրեա ժողովրդի ողջակիզման թանգարան եւ ծաղկեպսակ զետեղեց ի հիշատակ զոհերի:

Միջկրոնական երկխոսության առումով նշանակալի էր նաեւ 2000 թ. աշնանը Ղպտի Եկեղեցի կատարած եղբայրական այցի ժամանակ Վեհափառ Հայրապետի հանդիպումը Ալ Ազհարի շեյխ Մեծ իմամ Ալ Թանտաուի հետ (*«Էջմիածին», 2000, Ժ., էջ 14*):

2006 թ. սեպտեմբերի 2-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Հայաստան ժամանեց Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակությունը՝ կրոնների միջեւ երկխոսության եւ համագործակցության շրջանակում (*«Էջմիածին», 2006, Թ., էջ 3—6*): Երկուստեք կարեւորվեցին կրոնական առաջնորդների համագործակցությունն ու ջանքերի մեկտեղումն աշխարհում խաղաղության հաստատման, հանդուրժողականության մթնոլորտի, ինչպես նաեւ ազգերի միջեւ փոխադարձ հարգանքի ձեւավորման պատասխանատու գործում:

Կարեւորելով միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերությունները՝ Հայոց Հայրապետը նշում է. *«Միջեկեղեցական հարաբերությունները հրամայական են մեզ համար: Հայ Եկեղեցին՝ հանդուրժողականության եւ համագործակցության սիրո ոգով առլեցուն, քույր Եկեղեցիների հետ գործակցելու եւ այլ կրոնների ներկայացուցիչների հետ խաղաղ համակեցության իր հինավուրց եւ հարուստ ավանդությամբ, շարունակելու է ներդրում ունենալ միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններում՝ զարկ տալով երկխոսությանն ու եղբայրությանը, քանզի սիրո եւ փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունները*

վստահություն են ծնում, վերացնում են վախի եւ կասկածի զգացումները՝ մարդկանց մղելով հաշտության, անկեղծ եւ կառուցողական համագործակցության» (*«Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 57*):

Միջեկեղեցական հարաբերություններում, ինչպես նաեւ էկումենիկ գործունեության շրջանակում Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է իր հստակ տեսլականով, ըստ որի՝ քրիստոնյա առաջին պետությունն ու ազգը լինելու իրողությունը սոսկ հպարտության առիթ չպետք է լինի, այլ նաեւ պատասխանատվության ու քրիստոնեական աշխարհում սեփական առաքելության հստակ գիտակցում եւ իրագործում:

Հիրավի, մեր ասելիքը ծավալուն է, սակայն սույն նյութի սահմանում անհնար է ներկայացնել Վեհափառ Հայրապետի միջեկեղեցական եւ էկումենիկ արգասաբեր գործունեության ամբողջական պատկերը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որպես հայ ժողովրդի հոգեւոր հայր, այսօր եւս առաջնորդվում է իր տեսլականով ու համոզմամբ, որ թեեւ *«…մենք փոքր ազգ ենք, սակայն եկեղեցական հարաբերություններում մեր կեցվածքը բնորոշ է զորավոր Եկեղեցիներին եւ զորավոր ազգերին: Փոքր ազգերին բնորոշ է ամփոփված մնալը՝ պահելու համար իրենց արժեքները, իրենց ավանդությունները.... Մեր կյանքն ու գործունեությունը բնորոշ են մեծ եւ զորավոր ուժեր ունեցող ազգերին: Այդ ուժը մենք ստանում ենք Տիրոջից, Նրա հանդեպ ունեցած մեր հավատից: Չենք կարող մեր ճանապարհը շարունակել, եթե այն Աստծու կամքը չլինի»* (*«Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 54*):

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

ԵՐԱՆԻ ՇԻՆՈՂԱՑ...

Ասում են՝ ճտերն աշնանն են հաշվում: Ամեն աշուն կատարած աշխատանքների իր հաշվետվությունն է ներկայացնում: Այս այն աշունն է, որ պետք է ներկայացվի Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության 20 տարվա եկեղեցաշինության սոսկ մասնակի հաշվետվությունը: Ես ինձ իրավունք եմ վերապահում խոսելու այդ մասին, քանզի այդ աշխատանքների անմիջական մասնակիցներից մեկն եմ:

Ի՞նչ էր մեր ժողովրդին թողել համայնավարական երկիրը, հոգեւոր եւ բարոյական ի՞նչ գաղափարներ էր ժառանգել հայ ժողովուրդն անցած տարիներից:

Հոգեւորը ոչնչացված էր, բարոյական գաղափարները՝ զուտ կոմունիստական: Ինչպե՞ս սկսել: Զրոյի՞ց, բայց չէ՞ որ ունեինք 1700-ամյա քրիստոնեական պատմություն, իսկ թե ավելի հեռուն գնանք, հինգ հազար եւ ավելի տարվա: Եվ Վեհափառն սկսեց...

«Շարունակելու ենք ջանքեր գործադրել՝ բարձրացնելու խոնարհված եկեղեցիները, վերանորոգելու ու բարեզարդելու հայրենի դարավոր սրբավայրերը, կառուցելու նորերը՝ նվիրական երազով, որ ամեն բնակավայրում, մեծ քաղաքների թաղամասերում վեհաշուք հառնեն աղոթքի տները մեր՝ իրենց շուրջ սկիզբ տալով համայնքային բնականոն կյանքի:

...Հոգեւոր սպասավորների հաջորդական պատրաստությունը, նորաբաց եկեղեցիները հուսալի երաշխիքներ են դառնում Մայր Հայրենիքում եկեղեցական

համայնքների լիարժեք կազմակերպման համար, որպեսզի Առաքելական մեր Եկեղեցին մշտապես ներկա լինի իր հավատացյալների առօրյա կյանքում, լիարյուն իրականացնի մեր ժողովրդին հովվելու երկնատուր առաքելությունը՝ չթողնելով բաց դաշտ օտարամուտ եւ օտարացնող հոսանքների գործունեության համար»,— ասվում էր Վեհափառի կոնդակում:

Ուրեմն այսպես՝ ամեն ինչ պետք էր սկսել կառուցելուց:

Դեռեւս Արարատյան թեմի առաջնորդության տարիներին Վեհափառի ձեռնարկները համարձակ եւ բազմաթիվ էին: Հայրապետն առաջին անգամ չէր կառուցելու: Նա խորհրդային «վերակառուցման» վերջին մի քանի տարիներին Արարատյան թեմում կարողացավ կառուցել թե՛ եկեղեցիներ, թե՛ առաջնորդարան, թե՛ դպրատուն:

Մշակույթի հետ անմիջական շփումը, գիտելիքները, գեղեցիկի զգացողությունը, նուրբ ճաշակը հոգեւոր մեր առաջնորդներին մշտապես հնարավորություն են տվել նաեւ բարձրանալու արվեստի ինքնատիպ գահը, որով եւ ազգի մշակույթն աշխարհին ներկայանալի դարձրին: Այսօր մեր նախնիների կառուցածը համաշխարհային մշակութային ժառանգության գանձարանի մաս է:

Սկզբունքը նույն էր, պետք էր միայն ձեռնամուխ լինել: Սկսվեց բավականին ծավալուն եւ դժվարին աշխատանք:

Վերելքն ապահովելու պայմաններից առաջնահերթը Հայաստանի տարբեր շրջաններ հոգեւոր սպասավորներով ապահովելն էր՝ վերջիններիս հոգեւոր լուրջ կրթություն տալով: Հաջորդ խնդիրը՝ Առաքելական մեր Եկեղեցուն վերադարձնելն իր կառույցները (վանքերը, եկեղեցիները), ինչը նույնպես պետք է ապահովեր Եկեղեցու հոգեւոր վերելքը:

Համայնավարական տարիներին Մայր Աթոռից խլվել էր նրա տարածքների հիմնական մասը: Դրանց մի մասի «տունդարձն» արագացրեց Մայր Աթոռի գլխավոր հատակագծի մշակումը եւ Մայրավանքին իր բուն ֆունկցիան վերադարձնելը: Չնայած Մայրավանքը՝ որպես Հայ Առաքելական Եկեղեցու գլխավոր տաճար եւ համայն հայության հավատի կենտրոն, դեռեւս անցած

դարի հինսունականների վերջերից սկսել էր վերականգնել իր նախկին ֆունկցիան՝ վանքի կարգավիճակը:

Առաջնահերթ կատարվեց տարածքի գոտեւորման նախագիծ: Կրթական մասին հատկացված տարածքը՝ Գեւորգյան ճեմարանով, հանրակացարանային շենքով (կառուցված Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք), միավորվեց կրթական կամ ուսանողական գոտու մեջ: Վերանորոգվեց Գեւորգյան ճեմարանը՝ ուսուցման համար ապահովելով առավել հարմարավետ պայմաններ: Այս գոտում կառուցվեց «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան-գրադարանը, որը միաժամանակ նաեւ աստվածաբանական կենտրոն է եւ լրացնում է ուսանողական գոտու կառույցների ցանկը՝ «Էօռնեկեան» ավագ դպրոցով: Ավարտվել է Գեւորգյան ճեմարանի սպորտային դահլիճի կառուցումը հարակից տարածքում: Կառույցը ճեմարանի հյուսիսարեւելյան թեւն է եւ միաժամանակ վանքի արեւելյան պարսպապատը, որն ավարտվում է հուշերի եւ մեծարման հավաքատեղիով, խաչքարերով լուծված հուշակոթողով: Ճեմարանի հյուսիսային կողմում Հրեշտակապետաց նորակառույց մատուռ-եկեղեցին է: Այն հիշեցնում է Անի քաղաքի բոլորակ Փրկչի եկեղեցին: Վանքի հարավում՝ Ղազարապատից դեպի հարավ ընկած տարածքը հատկացվեց



միաբանական նոր կացարաններին: Այն բաղկացած է մի քանի մասնաշենքից: Վազգեն Ա Կաթողիկոսի կառուցած վանատունը հիմնովին վերակառուցվեց եւ նորոգվեց՝ հարմարեցվելով ժամանակի պայմաններին: Միաբանական կացարանների մասնաշենքերը, սարկավագաց ննջարանները վանատան հետ կազմում են կացարանային մեկ համալիր:

Դիվանատնից դեպի արեւելք՝ նախկին պարսպապատից դուրս, կառուցվեց մկրտարանի նոր շենքը: Հայ եկեղեցաշինության մեջ առանձին մկրտարաններ եղել են մինչեւ տասը-տասնմեկերորդ դարերը:

Երուսաղեմի Մակար արքեպիսկոպոսի կանոնը, որը Վրթանես հայրապետը Հայաստան բերեց, ասում է. «Զի եթե ոչ էր մերձ եկեղեցի շինեալ ի փառս Աստծոյ եւ ի մուտս ժողովրդոց, առանց մեղադրելոյ արդեւէր, եւ եթէ եկեղեցիս ունիմք, պարտ է եւ մկրտատունս առնել եւ աւազան, յորում մկրտէ, որ գայցեն յուղիղ հաւատս բարեպաշտութեան»:

Նորակառույց մկրտարնի հատակագծային եւ ծավալատարածական լուծումները որոշ չափով կրկնում են Սանահնի գրատան ծավալները:

Այն ունի երկու սրահ՝ համապատասխան ավազաններով:

Միաբանական կացարաններից դեպի հարավ կառուցվեց տնտեսական գոտին, որի մեջ մտնում են նաեւ ավտոտնտեսությունը եւ նրան սպասարկող այլ կառույցները, որոնք ունեն իրենց ներքին բակը:

Վերանորոգվեց նաեւ տպարանի շենքը, աշխատանքի համար ստեղծվեցին լավ պայմաններ, տպարանը համալրվեց նոր սարքավորումներով: Այս շենքում կատարվեցին նաեւ հիմքերի ջրամեկուսացման աշխատանքներ, քանի-որ գրունտային ջրերի նիշի բարձրության պատճառով պատերը թրջվում էին մինչեւ 4 մ բարձրությամբ:

Խնդիր դրվեց ինժեներական արտաքին եւ ներքին նոր ցանցերի կառուցման, ինչպես նաեւ նոր կաթսայատան եւ էլեկտրաենթակայանի կառուցման: Նորոգվեց եւ վերականգնվեց Երեմյան խցերի շենքը: Կառուցվեց Գարեգին Առաջին կրթական համալիրի նորակառույց շենքը:

Սկսվել են ամբողջ տարածքի բարեկարգման աշխատանքները: Ներսիսյան անտառում կառուցվեց հանգստի գոտի՝ մանկական խաղահրապարակներով:

Չնայած այն բանին, որ 20-րդ դարի սկզբներին Խրիմյան Հայրիկ Կաթողիկոսը կառուցել էր Խրիմյան թանգարանային շենքը, որն այդպես էլ չէր հասցրել ունենալ ցուցադրություն, քանի որ խորհրդայնացման տարիների սկզբից իշխանությունները թալանել էին

Մայրավանքի մշակութային բազմաթիվ արժեքները՝ հնատիպ գրքեր, գորգեր, եկեղեցական սպասք, արխիվ եւ այլն, սակայն արդեն 50-ական թվականներին Մայրավանքի մշակութային վերստին համալրված արժեքները կարիք ունեին նոր ցուցադրության, որին սկիզբ դրեց Վազգեն Ա Կաթողիկոսը դեռեւս 1956-ին:

1869-ին Մայր տաճարի արեւելյան կողմում Գեւորգ Դ Կաթողիկոսի կառուցած կցակառույց-սպասքատունն օգտագործվեց որպես Մայրավանքում պահվող գանձերի ցուցադրության սրահներ: 60-ականների սկզբներից այս սրահներն այլեւս չէին կարող բավարարել թանգարանի պահանջներին: Խնդիր դրվեց կառուցել թանգարան-գանձատուն: Գանձատունը կառուցվեց Նոր Վեհարանի հարավային կողմում: Հովանավորներն էին Ալեք եւ Մարի Մանուկյանները:

Արդեն նշվել է, որ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր գահակալության հենց առաջին օրերից հոգ է տարել գոտեւորելու Մայրավանքի տարածքը՝ ըստ համապատասխան նշանակության կառույցների: Այդ իսկ պատճառով ընտրված թանգարանային գոտին սկսվում էր գրադարան-թանգարանով, որը հետո վերանվանվեց Գանձատան, շարունակվում է դեպի արեւելք՝ իր մեջ ընդգրկելով Հին Վեհարանը, Խրիմյան թանգարանային շենքերը եւ ապա Ղազարապատի հարավարեւմտյան հատվածը՝ գորգերի թանգարանը, Ռուբեն Սեւակի թանգարանը: Ռուբեն Սեւակի թանգարանի եւ գորգերի թանգարանի ստեղծումը Վեհափառ Հայրապետի 2013-ի նախաձեռնած ծրագրերից էր:

Դեռեւս 2000-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին պետք է հանձնվեին Արշիլ Գորկու նկարներից: Նկարների ցուցադրության համար, որպես սրահ, Գարեգին Բ Կաթողիկոսն ընտրեց Մայրավանքի հարավային կողմում Խրիմյան Հայրիկի կառուցած, սակայն այդ նպատակի համար չօգտագործված թանգարանային շենքը, որը վերջին մի քանի տասնամյակներում իբրեւ պահեստային կառույց էր ծառայում:

«Ղազարապատ»-ը Մայր Աթոռի պատմական շենքերից է: Կառուցվել 1713 թ.՝ Ալեքսանդր Ջուղայեցի Կաթողիկոսի օրոք՝ որպես միաբանական սեղանատուն:

Շենքն այնքան էր քայքայվել, որ փլուզումն անխուսափելի էր: Վազգեն Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ իրականացվել էին վերականգնման աշխատանքներ, եւ 2-րդ հարկը դարձել էր 50 ուսանողի հանրակացարան: Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության առաջին տարիներին այն նույնպես նորոգվեց, կառույցում սարկավագների համար ստեղծվեցին կոմունալ հարմարավետ պայմաններ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող գորգերի եւ վարագույրների մի մասն էր միայն ցուցադրվում Գանձատան սրահներում, իսկ մյուս մասը մնում էր պահոցներում: Դրանց պահպանության համար պահանջվում էր ունենալ արդիական տեխնոլոգիաներով օժտված

դահլիճներ եւ պահոցներ, իսկ Գանձատանը նման պայմաններ չկային, պայմաններ, որոնք կստեղծեին համապատասխան միջավայր՝ ապահովելով ցուցանմուշների երկարակեցությունը: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում էր նաեւ այդ խնդիրը, որ ժամանակ առ ժամանակ հոգեւոր խորհրդում եղել է քննարկման առարկա: Այն հնարավոր եղավ լուծել. պատմական շինությունը զինվեց օդափոխության, հաստատուն ջերմաստիճանային եւ կայուն խոնավության համակարգերով:

Թանգարանային գոտու հիմնական կառույցներից է նաեւ Հին Վեհարանի շենքը: Այն Մայրավանքի գլխավոր հատակագծում Մայր տաճարի հարավարեւմտյան մասում է գտնվում՝ ուղղահայաց «Ղազարապատ»-ին: Հին Վեհարանի հյուսիսային մասում է «Տրդատա դուռ»-ը:

«Տրդատա դուռ»-ը հայտնաբերվել է 1962 թ., երբ քանդվում էր Հին Վեհարանից դեպի հյուսիս ընկած հողաշեն խարխուլ շենքը: Հուշարձանը մի քանի անգամ վերականգնվել է, որի հետեւանքով, ենթադրվում է, նրա նախնական ձեւերը զգալի չափով փոփոխվել են: Հին Վեհարանի հյուսիսային թեւի առաջին հարկը 2008-ին վերանորոգվել է՝ զբոսաշրջիկների համար որպես մուտքային-սպասարկող հատված:

2008-ից սկսվեցին Հին Վեհարանի հարավային թեւի վերանորոգման նախագծային աշխատանքները, իսկ ամբողջական վերանորոգման աշխատանքներն սկսվեցին 2011-ից: Հնագիտական ուսումնասիրությունների ժամանակ քայքայված եւ փլուզված պատերի հիմնային մասերի ուսումնասիրությունները բացահայտեցին, որ այդ հատվածը ժամանակին ծառայել է որպես Մայրավանքի պարսպապատի՝ «Ղազարապատ»-ի հարավարեւմտյան անկյունային աշտարակ: Աշտարակը, ըստ հնագետ Նյուրա Հակոբյանի, կառուցված է Մովսես Տաթեւացի Կաթողիկոսի օրոք (1629—1632): Աշտարակը բոլորակ կառույց էր՝ բարձրացված վառ կարմիր, լավ թրծված աղյուսներով: Պեղումների արդյունքում պարզվեց, որ աշտարակն ունեցել է եռաշերտ հատակ:

Այսպիսով՝ նորահայտ աշտարակն իր շերտերով այժմ ցուցադրվում է Հին Վեհարանում: Այս նույն կառույցի երկրորդ հարկի հյուսիսային հատվածը, որը մինչ վերանորոգումը ծառայել է որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսների կյանքին եւ գործունեությանը նվիրված թանգարան, նույնությամբ նորոգվեց եւ պահպանեց իր նախնական նշանակությունը: Վերանորոգվեցին թանգարանի գլխավոր սրահի որմնանակարները, փոխվեցին քայքայված պատուհանները եւ դռները: Թանգարանը ձեռք բերեց հովացման եւ ջեռուցման նոր համակարգեր, փոխվեցին նաեւ կոմունիկացիոն ցանցերը:

Բարեկարգվեց Հին Վեհարանի արեւմտյան բակը: Բակում նախկին ժամանակներից պահպանված ջրավազանը նորոգվեց, եւ տարածքը սալապատվեց տուֆ քարերով: Պահպանվեցին նաեւ ջրավազանից դեպի հյուսիս եւ հարավ ընկած կանաչապատ փոքր տարածքները: Բարեկարգ տարածքում նորովի է մատուցվում վերականգնված Հին Վեհարանի պատմական կերպարը, որը խոսուն վկան է իր ժամանակաշրջանի տարբեր մշակույթների: Այս կառույցն այժմ ներկայացնում է մեր ժողովրդի պատմությունը 4-րդ դարից մինչեւ 20-րդ դար:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի ուշադրության կենտրոնում էր այս կառույցը: Նախանձախնդրության առարկան ոչ միայն կառույցի պատմական եւ մշակութային արժեքն էր, այլեւ հայ կաթողիկոսներին նվիրված թանգարանի արժեւորումը. այն պատմում է մեր հոգեւոր ժառանգությունը պահպանող անձանց մասին:

Կառույցները մարդկանց պես ունեն իրենց ճակատագրերը: Ժամանակի ընթացքում երբեմն անուշադրության են մատնվում, մեկ այլ ժամանակաշրջանում ծաղկում են կամ անհետանում:

Խոսելով Վեհարանների՝ որպես պատմական եւ մշակութային կառույցների մասին, պետք է ասել, որ լիարժեք պահպանված շատ քիչ կառույցներ կան կամ պարզապես չկան: Հատակագծային լուծումներով պահպանվածներից են 7-րդ դարում սբ Ներսես Շինարար Կաթողիկոսի կառուցած Զվարթնոցի կաթողիկոսական նստավայրի կառույցները, 6—7-րդ դարում Արուճ գյուղում տաճարի դիմաց կառուցված պալատական շինության ավերակները եւ այլն: Լավ պահպանված օրինակներից են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին եւ Նոր Վեհարանների շենքերը:

Վերականգնման եւ ուժեղացման աշխատանքների կարիք ուներ նաեւ ավելի քան 1700-ամյա մեր Մայր տաճարը, որի վերականգնման, ուժեղացման, ինչպես նաեւ որմնանկարների վերականգնման աշխատանքներն սկսվեցին 2017-ից եւ կավարտվեն մոտակա տարում:

Ճշմարտասեր, ազնիվ սրտի ու մտքի կատարելությամբ օժտված մարդուն է հատուկ անխոնջ աշխատանքի արդյունքում կրթական եւ բարեգործական հաստատություններ ստեղծելու գործը: Ասպարեզ, որի արդյունքում Երեւան քաղաքի Արաբկիր, Մալաթիա, Նորքի զանգված թաղամասերի, Գյումրի, Էջմիածին, Աշտարակ, Վանաձոր քաղաքներում կառուցվում եւ վերանորոգվում են, ժամանակին համընթաց սարքավորումներով կահավորվում հայորդյաց տները: Այս կառույցները նախկին պիոներպալատներն էին՝ համայնավարական կարգերից մնացած, բարոյապես մաշված եւ ֆիզիկապես քայքայված: Այս կառույցներից պահպանվեցին միայն շենքերի կմախքները:

Շենքերն իրենց ներքին կառուցվածքով եւ հատակագծային լուծումներով հիմնովին վերահատակագծվեցին, կոնստրուկտիվ ուժեղացվեցին եւ վերակառուցվեցին: Նախագծային առաջադրանքից ու առաջարկից մինչեւ աշխատանքները, յուրաքանչյուր ֆունկցիոնալ խնդիր ստուգվել, ճշգրտվել է եւ գտնվել է Վեհափառ Հայրապետի անմիջական վերահսկողության տակ: Փորձառու ճարտարապետի աչքն անգամ երբեմն անկարող էր տեսնել այն, ինչ տեսնում էր Վեհափառ Հայրապետը: Ճարտարապետներից առավել հատակագծային ֆունկցիոնալ լուծումների նպատակահարմար առաջարկները եւ դիտողությունները անում էր Վեհափառ Հայրապետը, որոնք եւ կյանքի կոչվեցին:

Հայորդյաց տների վերականգնման եւ նորերի կառուցման հետ միաժամանակ Երեւան քաղաքի Արաբկիր թաղամասի Ահարոնյան 2/2 հասցեում գտնվող մանկապարտեզը նորովի վերակառուցվեց եւ հարմարեցվեց մանկատան՝ իր փոքրիկ բակով եւ հարմարավետ

ննջասենյակներով, լոգարան-ցնցուղարաններով եւ դասասենյակներով, բժշկի եւ դայակի սենյակներով, ճաշարանով եւ խոհանոցով:

Ավարտվեցին Ս. Գայանե վանքի բակում գտնվող երկհարկանի շենքի նորոգման եւ ուժեղացման աշխատանքները: Նորոգումից հետո այն նույնպես դարձավ հարմարավետ մանկատուն:

Էջմիածին քաղաքի Կոստանյան 8 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի շենքը նորոգվեց, վերակառուցվեց որպես ծերանոց, ուր այսօր ապրում է 40 ծեր: Վերանորոգվեցին Երեւան քաղաքի Քանաքեռ թաղամասում գտնվող Սուրբ Հակոբ եկեղեցին եւ նրա նախկին օժանդակ կառույցը, ուր տեղավորվեց Մանրանկարչության կենտրոնը: Այստեղ մանրանկարչության արվեստին են ծանոթանում եւ կրթվում բազմաթիվ մանուկներ:

Երեւանի 3-րդ մասում գտնվող եռահարկ պալատի շենքը վերակառուցվեց, նորոգվեց, հարմարեցվեց հեռուստահաղորդումների համար, եւ այնտեղ տեղակայվեց «Շողակաթ»-ը:

Սրանք բոլորն էլ Հայոց Հայրապետի բազմաբնույթ աշխատանքների սկիզբն են, իսկ ծրագրերը բազմաթիվ են եւ շարունակական:

Ուրեմն կանաչ ճանապարհ այդ աշխատանքն իրականացնողին, եւ թող նրան մշտապես ուղեկցի Աստծու օրհնությունը:

Վեհափառ Հայրապետի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ունի եկեղեցաշինությունը՝ նորոգչական աշխատանքներից մինչեւ նորերի կառուցումները:

Ցավոք, մեր վանքերը հիմնականում գործում էին մինչեւ անցած դարի քսանական թվականների վերջերը:

Համայնավարական կարգերի հաստատումից հետո այդ կառույցների գործունեությունն արգելվեց: Գործող մնացին եզակի վանքեր՝ Մայրավանքը, Գեղարդավանքը, Խորվիրապը:

Կործանման եզրին կանգնեցին վանքային եւ անապատային կյանքը ու այնտեղ գտնվող համապատասխան շինությունները:

Մայրավանքը մնաց, քանի որ կաթողիկոսանիստ էր եւ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր կենտրոն: Մնացած վանքերը մատնվեցին անգործունեության եւ պետության կողմից ճանաչվեցին որպես «հուշարձաններ», պատմության եւ մշակութային արժեքներ:

Արգելելով վանքերի գործունեությունը՝ փաստորեն ոչ միայն արգելվեց վանքում հոգեւոր կյանքը, այլեւ վանքային համալիրի կառույցները ենթարկվեցին բնության եւ իհարկե նաեւ մարդկանց քմահաճույքներին:

Աշուն է: Դիլիջան քաղաքից դեպի Իջեւան տանող ճանապարհը դեպի ձախ կտրուկ շեղվում է, եւ մեր ավտոմեքենան մտնում է գեղատեսիլ, անտառապատ

ձորակը: Ձորակի նեղլիկ ճանապարհին թափված դեղնած տերեւները եւ ձորից լսվող քչքչան փոքր առվակի կարկաչյունը մեզ ուղեկցում են մինչեւ ձորակի վերջին հատվածը, որն ավարտվում է վանքային հայտնի համալիրով՝ Հաղարծնի վանքով:

Այստեղ մեզ բերել է վանքային համալիրի ամբողջական վերականգնման աշխատանքները պատկերացնելու ցանկությունը: Վանքի տարածքն իր շինություններով, շրջապատված աշնանային անտառով, մի ամբողջական հոգեւոր համակարգ է՝ իր բազմաբնույթ կառույցներով:

Այսօր արդեն հիացնում է վերականգնված վանքային համալիրը՝ նորակառույց շինություններով, եւ իր քարի սպիտակափայլ լույսով լուսավորում շրջակա խիտ անտառապատ բացատը, ուր իշխում է հոգեւոր մի մթնոլորտ՝ յուրահատուկ միջնադարին:

2006-ից սկսվել եւ այժմ ավարտված են Հառիճի վանքային համալիրի Կաթողիկե եկեղեցու, Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու, գավթի զանգակատան տանիքածածակերի, դպրատան վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները: Դպրատան սաների համար առաջին հարկում նախատեսվել են ննջարաններ՝ լոգարանով, ճաշարան-խոհանցով: Շենքի երկրորդ հարկը հարմարեցվել է լսարանների, գրադարանի, համակարգչային սենյակի, ուսուցչանոցի:

Վերականգնվել է Գյումրի քաղաքի Յոթ Վերք — Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Եկեղեցու քարե ծածկույթը քայքայված էր, եւ ջրերը թափանցում էին կառույցի ներսը: Վերանորոգվեցին ծածկերը, ամրկայվեցին ճաքերը: Կատարվեցին եկեղեցու պատերի հարդարման աշխատանքները: Վերականգնվեցին երգչախմբի համար նախատեսված պատշգամբը, փայտե դռները, հղկվեց հատակը, փոխվեց էլեկտրական ցանցը:

Վերանորոգվեցին Բջնի գյուղի վանքային համալիրի Սուրբ Աստվածածին եկեղեցու ծածկերը: Բուսականությամբ առատ աճած տանիքածածկի քարերը հանվեցին, բուսականությունը, արմատներով հանդերձ, արմատախիլ արվեց եւ մաքրվեց: Քարե տանիքածածկը վերականգնվեց: Այս կառույցում պատի ճաքերը կարվեցին իտալական մեթոդով եւ տեխնոլոգիայով: Նորոգվեցին նաեւ հատակները: Եկեղեցու ներսում էլեկտրական հոսանք քաշվեց: Վերականգնման աշխատանքներ կատարվեցին նաեւ վանքի մուտքային հատվածում:

2004-ից սկսվեցին նաեւ Գայանե վանքային համալիրի միաբանական կառույցների վերականգնման աշխատանքները: Վերակառուցվեց հյուսիսային թեւի միաբանական շենքը՝ որպես ննջարանային մասնաշենք՝ հարմարավետ պայմաններով եւ նկուղային հարկաբաժնով: Մյուս մասնաշենքը վերականգնվեց, եւ այնտեղ տեղավորվեցին վանահոր աշխատասենյակը եւ ընդարձակ ժողովարանը: Վերականգնվեց Ռաֆո Իսրայելյանի նախագծով կառուցված սեղանատունը՝ խոհանոցային հատվածի հետ միասին: Վանքի համար կառուցվեց կաթսայատուն: Վերականգնվեց արեւմտյան հատվածում գտնվող շենքը: Այն այժմ միակողմանի ծնողազուրկ երեխաների համար գործում է որպես խնամքի տուն: Նորացվեց վանքի հասարակական սանհանգույցը:

Նույն ժամանակ սկսվեցին եւ այժմ էլ շարունակվում են Հռիփսիմե վանքային համալիրի միաբանական կառույցների վերականգնման աշխատանքները:

Վերականգնման աաշխատանքներ են կատարվում Տաթեւի վանքային համալիրում: Վանքի վերականգնման հետ միասին կվերականգնվի նաեւ վանքի նախկին կարգավիճակը՝ որպես հոգեւոր կրթական օջախ:

Վերականգնվեցին Խորվիրապի վանական համալիրի արեւելյան հատվածի օժանդակ կառույցները, զանգակատունը:

Վերականգնման փուլում են Գեղարդավանքի կաթողիկե եկեղեցու տանիքածածկերը, մինչ այդ վերականգնվել էր օժանդակ կառույցների հարավարեւելյան հատվածը:

Վերականգնվեցին Նորատուսի Սբ Աստվածածին եկեղեցին, եւ տարածքը բարեկարգվեց, Երեւանի Սբ Կաթողիկե եկեղեցին, Օձունի եկեղեցին, դամբարանը

եւ համալիրի մյուս կառույցները, Հոռոմայրի վանական համալիրը, Նոր Վարագավանքի Սբ Աստվածածին, Սբ Նշան եկեղեցիները, դամբարանը, տապանատունը, այժմ էլ կատարվում են փոքր գավթի ամրակայման աշխատանքները:

Մի քանի վանական համալիրների համար կատարվեցին վերականգնման նախագծեր, որոնք սպասում են իրենց հովանավորներին:

Հայաստանի շատ մարզային կենտրոններ, ինչպես նաեւ Երեւան քաղաքի թաղամասերը չունեին եկեղեցիներ: Հայաստանի նորաստեղծ անկախությունն իր հետ բերեց նաեւ նոր եկեղեցիների կառուցման ոգու պահանջքը: Ծավալվեց ծրագրային մեծ աշխատանք՝ կառուցելու եկեղեցիներ Երեւան քաղաքի մեծ թաղամասերում եւ մարզերի մեծ քաղաքներում, ուր հավատացյալների հոգեւոր պահանջների համար չկային եկեղեցիներ:

Եկեղեցիների կառուցումն անհրաժեշտություն էր նաեւ այն գյուղերում, ուր եկեղեցի չկար, կամ գոյություն ունեցողներն էլ ավերված էին: Վերականգնվեցին նաեւ գյուղերում գտնվող գողտրիկ շատ մատուռներ եւ եկեղեցիներ:

Ընդհանուր առմամբ կառուցվել եւ կառուցվում են երեք հարյուրի հասնող եկեղեցի ու մատուռ:



Սա դեռ ամենը չէ: Պերճախոս իրականություն է նաեւ այն, որ արտերկրում գտնվող շատ գաղթօջախներում եւ համայնքներում նույնպես կառուցվեցին հայ առաքելական եկեղեցիներ՝ Մոսկվա, Օմսկ, Նովոսիբիրսկ եւ մի շարք այլ քաղաքներում: Ավելի քան քսան տարվա անխոնջ աշխատանք՝ իր բոլոր փուլերով՝ նախագծային աշխատանքների համաձայնեցումից ու հաստատումից, հիմնարկեքից մինչեւ շինարարական աշխատանքների ավարտը, մինչ խաչի տեղադրումը. այդ մասը թողնում ենք ընթերցողի երեւակայությանը:

Հայ Առաքելական Եկեղեցին բոլոր ժամանակներում եղել է հայոց ամուր շրջանակը՝ իր ամբողջության մեջ պահելով ազգի հավաքական կերպարը եւ ինքնության բոլոր գրավականները:

Վեհափառ Հայրապետի վերջին քսան տարվա ձեռնարկումները, հիրավի, աննախադեպ հնարավորություն տվեցին բազում տաճարների կառուցմանը Հայաստանի քաղաքներում: Կառուցվեցին եւ այժմ արդեն գործում են Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ, Սբ Աննա (օժանդակ կառույցներով հանդերձ), Սբ Երրորդություն, Արաբկիր թաղամասի, Վանաձորի Սբ Նարեկացի, Գյումրիի Սուրբ Հակոբ, Բերդի, Սեւանի, Իջեւանի, Դիլիջանի (կառուցման փուլում է), Աբովյանի, Մասիսի, Արտաշատի, Աշտարակի Սբ Մարիանե, Մոսկվայի, Կիեւի եւ այլ քաղաքների ու գյուղերի եկեղեցիներ:

Պահանջկոտությունն արդարացված եւ հիմնավոր է: Մենք մեր տուրքն ու հարգանքն ենք մատուցում՝ խոնարհվելով Մայր տաճարի առջեւ գտնվող հայրապետներին, նրանց շիրիմներին, շիրիմներ, որոնք այսօր մեր պատմության եւ մշակույթի մաս են կազմում:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի պահանջկոտությունն անցյալի հիշատակների անխաթար պահպանությանը դրսեւորվեց ինչպես Հայ Առաքելական Եկեղեցուն նվիրված կառույցների նորոգությամբ եւ պահպանությամբ, Մայրավանքի պատմական բոլոր կառույցների վերականգնմամբ եւ պահպանմամբ, այնպես էլ Հայոց Հայրապետների շիրմաքարերի նորոգ պահպանությամբ:

Կրկին աշուն է: Քամուց քշված ծառերի տերեւները պտտվելով դանդաղ իջնում են հայրապետների շիրմաքարերին, կարծես մի պահ շշնջում են նրանց հետ, ապա քամու թեւով շարունակում իրենց ճանապարհը:

Այս տերեւների պես մենք էլ ժամանակի թեւով շարունակում ենք մեր ուղին եւ թե ինչ կշշնջանք նրա ականջին մեր կատարած գործերի մասին, կասի միայն այդ նույն ժամանակը:

Մերի ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ճարտարապետ

«Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

10 տարի առաջ Նորին Սրբության ծննդյան 60-ամյա հոբելյանի առիթով Մայր Աթոռի հրատարակչությամբ լույս տեսավ «Հաւատով կառուցեալ» գիրքը՝ նվիրված Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ աննախադեպ շինարարական գործունեությանը: Այն անդրադառնում էր Վեհափառ Հայրապետի գահակալության տարիների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական զարգացումներին՝ արձանագրելով, որ Մայր Աթոռը վերածվել է համաշխարհային մասշտաբներով բնութագրվող համալիրի:

10 տարի անց հերթական արձանագրումներն անենք:

Ուղիղ 10 տարի առաջ էր՝ նոյեմբերի 5-ին, երբ Մայր Աթոռում՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հարեւանությամբ, օծվեց մի նոր եկեղեցի՝ Սրբոց Հրեշտակապետացը: Այն յուրօրինակ նվեր էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաներին, որոնք արդեն 10 տարի իրենց հոգեւոր մկրտությունն են ստանում այս եկեղեցում՝ ամենօրյա աղոթասացությամբ մասնակցելով ժամերգություններին եւ սրբազան Պատարագի արարողություններին:

10 տարի առաջ էր՝ այդ նույն օրը, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 12-րդ տարեդարձի եւ ծննդյան 60-ամյակի տոնակատարությունների շրջանակում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հարեւանությամբ տեղի ունեցավ ճեմարանի հանդիսությունների դահլիճի եւ մարզասրահի բացման արարողությունը:

10 տարի առաջ էր, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ «Գարեգին





Բ» հոգեւոր-կրթական կենտրոնի հիմնարկեքը: Այսօր արդեն այս կենտրոնը Եկեղեցու հոգեւոր-կրթական ասպարեզում կարեւոր առաքելություն է ստանձնել՝ ծառայելով եկեղեցականների եւ ուսուցիչների վերապատրաստության կարեւոր գործին, աստվածաբանական, եկեղեցագիտական եւ հայագիտական խորհրդաժողովների անցկացմանը:

Շուրջ 10 տարի առաջ էր՝ 2012-ին, երբ Մայր Աթոռի բաց Խորանի հարեւանությամբ Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ եւ պետական այրերի մասնակցությամբ կատարվեց «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան-գիտական կենտրոնի հանդիսավոր բացումը: Իր ճարտարապետությամբ աչքի ընկնող նորակառույց մատենադարանն առանձին շուք հաղորդեց Մայրավանքին՝ իր հարկի տակ համախմբելով նաեւ աստվածաբանական եւ հայագիտական մտքի նվիրյալների:

«Եկեղեցին եւ դպրոցը մեր կյանքի դիմագիծն են»,– Վեհափառ Հայրապետի այս խոսքի իրագործումներից մեկն է դարձել նաեւ Մայր Աթոռի «Էօռնեկեան հանրակրթական դպրոցը»: 2009 թվականին Վեհափառ Հայրապետի կողմից հիմնադրված դպրոցը 2017-ից ի

վեր սկսեց գործել ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանող մի նոր շենքում, որ դասվում է հանրապետության լավագույնների շարքում:

Նշանակալի էր նաեւ 2019 թվականը: Ծուրջ 10 տարի՝ 2010-2019 թթ., հիմնանորոգվում ու բարեզարդվում էր հայոց կաթողիկոսանիստը՝ Վեհարանը: Անցյալ դարասկզբին Ալեքսանդր Մանթաշյանի մեկենասությամբ կառուցված հայրապետական նստավայրն այսօր արդեն ներկայանում է առանձին շքեղությամբ: Նորօրյա բարերար Սամվել Կարապետյանի եւ նրա ընտանիքի առատաձեռն նվիրատվությամբ կառուցվել են նաեւ նոր շինություններ՝ Վեհարանի հանդիսությունների ընդարձակ սրահը, որ ճարտարապետական հետաքրքիր լուծումներով կամրջվում է պատմական Վեհարանին, Սրբոց Հայրապետաց գեղեցկազարդ մատուռը՝ համալիրի կամարակապ շրջափակում:

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարեզարդումն այսքանով չի ավարտվել:

2012-ից ի վեր շինարարական եռուզեռ է մոմավառության մատուռի եւ կաթողիկոսական դամբարանի շինհրապարակում: Կաթողիկոսական դամբարանում իրենց վերջին հանգրվանը կգտնեն ամենայն հայոց կաթողիկոսները, իսկ մոմավառության սրահի կառուցմամբ՝ այլեւս չեն մրոտվի տաճարի գունագեղ որմնանկարները:

Աննախադեպ է, սակայն, Ս. Էջմիածնի Մայր տաճարի ամբողջական հիմնանորոգումը: Արձանագրենք՝ նման մեծածավալ աշխատանքներ Մայր տաճարում երբեւիցե չեն կատարվել: Արդեն 5 տարի է՝ շարունակվում են Մայր տաճարի նորոգման աշխատանքները, որին նախորդել են նաեւ երկարատեւ հետազոտական եւ նախագծային աշխատանքները: 2018-ից փակ են նաեւ տաճարի դռները:

Աննախադեպ ծավալի աշխատանքները, սակայն, մոտենում են ավարտին: 2020 թվականի հունիսի 14-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին՝ տաճարի գմբեթին կրկին վեր հառնեց նորակերտ խաչը, կատարվեց օծման արարողությունը: Իսկ հայերիս համար սրբության սրբոց Ս. Էջմիածնի Մայր տաճարը հավատացյալների համար իր դռները կբացի մեկ տարի անց՝ 2022-ին: Տեղի կունենա տաճարի վերաօծումը՝ դառնալով պատմական մի նոր իրադարձություն Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի համար:

Իսկ ճարտարապետներն ու շինարարները հավաստիացնում են՝ առաջիկա 200—300 տարիների ընթացքում Մայր տաճարը նման ծավալի շինարարական միջամտության կարիք այլեւս չի ունենա:

Եվ կրկին արձանագրենք՝ այն հսկայածավալ կառուցապատումները, որ կատարվել ու կատարվում են Մայր Աթոռում Գարեգին Բ Կաթողիկոսի 22-ամյա գահակալության շրջանում, աննախադեպ են բոլոր ժամանակների համար:

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորման նախահիմքը կարելի է համարել Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ 2001 թվականին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի միջոցառումների շրջանակներում ստեղծված երիտասարդական գրասենյակը, որը գլխավորում էր ԱՄՆ-ի արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը:

2007 թվականին Նորին Սրբության օրհնությամբ հիմնադրվեց Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց կազմակերպությունը (ՀԵՀԵԿ), որը հետագայում՝ 2015 թվականից, վերանվանվեց Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորում (ՀԵՀԵՄ):

ՀԵՀԵՄ-ը բաղկացած է՝

Ա. Կենտրոնական գրասենյակից (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին — Երեւան),

Բ. ՀԵՀԵՄ-ի 8 տարածաշրջաններից (Հայաստան—Վրաստան—Արցախ, Ռուսաստան եւ ԱՊՀ երկրներ, Եվրոպա, Հրվ. Ամերիկա, Հյս. Ամերիկա, Մերձավոր Արեւելք եւ Աֆրիկա, Հնդկաստան եւ Մյանմար, Ծայրագույն Արեւելք — Ավստրալիա եւ Նոր Զելանդիա):

ՀԵՀԵՄ-ի նպատակներն են՝

— Հայ Եկեղեցու վարդապետության համաձայն՝ նպաստել քրիստոնեական հավատքի եւ արժեքների տարածմանը հայ երիտասարդության մեջ, աջակցել թեմերի եկեղեցասեր երիտասարդական միությունների միջեւ համագործակցությանը՝ իրականացնելով համատեղ ծրագրեր Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի երիտասարդների մասնակցությամբ,

— օգնել Հայ Եկեղեցու թեմերում եկեղեցասեր երիտասարդական կառույցների վարչական եւ կառավարման մարմինների ստեղծմանը՝ համագործակցությամբ թեմերի առաջնորդների եւ տեղի երիտասարդական այլ հաստատությունների հետ՝ ի նպաստ հայ երիտասարդի հոգեւոր-ազգային եւ մշակութային լավագույն շահի,

— աջակցել թեմական կյանքում ակտիվ, մշակութային, կրթական, մասնագիտական առաջընթաց ունեցող երիտասարդների ինքնազարգացմանը:

ՀԵՀԵՄ-ի առաքելությունն է՝ (mission statement) համախմբել աշխարհասփյուռ հայ երիտասարդությանը՝ ի հարատեւություն հայ ինքնության եւ ի զորացում հայրենիքի, կազմակերպել հայ երիտասարդության ներուժի գործածումը նրա ինքնազարգացման, հոգեւոր ու ազգային արժեքների պահպանության նվիրական գործում:

ՀԵՀԵՄ-ը գործում է Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինության եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո: Հաստատման օրվանից կառույցը որդեգրել է Հայ Առաքելական Ս. Եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր թեմերի երիտասարդներին Մայր Եկեղեցու շուրջ համախմբելու, երիտասարդ հայորդիներին քրիստոնեական եւ հայեցի ոգով դաստիարակելու առաքելությունը: Դրանում կարեւորագույն գործոն է 2019 թվականից սկսած ՀԵՀԵՄ-ի աշխատանքային կարեւորագույն դերակատար ուղղությունների առկայությունը, որոնք են՝ թեմերի հետ կապերի, հասարակական կառույցների հետ կապերի, կրթամշակութային եւ տեղեկատվական բաժինները:

Հայաստանի եւ մի շարք այլ թեմերի մասնակցությամբ ՀԵՀԵՄ-ը պարբերաբար անց է կացնում տարածաշրջանային եւ տեղական պատգամավորական ժողովներ՝ իրենց ուրույն ձեւաչափով, հստակեցված եւ կանոնակարգված օրակարգերով, տարաբնույթ ծրագրերով: Հասարակական կառույցների հետ համագործակցաբար իրականացվում են երիտասարդական ծրագրեր (հոգեւոր, ազգային, կրթադաստիարակչական, բնապահպանական, կամավորական եւ այլն): Բոլոր ծրագրերը լուսաբանվում են տեղեկատվական բաժնի կողմից եւ տեղ են գտնում ՀԵՀԵՄ-ի կայք-էջում:

ՀԵՀԵՄ-ը յուրօրինակ կապող օղակ է Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի երիտասարդների միջեւ, ինչպես նաեւ համագործակցային լայն դաշտ է ստեղծում երիտասարդների հարցերով զբաղվող հասարակական ու պետական պատկան հաստատությունների, երիտասարդական կազմակերպությունների, համալսարանական եւ ուսանողական կառույցների, կրթական, մշակութային, բարեսիրական եւ մարդասիրական նպատակներ ունեցող կենտրոնների հետ:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Երիտասարդն ի՞նչ միջոցով ուղղի ճանապարհն իր, եթե ոչ Քո խոսքերը պահելով
(Սաղմ. ՃԺԸ 9):

Դարեր ի վեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես ստանձնել է սերունդներին կրթելու, քրիստոնեական արժեհամակարգին հաղորդ դարձնելու առաքելությունը:

Հավատարիմ այդ վսեմ գործին՝ 1991 թվականին՝ երանաշնորհ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք, հիմնադրվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնը (ՔԴՔԿ): 1996 թվականի նոյեմբերի 22-ին՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք, տեղի ունեցավ կենտրոնի պաշտոնական բացումը:

Առաջին եւ հաջողված ձեռնարկը մեկօրյա (կիրակնօրյա) դպրոցների ստեղծումն էր, ինչպես նաեւ ուսուցիչների համար դասընթացների կազմակերպումը:

Հոգեւոր գրականության հրատարակությունը, հաղորդաշարերի պատրաստումը առավել նպաստեցին կենտրոնի արդյունավետ գործունեությանը:

2002 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀՀ կառավարության միջեւ կնքվեց համաձայնագիր՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան ներդնելու վերաբերյալ: Համաձայնագիրը ստորագրեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Այն ամրապնդվեց 2005 թ. Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ ԿԳՆ նախարարի միջեւ կնքված համաձայնագրով՝ կարգավորելով յուրաքանչյուր կողմին վերապահված աշխատանքները ՀԵՊ առարկայի առնչությամբ: Առարկան 2005-ից ընդգրկված է հանրակրթական դպրոցների պետական ուսումնական պլանի 4—10-րդ (այժմ՝ 5—11-րդ) դասարանների առարկայացանկում:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ եւ բարձր տնօրինությամբ ստանձնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հանրակրթական ոլորտում իրականացվող ծրագրերի կյանքի կոչման առաքելությունը՝ ՔԴՔԿ-ն վերանվանվեց Քրիստոնեական դաստիարակության կենտրոն (ՔԴԿ):

2011—2012 ուս. տարվանից ՀԵՊ առարկան ՔԴԿ-ի նախաձեռնությամբ փորձաշրջանով ներդրվեց ՀՀ տարբեր մարզերի 25 դպրոցների տարրական՝ 2—4-րդ դասարաններում: Առ այսօր դպրոցների թիվը գնալով աճում է:

2018-ի դեկտեմբերից ՔԴԿ-ն ղեկավարում է Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը:

Կենտրոնի գործունեությունն իրականացվում է գրասենյակի աշխատակիցների եւ տարածաշրջանային պատասխանատուների միջոցով:

Գրասենյակային աշխատակիցները զբաղվում են կենտրոնի գործունեության ոլորտների, ծրագրերի համակարգմամբ: Տարածաշրջանային պատասխանատուները պարբերաբար այցելում են դպրոցներ, աջակցում ուսուցիչներին, կազմակերպում քննարկումներ, միջոցառումներ:

ՔԴԿ-ն իրականացրել եւ շարունակում է կյանքի կոչել բազմաթիվ ծրագրեր՝ «Ավետարանական առակները հայ դպրոցներում», «Հոգեւոր աջակցություն ընտանիքներին», «Գրերի գյուտից մինչեւ գրատպություն» եւ այլն:

Ամեն տարի՝ նոր ուսումնական տարվան ընդառաջ, կազմակերպվում է կրթության մշակների օրհնություն:

ՔԴԿ-ն իր գործունեության շրջանակներում պարբերաբար կազմակերպում է մասնագիտական սեմինարներ ՀԵՊ առարկայի ուսուցիչների համար, հանդիպումներ հոգեւորականների հետ, ուխտագնացություններ եւ այլն: Այցելություններ, հոգեւոր զրույցներ են իրականացվում նաեւ նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Կենտրոնը համագործակցում է ՀՀ կրթության եւ գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, կրթության տեսչական մարմնի եւ պետական կրթական այլ կառույցների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, հայաստանյան եւ միջազգային հասարակական ու բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ:

Աստղիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Դեռեւս 5-րդ դարի սկզբին Հայոց Եկեղեցում են դրվել հիմքերը թե՛ գրերի գյուտի, թե՛ հայերեն թարգմանական եւ ինքնուրույն գրականության: Հետագա դարերում ստեղծված մեր բազում ու բազմաբնույթ ձեռագրերը խոսուն վկաներն են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ գիր ու գրչության, ասել է թե՝ գրքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի՝ այն դիտելով որպես ազգի ինքնության, ազգի պատմության խոսուն վկա, սերունդներին փոխանցվելիք անգնահատելի ժառանգություն, հոգեւոր ու մտավոր խավարում լույս պարգեւող անմար կանթեղ...

Ու պատահական չէր, որ հայերեն տպագիր առաջին գիրքն էլ լույս տեսավ Հայ Եկեղեցու հոգեւորական Հակոբ Մեղապարտի ջանքերով, ինչպես նաեւ պատահական չէր, որ 18-րդ դարի վերջերին հենց Ս. Էջմիածնում, Սիմեոն Ա Երեւանցի կաթողիկոսի ջանքերով, Հայաստանում առաջին անգամ հիմնադրվեցին տպարան, թղթի գործարան եւ հրատարակչություն:

Այսօր, չնայած բարձր տեխնոլոգիաների արագ աճին եւ գրքի հանդեպ համատարած բացասական վերաբերմունքին, շատ ու շատ ընթերցողներ դարձյալ հավատարիմ են մնացել տպագիր գրքի հանդեպ ունեցած ավանդական վերաբերմունքին: Եվ նրանց մեծ մասը քրիստոնեական պատկերացումները եւ գիտելիքները ձեռք է բերում ավելի շուտ տպագիր մամուլից, քան էլեկտրոնային բազմամիլիոնանոց կայքերից: Գիրքը եղել է, կա եւ կմնա ընթերցողի սեղանին դեռ շատ ժամանակ, որովհետեւ այն անփոխարինելի է: Այս է պատճառը, որ Մայր Աթոռը

քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության բաժնի ենթակայության տակ շարունակեց իր հրատարակչական գործին նոր թափ տալ՝ նպատակ ունենալով

ավելի մանրամասն ներկայացնել Մայր Եկեղեցու տոնախոսական, բարոյախոսական, մեկնողական հարստությունները: Արձագանքելով մեզ ձեռնոց նետած արդի մարտահրավերներին եւ համաշխարհայնացման ներկա ալիքներին, որոնք, ցավոք, վաղուց արդեն առկա են մեր հայրենիքում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի տնօրինությամբ 2006 թ. ստեղծվեց հրատարակչական ինքնուրյուն բաժին՝ առավել արդյունավետ ու ծավալուն ներկայացնելու հայագիտական եւ կրոնագիտական կարեւորություն եւ գիտական արժեք ունեցող աշխատություններ:

Այս 20 տարվա ընթացքում լույս են տեսել մեկնողական, դավանաբանական, հակաճառական, հայրաբանական, Հայ Եկեղեցու ծեսը ներկայացնող եւ մեկնաբանող գրեթե չորս հարյուր անուն գիրք, գրքույկ, տոնախոսական քարոզթերթիկ: Հիշատակենք Հայ Եկեղեցու հայրերի՝ Գրիգոր Նարեկացու («Մեկնություն Երգ երգոցի», գրբ. թրգմ.՝ Վ. Ֆերեշեթյանի), Ներսես Շնորհալու («Մեկնություն Մատթեոսի Ավետարանի», գրբ. թրգմ.՝ Սեդա Ստամբոլցյանի), Հովհան Մանդակունու («Ճառեր», գրբ. թրգմ.՝ Մարթա Արաբյանի), Հովհաննես Ծործորեցու («Մեկնություն Մատթեոսի Ավետարանի», պրակ Ա եւ Բ, գրբ. թրգմ.՝ Սեդա Ստամբոլցյանի) որոշ երկերի արեւելահայերեն թարգմանությունները, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի, Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետի երկերի ժողովածուների հրատարակությունը:

Կազմվել եւ հրատարակվել են Անանիա Սանահնեցու (ԺԱ դ.) «Մեկնութիւն Աւետարանին Մատթէի» (կազմեց Հակոբ Քյոսեյանը), Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» («Յաղագս կազմութեան մարդոյ», կազմեց Ստելլա Վարդանյանը), Ս. Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» (կազմեց Կիմ Մուրադյանը), Գրիգոր Տաթեւացու «Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ» (կազմեց Հակոբ Քյոսեյանը), Գեւորգ Սկեւռացու «Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ» (կազմեց Հասմիկ Բաղալյանը) արժեքավոր երկերի բնագրերը:

Կարեւորվել է նաեւ Հայ Եկեղեցու պատմությանը նվիրված՝ Հուսիկ վրդ. Մովսիսյանի «Հայաստանեայցս Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պատմութիւն», Մատթեոս եպս Իզմիրլյանի «Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ Սիս ու Աղթամար», Ավետիս Պերպերյանի «Պատմութիւն Հայոց» (1772—1860), Երվանդ Տեր-Մինասյանի «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ», Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանի «Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն», Մելքիսեդեկ վրդ. Մուրատենցի «Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ», Երվանդ Տեր-Մինասյանի «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» եւ այլ աշխատությունների վերահրատարակումը:

Մշտապես հիշատակելով Հայ Եկեղեցու նվիրյալ զավակներին, սրբերին ու նահատակներին՝ Մայր Աթոռը տպագրել է նաեւ սրբախոսական մեծածավալ գրականություն. լույս են տեսել «Վարք սրբոցի» (գրբ. թրգմ.՝ Արշակ Մադոյանի) հատորյակները, «Երկու ուխտավոր» (Սահակ եպս Մաշալյան) երկը, «Հայոց «Վարք սրբոց»-ի վրացական խմբագրություն» (հին վրաց. թրգմ.՝ Պ. Մուրադյանի) աշխատությունը, Անահիտ Պարսամյանի «Շուշան-Վարդենի», «Օշինդրի բույրը կամ սուրբ Վահան Գողթնացի» վարքագրական վիպակները եւ բազմաթիվ այլ գործեր, որոնք ե՛ւ գեղագիտական արժեք ունեն, ե՛ւ պատմական կարեւոր տեղեկություններ են հաղորդում:

Հրատարակվում են օտար լեզուներից եւ գրաբարից թարգմանություններ, հայագիտական, եկեղեցագիտական, մեկնողական գրականություն, ինչպես նաեւ՝ քրիստոնեական բարոյագիտական, ուսուցողական գրքույկներ:

Տպագրվել են աստվածաբանական արժեքավոր ուսումնասիրություններ. Շահե վրդ. Անանյանի «Հին Մերձավոր Արեւելքից քրիստոնյա Հայաստան. անձնավորված իմաստության գաղափարի առաջացումն ու զարգացումն ըստ Առակաց Ա—Թ-ի» աշխատության մեջ, ըստ Աստվածաշնչի կանոնականացված բնագրի,

ներկայացված են Առակաց գրքի Ա—Թ գլուխների մեկնությունն ու բացատրությունը: Այն ոչ միայն արծարծում է աստվածաշնչյան դրվագներն ու գաղափարները, այլեւ փորձում է դրանք դիտարկել Հին աշխարհի եւ վաղքրիստոնեական ժամանակաշրջան թեւակոխած փիլիսոփայական-աստվածաբանական դպրոցների գաղափարների լույսի ներքո: Զաքարիա վրդ. Բաղումյանի «Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում» ուսումնասիրության նպատակն է ցույց տալ, թե ինչպես է մեր Եկեղեցին մեկնաբանել սուրբգրային այս կամ այն տեղին, փաստերի եւ հակափաստարկների միջոցով հիմնավորել անապակ գինով պատարագելու իր ավանդությունը:

Ուշագրավ է ԺԳ դարի Կիլիկյան Հայաստանի մեծագույն մտածող, եկեղեցական եւ քաղաքական գործիչ Գեւորգ վրդ. Սկեւռացու «Մեկնութիւն Գործոց առաքելոց» մեկնողական երկի լույս ընծայումը:

Մայր Աթոռի հրատարակչական բաժնի արդյունաշատ գործունեության շնորհիվ հանրության սեփականությունն են դարձել քրիստոնեական բարոյախրատական գրականության այնպիսի գանձեր, ինչպիսիք են Եփրեմ Ասորու «Հոգեւոր խրատներ», Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցու «Խրատի թանգարան», Անտոն Մեծի «Հոգեւոր խրատներ», Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն Ընծայության» եւ այլ երկեր:

Վերջերս վերահրատարակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հովհաննես եպս Շահխաթունյանցի (1799—1849 թթ.)՝ 1842 թվականին տպագրված «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» երկհատոր աշխատությունը, որը փաստական նյութեր է բովանդակում Ս. Էջմիածնի Մայր տաճարի, Վաղարշապատի սրբավայրերի ու հուշարձանների, ինչպես նաեւ Այրարատի հին գավառների վերաբերյալ:

2006—2019 թթ. ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչությունն իրականացրել է օտար լեզուներից եւ գրաբարից թարգմանությունների, եկեղեցագիտական, հայագիտական, մեկնողական գրականության, ինչպես նաեւ քրիստոնեական, բարոյագիտական, ուսուցողական գրքույկների հրատարակություններ: 2012 թ. եւ 2013 թ. առաջին անգամ Ս. Էջմիածնում հրատարակվել է Ս. Գրիգոր Նարեկացու «Նարեկ» աղոթագրքի համապատասխանաբար աշխարհաբար եւ գրաբար տարբերակները, որոնք մեծ ընդունելություն են գտել հավատացելոց կողմից:

Մայր Աթոռի հրատարակչությունը նաեւ համակարգում է 1944 թ. առ այսօր տարեկան 12 համարով հրապարակվող «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական ամսագրի եւ 1997 թ. հրապարակվող «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի խմբագրությունների աշխատանքները:

ՄԱՄՈՒԼԸ՝ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ

«Ամուր պահենք հայ ինքնությունը, որն արտահայտվում է ոչ միայն ազգային պատկանելությամբ, այլեւ Հայրենիքի հանդեպ նվիրումով, մեր նախնյաց ժառանգության արժեւորումով, մեր ժողովրդի նկարագրի անբաժանելի մասը դարձած քրիստոնեական արժեքների հանդեպ հավատարմությամբ ու նախանձախնդրությամբ»:

ԳԱՐԵԳԻՆ Բ



Գիտական առաջընթացը եւ տեխնոլոգիական նվաճումները, որոշակի ձեռքբերումներ լինելով հանդերձ, առաջադրել են նորանոր խնդիրներ... Փոխվել են հասարակական վերաբերմունքն ու ընկալումները, «արդիականացել» են մոտեցումներն այս կամ այն իրողության նկատմամբ: Այսպիսի «նորարարություններից» զերծ չի մնացել նաեւ մամուլը:

Հեռահաղորդակցությունն իրապես ապահովել է որոշակի առաջընթաց, դրական արդյունքներ՝ հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացում, լրատվության հասանելիություն, տեղեկություններ ստանալու միջոցների մատչելիություն եւ այլն: Այս առավելություններով հանդերձ՝ առկա են նաեւ նոր իրողություններից բխող բազմաթիվ խնդիրներ. այսպես օրինակ՝ արժեքավոր ու բովանդակալից նյութերի փոխարեն հրապարակվում են աղմկահարույց հոդվածներ եւ ապատեղեկատվություն, համացանցային ոլորտում գերակա է դարձել ոչ պատշաճ բառապաշարի ու ոճի գործածումը: Աղավաղվում է նաեւ մայրենի լեզուն. տարածվում է օտարաբանություններով «ճոխացած» խոսքը, հրապարկվում են լեզվական բազմաթիվ սխալներով նյութեր: Նկատելի եւ անհանգստացնող մյուս խնդիրը խոսքի ազատության խեղաթյուրված ընկալումն է, ինչը հաճախ հանգեցնում է գռեհկաբանության, ոչ պատշաճ կամ որեւէ անձի հիմնարար իրավունքները ոտնահարող նյութերի հրապարակման: Վերոնշյալից զատ՝ կրճատվում է տպագիր թերթերի, պարբերականների տպաքանակը, նվազում է սպառման ծավալը, տպագիր գրքին փոխարինում է թվայնացված գիրքը, իրական գրապահոցներին՝ էլեկտրոնային տարաբնույթ կայքերը եւ այլն:

Հստակ գիտակցելով նորագույն մարտահրավերների վտանգավորությունը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին գործունեության բոլոր ոլորտներում շարունակում է հավատարիմ մնալ պատմության ընթացքով հաստատագրված իր ազգապահպան առաքելությանը: Ազգային արժեքների պահպանման պատասխանատու եւ դժվարին գործին են լծված նաեւ Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը, երկշաբաթաթերթն ու հրատարակչությունը, որոնք Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում են:

«Էջմիածին»-ը Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի՝ «Արարատ»-ի արժանի ժառանգորդը, դրա

ավանդության պահպանողն ու շարունակողն է: «Արարատ» ամսագիրը հրատարակվել է 1868-ի մայիսի 1-ից մինչեւ 1919 թվականը եւ նշյալ ժամանակաշրջանում եղել է Կովկասում հրատարակվող առաջին լուրջ գիտական պարբերականը: Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը նպաստել է հայագիտության, բանասիրության, գրականագիտության, աստվածաբանության, եկեղեցագիտության զարգացմանը, կարեւոր դերակատարում է ունեցել հայ ժողովրդի հասարակական, մշակութային ու հոգեւոր կյանքում: Ամսագիրը համախմբել է ժամանակի նշանավոր գիտնականներին, աստվածաբաններին, հոգեւորականներին, գրողներին, պատմաբաններին ու հայագետներին: Ուստի, «Էջմիածին» ամսագիրը փորձում է հավատարիմ մնալ ժառանգած սկզբունքներին՝ իր ավանդը ներդնելով աստվածաբանական մտքի եւ հայագիտության զարգացման գործում:

«Էջմիածին» ամսագրում հրատարակվում են կրոնագիտական ու աստվածաբանական բնույթի հեղինակային արժեքավոր հոդվածներ եւ ուսումնասիրություններ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում աստվածաբանական թարգմանական նյութերը, որոնք ընթերցողին հնարավորություն են ընձեռում ծանոթանալու նաեւ քրիստոնեական մյուս Եկեղեցիների դավանաբանական ու ծիսական առանձնահատկություններին՝ մեկ անգամ եւս ամրագրելով ու հաստատելով Հայ Եկեղեցու վարդապետությունը, դավանաբանական եւ ծիսապաշտամունքային սկզբունքները:

Մայր Աթոռի պաշտոնական ամսագրում տպագրվում են արժեքավոր վավերագրեր եւ միջնադարյան անտիպ բնագրեր, մեկնություններ, գիտական կարեւոր ուսումնասիրություններ:

Ազգային մշակութային արժեքները վերագնահատելու տեսանկյունից կարեւոր նշանակություն ունեն եկեղեցական վիմագրությանը, մանրանկարչությանը, որմնանկարչությանը, խորանային վարագույրներին, եկեղեցական սպասքին, հոգեւորականների հանդերձներին, հնագիտական պեղումներին վերաբերող հոդվածները:

Այսօր, երբ իրապես վտանգված է ազգային արժեհամակարգը, թիրախավորված՝ հայն ու հայեցին, հատուկ ուշադրություն է դարձվում հայագիտական, պատմաբանասիրական, գրականագիտական, արվեստաբանական, ազգագրական նյութերի հրապարակմանը: Գիտական արժեքավոր հոդվածները նորովի են վերլուծում եւ դիտարկում շատ հարցեր, լույս սփռում բազմաթիվ խնդիրների վրա:

Պարբերաբար տպագրվում են հայրապետական կոնդակներն ու օրհնության գրերը, Հայոց Հայրապետի շնորհավորական ուղերձները, հոգեւորականների քարոզները:

«Էջմիածին» ամսագրում հրատարակվում են նաեւ ծիսագիտությանը, տոմարագիտությանը, հայ եկեղեցական իրավունքին վերաբերող ծանրակշիռ ուսումնասիրություններ:

Ամսագրի «Գրախօսութիւն եւ մատենագիտութիւն» բաժնում հրապարակվում են նորագույն հրատարակություններին եւ հեղինակային մենագրություններին, գիտական աշխատություններին, միջնադարյան անտիպ ձեռագրերին, հիշատակարաններին վերաբերող հետաքրքիր դիտարկումներ:

2011 թ. ավանդական դարձած բաժիններին ավելացել են «Ճեմարանականներ» եւ «Հոգեւոր ընթերցումներ» բաժինները: Առաջին բաժնում ներկայացվել են ճեմարանական նշանավոր սաների կամ մանկավարժների (այժմ՝ դասախոս) կյանքը, գործունեությունը, նրանց գրական կամ գիտական վաստակը, իսկ երկրորդում հրապարակվել են հավատացյալներին հուզող բազմաթիվ հարցերին պատասխանող հոդվածներ, եկեղեցական տոներին, ծեսերին ու սրբազան խորհուրդներին վերաբերող հանրամատչելի նյութեր:

Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը հանգամանորեն անդրադարձել է ազգային-եկեղեցական նշանակալի իրադարձություններին, Հայոց ցեղասպանության 100-ամյակին, Մեծ եղեռնի նահատակների սրբադասման արարողություններին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 140-ամյա հոբելյանին եւ այլն:

Մինչեւ 2015 թ. (որից հետո համաձայն ԲՈԿ-ի՝ գիտական պարբերականների համար սահմանված պահանջների՝ ամսագիրը ենթարկվել է կառուցվածքային որոշակի փոփոխության) «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական ամսագիրը պատշաճ կերպով անդրադարձել է հայ հոգեւոր կյանքին, եկեղեցական բոլոր տոներին եւ արարողություններին, հայրապետական ընդունելություններին ու հովվապետական այցելություններին, թեմերի հոգեւոր-մշակութային գործունեությանը: Ուստի, այս առումով «Էջմիածին» ամսագիրը կարծես արխիվային նյութերի մի անփոխարինելի շտեմարան է:

Այսօր այդ կարեւորագույն առաքելությունն առանձնակի բարեխղճությամբ եւ ամենայն պատասխանատվությամբ իրականացնում է «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը, որը հրատարակվում է 1997 թվականից:

Մայր Աթոռի պաշտոնական թերթի խմբագրությունը, ըստ սահմանված ժամանակահատվածի եւ պարբերականության, տարեկան լույս է ընծայում 24 համար: Երկշաբաթաթերթում պարբերաբար հրատարակվում են կրոնագիտական, պատմագիտական, գրականագիտական, արվեստաբանական արժեքավոր հոդվածներ, որոնք լիովին համապատասխանում են գիտական չափորոշիչներին: Ուշագրավ են նաեւ բարոյահոգեբանական եւ հրապարակախոսական, ինչպես նաեւ ճանաչողական բնույթի նյութերը:

«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթում հրապարակվում են նաեւ Հայ Եկեղեցու հայրերին ու վարդապետներին ներկայացնող բովանդակալից նյութեր, հայ սրբերի ու սրբուհիների վարքագրություններից հատվածներ, մեր սրբատեղիներին, եկեղեցիներին եւ վանական համալիրներին նվիրված կարեւոր հոդվածներ, հոգեւորականների եւ աշխարհական անձանց հետ հարցազրույցներ, կարեւոր հրատարակությունների մասին գրախոսականներ եւ այլն:

Երկշաբաթերթում տպագրվում են նաեւ թարգմանական նյութեր՝ քարոզներ, մեկնություններ, փիլիսոփայական բնագրեր, որոնք ընտրելիս խիստ ուշադրություն է դարձվում Հայ Եկեղեցու վարդապետությանը, դավանաբանությանն ու ծիսապաշտամունքային սկզբունքներին չհակասելու հանգամանքին:

«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթում մշտապես տպագրվում են հայրապետական կոնդակներն ու օրհնության գրերը, տարբեր առիթներով ասված ուղերձները եւ պատգամները, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի, ինչպես նաեւ թեմերի տրամադրած լրատվությունը: Անդրադարձ է կատարվում նաեւ հրատարակչական բաժնի լույս ընծայած գրքերին:

Առանձնակի արժեք ու կարեւորություն ունեն երկշաբաթաթերթի բացառիկ համարները՝ նվիրված Վազգեն Վեհափառի, Գարեգին Առաջինի եւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսների ծննդյան ու գահակալության հոբելյանական տարեթվերին, մյուռոնօրհնությանը, Մեծ եղեռնի հիշատակության 100-ամյակին, Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակին, Կոմիտաս վարդապետի եւ Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյաններին եւ այլն:

Խորհրդային կարգերի փլուզումից եւ անկախության հռչակումից հետո անհրաժեշտ էր հատուկ ուշադրություն դարձնել հայ հոգեւոր մշակույթի ուսումնասիրմանը, նորովի անդրադառնալ ու արժեւորել հայ եկեղեցական մատենագրությունը, առավել հանգամանալից ներկայացնել միջնադարյան աստվածաբանական գանձերը, տոնախոսական, բարոյախրատական, վարքագրական, մեկնողական աշխատությունները: Ահա այս իրողության հստակ գիտակցումով են առաջնորդվում «Էջմիածին» ամսագրի եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի աշխատակիցները՝ նպատակ հետապնդելով հանրության ուշադրությանը ներկայացնել հայագիտական կարեւորություն եւ գիտական արժեք ունեցող նյութեր:

Հայ Եկեղեցին այսօր եւս հավատարիմ է կրթության, ազգապահպանության, ազգային ինքնության կերտման իր ավանդական սկզբունքներին:

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

«ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը թեմի գործունեությունը լուսաբանելու, Եկեղեցու հոգեւոր-բարոյական քարոզչությունն ավելի լայն զանգվածներին հասու դարձնելու միտումով՝ 1998 թվականին հիմնադրեց «Շողակաթ» հեռուստաստուդիան, որի պատրաստած հաղորդումներն ու տեսաֆիլմերը տրամադրվում էին հանրապետության տարբեր հեռուստաընկերություններին, ինչպես նաեւ առաքվում Սփյուռքում գործող թեմերին:

1999-ին՝ Գարեգին արք. Ներսիսյանի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո, «Շողակաթը» տեղափոխվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ շարունակելով զբաղվել հոգեւոր-մշակութային հաղորդումների եւ տեսաֆիլմերի արտադրությամբ:

2002 թվականի ապրիլին ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի հայտարարած մրցույթում «Շողակաթ» ստուդիան ստացավ 35-րդ դեցիմետրային ալիքով հաղորդումներ հեռարձակելու իրավունք ու դարձավ հեռուստաընկերություն:

«Շողակաթը» պատրաստում եւ հեռարձակում է քաղաքակրթության, պատմության, կրոնների, բնության, նշանավոր անհատների, համաշխարհային հոգեւոր-մշակութային արժեքների մասին պատմող բազմաժանր գիտահանրամատչելի հաղորդումներ, լուսաբանում ազգային-եկեղեցական, հասարակական, տնտեսական, մշակութային իրադարձությունները: Այս ամենը հեռուստադիտողին մատուցվում է հեղինակային բազում հաղորդաշարերով:

Հեռուստաընկերությունն ունի ստեղծագործական եւ տեխնիկական մոտ 100 աշխատող: Հագեցած է ժամանակակից լավագույն տեխնիկական միջոցներով:

Հեռուստաստուդիայի արտադրած տեսանյութերը մեծ լսարան ունեին արդեն 2001 թ., երբ նշվեց Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Տեսանյութերի շարքում, մշտական

հաղորդաշարերից զատ, հատկապես նկատելի էին 1700-ամյակի եւ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու տաղավար տոների առիթով պատրաստված տեսահոլովակները: Դրանք բացառիկ էին ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլեւ գեղագիտական նուրբ կատարումներով: Հենց այդ տեսահոլովակները «Շողակաթին» բերեցին միջազգային առաջին մրցանակները:

«Շողակաթի» առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ եթերում բացառված են քաղաքական հաղորդումները: «Մենք չենք կատարում քաղաքական պատվերներ: Առեւտրային պատվերները կատարում ենք միայն այն դեպքում, եթե դրանք չեն հակասում մեր սկզբունքներին եւ «Շողակաթ» հեռուստաընկերության կանոնադրությանը»: Իսկ հեռուստաընկերության կանոնադրությամբ արգելված է բոլոր տեսակի մոլեխաղերի (խաղատներ, լոտոներ եւ այլն), ալկոհոլային խմիչքների գովազդը: Կանոնադրական պահանջները հստակ չափանիշներ են նշում նաեւ հեռուստաընկերությամբ ցուցադրվող ոչ սեփական արտադրանքի համար: «Շողակաթով» ցուցադրվող կինոնկարներում չպիտի լինի սանձարձակության ու բռնության քարոզ: Այս հեռուստաընկերությունում սիրում են հպարտանալ դասական երաժշտության իրենց հավաքածուով: «Շողակաթը» առաջինն է ակադեմիական երաժշտության հեռարձակման եթերաժամանակի առումով:

Հոգեւոր-մշակութային այս հեռուստալիքի ծրագրային քաղաքականությունը բխում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր առաքելության ընդհանուր սկզբունքներից:

Հեռուստադիտողը հնարավորություն ունի ծանոթանալու Մայր Աթոռի, թեմերի, հարակից կառույցների ու կազմակերպությունների գործունեությանը: «Եկեղեցական կյանք» հաղորդաշարը պարտադիր անդրադառնում է եկեղեցական տոներին: Տոները ներկայացվում եւ դրանց խորհուրդները մեկնաբանվում են նաեւ «Տոնացույց» հաղորդաշարով:

Առանձնահատուկ գրավչություն ունեն հեռուստաընկերության պատրաստած ֆիլմաշարերը: Շատ հաղորդումների պատկերաշարերը պատրաստվում են համակարգչային անիմացիայի միջոցներով, ինչը երաժշտության եւ հեղինակային ձայնի հետ լավագույնս ամբողջացնում է ասելիքը: Հաղորդաշարերից, օրինակ, «Էություն» հաղորդաշարին մասնակցում են Հայաստանի անվանի մտավորականները, որոնք խոսում են քրիստոնեական հավատքի եւ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու դերի ու նշանակության՝ իրենց խոհերի մասին: «Շողակաթ» հեռուստաընկերության հոգեւոր հաղորդումները՝ «Հարցեր քահանային», «Ճանաչենք Ավետարանը», «Մեր պատարագը», մեկ նպատակ են հետապնդում՝ մարդկանց ավելի ու ավելի մոտեցնել մեր Եկեղեցուն ու հավատին:

Այս ճանապարհին ավելի են դյուրացնում այն հաղորդումները, որոնցում կան բանավեճ, կարծիքների տարբերություն, որոնք ի վերջո հանգեցնում են ճշմարտության: «Երրորդ հազարամյակ» երկշաբաթյա հաղորդաշարին մասնակցում են հոգեւորականներ եւ աշխարհիկ մտավորականներ: Փորձ է արվում ճշտել երրորդ հազարամյակի մարդու տեսակետները կրոնի հիմքում դրված հիմնարար հասկացությունների մասին՝ սեր, հավատ, փորձություն, գայթակղություն, մեղք եւ այլն: Բանավեճին զուգահեռ՝ հեղինակային տեքստով ներկայացվում են թեմայի վերաբերյալ Հայ Առաքելական Եկեղեցու եւ քրիստոնեական այլ Եկեղեցիների հայրերի խորհրդածությունները:

Հայ մշակույթը երբեք առանձին չի եղել Հայ Եկեղեցուց, եւ այս դեպքում եւս աշխատանք է տարվում հոգեւոր հաղորդումների հետ մեկտեղ ուշադրության կենտրոնում պահել մշակութային կյանքը, մեր արվեստի ու գիտության նվիրյալներին, ի ցույց դնել մեր պատմության, ճարտարապետության ու մշակույթի արժեքները:

Թե՛ Հայաստանում եւ թե՛ նրա սահմաններից դուրս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս նախաձեռնությունը մեծ արձագանք է գտնում: «Շողակաթի» պատրաստած հաղորդումներն ու ֆիլմերը պարբերաբար ցուցադրվում են նաեւ Հայաստանի հանրային հեռուստաընկերության արբանյակային եթերում, ինչը հնարավորություն է տալիս Մայր Աթոռի քարոզչությունը տարածելու նաեւ Սփյուռքում:

«ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Այր Աթոռ Սուրբ Էջմիածնի կարեւոր կառույցներից է «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը: Մատենադարանի՝ որպես գրապահոցի արմատները հասնում են խոր միջնադար:

Ղազար Փարպեցու վկայությունից տեղեկանում ենք, որ դեռեւս Ե դարում Վաղարշապատում եղել է մատենադարան, որտեղ պահվել են ինչպես հայերեն, այնպես էլ այլ լեզուներով մատյաններ: Մատենադարանը հարյուրամյակներ շարունակ գոյություն է ունեցել որպես Հայ Առաքելական Ս. Եկեղեցու կաթողիկոսարանին կից մայր գրատուն:

Մայր Աթոռի մատենադարանն ու մերձակա վանքերի գրչակենտրոնները լիարյուն կյանքով սկսել են ապրել 1441 թվականից, երբ Հայրապետական Աթոռը Սսից վերահաստատվել է Էջմիածնում: Վերջին իրողությունը նպաստել է գրչության արվեստի առավել զարգացմանը:

17-րդ դարի երկրորդ կեսին Ս. Էջմիածնի մատենադարանը հարստացել է բազմաթիվ ու բազմապիսի ձեռագրերով: Այդ շրջանում մատենադարանն արդեն կազմավորված հաստատություն էր եւ ուներ իր հատուկ «գրքապանը», այսօրվա ըմբռնմամբ՝ մատենադարանապետը:

Հաջորդ հարյուր տարիներն ինչպես հայոց պատմության, այնպես էլ Մայրավանքի ու նրա մատենադարանի պատմության ամենամռայլ ժամանակներից էին. թուրք-պարսկական ավերիչ պատերազմները, ավարառությունները, այնուհետեւ ռուս-պարսկական եւ ռուս-թուրքական պատերազմները Մայրավանքի գրատունը հասցրել էին քայքայման եզրին:

1828 թ. հետո Ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագրական հավաքածուների հարստացման նոր ժամանակաշրջան է սկսվում. մատենադարանը հիմնականում համալրվել է տարբեր խմբագրություններից, հրատարակչական ընկերություններից, անհատներից, գիտակրթական եւ հասարակական կառույցներից պարբերաբար ստացվող գրքերով:

1917 թ. վերջին Մայր Աթոռի մատենադարանի հայալեզու եւ օտարալեզու տպագիր գրականության թիվն ավելի քան 20 հազար էր: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման նախօրեին Ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագրական հավաքածուներում արդեն կար 6419 ձեռագիր. 6137-ը՝ հայերեն, 282-ը՝ արաբատառ:

1920 թ. դեկտեմբերի 17-ին ՀԽՍՀ հեղկոմի դեկրետով մշակութային բոլոր հիմնարկությունների հետ պետականացվում է նաեւ Ս. Էջմիածնի մատենադարանը՝ հանձնվելով Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տնօրինությանը: 1921 թ. փետրվարի 5-ի հրամանագրով Էջմիածնի կրթամշակութային հաստատությունների (մատենադարան, թանգարան, տպարան եւ այլն) պետականացված ցանցի հիման վրա ստեղծվում է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը՝ առաջին գիտական հաստատությունը:

1930 թ. Ստալինի հրամանով գրադարանի հավաքածուն բաժանվում է պետական տարբեր հաստատությունների միջեւ: 1939 թ. Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ մատենադարանը Ս. Էջմիածնից տեղափոխվում է մայրաքաղաք՝ Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի նորակառույց շենք, իսկ 1959 թ.՝ նոր շենք:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր գահակալության առաջին իսկ տարում ձեռնամուխ եղավ Հայաստանում եւ Մայր Աթոռում հայագիտական հետազոտությունների հովանավորությանը՝ խրախուսելու հասարակագիտության բնագավառում արժեքներ ստեղծած գիտնականներին: Այդ նպատակով էլ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատանը տեղ հատկացվեց «Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոնի եւ գիտական գրադարանի ստեղծման համար: 2000 թ. հունիսի 26-ին Վազգեն Ա եւ Գարեգին Ա երջանկահիշատակ հայրապետների անձնական գրադարանների հիմքի վրա բացվեց «Գարեգին Ա» աստվածաբանական եւ հայագիտական կենտրոնը՝ իր արժեքավոր գրադարանով:

Ս. Էջմիածնի մատենադարանի համար պատմական հաջորդ կարեւորագույն փուլն սկսվեց 2007 թ. օգոստոսի 25-ից, երբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց Մայր Աթոռի տարածքում տեղադրված հիշատակման քարը, որտեղ հետագայում պետք է կառուցվեր մատենադարանը: Վերջինիս հիմնարկեքը կատարվեց 2009 թ. սեպտեմբերի 22-ին: Շատ կարճ ժամանակամիջոցում Մայր Աթոռում վեր խոյացավ մատենադարանի նոր շենքը, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2012 թ. հոկտեմբերի 18-ին:

Մատենադարանը, ի գնահատություն եկեղեցասեր եւ հայրենանվեր բարերարներ լոնդոնաբնակ տեր եւ տիկին Մանուկյանների, կոչվեց «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի դիպուկ բնորոշմամբ՝ «Մայրավանքում՝ Արարատի դիմաց, սերունդների համար դարեդար պիտի մնա մատենադարանը», իսկ առաքյալն ասում է. «Եթէ մէկի կառուցած գործը մնայ, նա վարձ պիտի ստանայ» (Ա Կորնթ. Գ 14)»:

Մատենադարանի բազմահարուստ ֆոնդի հիմքը, ինչպես վերը նշեցինք, «Գարեգին Ա» աստվածաբանական եւ հայագիտական կենտրոնում կազմավորված գրադարանն է (Վազգեն Ա, Գարեգին Ա երջանկահիշատակ հայրապետների, ինչպես նաեւ Գարեգին Բ Հայրապետի անձնական գրադարանային ֆոնդերը, Հայաստանի աստվածաշնչային ընկերության նվիրաբերած օտարալեզու բացառիկ կրոնագիտական գրականությունը): Պարբերաբար մատենադարանին նվիրատվություններ են կատարում Հայաստանի, Սփյուռքի ու արտերկրի գիտնականները, մշակութային, քաղաքական ու հասարակական գործիչները, հոգեւորականները, բարձրաստիճան պաշտոնյաները, գիտակրթական եւ հասարակական կառույցները:

Այստեղ են գտնվում նաեւ հայ մշակույթի մի շարք երախտավորների անձնական հավաքածուները (հատվածաբար): Բացի նվիրատվություններից՝ մատենադարանի տնօրինությունը հետամուտ է գնումների միջոցով անհրաժեշտ գրականություն ձեռք բերելուն:

Գրադարանային ոլորտից բացի՝ մատենադարանն առանձնակի ուշադրություն է դարձնում նաեւ գիտական ուղղությանը. կազմակարպվում են տեղական ու միջազգային գիտաժողովներ եւ տարաբնույթ գիտակրթական միջոցառումներ, սեմինարներ ու կլոր սեղանքննարկումներ:

Մատենադարանը Հայաստանի ազգային գրադարանի եւ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի հետ ընդգրկվել է հայ հնատիպ գրականության միասնական քարտարանի ստեղծման գործընթացում՝ տրամադրելով այն գրականության թվայնացված ձեւաչափերը, որոնց եզակի օրինակները պահպանված էին մատենադարանում եւ բացակայում էին համընդհանուր քարտարանից:

Ներկայումս Սուրբ Էջմիածնի մատենադարանի ֆոնդերի թվայնացման հիմնական աշխատանքներն ուղղված են ամբողջական տեքստային շտեմարանի կազմմանը: Էջ առ էջ թվայնացվում է առկա գրականությունը՝ առաջին անհրաժեշտության եւ բացառիկության սկզբունքով՝ նախապատվությունն անշուշտ տալով կրոնական, հայագիտական գրականությանը: Կատարված աշխատանքները պահպանվում են մատենադարանի թվայնացված գրքերի համակարգչային արխիվում՝ ինչպես անմշակ, այնպես էլ մշակված տարբերակներով:

2014 թ. Սուրբ Էջմիածնի մատենադարանը Հայաստանի ազգային գրադարանի հետ ձեռնամուխ է եղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրերի՝ «Արարատ» եւ «Էջմիածին» պարբերականների, ինչպես նաեւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթերթի թվայնացմանը: Ներկայումս այն արդեն ամբողջապես թվայնացված եւ տեղակայված է հայ մամուլի համահավաք գրացուցակի մեջ՝ ազատ օգտագործման սկզբունքով:

Մատենադարանն այսօր կիրառում է «Կոհա» (Koha) գրադարանային համակարգը, որը լայն տարածում ունի ողջ աշխարհում: Այն համատեղելի է գրադարանագիտության եւ տեղեկատվական գիտության բնագավառներում ընդունված եւ գործող միջազգային չափանիշներին, աշխատում է բազմալեզու միջավայրում: Համակարգի միջոցով ընթերցողները հնարավորություն ունեն առանց մատենադարան այցելելու ստուգել իրենց անհրաժեշտ գրքերի առկայությունը, առցանց պատվերներ կատարել՝ էլ ավելի արդյունավետ դարձնելով մատենադարանի սպասարկման գործընթացը:

Սուրբ Էջմիածնի մատենադարանը համագործակցում է Հայաստանի, Սփյուռքի եւ արտերկրի մի շարք մատենադարանների, գրադարանների, հրատարակչությունների, գրատների, մշակութային ու գիտակրթական հաստատությունների հետ:

Մատենադարանն ունի պաշտոնական կայք՝
www.etchmiadzinlibrary.am:

ԻԶՄԻՐԼՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1975 թ. ԽՍՀՄ-ի առողջապահության նախարարությունը որոշում է Անդրկովկասում բացել Խորհրդային Միությունում երկրորդ պրոկտոլոգիական հիվանդանոցը, որի ղեկավարումը վստահվում է ժամանակի լավագույն մասնագետներից մեկին՝ Լեմիկ Նազարովին:

— Երբ ինձ հրավիրեցին Մոսկվայից, կար հստակ առաջարկ՝ ստեղծել պրոկտոլոգիական հիվանդությունների բուժման կենտրոն: Ընտրությունը պետք է լիներ երեք քաղաքների մեջ,— ասում է Նազարովը:

Բաքվի, Թբիլիսիի եւ Երեւանի միջեւ պրոֆեսոր Նազարովն ընտրում է իր հայրենի քաղաքը: Սկզբում Երեւանի 8-րդ հիվանդանոցի ընդհանուր վիրաբուժության բաժանմունքում մի քանի մահճակալ է դրվում պրոկտոլոգիական հիվանդների համար, հետագայում ստեղծվում է բաժանմունք, եւ ավելի ուշ՝ 1982-ին, կառուցվում է պրոկտոլոգիայի հիվանդանոցի շենքը, որը դառնում է պրոկտոլոգիական հիվանդներով զբաղվող մի ամբողջ գիտահետազոտական ինստիտուտ:

Պրոկտոլոգիական գիտահետազոտական ինստիտուտի ղեկավարումը վստահվում է պրոֆեսոր Նազարովին: Բուժական գործին զուգահեռ՝ այստեղ նորարարություններ են ծնվում, բժիշկները պաշտպանում են թեկնածուական եւ դոկտորական թեզեր, մասնակցում Խորհրդային տարբեր հանրապետություններում անցկացվող գիտական սիմպոզիումներին: Նրանց գիտական հոդվածները տպագրվում են ոչ միայն տեղական, այլ նաեւ արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում: Բաժանմունքի ստեղծվելուց հետո բացվում է էնդոսկոպիկ կաբինետը, որը Հայաստանում առաջինն էր: Այստեղ առաջին անգամ սկսում են անել կոլոնոսկոպիա, գաստրոսկոպիա, տարբեր վիրահատություններ: Հիվանդանոցը Խորհրդային Միության այդ ժամանակի ամենալավ կահավորված, վերանորոգված եւ տեխնիկապես հագեցած հիվանդանոցն էր:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի առողջապահական համակարգը կանգնում է ծանր փորձության առջեւ, շատ հիվանդանոցներ գրեթե դադարում են գործելուց, ստեղծված տարերային իրավիճակում անհրաժեշտ էր վերակազմակերպվել, անցնել կառավարման նոր ձեւի: Թեեւ Հայաստանում սկսվել էր համընդհանուր սեփականաշնորհման գործընթացը, բայց փորձի պակասը թույլ չէր տալիս արդյունավետ գործել: Տուժում էին ե՛ւ բուժանձնակազմը, ե՛ւ բնակչությունը: Գիտահետազոտական մեծ ինստիտուտը չէր կարողանում գոյատեւել, որովհետեւ այստեղ ֆինանսավորման եւ պարտքերի կուտակման հարց կար:

1998-ին մահանում է ակադեմիկոս Նազարովը: Իրավիճակը փոքրիշատե փրկելու նպատակով

հիվանդանոցին օգնության ձեռք է մեկնում «Գյուլբենկյան» հիմնադրամը: Տրամադրված միջոցներով գիտական ու բժշկական որոշ սարքավորումներ են գնվում:

2000-ին հիվանդանոցը սեփականաշնորհվում է: Նոր սեփականատերը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, մեկ տարի անց հիվանդանոցը նվիրում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Եվ այն վերանվանվում է «Սուրբ Ներսես Մեծ» գիտաբժշկական կենտրոն:

Մայր Աթոռը պահպանեց այն գիտական ու բժշկական ներուժը, որ ուներ հիվանդանոցը: Բացի այդ՝ բացվեց նաեւ ութ նոր բաժանմունք, հիվանդանոցը դարձավ բազմամասնագիտական: Փոխվեցին կառավարման համակարգը, բժշկական ծառայությունների շրջանակը, որակը: Հիվանդանոցի ֆինանսական համակարգը դարձավ թափանցիկ՝ բժշկական ծառայությունների արժեքների մասին տեղեկատվությունը փակցվեց բոլոր բաժանմունքներում: Դա անհամեմատելի մեծ փոփոխությունների ժամանակաշրջան էր, քանի որ, բացի մասնագիտական հմտություններից, բուժանձնակազմը բարձր էր պահում Եկեղեցու անունը:

Բացվեցին նոր բաժանմունքներ՝ ուրոլոգիական լաբորատորիա, վնասվածքաբանական բաժանմունք, որտեղ համատեղ կատարվել են բացառիկ վիրահատություններ, այդ թվում՝ հայտնի անձանց եւ մարզիկների, որոնք տարբեր ռեկոնստրուկտիվ վիրահատություններից հետո վերադարձել են ակտիվ սպորտին:

2002-ից հիվանդանոցի համար նոր շրջան սկսվեց: Շենքի հիմնանորոգմանը զուգահեռ՝ գիտաբժշկական կենտրոնը համալրվեց նաեւ նոր սարքավորումներով: Շինարարության ընթացքում բուժական աշխատանքները ոչ մի րոպե չդադարեցին: Շնորհիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, կարելի է ասել, մեր երկրում մի փոքր հեղափոխություն եղավ ուրոլոգիայի ոլորտում. գնվեցին նոր սարքեր, որոնք այդ ժամանակ միակն էին Հայաստանում եւ տարածաշրջանում, դրանք հնարավորություն ընձեռեցին հիվանդներին բուժել առանց հատուկ ցավազրկման, ամբուլատոր եւ արագ:

Տեսնելով հիվանդանոցի հաջողությունները՝ Կալիֆոռնիայի սփյուռքահայ բժիշկ, բարեգործ Կարո Դերձակյանը հիվանդանոցին է նվիրում ուլտրաձայնային նոր սարք, որը թույլ է տալիս հայտնաբերել շագանակագեղձի քաղցկեղը վաղ շրջանում: Հիվանդանոցը ճանաչելի է դառնում ողջ հանրապետությունում, կենտրոնին միանում են անվանի ուրոլոգներ, բաժանմունքին մեկ ամբողջ հարկաբաժին է տրամադրվում: Նոր սարքավորումների շնորհիվ միզապարկի վերականգնողական վիրահատությունը կրճատվում է մինչեւ մի քանի ժամ: Շատ չանցած՝ գրանցվում է տարածաշրջանային նորույթը. Կարո Դերձակյանի նվիրած լազերային սարքը թույլ է տալիս շագանակագեղձի լազերային վիրահատություններ իրականացնել: Բաց վիրահատություններ կենտրոնում կատարվում են 5%-ից պակաս դեպքերում, այսինքն՝ առկա են բոլոր հնարավորությունները՝ բուժելու ժամանակակից, ամենաարդիական եղանակներով՝ առանց կտրվածքի: Հիվանդներին առաջարկվում է այն, ինչ առաջարկվում է աշխարհի առաջադեմ բժշկական կենտրոններում:

Կենտրոնի ՔԿԱ բաժանմունքը գործում է 2004-ի նոյեմբերից: Բացի ՔԿԱ վիրահատություններից, այստեղ կատարվում են նաեւ պլաստիկ եւ դիմածնոտային

վերականգնողական վիրահատություններ: Առաջին անգամ Հայաստանում այստեղ ներդրվել է գիշերային շնչականգի կանխարգելման եւ բուժման մեթոդը: Բոստոնում եւ Անգլիայում վերապատրաստվելուց հետո մասնագետները կոկորդի քաղցկեղի դեպքում տեղադրում են նաեւ արհեստական կոկորդ:

«Իզմիրլյան» բժշկական կենտրոնը «Սուրբ Ներսես Մեծ» գիտակրթական եւ ուսումնական կենտրոնի եւ ՀՀ առողջապահության նախարարության Լ. Նազարովի անվան պրոկտոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի իրավահաջորդն է:

2012-ին բժշկական կենտրոնը վերանվանվեց «Իզմիրլյան» ԲԿ՝ ի պատիվ հայ մեծ բարերարի, որը մեծ ներդրում ունեցավ հիվանդանոցի վերազինման հարցում:

«Իզմիրլյան» ԲԿ-ն բազմապրոֆիլ հիվանդանոց է՝ հագեցած նորագույն, ժամանակակից բժշկական սարքավորումներով, հմուտ, փորձառու եւ բարձր որակավորում ունեցող մասնագետներով: «Իզմիրլյան» ԲԿ-ում տարեկան կատարվում է շուրջ 8000 վիրահատական միջամտություն, ախտորոշիչ եւ լաբորատոր տարբերակներով հետազոտվում է շուրջ 26 000 մարդ:

«Իզմիրլյան» ԲԿ-ն Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Ազգային առողջապահության ինստիտուտի գիտաուսումնական բազան է:

Ներկայում «Իզմիրլյան» ԲԿ-ում գործում են հետեւյալ բաժանմունքները.

- Ուրոլոգիական,
- Օրթոպեդիայի եւ վնասվածքաբանության,

- Կոլոպրոկտոլոգիայի,
- Ընդհանուր պրոկտոլոգիայի,
- Ընդհանուր եւ լապարասկոպիկ վիրաբուժության,
- Քիթ-կոկորդ-ականջաբանական,
- Անոթային վիրաբուժության,
- Անեսթեզիոլոգիայի եւ ինտենսիվ թերապիայի,
- Կոնսուլտացիոն-ախտորոշիչ,
- Ճառագայթային ախտորոշման,
- Լաբորատորիաներ:

«Իզմիրլյան» բժշկական կենտրոնը ներկայում Հայաստանի առաջատար հիվանդանոցներից մեկն է, որը վերազինված է ոչ միայն ժամանակակից բուժտեխնիկայով, այլեւ բազմամայա փորձ ունեցող բժիշկներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ինչպես իր պատմության բոլոր օրերին, այնպես եւ ներկայում, հավատարիմ տերունավանդ պատգամին, հոգեփրկչական իր առաքելության ճանապարհին լավագույնս փորձում է իր հոտի մարմնավոր եւ նյութական կարիքները հոգալ՝ նեղության մեջ գտնվողին օգնության հասնելով, հիվանդին խնամելով, օտարականին ապաստան տալով, քաղցածին կերակրելով, ծարավին ջուր տալով, բանտում գտնվողին այցելության գնալով եւ այլն:

2014 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հիմնվեց սոցիալական ծառայության գրասենյակը, որի առաջնային առաքելությունն է մշակել եւ իրագործել սոցիալական աջակցության եւ զարգացման բազմաբնույթ ծրագրեր Հայաստանում եւ Արցախում՝ ի բարօրություն եւ ի պայծառություն հայ ժողովրդի:

Բնականաբար, մինչ գրասենյակի հիմնադրումը եւս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, եւ առհասարակ Հայ Եկեղեցին, մշտապես իր ուժերի գերլարումով իրականացրել է իր զավակների ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ մարմնավոր ու նյութական պետքերը հոգալու ծառայությունը: Մինչ գրասենյակի հիմնադրումը, Նորին Սրբության ջանքերով, դեռեւս Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության տարիներին, Հայաստանում բացվեցին բարեգործական ճաշարաններ, որոնց թիվը Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարիներին հասցվեց 5-ի (3-ը՝ քաղաքամայր Երեւանում, եւ մեկական՝ Էջմիածնում ու Վանաձորում): Ավելի քան երկու տասնամյակ՝ յուրաքանչյուր օր, այս ճաշարաններում տաք սնունդ է ստանում շուրջ 900 անձ: Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ առայժմ ճաշարանները գործում են ոչ ամենօրյա ռեժիմով: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր ամսվա համար համապատասխան սննդի փաթեթներ են տրամադրվում շահառուներին:

Նորին Սրբության բարձր հովանու ներքո հիմնադրվել եւ այսօր էլ շարունակում է գործել երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող երկու հաստատություն՝ «Նագաշյան» եւ «Քյուրքչյան» կենտրոնները, որտեղ հրաշալի կենսապայմաններում, դայակ-դաստիարակների հոգատար խնամքի ներքո ապրում եւ «Էօռնեկեան միջնակարգ դպրոցում» կրթություն են ստանում ճակատագրի բերմամբ դժվարին իրավիճակում հայտնված բազմաթիվ երեխաներ:

Արարատյան հայրապետական թեմից ի վեր Հայոց Հայրապետի անձնական ջանքերով, պարբերաբար, մնայուն դրամական աջակցություն են ստացել հազարավոր ծնողազուրկ հայորդիներ:

Սոցիալական ծառայության գրասենյակի միջոցով անցած 6 տարվա ընթացքում իրականացվել է շուրջ 6,6 մլն ԱՄՆ դոլարի աջակցության ծրագրեր, որոնց շահառու են հանդիսացել տասնյակ հազարավոր հայորդիներ:

2020-ին, համավարակի առաջին իսկ օրերից, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մեծածածավալ աշխատանքներ է իրականացրել թե՛ սոցիալական, թե՛ կրթական եւ թե՛ առողջապահական ոլորտներում՝ ջանալով մեղմացնել, իսկ հնարավորության դեպքում նաեւ չեզոքացնել կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական եւ հոգեբանական հետեւանքները:

Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի եւ Էջմիածնի քաղաքապետարանի համատեղ կազմակերպչական աշխատանքների արդյունքում իրականացվել է պարենային սննդի օգնության փաթեթների

տրամադրման երեք ծրագիր՝ ապրիլի 10-ին, ապրիլի 22-ին եւ մայիսի 21-ին: Ընդհանուր առմամբ՝ երեք ծրագրի արդյունքում աջակցություն է ստացել շուրջ 482 ընտանիք (1758 անձ, 8 504 526 ՀՀ դրամ):

Սննդի աջակցության ծրագիր է իրականացվել նաեւ քրեակատարողական հիմնարկների հոգեւոր տեսչության միջոցով: Մասնավորապես, պարենային սննդի փաթեթներ է ստացել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում գործող պրոբացիոն ծառայության կենտրոնների շահառուների եւ նախկին դատապարտյալների 114 ընտանիք (456 անձ, 2 495 594 ՀՀ դրամ):

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ Մայր Աթոռի եւ հայաստանյան թեմերի միջոցով կազմակերպվել է սննդամթերքի եւ հիգիենիկ պարագաների օգնության ծրագիր: Ծրագիրն իրականացվել է կրկին երեք փուլով, որոնց շրջանակներում օգնություն է տրամադրվել 10941 ընտանիքի (շուրջ 50 691 անձ, 159 500 000 ՀՀ դրամ), եւ կենտրոնական գանձապետարան է փոխանցվել 20 000 000 ՀՀ դրամ:

9 740 000 ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն է տրամադրվել «Սբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբանը»՝ Լիբանանում ստեղծված ճգնաժամի հաղթահարման նպատակով: Իսկ մի բարերար, ով ցանկացավ անհայտ մնալ, Մայր Աթոռի միջոցով լիբանանահայ ընտանիքներին տրամադրվեց 24 350 000 ՀՀ դրամ:

Երեք ամսվա կտրվածքով ֆինանսական աջակցություն է տրամադրվել նաեւ Հայաստանի եւ Արցախի թեմերի 138 հոգեւորականի (41 400 000 ՀՀ դրամ):

Կորոնավիրուսի հաղթահարման շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրվել են անեսթեզիոլոգիական համակարգ, թոքերի օդափոխության 2 սարք, հակապարկելախոցային ներքնակներ, ինֆուզոմատներ եւ բժշկական այլ պարագաներ (26 490 000 ՀՀ դրամ), նախարարությանն է տրամադրվել նաեւ բժշկական 598 ակնոց (47 840 ՀՀ դրամ), «Կլոր սեղանի» հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ իրագործվել է 20 000 դիմակի պատրաստում եւ բաշխում (743 000 ՀՀ դրամ):

Ձեռք են բերվել գրքեր՝ կորոնավիրուսով կասկածվող հիվանդների համար (36 497 ՀՀ դրամ), բժշկական 2020 արտահագուստ (կոմբինիզոն) (16 000 000 ՀՀ դրամ) եւ տրամադրվել Առողջապահության նախարարությանը:

«Իզմիրլյան» ԲԿ-ն Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցին է տրամադրել 3 168 828 ՀՀ դրամի դեղորայք եւ բուժ. պարագաներ:

Իջեւանի զորամասերից մեկին Սոցիալական ծառայության գրասենյակի կողմից տրամադրվել է թվային երկու ջերմաչափ (120 000 ՀՀ դրամ), հայորդյաց տներին, Սեւանի Վազգենյան դպրանոցին եւ Մայր Աթոռի կադրերի բաժնին տրամադրվել է ընդհանուր թվով 19 թվային անշփում ջերմաչափ (424 200 ՀՀ դրամ):

Կատարվել է Կալկաթայի մարդասիրական ճեմարանի սաների եւ մանկավարժների տեղափոխում Հայաստան (40 000 000 ՀՀ դրամ):

1300 պլանշետների տրամադրում ԿԳՄՍ նախարարության միջոցով ՀՀ դպրոցներին՝ հեռավար ուսուցման համար (58 522 812 ՀՀ դրամ):

300 պլանշետների տրամադրում «Էօռնեկեան հանրակրթական դպրոցի» սաներին՝ հեռավար ուսուցման համար (24 480 000 ՀՀ դրամ):

2020 թ. նոյեմբերի 25-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ հաստատվեց «Արցախի աջակցության հանձնախումբ»-ը՝ արցախյան պատերազմի հետեւանքով սոցիալական ծանր կացության մեջ հայտնված արցախահայությանը բացառապես հումանիտար ծրագրերով օգնելու համար:

2020 թվականից մինչ օրս հանձնախմբի կողմից իրականացվել են հետեւյալ աշխատանքները՝

1. Սննդի եւ հիգիենայի պարագաների աջակցության Ա եւ Բ փուլեր — 44 814 595 ՀՀ դրամ:

Շահառուների թիվ — 600 ընտանիք (շուրջ 3500 աննձ):

Արցախից տեղահանված եւ Հայաստանում ապաստանած շուրջ 600 ընտանիք դեկտեմբեր եւ հունվար

ամիսներին ստացել է սննդամթերքի եւ հիգիենայի պարագաների մեկամսյա փաթեթներ:

2. Ամանորյա նվերներ զոհված, վիրավոր, գերության մեջ կամ անհայտ զինվորների եւ Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներին — 126 883 215 ՀՀ դրամ:

Զոհված, վիրավոր, գերության մեջ գտնվող կամ անհայտ կորած զինծառայողների ընտանիքների երեխաների (շուրջ 17 500) Հայաստանում եւ Արցախում Ամանորի եւ Սուրբ Ծնունդի առիթով նվերների փաթեթներ են բաշխվել:

3. Հոգետրավմայի ամոքման ծրագրի համար — 2 450 000 ՀՀ դրամ:

Հայաստանի աստվածաշնչային ընկերության հետ համագործակցաբար 14 հոգեւորականի համար իրականացվել է վերապատրաստման ծրագիր՝ հոգետրավմայի ամոքման հմտությունների զարգացման նպատակով:

4. Արցախի թեմի առաջնորդի խնդրանքով դրամական աջակցություն է ցուցաբերվել Արցախի թեմից հինգ հոգեւորականի, որոնք պատերազմի հետեւանքով կորցրել էին իրենց բնակարանները — 17 957 450 ՀՀ դրամ:

5. Դրամական աջակցություն Արցախի հանձնված տարածքների բնակիչ հանդիսացող եւ առնվազն 4 անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին — 76 600 000 ՀՀ դրամ:

Շահառուների քանակ՝ 383 ընտանիք (2677 անձ):

Իբրեւ սննդամթերքի եւ հիգիենայի պարագաների աջակցության ծրագրի շարունակություն՝ որոշվեց 200 000-ական ՀՀ դրամ գումար տրամադրել Արցախի հանձնված տարածքների բնակիչ հանդիսացող եւ առնվազն 4 անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին: Ա փուլի ընթացքում գումար է տրամադրվել 388 ընտանիքի, որոնք գտնվում են Հայաստանում, իսկ Բ փուլի ընթացքում գումար կտրադամրվի Արցախում գտնվող եւս շուրջ 300 ընտանիքների:

Գրասենյակի աշխատանքները շարունակվում են...

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԱՐՎԵՍՏ

Այր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանային նշանավոր հաստատություններից է «Ալեք եւ Մարի Մանուկյան գանձատունը», որը բացվել է 1982 թ. հոկտեմբերի 11-ին՝ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության օրոք:

Հայոց եկեղեցական արվեստի այս եզակի թանգարանում են պահվում դարերի խորքից մեզ հասած եզակի այն նմուշները, որոնք առավելապես պահպանվել են մեր վանական համալիրներում եւ եկեղեցիներում, ուր հիմնականում ստեղծվել են, անհատ մարդկանց տներում՝ բարուրված մետաքսի, կերպասի եւ ասեղնագործված թանկարժեք գործվածքներով՝ որպես սրբազան մասունքներ: Դրանք օտար զավթիչների ու թալանչիների աչքերին ու ձեռքերին անհաս մնացած մեր մեծ ժառանգության այն փշրանքներն են, որոնք լավագույնս վկայում են հայ ժողովրդի ստեղծագործ մտքի ու հանճարի մասին:

Բազմազան է գանձատան ցուցադրությունը՝ սրբապատկերներ, եկեղեցական հանդերձներ, վարագույրներ, խաչվառներ, սկիհի ծածկոցներ, գորգեր, վարդապետական, եպիսկոպոսական ու հայրապետական գավազաններ, եկեղեցածիսական սպասք, առարկաներ, հայ եւ օտարազգի նկարիչների գեղանկարչական ու գրաֆիկական գործեր, ժողովրդական արվեստի մեծարժեք նմուշներ:

Հայոց հայրապետների ու հոգեւորականության արվեստասիրության ոգին՝ հանձին Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի, գտավ իր լավագույն կրողին: Շատ արագ կյանքի կոչվեց Խրիմյան Հայրիկի երազը՝ նրա կառուցած, բայց այդպես էլ երբեք իր նպատակին չծառայած թանգարանը, որն առաջիկայում իր հարկի տակ է ընդունելու հայ նշանավոր գեղանկարիչ Արշիլ Գորկու (Ոստանիկ Ադոյան, 1904—1948)՝ Մայր Աթոռին նվիրաբերված գործերը: Այն ունենալու է արդի թանգարաններին հատուկ տեխնիկական բոլոր հնարավորությունները: Իր այս ձեռնարկմամբ՝ Վեհափառ Հայրապետը ոչ միայն նոր լիցք է հաղորդում Մայր Աթոռի թանգարանային կյանքին, այլեւ բացառիկ հնարավորություն ընձեռում հայ եւ օտարազգի արվեստասերներին՝ ի մոտո եւ ավելի ամբողջական ծանոթանալու Արշիլ Գորկու ինքնատիպ արվեստին՝ երկունքի պես ցավի եւ լույսի մեջ ձեւ ու շունչ առած, դարերի ճամփան անդարձորեն «հանձն առած» գործերին: Թանգարանն այսօր հարստացել է նաեւ հայաստանցի եւ արտերկրում ապրող մեր հայրենակից նշանավոր արվեստագետների մի քանի տասնյակի հասնող գործերով, որոնք բոլորն էլ նվիրատվություններ են հեղինակներից եւ նրանց ժառանգորդներից:

Խիստ ինքնատիպ է Մայր տաճարի թանգարանը, որը կառուցվել Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի օրոք: Թանգարանում պահպանվում են մեր Եկեղեցու սրբազան մասունքներն ու եկեղեցական արվեստի անկրկնելի նմուշները:

Մայր Աթոռի թանգարանային համակարգում են պահվում մեր Եկեղեցու այնպիսի սրբությունները, ինչպիսին են սուրբ գեղարդը, նոյյան տապանի մասունքը, Խոտակերաց սուրբ Նշան մասնաց պահարանը՝ Հիսուս Քրիստոսի սուրբ խաչափայտի մասունքներով, Աշոտ Երկաթի մասնատուփով խաչը, որի մեջ պահվում է Քրիստոսի խաչափայտից մի մասունք, Անիի Հովհաննես-Սմբատ արքայի լեռնային բյուրեղից պատրաստված խաչը, սբ Թադեոս եւ սբ Բարդուղիմեոս առաքյալների աջերը, Անդրեասի, սբ Գեւորգի մասունքները, Հավուց թառ եկեղեցու Ամենափրկիչը, Կոմիտաս վարդապետի խույրը եւ այլ արժեքավոր սրբություններ:

Փակ թանգարանի վերածված հին կաթողիկոսարանը՝ կառուցված Ղազար Ջահկեցի կաթողիկոսի օրոք, Մայր Աթոռի խիստ հետաքրքիր ու ինքնատիպ հավաքածուներից է: Շենքի վերականգնողական աշխատանքները 1971 թվականին ավարտելուց հետո վերածվեց կաթողիկոսական թանգարանի: Հին Վեհարանի երկրորդ հարկում են գտնվում ընդունարանը, գահասրահը, որ կոչվում է նաեւ Ծաղկյա դահլիճ (որմնազարդված է Հովնաթանյան նկարիչների կողմից), Կաթողիկոսի պաշտոնական գրասենյակը, կաթողիկոսական բնակարանը, սեղանատունը եւ օժանդակ այլ սենյակներ: Պահպանելով Հին Վեհարանի ձեւավորումն ու կահավորանքը՝ թանգարանում պահպանվում են մեր լուսանուն հայրապետների անձնական իրերը, փաստաթղթերը, լուսանկարները:

Մայր Աթոռի այս համակարգում գործում են նաեւ Արշիլ Գորկու եւ Ռուբեն Սեւակի թանգարանները:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

Ոչ մի ժամանակ եւ ոչ մի կաթողիկոսի օրոք մեր Եկեղեցում չի հրապարակվել այնքան կոնդակ, որքան տրվել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանում: Այս 20 տարվա ընթացքում հրապարակվել է *հայրապետական 1107 կոնդակ*, որից 20-ով շնորհվել է արքության պատիվ նվիրյալ, ծառայասեր ու վաստակաշատ եպիսկոպոսների, որոնք իրենց ծառայությունն են բերել թե՛ Մայր Աթոռի միաբանությունում եւ թե՛ հայաստանյան ու Սփյուռքի հայոց թեմերում:

Դարերի ընթացքում Հայոց հողի վրա, անկախ անբարենպաստ ու օրհասական ժամանակների, կառուցվել են սքանչելի վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, հայոց վանական համալիրներում ստեղծվել անկրկնելի ձեռագրեր, գրվել են մեր կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող անհաշիվ գրքեր, ուսումնասիրություններ, երկեր, հորինվել գոհար մեղեդիներ, շարականներ, տաղեր, եւ այս ամենը կյանք է առել նաեւ մեր ժողովրդի բարեգործ այրերի ու տիկնանց ներդրումներով:

Այսօր եւս Հայ Եկեղեցու շատ ու շատ նվիրյալ զավակներ, ովքեր տեսան Հայոց Հայրապետի աննկուն կամքն ու նվիրումը՝ Հայ Եկեղեցին դարին համընթաց տանելու առաքելության մեջ, իրենց նեղ անձնական ու քաղաքական շահերից վեր կանգնեցին եւ մեծ պատրաստակամությամբ սատարեցին Հայոց Հայրապետին՝ իրենց արդար քրտինքի մի մասը նվիրաբերելով Մայր Եկեղեցուն: Այս նվիրատվությունների շնորհիվ էր, որ իրականացան այն հսկայածավալ աշխատանքները, որոնց ականատեսն ենք: Բազում ձեռնարկներ, ծրագրեր, հղացումներ կյանքի են կոչվել ու կոչվում առավելապես բարեգործների ազնիվ պատրաստակամությամբ, նրանց՝ հայոց ներկան ապագայի մեջ տեսնելու վեհ կեցվածքի, ճշմարիտ ու անշահախնդիր հայրենասիրության ու աստվածսիրության մեծ զգացումով: Հիրավի, մեծ է նրանց անունը, քանզի մեծագործությունների մասն են

կազմում, ուստի պատահական չէ, որ մշտապես վայելումն ունեն Հայոց Հայրապետի հայրական սիրո ու գնահատանքի: Այդ մասին են վկայում Սուրբ Գրիգոր Լուսավորիչ շքանշանի 193 հասցեատերերը:

«Ժողովուրդների հարատեւման երկու եղանակ կա միայն. կա՛մ ընթանալ համամարդկային քաղաքակրթության հետ զուգաքայլ, կա՛մ ապրել նախնական-վաչկատնային

կյանքով: Այս վերջին ճամփան մեր առջեւ փակ է եւ փակ է արդեն ավելի քան 1500 տարի: Ուրեմն, սուրբ Մեսրոպի կամքով թե մեղքով մեզ մնում է միայն մե՛կ ճանապարհ՝ աշխարհի առաջադեմ երկրներից հետ չմնալու, նրանց հետ համաքայլելու ուղին» (Պարույր Սեւակ):

Հայոց Եկեղեցին, գահին ունենալով Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ-ին, այսօր լիովին ստանձնել է մեծանուն բանաստեղծի այս խոսքերի որդեգրությունը:

Մեր ավելի քան 1700 տարվա պատմություն ունեցող ազգային հոգեմտավոր ու բարոյական ողջ ունեցվածքը դարերի ընթացքում հարաճել ու զարգացել է ժամանակի գիտական ու քաղաքակրթական նորագույն ուղիներով՝ զարմանալի նրբությամբ ու խորությամբ պահպանելով ազգային իր դեմքն ու դիմագիծը:

Իր պատմությունն իմացող յուրաքանչյուր հայ լավ գիտի, թե դարեր շարունակ ինչ անասելի բեռ է իր ուսերին կրել Հայ Եկեղեցին: Նա ստիպված էր աշխարհիկ իշխանությունների փոխարեն զբաղվել ազգապահպանման, քաղաքական, տնտեսական, գիտական ու մշակութային զարգացման, աշխարհի հզոր տերությունների հետ քաղաքակրթության բարձունքներով համաքայլելու խնդիրներով, քաջ գիտենալով, որ ճակատային գծում լինելու համար բավական չէ միայն արի լինելը, անհրաժեշտ է նաեւ կրողը լինել ժամանակի նոր ու համարձակ գաղափարների, որոնց բարոյականությունը համահունչ է ազգային մտածողությանն ու կենսակերպին: Եվ չնայած այսօր ունենք ազգային պետություն ու պետականություն, սակայն Հայ Առաքելական Եկեղեցին կրկին ուշադրության կենտրոնում է պահում մեր գիտության ու մշակույթի ձեռքբերումները՝ իր կարելին ներդնելով այդ գործում:

Նորին Սրբությունը, աջակցելով գիտական ու մշակութային շատ կազմակերպությունների զանազան ծրագրերին, նաեւ իր հայրական գնահատանքն է բերում գիտության ու մշակույթի անվանի գործիչներին՝ գիտնականներին, ճարտարապետներին, շինարարներին, գրողներին, դերասաններին, նկարիչներին, երաժիշտներին՝ նրանց կուրծքը զարդարելով «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» 215-ից ավելի շքանշանով:

Հավելենք նաեւ, որ Գարեգին Երկրորդ Հայրապետը 639 կոնդակով շնորհել է «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան, 40 կոնդակ հրապարակել է ազգային ու հոգեւոր նշանակալի իրադարձությունների ու հոբելյանների առիթով:

1997 հայրապետական օրհնության գիր է շնորհվել ազգային եւ եկեղեցական հաստատությունների, եկեղեցականների ու հավատացյալների, 12 հայորդու շնորհվել է «Ասպետ Սուրբ Էջմիածնի» տիտղոս եւ հայրապետական շքանշան:

Թվերն իսկապես խոսուն են:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀԱՊԱՆԸ

Ամենապես դեպի աստվածային լույսն ընթանալու հայ ժողովրդի կամքը, հոգում քրիստոնեական խաղաղությունն ունենալու անբեկանելի վճիռը դարեր շարունակ որպես իրենց այդ հավատի առաջնորդ ճանաչեցին Հայ Առաքելական Եկեղեցուն՝ հավատի ամրությանը միահյուսելով ազգային ինքնությունն ու պետականության գաղափարը: Հայոց Եկեղեցին իր հերթին դարձավ հայ ոգուց ծնված ստեղծագործության՝ հայոց մշակույթի պահապանն ու խնամարկուն՝ ի գործ դնելով ամեն հնարավորը, իսկ երբեմն, երբ շատ էին խառնակ ժամանակները, նաեւ անհնարինը…

1999 թվականից Հայոց աստվածահիմն Եկեղեցու առաջնորդությունը վիճակված էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանին, որի հայրենանվեր գործունեության մեջ կարեւոր տեղ ունի հոգածությունը քրիստոնեական արժեհամակարգը կրող, ազգային ոգուց ծնված մշակույթի նկատմամբ: Նրա բոլոր ուղերձներում, որոնք պետք է առաջնորդեին հավատացյալ ժողովրդին, ուրվագծվում է աստվածահաճո գործերով ամրացած հզոր հայրենիքի տեսիլը, որն արտացոլված է նաեւ իր՝ Հայոց Հայրապետի բազմաբնույթ գործունեության բոլոր բնագավառներում:

Մեկ հայացքով դժվար է ընդգրկել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազգանպաստ գործունեության մշակութային շրջագիծը: Դա մի հինավուրց ազգի հոգու կենսագրությունն է, ազգ, որի ստեղծագործական վերթեւումները չափազանց շատ են կասեցվել, փոխարկվել անկման ու տառապանքի, բայց որը երբեք չի կորցրել հարության հավատն ու վերածնվելու, վերընձյուղվելու կամքը: Մերօրյա այդ կամքն իրագործողներից մեկը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ն, մշտապես իր հայրագութ հայացքի ներքո է պահել մշակութային հարցերը. հետեւել է կրթական գործին Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում, կազմակերպել եւ հաճախ իր

մասնակցությունն է բերել գիտական ամենատարբեր միջոցառումների:

1999—2021 թթ. ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու պարգեւները, շքանշանները, օրհնության գրերն ու սրբազան կոնդակները մի կողմից բացահայտում են մշակութային մի հետաքրքիր ու կարեւոր ժամանակաշրջան, մշակութային գործիչների հզոր աստղաբույլ, մյուս կողմից՝ ցույց են տալիս Հայոց Եկեղեցու եւ իր առաջնորդի ամենընդգրկուն հոգածությունը նրանց նկատմամբ: Գարեգին Բ-ի գահակալության տարիներին Հայ Առաքելական Եկեղեցու պարգեւատրումների պատմությունը՝ իր համապարփակությամբ, հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային կյանքի յուրօրինակ հայելին է, Հայաստանը, Արցախն ու Սփյուռքն այդպես եւս միավորելու միջոց: Գնահատման դիտանկյունը բոլորի դեպքում գրեթե նույնն է՝ իրենց ոլորտներում նշանակալից ավանդ ունենալը:

Այդ չափումներով Հայ Եկեղեցու «Սուրբ Սահակ — Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր, ինչպես նաեւ «Գրիգոր

Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշաններին են արժանացել մանկավարժեր, գրահրատարակիչներ, գիտնականներ, գրողներ, դերասաններ, արվեստի գործիչներ, բժիշկներ եւ այլ մասնագիտության տեր մարդիկ, որոնք պատկառելի ավանդ են ունեցել մասնագիտական ասպարեզում: Բարձր գնահատականի է արժանացել նաեւ ազգային բարերարների ներդրումը հայոց հոգեւոր եւ նյութական մշակույթի պահպանման գործում: Դժվար է մի փոքրիկ հոդվածի սահմաններում այս ամենն ի մի բերելը, ուստի կփորձենք սակավ փաստերով ամբողջը պատկերացնել՝ հիմնականում դիտարկելով գիտակրթական միջակայքը:

Հայտնագործություն արած չենք լինի, եթե ասենք, որ Հայոց Եկեղեցու պատմության մի պատկառելի մասը նաեւ հայ դպրության պատմություն է, եւ հայ հոգեւորականները դարեր շարունակ իրենց ժողովրդին առաջնորդել են որպես ուսուցիչներ ու գիտության մշակներ: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտապես կարեւորել է մանուկների ու երիտասարդների կրթությունն ու դաստիարակությունը եւ ամեն կերպ նպաստել այդ ոլորտի արդյունավոր գործունեությանը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Այնպիսի կարեւոր ձեռնարկներ, ինչպիսիք են գիտակրթական գործուղումները, «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը դպրոցներում, գիտաժողովների կազմակերպումը, հայորդյաց տների հիմնումը եւ այլն: Նշենք նաեւ, որ այսպիսի ազգանպաստ ձեռնարկումների հիմքում մշտապես ընկած են եղել ազգային բարերարության շնորհընկալ երեւույթն ու այդ կերպ եւս հայրենիք—Սփյուռք կապերի ամրացումը:

Վեհափառ Հայրապետի ուշադրությունից դուրս չեն մնացել նաեւ հանրակրթական դպրոցն ու այդ դպրոցի անխոնջ մշակը՝ ուսուցիչը: Ուսուցիչներին հղված իր պատգամներում, սեպտեմբերմեկյան օրհնանքներում, Ուսուցչի օրվա շնորհավորանքներում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտապես ընդգծել է հայրենիքին նվիրված առողջ եւ զորավոր սաներ կրթելու գաղափարը, կարեւորել հավատարմությունն ազգային արժեհամակարգին, հայրենի երկրի պաշտպանությանն ու սեփական ժողովրդին (*տե՛ս «Էջմիածին», 2017, ԺԲ., էջ 12—13*): Նրանց դժվարին աշխատանքը քաջարելուն է

կոչված «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխությունը:

Կրթական համակարգի հետ Վեհափառ Հայրապետի սերտ առնչությունների մասին են վկայում աշխարհի եւ հայրենիքի տարեր բուհերից եւ գիտական հաստատություններից ստացած պատվավոր կոչումները: Այսպես՝ 2000 թ. նա դարձել է Արցախի պետական համալսարանի, 2001 թ. ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, 2004 թ. Երեւանի պետական համալսարանի, 2007 թ. Մինեսոտայի (ԱՄՆ) Սուրբ Թովմաս համալսարանի պատվավոր դոկտոր, 2003-ից նաեւ ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ է (*տե՛ս «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մատենագիտությունը. «Էջմիածին» ամսագիր, 1970—2010», Ս. Էջմիածին, 2011, էջ 20*):

Կրթությամբ արդյունավորված կյանքն իր պտուղներն է տալիս կյանքի բոլոր ոլորտներում, բայց նրա անմիջական շարունակությունը գիտության աշխարհն է: Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնանքը մշտապես եղել է գիտական կարեւորագույն հարցերին նվիրված

քննարկումների ուղեկիցը, զորակցել մարդասիրական եւ ազգանպաստ որոշումների կայացմանը: Շատերի մեջ նախ պետք է առանձնացնենք նրա՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված ջանքերը: Հետեւողականությունը, որով Կաթողիկոսն զբաղվել է այս հարցով՝ իր պաշտոնական այցերի եւ հանդիպումների առաջնային նպատակներից մեկը համարելով այն, տեսական հիմնավորում է ստացել նրա զեկուցումներում եւ Ցեղասպանության թեմայով այլ արծարծումներում՝ միաժամանակ բացահայտելով մի ամբողջ կյանք ընդգրկող երկարատեւ եւ աննահանջ պայքար հանուն մարդասիրության:

Այսպես՝ իր գահակալումից մեկ տարի անց՝ 2000 թ. նոյեմբերի 8—11-ը, Հայոց Հայրապետը եղել է Վատիկանում, որտեղ հանդիպել է Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ եւ ստորագրել համատեղ հայտարարություն, ըստ որի՝ Թուրքիայի հայահալած քաղաքականությունն ու կոտորածները բնորոշվել են «Ցեղասպանություն» իրավական եզրույթով՝ (*տե՛ս «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մատենագիտությունը. «Էջմիածին» ամսագիր, 1970—2010», Ս. Էջմիածին, 2011, էջ 15*): Արդեն 2001 թ. երկու հոգեւոր առաջնորդները համատեղ հայտարարությամբ դատապարտել են 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցը Վեհափառ Հայրապետը բարձրացրել է նաեւ 2004 թ.՝ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռանդիայի Միացյալ Թագավորություն կատարած այցի ընթացքում՝ Անգլիայի թագուհի Էլիզաբեթ Բ-ի հետ հանդիպման ժամանակ: 2007 թ.՝ Կ. Պոլիս կատարած այցելության ժամանակ, լրագրողների հետ հանդիպելիս Վեհափառ Հայրապետը շեշտել է Թուրքիայի գործած ոճրի՝ Հայոց ցեղասպանության անժխտելիությունը:

Գարեգին Բ-ի խոսքում Ցեղասպանությունը դատապարտվել է ոչ միայն զուտ ազգային, այլ նաեւ համամարդկային առումով, դատապարտվել է որպես մարդկության դեմ գործված հանցանք, որի կրկնությունն անթույլատրելի է որեւէ ազգի նկատմամբ: Այդ հանցագործության դեմ պայքարը պետք է շարունակական լինի, քանի դեռ չի հաղթանակել ճշմարտությունը, ինչպես օրինակելի պետք է լինեն Հենրի Մորգենթաուի, Արմին Վեգների, Յոհաննես Լեփսիուս եւ առաջադեմ մարդկության այլ ներկայացուցիչների խիզախումները հանուն այդ հաղթանակի: Վեհափառի խոսքն ուղղորդիչ կարող էր լիներ նաեւ Թուրքիայի համար, որը, այդպես էլ չճանաչելով գործված ոճիրը, դուռ է բացում նոր հանցանքների առաջ (*տե՛ս «Էջմիածին», 2000, Դ., էջ 16—17, նաեւ՝ 2005, Դ., էջ 21*):

Անկատար եւ հաճախ ուշացող երկրային արդարության միակ հակակշիռը երկնային արդարությունն է. միայն նրան կարելի է անվերապահ ապավինել: Ահա թե ինչու, 2015 թ. ապրիլի 23-ին՝ Ցեղասպանության 100-րդ տարելիցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ եւ ՀՀ նախագահի, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի, քույր Եկեղեցիների հոգեւոր պետերի եւ ներկայացուցիչների, Հայ Կաթողիկե եւ Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ Մեծ եղեռնի նահատակների սրբադասման արարողությունը: Վեհափառ Հայրապետի համոզմամբ՝ Քրիստոսին

եւ քրիստոնեական արժեքներին հավատարիմ մնալն էր Ցեղասպանությամբ նահատակվածների մահվան պատճառը, ուստի սրբադասումը կենարար նոր շունչ, շնորհ եւ օրհնություն պետք է բերեր եկեղեցական ու ազգային կյանքում:

Աստվածային նախախնամությամբ նույն՝ 2015 թ.՝ Ցեղասպանության նահատակների սրբադասման տարում, Էջմիածնում կատարվեց սրբալույս մյուռոնի օրհնության արարողություն: Այդ մյուռոնը Վեհափառ Հայրապետը կոչեց Հաղթության մյուռոն, որը միախառնում է հայոց անցյալն ու ներկան եւ գալիք բոլոր դարերը, քանզի բոլոր փորձությունների հանդիման հայ ժողովուրդն անխախտ է պահել մյուռոնի դրոշմը (*տե՛ս «Էջմիածին», 2015, Թ., էջ 13*): Պատգամը միշտ նույնն է՝ հոգում միշտ նորոգ պահել ուխտն առ Աստված, ուխտն առ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին ու նվիրական հայրենիքը, ինչպես նույնն է խաղաղության, մարդասիրության, արդարության, մարդկանց ու ազգերի համերաշխության ու համագործակցության մաղթանքը (*տե՛ս անդ, էջ 14—15*):

Ցավոք, մարդկության դեմ իրագործվող հանցագործություններն արմատախիլ չեն արվում, հետեւաբար չի կարող ավարտվել եւ պայքարը դրանց դեմ: 2017 թ. մայիսի 5-ին Ցեղասպանությունը վերապրողների անունից տրվող «Ավրորա»-ի երկրորդ մրցանակաբաշխությանն իր մասնակցությունն ու օրհնանքի խոսքը բերած Վեհափառ Հայրապետը հենց այդ հանգամանքն է ընդգծում. մրցանակաբաշխությունը քաղաքակիրթ աշխարհին ուղղված յուրօրինակ կոչ ու հրավեր է՝ ավելի լավ ու բարի աշխարհ կառուցելու, ինչպես նաեւ հետեւողականորեն պայքարելու ընդդեմ մարդկության դեմ իրագործվող հանցագործությունների, որոնք չունեն որեւէ արդարացում: «*Մարդասիրական արժեքների տարածումով է, որ պիտի արդյունավորվեն ջանքերը հանուն աշխարհի խաղաղության եւ ազգերի ու պետությունների միջեւ համերաշխ գոյակցության՝ աստվածային լույսն ու շնորհներն առատացնելով մարդկային կյանքում*»,— ասված է սրբազան հոր ուղերձում (*«Էջմիածին», 2017, Ե., էջ 9—10*):

Գիտական կյանքի մյուս կարեւոր դրվագը, որ ցանկանում ենք վերլուծել, Մայր Աթոռում հայ եւ համաշխարհային քրիստոնեական գրականության ստեղծման, պահպանման, հետազոտման համար տարվող աշխատանքներն են: Նշենք որոշ փաստեր: Հայ ժողովրդի բնորոշ գծերից մեկը նրա գրքասիրությունն է, գրքի զորությունը գիտակցելու, գրքով վերապրելու կարողությունը եւ անգամ մահվան օրհասի մեջ գիրքն անձնվիրաբար փրկելու վճռականությունը: Իր գահակալության տարիներին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտապես եղել է այդ սրբազան սիրո հավատարիմ պաշտպանը, եւ բնավ պատահական չէ, որ կաթողիկոսական իր առաջին այցերից մեկը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանն էր: Հիշենք, որ այն ստեղծվել է Մայր Աթոռի ձեռագրական հավաքածուի հիման վրա, եւ ավանդույթի ուժով Վեհափառ Հայրապետն իր առաջին այցը որպես Կաթողիկոս նշանավորեց ԺԲ դարի մի ձեռագիր Ավետարան նվիրաբերելով այդ անգին հավաքածուին (*տե՛ս «Էջմիածին», 2000, Ե., էջ 47*):

Գրքի եւ ժողովրդի կենսագրության միահյուսումը վկայված է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթամատյանի գրության 1000-ամյակի առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի սրբատառ

կոնդակում (*«Էջմիածին», 2002, ԺԱ.—ԺԲ., էջ 3—5*): Այն «Մատեան…»-ի գրության 1000-ամյա ու Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700-ամյա հոբելյանների համընկնումի մեջ նախախնամ խորհուրդ է տեսնում, սուրբ Նարեկացու բուժարար եւ հոգենորոգ աղոթքով է պատկերացնում Աստծուն հասնելու ճանապարհները:

Գրի եւ գրքի նկատմամբ պաշտամունքի հասնող սիրո մեկ այլ նշան, որը, թերեւս, ամենից առաջնայինն ու թանկն է, Հայոց գրերի գյուտին նվիրված տոնն է, որի 1600-ամյա հոբելյանին է նվիրված Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ տրված 2005 թ. հունվարի 29-ին: Հիշենք նաեւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը, որն իրականացվում էր Մատենադարանի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի օժանդակությամբ: Մասնակիցներին ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքում, որտեղ ընդգծված է Գրերի գյուտի փրկարար նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, ազգի հարատեւությունը՝ շաղկապված սահակ-մեսրոպյան ավանդներին, սուրբ Թարգմանչաց գործի շարունակությանը, երեւակվում է այդ իրադարձության բացառիկ արժեքն ու նշանակությունը (*«Էջմիածին», 2005, Թ., էջ 15*):

Սուրբ Գրքի կենարար խոսքի կարիքն էր, որ ԺԷ դարում ծնեց մեկ այլ սխրանք. 1666 թ. Ամստերդամում, Ոսկան վարդապետ Երեւանցու ջանքերով եւ Հակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսի հոգածությամբ լույս տեսավ հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը: 2016 թ. այդ կարեւոր եւ ուրախառիթ իրադարձության 350-ամյակն էր, որը պանծացվեց հայրապետական սրբատառ կոնդակով: Իրադարձությունը նշանավորեց նաեւ «Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հոլովույթում» խորագիրը կրող գիտաժողովը, որ տեղի ունեցավ 2016 թ. հոկտեմբերի 6—8-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գիտաժողովին իրենց մասնակցությունը բերեցին հայ եւ օտարազգի գիտնականներ Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից ու Կանադայից, Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանականներ եւ այլ հրավիրյալներ: Գիտաժողովի փակումը տեղի ունեցավ Սրբոց Թարգմանչաց տոնին՝ Օշականի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատան» գիտամշակութային կենտրոնում՝ խորհրդանշելով հայ մշակույթի զարգացումը (*տե՛ս «Էջմիածին», 2016, Ժ., էջ 11*): Հետագայում հրատարակվեց նաեւ գիտաժողովի նյութերի ժողովածուն՝ «Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակության 350-ամյակը» (*Ս. Էջմիածին, 2018*):

Ոսկանյան Աստվածաշնչի տպագրությանը նվիրված միջոցառումների շրջանակում հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռի մատենադարանում տեղի ունեցավ Հայկական գրադարանների չորրորդ միջազգային համաժողովի հանդիսավոր բացումը՝ «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով, որը նույնպես նվիրված էր հայկական առաջին տպագիր Աստվածաշնչի 350-ամյակին (*«Էջմիածին», 2016, Ժ., էջ 7*): Համաժողովի մասնակիցներին ուղղված Վեհափառ Հայրապետի խոսքում դրվատանք կար ընդհանրապես տպագրության երախտավորների եւ մասնավորապես հայ հրատարակիչների վերաբերյալ: Նորին Սրբությունը ջերմորեն արտահայտվեց նաեւ գրքի ներկայիս պահապանների՝ ժամանակակից գրադարանների աշխատակիցների մասին, որոնք զարգացող աշխարհում, թղթե գրքից զատ, այսօր արդեն թվային տարբերակն են մատուցում ընթերցողին (*«Էջմիածին», 2016, Ժ., էջ 11—12*):

Հետաքրքիր եւ հայագիտական նոր հետազոտությունների մղող գիտաժողովների նկարագրությունը դեռ կարելի է շարունակել, սակայն մենք բավարարվենք միայն պարզ թվարկումով: Այսպես՝ 2017-ին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի 300-ամյակը նշվեց Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Դոնի Ռոստովում կազմակերպված գիտաժողովներով եւ մշակութային այլ իրադարձություններով (*այս մասին տե՛ս «Էջմիածին», 2017, Թ., էջ 14—15*): Նույն թվականի տարեմուտին՝ դեկտեմբերի 5-ին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանը կազմակերպել էր «Հովհան Օձնեցի Իմաստասեր

Կաթողիկոսը եւ նրա ժամանակը» խորագրով գիտաժողով, որն իր ներկայությամբ պատվեց եւ օրհնության խոսք ասաց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը (*«Էջմիածին», 2017, ԺԲ., էջ 8*):

2018 թ. դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած «Արարատ» ամսագրի հիմնադրման 150-ամյակին նվիրված գիտաժողովին Հայոց Հայրապետը ներկայացրեց Հայ Եկեղեցու պաշտոնական ամսագրի անցած ուղին եւ դերակատարումը հայ հոգեւոր, գիտական, գեղագիտական մտքի զարգացման ասպարեզներում: Մեկ տարի անց՝ 2019 թ. դեկտեմբերի 6-ին, գիտաժողովը նվիրված էր Հայ Եկեղեցու ներկայիս պաշտոնական ամսագրի՝ «Էջմիածնի» 75-ամյա հոբելյանին: Զեկուցումներում ու ելույթներում լուսաբանվեցին Մայր Աթոռի պաշտոնական մամուլը՝ «Էջմիածին» ամսագիր, «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, գրահրատարակչական գործունեության անցյալ եւ ներկա ձեռքբերումներն ու անելիքները, քննարկվեցին հայագիտական հարցեր:

Այս շարունակելի թվարկումը ցույց է տալիս Մայր Աթոռի եւ Հայոց Հայրապետի կարեւոր դերակատարումը հայագիտական հետազոտությունների, մշակույթի նշանավոր գործիչների հոգեւոր ժառանգության ուսումնասիրության ոլորտում, կենդանի է դարձնում ժամանակների կապը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությունը ներկայացնող ցանկացած վերլուծություն կրկին ու կրկին ցույց է տալիս, որ նրա հոգածու հայացքից չի վրիպում իր ազգի համար նշանակալից որեւէ մշակութային իրադարձություն: Ահա մի քանի բնորոշ օրինակ վերջին տարիների պատմությունից: 2018 թ. հուլիսի 17-ին Վեհափառ Հայրապետը ներկա է եղել հասարակական-պետական գործիչ Հայաստանի առաջին Հանրապետության կյանքում կարեւոր դերակատարում ունեցած Արամ Մանուկյանի արձանի բացման արարողությանը Երեւանում: Նույն թվականի նոյեմբերի 30-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության եւ գնահատանքի խոսքով բացվեց Գիտությունների

ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի 75-ամյա հոբելյանը (*տե՛ս «Էջմիածին», 2018, ԺԱ., էջ 9–10*): 2019-ի նշանավոր հոբելյաններից առանձնացնենք Կոմիտաս վարդապետի 150-ամյակը: Նրա շիրմին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքում ասված է. «...Կոմիտաս վարդապետը հավիտենության մեջ դրեց մեր երգը՝ Ցեղասպանության սարսափի մեջ անգամ դառնալով հայ ժողովրդի անկորնչելի դարավոր հույսը եւ հոգու զրույցն Աստծու հետ» (*«Էջմիածին», 2019, Թ., էջ 15–16*):

Այսպես՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա է իր ժողովրդի մշակութային կյանքի բոլոր իրադարձություններին: Յուրաքանչյուր տոն կամ հիշատակի օր, գիտական կամ կրթական ձեռնարկ սրբազան հոր խոսքի օրհնանքն են կրում, հորդորում են մարդկանց հետեւել Աստծու պատվիրաններին, ապրել աստվածահաճո գործերով, հայրենիքի սիրով, խաղաղությամբ եւ աղոթքով: Վեհափառ Հայրապետի պատգամած խաղաղությունը սորուն ավազի վրա հիմնված խաղաղությունը չէ, այլ սեփական աշխարհն ամուր ժայռի վրա հիմնելու՝ մեր նախնիներից ավանդված եւ հայրենի երկրի նրանց տեսիլը պահպանող պետականաստեղծ խաղաղությունն է:

* * *

2020-ի աշունը հայ ժողովրդի համար մեծազույն կորուստների աշուն էր. մենք կռվի ելանք Արցախը պաշտպանելու եւ պատրաստ էինք ոչինչ չխնայել հայրենիքի համար: Ավա՛ղ, կորուստները չափազանց մեծ էին, քանի որ թշնամու «ամեն գնով» հաղթելու ծրագիրը հմտորեն ու շատ վաղուց էր մշակված: Ու կրկին ունեցանք ոչ միայն գերված զավակներ, այլ նաեւ գերված, հետեւաբար ավերման, ոչնչացման, եղծման ենթակա եկեղեցիներ, պատմական հուշարձաններ: Կրկին ականատես եղանք հայ գրի ու գրքի՝ ոտքի տակ նետվելուն, ոչնչացվելուն, կրկին մեր քիմքի վրա զգացինք «պատմությունը կրկնվում է» տողի դառնությունը: Ու թեպետ ցավը դեռ այնքան չի մեղմացել, մորմոքը չի հանդարտվել մեր հոգում, ու դեռ չենք կարող լիովին գիտակցել մեր կորուստների չափը, դեռ *փնտրում ենք* մեր կորուստները, այդուհանդերձ այսօր առավել, քան երբեւէ, հայկական մշակույթը նյութական եւ գաղափարական պաշտպանության կարիք ունի: Կարծում ենք, ավելի ճիշտ՝ վստահ ենք՝ Հայ Առաքելական Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այդ պաշտպանության ամուր դիրքերում են....

Լուսինե ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՎԱՍՆ ՀԱՎԱՏՈ, ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

44-օրյա արցախյան պատերազմը մեծ փորձություն էր հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու համար:

«Արցախ հայրենի մեր երկիրը վերստին կանչում է մեզ ամենքիս՝ պաշտպանելու մեր ազգի իրավունքները, մեր սրբազան հողը, մեր ապագան ու ազգային արժանապատվությունը:

Կոչ ենք անում մեր ժողովրդին միասնության եւ քաղաքական բոլոր ուժերին՝ ստորադասելու հակասությունները հանուն հայրենիքի պաշտպանության կարիքների»,— պատերազմի առաջին օրը՝ սեպտեմբերի 27-ին, իր ուղերձը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Մեկ տարի առաջ՝ մեզ պարտադրված պատերազմի օրերին, Վեհափառ Հայրապետը մեկ անգամ չէ, որ ուղերձով դիմեց համայն հայությանը՝ զորավիգ լինելու Արցախին ու հայրենիքին, քաջաբար ելնել հայրենիքի ու ազգի պաշտպանության նվիրական պայքարի:

Վեհափառ Հայրապետն իր հայրական պատգամն էր ուղղում նաեւ հոգեւոր սպասավորներին, Հայոց բանակի գնդերեցներին՝ *«քաջալերելու եւ ոգեշնչելու ազգիս զավակներին հայրենյաց պաշտպանության պայքարում, հավատքով զորացնելու մեր ժողովրդին եւ աղոթք ու ջանք բերելու մեր ընդհանուր հաղթանակին»*:

2000 թ. սեպտեմբերին էր, երբ Մայր Աթոռի եւ ՀՀ պաշտպանության նախարարության միջեւ ստորագրվեց Հոգեւոր ծառայության կանոնադրությունը: Այն հստակեցնում ու կանոնակարգում էր Հայոց բանակում հոգեւոր սպասավորի ծառայության դաշտը, խնդիրներն ու նպատակները: Փաստաթղթի ստորագրումից հետո Հոգեւոր ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարության բաղկացուցիչ մաս դարձավ: 2007 թվականին հոգեւորականի ներկայությունը Հայոց բանակում վավերացվեց նաեւ ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով՝ այսպիսով իրավական ուժ տալով բանակում հոգեւոր սպասավորների՝ գնդերեցների ծառայությանը: Նպատակն էր զինծառայողներին հաղորդակից դարձնել Քրիստոսի Ավետարանին եւ քրիստոնեական հավատքի սկզբունքներին, դաստիարակել նրանց քրիստոնեական-բարոյական սկզբունքներով եւ ազգային-հայրենասիրական ոգով:

Ավելի քան 20-ամյա պատմություն ունեցող հոգեւոր ծառայությունը 44-օրյա պատերազմի օրերին իր հոգեւոր սպասավորներով, հավատարիմ իր առաքելությանը, ուժ եւ հոգեւոր ամրություն էր քարոզում հայ զինվորին:

Պատերազմի այդ օրերին մենք ականատեսն եղանք նոր ղեւոնդ երեցների արիության: Պարզ սարկավագից մինչեւ եպիսկոպոս բոլոր այդ օրերին «վասն հավատո, վասն հայրենյաց» խորհրդով չլքեցին հայ զինվորին՝ մշտապես կանգնելով նրա կողքին, հաղթանակի հույս ու արիություն ներշնչելով նրանց:

Նրանց շարքերում էր նաեւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդի օգնական Նարեկ սարկավագ Պետրոսյանը, որը հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած բացառիկ խիզախության եւ անձնական արիության համար ՀՀ նախագահի հրամանագրով հետմահու պարգեւատրվեց «Մարտական խաչ» 1-ին աստիճանի

շքանշանով: Նրանց թվում էր նաեւ նույնպես քաջաբար զոհված նախկին ճեմարանական Ռուստամ սարկավագ Պողոսյանը:

Նրանց շարքերում էին նաեւ բոլոր այն հոգեւորականները, որոնք, արժանի Ղեւոնդ Երեցի անվանը, դարձան Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ հաստատված Հայ Եկեղեցու «Ս. Ղեւոնդ Երեց»-ի առաջին շքանշանակիրները:

Նրանց շարքերում էին նաեւ Հոգեւոր առաջնորդությունում սպասավորող բոլոր այն եկեղեցականները, որոնք արժանացել են հայրապետական օրհնության գրերի:

Հստակ է, որ Հայ Եկեղեցին միանշանակ դատապարտում է հարձակողական պատերազմները եւ ցանկացած ագրեսիա: Սակայն հայտնի է նաեւ, որ հայ ժողովրդի պատմության օրհասական պահերին Հայ Եկեղեցու հոգեւորականը միշտ զենք է վերցրել եւ հաճախ դարձել հայրենիքի ազատության եւ պաշտպանության առաջնորդ՝ հայրենիքի պաշտպանությունը նկատելով իբրեւ սրբազան պարտք: Այս է պատճառը, որ ժամանակին հայրենյաց պաշտպանները սրբացվել են Եկեղեցու կողմից: Այս է պատճառը նաեւ, որ հայ հոգեւորականը հանուն հայրենիքի պաշտպանության հաճախ նաեւ զենք է վերցրել եւ հայրենիքի պաշտպանության ազատագրական պայքարներ ղեկավարել:

Այսօր եւս Հայ Եկեղեցին՝ իր Հայրապետով, հայ զինվորի կողքին է:

Այժմ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի տնօրինությամբ ՀՀ զինված ուժերում իր հոգեւոր ծառայությունն է բերում 56 գնդերեց: Նրանց օգնական են դառնում ճեմարանի՝ բանակային պարտադիր զորակոչի մեկնած բոլոր ճեմարանականները:

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Հայ Առաքելական Եկեղեցին դարեր շարունակ ըստ պատշաճի կարեւորել ու կյանքի է կոչել «Բանտում էի, եւ ինձ այցի եկաք» (Մատթ. ԻԵ 36) սուրբգրային այս պատգամը, քանզի ինչ-ինչ պատճառներով անազատության մեջ գտնվող մարդուն հոգեբանորեն առավել անհրաժեշտ են մարդկային ներողամիտ վերաբերմունքին արժանանալու հույսը, իր հույզի, ապրումների, մտածումների ու խոհերի, ապագայի՝ իր հեղհեղուկ տեսլականի մասին վստահելի որեւէ մեկի հետ անկեղծորեն խոսելու ցանկությունը: Անազատության մեջ հայտնված մարդը բնականաբար ավելի շատ կարիք ունի Տիրոջ ներկայությունն զգալու, Նրանով ուժավորվելու, խոտոր ճանապարհից դեպի կյանքի ճշմարիտ ուղին գտնելու: Չնայած կրոնական առումով ազատությունն ու անազատությունը հարաբերական հասկացություններ են, սակայն բոլորը չէ, որ ունեն հոգեբանական, հոգեկան ու ֆիզիկական այն հենքը, որ թույլ կտա դժվարին պայմաններում ունենալու ոգու գիտակցական ամրություն, կամքի ազատության ճշմարիտ պատասխանատվություն՝ երկրային այս կարճ կյանքի ճանապարհն արժանապատվորեն անցնելու: Ուստի անհրաժեշտ է նման մարդուն օգնել, աջակցել, հորդորել՝ առանց վիատվելու, անձանձիր հաղթահարելու դիպվածը, այս աշխարհում ապրելու բուն նպատակի իմաստն ըմբռնելու, ֆիզիկական անազատության մեջ Տիրոջ ոգեղեն ազատությամբ գոտեպնդվելու:

Այս գիտակցությամբ էր, որ խորհրդային կարգերի փլուզումից ընդամենը երկու տարի անց՝ 1993 թ., Վեհափառ Հայրապետը, որ դեռեւս Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդն էր եւ 1990-ից մինչեւ 1999-ը նաեւ կառավարության ներման հանձնախմբի անդամ (ի դեպ, այդ ընթացքում մեծապես օգնել էր մի շարք քաղաքացիների՝ վաղաժամ ազատման

գործում), համապատասխան մարմինների հետ որոշում կայացնելուց հետո, թեմի տարածքում գտնվող բոլոր կալանավայրերում հոգեւոր հովիվներ նշանակեց:

Կոշի գաղութն ամենահին, հայտնի եւ մեծ կալանավայրերից մեկն է Հայաստանում: Ե՛վ գաղութի աշխատողները, ե՛ւ բանտարկյալները մշտապես անհամբերությամբ են սպասում հոգեւորականների այցելությանը: Չնայած թվում է, թե հանցագործներն իրենց վարքով իսկ մերժել են Աստծուն, սակայն ոչ միայն պատիժը կրելու հանգամանքը, այլեւ հոգեւորականի հետ անմիջական զրույցները, նրա օգնությամբ իրենց կատարած հանցանքի հետեւանքներն զգալու եւ խոստովանելու պատրաստակամությունը, ապաշխարությունը կարող են վերափոխման լավագույն հենքը լինել, քանզի, ինչպեսԿոշի կալանավայրի երկարամյա եւ իրապես նվիրյալ հոգեւոր հովիվ, երջանկահիշատակ տեր Կարապետն էր ասում.

«Ամեն ոք փնտրում է Աստծուն, նույնիսկ եթե նա հանցագործ է»:

Անկասկած, պետք է նշել, որ բանտարկյալներից բոլորը չեն, որ կկամենան դաս քաղել հոգեւորականի ծառայությունից: Այնուհանդերձ, հոգեւորականի հետ շփման կարիք ունեն շատերը, նրանց զգալի մասը պարտաճանաչ կերպով մասնակցում է հոգեւորականների կողմից կազմակերպված կրոնական դաստիարակության դասերին, քննարկումներին, աղոթքին եւ ծեսերին:



Գիտակցելով հովվական այս ծառայության անհրաժեշտությունը բանտերում՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետագայում Հայաստանում գործող բոլոր բանտերի հոգեւոր վերահսկիչ հովիվ նշանակեց, որը մշտապես կապի մեջ է Հայաստանի Հանրապետության 12 կալանավայրերի հետ եւ ամեն շաբաթ կատարում է այցելություններ տարբեր կալանավայրեր:

Քրիստոսը ողորմած է ոչ միայն կալանավորների, այլեւ բանտի աշխատողների հանդեպ: Տարիների ընթացքում ջերմ հարաբերություններ են ստեղծվել հոգեւորականների եւ բանտերում տարբեր պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների միջեւ: Նրանք իրավամբ զգում են հոգեւորականի ներկայության անհրաժեշտությունը: Աշխատակիցներն իրենք են արդեն նշում, որ երբ դատապարտյալները դառնում են առ Աստված, նրանց մտածողության եւ վարքագծի մեջ տեղի են ունենում իրական փոփոխություններ: Ճշմարտությունն այն է, որ Ավետարանն աղբյուրն է բոլոր իրավունքների, եւ կրոնական ազատությունն էլ մի իրավունք է, որ առկա է դառնում նաեւ կալանավայրերում: Նկատելի է, որ հոգեւորականի ծառայության արդյունքում բանտարկյալներից շատերն այսօր մեծ հավատք ունեն եւ պատրաստ են իրենց հետագա կյանքն ապրելու որպես երկրի օրինավոր քաղաքացիներ: Հոգեւորականի՝ բանտարկյալների ու աշխատակիցների վրա ունեցած ազդեցության շնորհիվ է, որ այսօր Կոշի բանտն ունի իր եկեղեցին (Ս. Հարություն), եւ այն կառուցվել է բանտարկյալների կողմից՝ նախկին կալանավորների աջակցությամբ, իսկ խորանի սպասքն ապահովել է բանտի վարչակազմը: Այստեղ մատուցվում է Պատարագ, կատարվում են մկրտություններ եւ խոստովանություններ: Կալանավայրի եկեղեցին 2008 թ. նոյեմբերի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ է օծվել:

Կալանավայրերում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր ծառայության եւ հոգեւորականների ներկայության դրական ազդեցությունն իսկապես զգացվում եւ գնահատվում է: Այդ իսկ պատճառով էլ գնալով աճում է հոգեւորականների քանակն այս ծառայության մեջ:

Այսօր արդեն Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ծառայում է 10 հոգեւորական՝ 1 վարդապետ եւ 9 քահանա:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ԱՁՆՎԱՁԱՆ ՄԻ ՔԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ. «ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ»

ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019 թ. նոյեմբերին լրացավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 20-ամյակը: Երկրային ու երկնային բարօրություններ մաղթելով եւ սրտագին շնորհավորելով Նորին Սրբությանը՝ որպես համեստ մի նվեր՝ մենք այս հոդվածը նվիրում ենք նրա գահակալության այդ ամյակին:

Բազմահարուստ հայ գրականությունն ունի իր ոսկե ֆոնդը, որի գոհարներից մեկն էլ Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունն է, եւ որն իր ստեղծման պահից դարձավ մեր ժողովրդի անցած եւ անցնելիք ճանապարհի հավերժական ուղեկիցը:

Բանաստեղծության ծնունդը կապված է ինչպես հեղինակի կյանքի որոշակի դժվարին խնդիրների, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրում տեղի ունեցած ողբերգական իրողությունների հետ:

1918 թ. կայացած Առաջին աշխարհամարտի զինադադարից հետո Վ. Թեքեյանը, որ մեջընդմեջ մնում էր Կահիրեում եւ Փարիզում, 1920 թ. վերջերին հրաժարվում է Փարիզի ազգային պատվիրակության անդամակցությունից եւ վերադառնում Կ. Պոլիս՝ հավատացած լինելով, թե եվրոպական տերությունները վերջնականապես կտապալեն թուրքական բռնապետությունը:

Թեքեյանն ընտրվում է Ռամկավար կուսակցության կենտրոնական վարչության անդամ, ձեռնարկում Ռամկավար եւ Ազատական կուսակցությունների միացմանը, խմբագրում «Ժողովուրդին ձայնը» օրաթերթը, ընտրվում Ազգային երեսփոխանական ժողովի մեպուս:

Ազգային վերածննդի, միասնության ու առաջընթացի հույսերն ու ծրագրերը շատ մեծ էին…: Սակայն 1922 թ. նոյեմբերին՝ քեմալական ուժերի՝ Կ. Պոլիս ներխուժումից մի քանի օր առաջ, Թեքեյանն ստիպված նորից է հեռանում Թուրքիայից:

Հաջորդող տարիներին Թեքեյանն զբաղվում է հայ գաղթականների ու որբերի գործերով: Այցելում է Մերձավոր Արեւելքի մի շարք երկրներ, տարագիր հայերի խնդիրներով դիմում ինչպես օտար երկրների իշխանություններին, այնպես էլ հայ ազգային ու կուսակցական շրջանակներին, ծրագրում մի քանի հարյուր հայ որբերի ուղարկել Հայաստան:

Այս շրջանում (1923—1924 թթ.) Թեքեյանն ապրում է անձնական խոր տագնապների մեջ, ջանում հայտնաբերել այն ուժերը, որոնք կարող էին անհատական ու ազգային գոյատեւման օղակ դառնալ:

Խոսելով իր այդ ծանր վիճակի մասին՝ 1924-ին Լեւոն-Զավեն Սյուրմելյանին ուղղած իր նամակներից մեկում գրում է. *«…երբեք այսքան մենակ, այսքան օտար զգացած չէի ինքզինքս, այսքան զրկված ամենադույզն զորովե մը…»* (*Վ. Թէքէեան, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 252*):

1920-ական թվականների Թեքեյանի սփյուռքյան կյանքը՝ Շվեյցարիա, Հունաստան, Եգիպտոս, Ֆրանսիա… եւ իր ժողովրդի հարյուր հազարավոր բեկորների տարրալուծումն աշխարհի չորս ծագերում, համատարած կորուստներն ու փլուզումները Թեքեյանին ստիպում էին նորից ու նորից խորհել ազգային այն արժեքների մասին, որոնք կարող էին ցրոնք դարձած իր ժողովրդին ոչ միայն հավաքել, այլեւ նրա համար կռվան ու նեցուկ լինել:

Շատ լայն են ազգային ճակատագրի շուրջ թեքեյանական պոեզիայի դրսեւորում-ընդգրկումները: Եվ ճիշտ է նկատվել գրականագիտության մեջ, որ *«Անհուն*

է իր մէջ պաշտամունքը մեր սրբանուն մարտիրոսներուն, հայ հանճարին ու հայ ոյժին, անոր Եկեղեցիին ու լեզուին» (*«ՀԵՄ» հանդէս, Երուսաղեմ, 1944, թիւ 1—4, էջ 13*):

Ուշագրաւ է, որ 1924 թ. հուլիսի 11 թվակիր իր նամակում Թեքեյանը խոսում է դատարկության եւ մանավանդ կառչելիք «սիւների» մասին՝ *«...դատարկութեան մէջ գալարումներուս ատեն փաթթուելիք սիւներ կը փնտռեմ»* (*Վ. Թէքէեան, նշվ. գիրք, էջ 266*):

Ազգային դիմագծի պահպանումը սփյուռքահայության համար այն հարցերի հարցն էր, որ ծառացել էր տարագիր ողջ հայության առջեւ: Մի բան, որը կարելի էր պահպանել ավանդույթների, լեզվի, մշակույթի, ընտանիքի, գրականության եւ մանավանդ հավատքի պահպանմամբ: Եվ Թեքեյանն այդ իրական սյուներից մեկը համարում է հենց Հայ Եկեղեցին:

Մեր ժողովրդի հանճարի բարձր դրսեւորումներից ու արդյունավորումներից մեկն է Եկեղեցին, նրա ստեղծագործ ուժի մի փայլատակումը: Պատահական չէ, որ Թեքեյանը տարբեր տարիների՝ տարբեր առիթներով, անդրադարձել է Եկեղեցու դերին ու նշանակությանը, այն դարձրել բանաստեղծության նյութ, որոնցից մեկն էլ 1911 թ. գրված «Զուարթնոց տաճարին մէջ» քերթվածն է, որը «Արարատեան դաշտին մէջ» շարքի լավագույն գործերից է, որտեղ դեռեւս հուսաշատ բանաստեղծը երանությամբ է խոսում այն մարդկանց մասին, որոնց *«հոգիին մէջ»* դեռ կտիրեր խաղաղություն, եւ Տիրոջ մասին, որ օրհնություն էր սփռում. *«Անոնք ըզ-Քեզ կ'օրհնեին՝ զի կ'օրհնեի՛ր զիրենք, Տէ՛ր»*:

Բայց փոխվել էին ժամանակները, խնդիրներն այլ էին: Եվ բանաստեղծի մեջ, նրա մտքի ու զգացմունքների բավիղներում հայ կյանքի բարդ մի շրջանում՝ 1924-ին, սկսում է ձեւավորվել «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունը (*1933 թ. Փարիզում տպագրված «Յոբելեան Վահան Թէքէեանի քառասունամեայ գրական գործունէութեան» գրքում այս բանաստեղծությունը սխալմամբ թվագրված է 1921*), որը ոչ միայն Թեքեյանի, այլեւ ողջ հայ պոեզիայի սրբազան մասունքներից մեկը պիտի դառնար:

Թեքեյանը կռահել էր, որ համատարած ողբերգությունների ու կորուստների այդ շրջանում անցյալի ու ներկայի հաղորդությամբ միայն կարելի է գալիքի տեսիլքն ունենալ:

Ստեղծագործական աստվածային բռնկման գերագույն մի պահի՞ ծնունդ է այս բանաստեղծությունը, թե՞ երկարատեւ մտորումների ու որոնումների ձգված ճանապարհի, դժվար է ասել: Իսկ գուցե այդ երկուսի արդյունքով ստեղծված մտքի մի թռիչք, որ հար ապրելու է հայ մարդու հոգում՝ նրան տալով նյութական ու ոչ նյութական հարուստ սնունդ՝ նրան լսելի դարձնելու հոգու այն կանչը, որ թաքնված է սրտի մի անկյունում, որտեղ էլ որ լինի այդ հայը:

Իհարկե, հորիզոնների վրա միշտ էլ թեւածել է Հայ Եկեղեցու խորհուրդը: Սակայն Թեքեյանն այն իր շոշափելիությամբ է, որ կանգնեցրեց հայ մարդու առջեւ, ոգեկոչեց այն կոչումն ու *կառույցը*, որ նա ունի, որովհետեւ, իրոք, Հայ Եկեղեցին, ամեն բանից զատ, նախ եւ առաջ *Կառույց* է:

Կառույց՝ հոգեւոր ու մարմնավոր, կառույց՝ իր ամենաուղիղ եւ ընդլայնված իմաստներով:

Շահան Շահնուրն իր «Ազատն Կոմիտաս» հոդվածում դարերի ընթացքում հայ ժողովրդի տարած *Հաղթանակների* եւ *Ազատությունների* շարքում հատկապես թվում է չորսը՝ սուրբ Մեսրոպ, Կոմիտաս, Կաթողիկե եւ Անդրանիկ. *«...Այս չորսերն են միայն, որոնց մօտ կարելի է ապաստանիլ յուսալքման եւ ուրացումի դաժան գիշերներուն...»* (*Շ. Շահնուր, Ազատն Կոմիտաս, Երեւան, 2003, էջ 6*):

Շահնուրը նշում է, որ այս չորսից յուրաքանչյուրն այն հիմքերից է, որը կարելի է դարձնում նոր ազատություններն ու հաղթանակները:

Հայոց տիեզերական ընկալումների յուրօրինակ մի խտացում է Եկեղեցին, ուր խնկարկվել են հայ միտքն ու հոգին, գրչածաղկվել մեր պատմությունը, գեղազարդվել մեր տեսիլները, երկինք հասցվել աստվածափառ մեր աղոթքները: Ասել է՝ Եկեղեցին արդյունքն է ու մարմնացումը հայ մարդու իմացական ու հոգեկան հարստությունների, նրա ազնվականության վկայականներից մեկը:

Կյանքի բերումով Թեքեյանը տասնյակ ու տասնյակ եկեղեցիներում է եղել (Վահան անունն էլ նա ստացել է Սուրբ Վահան Գողթնեցու տոնի օրը ծնված լինելու համար), անգամ որոշ ժամանակ աշխատել Կեսարիայի Ս. Կարապետ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքերում, այցելել Ս. Էջմիածնի Մայր Կաթողիկե, Օշականի, Զվարթնոցի եւ այլ տաճարներ, որոնց եւ խտացում-կերպավորումը նա ընդհանրացրել է այս բանաստեղծության մեջ՝ շեշտելով բնութագրական արժեքները, առաջին հերթին՝ նրա ազգահավաք եւ ազգակառույց այն դերն ու նշանակությունը, որոնք ընդհանրական են բոլոր հայ եկեղեցիներին:

Բանաստեղծությունը բովանդակում է երեք ոլորտ՝ բանաստեղծի հոգեկան ու զգայական էությունը, հայ նախնիների նվիրումները, Աստծո իջեւանատեղի եկեղեցական կառույցը՝ այս բոլորը լեցուն ներքին խորհրդով ու ասելիքով: Այս երեքից ամեն մեկն առանձին-առանձին բնութագրվում է կայուն չափանիշներով՝ առաջինը՝ որպես ստեղծման, մարդկային հոգու ու մտքի արգասաբերման միջոց, երկրորդը՝ որպես *«կենսառողջ»* պատմության ոգեղեն ընթացք, երրորդը՝ անցյալի *«ալեկոծ ծովից»* հոգեւոր ու մարմնական խաղաղ նավահանգիստ, բարձր բերդ, շարականի գետ ու մանավանդ՝ դեպի երկնի ճամփա:

Ինչպես նկատելի է, Թեքեյանը հավասարարժեք կողք կողքի է դնում հոգեւորն ու մարմնականը՝ մի բան, որ այնքան բնորոշ է Եկեղեցու հանգամանքին: Ի դեպ, այդ *անբաժանելիությունը* քրիստոնեական հավատքի հիմքն է: Չէ՞ որ հոգու՝ այդ բարձր սուբստանցի գոյության միակ բնակավայրը մարդկային մարմինն է, եւ այդ մարմինն իր հերթին կենդանի է այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեջ բնակվում է այդ հոգին՝ ճիշտ եւ ճիշտ Եկեղեցու պարագայի նման, որը կենդանի մի մարմին (կառույց) է, որտեղ *ներկա* է անտեսանելի հոգին (աղոթքը):

Եվ ուրեմն պատահական չէ, որ բանաստեղծությունն իր ամբողջության մեջ փառաբանումն է Եկեղեցու, նրա էության, նրա դերի, նրա կոչման: Եկեղեցում է, որ դարեր շարունակ հայերենով հնչել են պատերը ցնցող *«ալեխառով աղօթքներ»*: Եկեղեցին կառուցման (ուրեմն եւ արարման) խորհրդանիշն է՝ պապերի կողմից հողից քար հանված եւ երկնքից ցող առնված գործունեության արդյունք, սրբասուրբ մի վայր, ուր *«Շարականի գետին մօտ»* շուշաններ են ծաղկում, ուր *«սկիհին մէջ կիջնէ ինքը Աստված»,* եւ որը *«Հայ Հոգիին եւ Մարմնոյն Զորահանդերձն է փայլուն»*՝ իր ամբողջության մեջ՝ հաղթության երգ, որը դրսեւորվում է ամենուրեք լսվող զանգակների բոմբյուններով ու դաշույն ներկայացնող խաչի տեսքով:

Հայ Եկեղեցին հայ մարդու հոգու կրողն է, այդ հոգու *Զեւը*, նրա քարեղեն զարդանախշը, հավատքի սյունը,

կյանքի կանթեղի պայծառությունը: Այլ խոսքով՝ այն հայ մարդու հոգու մեղեդին է, *Երգն* ու Նվագը, ասել է թե՝ երկրայինի ու երկնայինի երկու ներդաշնակությունը: Չէ՞ որ ինչ, որ ներքեւում է, նաեւ վերեւում է, եւ ինչ, որ վերեւում է, նաեւ ներքեւում է: Այդ ներքեւ-վերեւում էլ հայ մարդն է ու իր Եկեղեցին, որտեղ, ինչպես գրում է Թեքեյանն իր «Զուարթնոց տաճարին մէջ» քերթվածում, մեր *«հայրերուն հայրերը» «խոնարհեցան, բայց նաեւ ուղղուեցա՛ն անընդհատ...»*:

Ընդամենը մի քանի քառատողում արտահայտված այսպիսի խիտ սիմվոլիկա քիչ է պատահում: Նրա ամեն մի բառն ու խոսքը մտածումների է մղում: Բայց այս ամենը «Եկեղեցին հայկական» բանաստեղծության, այսպես ասած, տեսանելի կողմն է: Կա անտեսանելի՝ հոգեւոր կողմը՝ Եկեղեցին որպես հայ հոգու ծննդավայր եւ հոգեւոր աշխարհ: Եկեղեցին հայ մարդուն տեսանելի է նաեւ *«աչքը գոց»*, այն *«մանկաղէմ Յիսուսին» «շնչելու»* եւ *«լրսելու»* միջոց է, ազգի *«անցեալին»* հետ հաղորդվելու կարողություն, մաքրագործվելու հնարավորություն:

«Հայ հոգիին եւ մարմնոյն» այդ միասնությունից հառնում է ավելի բարձր մի բան՝ կարեւոր մի այլ խորհրդանիշ-գաղափար՝ Եկեղեցին որպես հայ *Ոգու* մարմնացում, որ լեզուն է (գրաբարը) ու մշակույթը (երգը), անցյալն է (պատմությունը) ու ներկան (մաքառումը), ավանդույթներն են (կենցաղը) ու ինքը՝ ազգը (ընտանիքը): Այսինքն՝ այն ամենը, առանց որոնց անիմաստ է ու անհնար ժողովրդի գոյությունը:

Եվ ուրեմն՝ Թեքեյանի այս բանաստեղծության ընդգրկումների ծիրը շատ ընդարձակ է, քանի որ այն խոսք է Անփոխարինելիի մասին, ոգեկոչում գերագույն իդեալի, որ հայկականությունն է ու քրիստոնեությունը, որի խտացումն արտահայտված է խաչի սիմվոլով, որի մեջ Թեքեյանը գերակա իմաստ է դրել:

1924 թ. գրած իր նամակներից մեկում Թեքեյանը խոսում է Լեւոն-Զավեն Սյուրմելյանի «Ասացուածք ծառ տնկելու առթիւ» քերթվածի *«սքանչելի վերջին տողի»՝ «Մեռելներուս իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի»* մասին: Թեքեյանի բնորոշմամբ այդ տողը գալիս

է *«...կրօնական պաշտման մը վերջին ուժեղ կնիքը դրոշմել քերթուածին: Ծառը, իբրեւ խաչ, իբրեւ խաչ մը, որ պիտի աճի, զօրանայ ու կանաչնայ, իր ուղղաձիգ մասին երկու ծայրերովը մեռելներուն եւ երկինքին կը դիմէ, անոնցմէ կը սնանի եւ զանոնք իրարու կը կապէ. մինչ իր հորիզոնական մասին՝ բաց թեւերուն տեսիլովը, ողջերն իր շուրջ հաւաքելու ձեւ մը կ՚ընէ»* (*Վ. Թէքէեան, նշվ. գիրք, էջ 257*):

Թեեւ Թեքեյանի բանաստեղծությունում խաչն ավարտուն ու վերջնական բնութագրմամբ է հանդես գալիս (որպես դաշույն), սակայն նկատելի է, որ երկու բանաստեղծություններում էլ խաչն էական դեր ունի, իմաստալից խորհրդով է օժտված: Սակայն մի դեպքում ընդգծվում է խաչի՝ որպես անցյալ սերունդների ու երկնքի կապի, նաեւ *«ողջերն իր շուրջ հավաքելու»*, մյուս դեպքում՝ որպես զեն ու ուժ, պայքարի միջոց լինելը:

Թեքեյանի բանաստեղծության բարձրակետերը երկուսն են, մեկը՝ աշխարհիկը՝ խաչերը որպես *«դաշոյն»* համադրույթն է, երկրորդը՝ ոչ աշխարհիկը՝ *«սրկիհին մէջ»* իջնող Աստվածը:

Ամբողջ բանաստեղծությունը լեցուն է տեսանելի ու անտես խորհրդանշանային հրապույրներով: Այն ընթերցելիս տեղի է ունենում *հոգեկան ներքաշում*: Ընթերցողը ներսուզվում է կախարդական այդ աշխարհի մեջ, դառնում նրա մի մասնիկը, բարձրանում իր *«հասարակ տեղիքէն»*, լցվում հուզական ապրումներով, ասես մտնում

է եկեղեցի՝ աղոթելու ու մոմ վառելու, պարուրվում *«գուլայ-գուլայ»* երկինք բարձրացող խնկի ծխով:

Սա չի նշանակում, թե բանաստեղծությունը միստիցիզմի թեքեյանական մի դրսեւորում է: Հակառակը, այն իր շեշտադրմամբ իրական ու թանձրացական է, խոսք է մեր ազգային արժեքների մասին, բայց որոնք նույնքան հոգեւոր նշանակություն ունեն:

Բանաստեղծության մեջ ներկայացվող առարկաները, հայ անցյալին ու ներկային վերաբերող պատկերները, եկեղեցական պարագաներն այնքան տեսանելի են, որ կարելի է գեղարվեստական կտավի վերածել, անգամ՝ եկեղեցի կառուցել: Իսկ իր ամբողջության մեջ այն խնկի ու շարականի բույր է արձակում:

Այս բանաստեղծության վերաբերյալ սփյուռքահայ գրագետ Ա. Սեփեթեճյանն իրավացիորեն գրել է. *«Թէքէեանի Աստուածերգութեան բարձրակէտն է այս քերթուածը: Այստեղ միայն բանաստեղծը չէ, որ կը խօսի, իրեն հետ հայ ժողովուրդին եւ անոր հավատքին բազմադարեան պատմութիւնն է, որ կը քանդակուի»* (*Վահան Թեքեյանի 125-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ, Երեւան, 2004, էջ 89*):

Այդ *«քանդակմանը»* իրենց մեծ նպաստն են բերում բանաստեղծության ընտրված նյութը, հարուստ ու պատկերավոր լեզուն, անթերի հանգավորումն ու կատարյալ կառուցվածքը, բառերի գրաբարյան ձեւերի օգտագործումները, եկեղեցական հասկացությունների ու պարագաների անվանումները՝ գավիթ, խորան, խունկ, հոգի, աղոթք, վարագույր, սկիհ, հաղորդություն, շարական, զանգակ, խաչ..., ընդամենը մի քանի քառատողերում մեր աշխարհիկ ու կրոնական պատմության ամփոփ ներկայացումը, ասվող խոսքի *ոգեացումը*, ավարտվածությունը եւ այլն, որոնք եւ Թեքեյանի խոսքով ասած՝ այն *«արուեստ-գործիքն»* են *«...առանց որու չի կրնար մարմնանալ բանաստեղծութիւնը»* (*Վ. Թէքէեան, Հայերգութիւն եւ հատընտիր քերթուածներ, Պեյրութ, 1958, էջ 13*):

Այս ամենն իրենց միասնության *«գմբեթի»* տակ են ամփոփում «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունը եւ այն դարձնում մեկ ամբողջական մեղեդի: Պատահական չէ, որ այս բանաստեղծության համար նաեւ երաժշտություն է գրվել, որի հեղինակը սփյուռքահայ Համբարձում Պերպերյանն է:

Հ. Գ. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացվող հոդվածի որոշ թվով ընթերցողներ իրենց ձեռքի տակ կարող են եւ չունենալ Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունը՝ մենք այն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորեւ՝ որպես հայ բանաստեղծության կաթողիկե մի ստեղծագործություն:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս՝
Ինչպէս քարայր մ՚ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս...,
Իր գաւիթով հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով՝ որ կարծես նա՛ւ մ՚է ծրփուն...

Եկեղեցին Հայկական ես աչքս զոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ, կը լրսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ,
Իր սեղանէն մրխացող, գուլայ-գուլայ խունկերով
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխառով...

Եկեղեցին Հայկական բարձրր բերդն է հաւատքին
Իմ պապերուս՝ որ հողէն զայն քար առ քար հանեցին
Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ
Ու թաղուեցա՛ն անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ…

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ՚է բանուած՝
Որուն ետեւ, սրկիհին մէջ կիջնէ ինքը Աստուած,
Որուն առջեւ՝ գլխահակ կու գայ իմ ազգրս ամբողջ
Հաղորդուիլ Անցեալին հաց ու գինւով կենսառողջ…

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
Նաւահանգիստ մ՚է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հո՛ւր եւ բոց,
Ու տօթակէզ ցերեկին անտա՛ռ մրն է ստուերոտ՝
Ուր շուշաննե՛ր կը ծաղկին Շարականի գետին մօտ…

Եկեղեցին Հայկական մէն մի քարին տակ գետնի,
Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի…
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին եւ Մարմնոյն
Զրահանդերձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաշոյն,

Եւ զանգակներն են բոմբիւն, եւ երգն է միշտ յաղթութիւն…:

Ավարտելով հոդվածը՝ չենք կարող չասել եւս երկու խոսք: Առաջինը՝ նկատի ունենալով այս բանաստեղծության աշխարհիկ, կրոնական, ազգային եւ մշակութային արժեքները՝ այն ամբողջովին վիմագրել Ս. Էջմիածնի տարածքում գտնվող որեւէ հուշասյան կամ կառույցի վրա՝ ընտրությունը վերապահելով Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսին:

Երկրորդ՝ ելնելով այն իրողությունից, որ Հայոց Կաթողիկեն, հայ բարձրագույն գիրը (բանաստեղծությունը) եւ Հայոց Կաթողիկոսը եռամիություն արժեքներ են, դիմելով Վեհափառին՝ ուզում ենք ասել, որ հայ ամեն կաթողիկոսի ճակատագիր միշտ էլ քիչ բանով է տարբերվել Բարձրյալին վիճակված ճակատագրից, որն է՝ համակ խիղճ, նվիրում, մշտական ինքնազոհողություն, տեւական խոհեմություն ու համբերություն: Այդպես են ապրել բոլոր խրիմյանները, բոլոր աշտարակեցիները, բոլոր վազգենները: Այդպես եք ապրում նաեւ Դուք, Վեհափա՛ռ, Ձեր գործելակերպով ու մտահոգություններով Ձեր գահակալության բոլոր 20 տարիների ընթացքում:

Քիչ մարդիկ կան, որոնց դեմքին այդպես սազ է գալիս ժպիտը: Ձեր դեմքին երբեմն-երբեմն երեւացող այդ ժպիտը լեցուն է իմաստնությամբ ու բարությամբ, երբեմն էլ ժպիտն ու արտոսրը թաքնաթաքուն են ծվարում Ձեր շրթներին: Ուզում ենք հավատալ, որ այդ ժպիտը երաշխիքն է ու արտահայտությունը գալիք պայծառ ժամանակների, որոնց իրականացմանը Դուք Ձեր մեծ ավանդն եք ներդնում:

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան

ԿԱՐԵՎՈՐ ԵՐԿՈՒ ԴՐՎԱԳ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

2019 թ. լրացավ Հայ Առաքելական Եկեղեցու 132-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարք Գարեգին Բ Ներսիսյանի գահակալության 20-րդ տարին, որ Ընդհանրական Եկեղեցին լատիներեն բառով անվանում է vicenalia՝ Կոստանդիանոս Ա կայսեր ժամանակից ի վեր (325 կամ 326 թ.): Գարեգին Բ Կաթողիկոսի մարդկային բարեմասնությունը ցույց տալու համար հարկ եմ համարում ընդգծել այն դեպքը, երբ 1995 թվին՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանից հետո, կաթողիկոսական ընտրությունների ժամանակ թեեւ ինքը համարվում էր Հայոց Հայրապետական Աթոռի ամենահավանական թեկնածուն, սակայն ընտրության երկրորդ փուլում հանեց իր թեկնածությունը՝ հօգուտ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Սարգիսյան (Քեսաբցի) Կաթողիկոսի: Այնուհետեւ՝ 1998 թվականի նոյեմբերի 30-ին, նորընտիր՝ 131-րդ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կողմից Գարեգին եպիսկոպոսն առաջադրվեց կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ: Գարեգին Ա-ի անժամանակ մահից հետո 1999 թվականի հոկտեմբերի 27-ին կայացած Ազգային-եկեղեցական ժողովը կաթողիկոսական փոխանորդ Գարեգին եպիսկոպոսին ընտրեց Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս, իսկ նոյեմբերի 4-ին նա արժանացավ կաթողիկոսական ձեռնադրության եւ օծման՝ Գարեգին Բ անվամբ:

Դեռեւս V դարի երկրորդ կեսին Գառնիկ ճգնավորի տեսիլքով Հայաստանում հայտնվեցին առաջին Կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի նշխարները: Ըստ X դարի հայ պատմիչ Մեսրոպ Երեց Վայոցձորեցու վկայության՝ 485 թվին Բյուզանդիայի Զենոն կայսրը Պերինտիանոս զորավարի գլխավորությամբ բազում լեգեոններ ուղարկեց Հայոց Միջագետք՝ ճնշելու Իլլոսի եւ Լեոնտիոսի ապստամբությունը (*Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանությունը բնագրից, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երեւան, 1967, էջ 195, ծանոթ. էջ 342*): Գալով Միջագետք՝ Պերինտիանոսը, որպես պատիժ, բռնությամբ հափշտակեց սուրբ Գրիգորի նշխարները եւ միայն աջ ձեռքը տվեց հայերին՝ նախկինում նրանց լուսավորելու համար, ինչպես եւ որոշ այլ մասունքներ, եւ տարավ մնացյալ ամբողջը Կոստանդնուպոլիս, ու մի տապանի մեջ դրին՝ սուրբ Հռիփսիմյանց մասունքների հետ. «Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց առաքէ զօրավար ’ի Միջագետս զՊերինտիանոս: Եւ յաւուրսն յայնոսիկ յայտնեցան նշխարք սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի. եւ ազդ եղեւ կայսերն Յունաց

Զենոնայ, եւ նա առաքէ բազում լեգէոն զօրս 'ի ձեռն զօրավարին Միջագետաց, որ եկեալ բռնութեամբ յափշտակեաց զնշխարս սրբոյն Գրիգորի. եւ ետ զաջ ձեռնն Հայոց վասն լուսաւորելոյն յառաջագոյն զնոսա, եւ այլ ինչ եւս մասն. եւ տարաւ զնա բովանդակ, եւ այլ մասն ինչ 'ի սրբոց Հռիփսիմեանց 'ի Կոստանդինուպօլիս, եւ 'ի մի տապանի եդին» (Մեսրոպ Երէց, *Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի հայոց հայրապետի, Սոփերք հայկականք, հ. Զ, Վենետիկ, 1853, էջ 10*): Հետագայում Լուսավորչի մասունքներն ամփոփվեցին Նեապոլիսում (Նոր քաղաք, Իտալիա) կառուցված հայկական եկեղեցում (*Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան. «Լուսավորչի լույս նշխարներ», «Մուղնի» հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2000, էջ 53–54*)՝ S. Gregorio Armeno (Ս. Գրիգոր Հայ) անվամբ: Ինչպես նշում է երջանկահիշատակ Մեսրոպ արք. Աշճյանը, ս. Գենարիոս եպիսկոպոսի հետ, որ Նեապոլսի առաջին պաշտպանն է, հայոց ս. Գրիգորը ճանաչված է քաղաքի երկրորդ երկնային պաշտպան, որի փառավոր տոնը նշվում է սեպտեմբերի 30-ին՝ ըստ նոր տոմարի:

Ամենայն Հայոց Կաթողիկոս լուսահոգի Վազգեն Ա Պալճյանի մտահղացմամբ 1996–2001 թթ. Երեւանի կենտրոնում կառուցվեց Գրիգոր Լուսավորչի անվան նորաոճ եւ վեհաշուք եկեղեցին (ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքչյան), որի իրականացմանը եւ ֆինանսավորմանը մեծ ջանք է գործադրել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանը, եւ նրա հանդիսապետությամբ էլ 1997 թվի ապրիլի 7-ին՝ Աստվածածնի ավետման տոնին, կատարվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հիմնարկեքը: 2000 թվին Էջմիածնի Մայր Աթոռի եւ Վատիկանի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Վեհափառն անձամբ մեկնեց Վատիկան, եւ նրա ձեռամբ Հայաստան բերվեց Գրիգոր Լուսավորչի մասունքների մի մասը, եւ դրանք վերջնական հանգրվան գտան իր անունը կրող Մայր եկեղեցում՝ ամփոփվելով ութանիստ կենտրոնական գավթում՝ մարմարե տապանակի մեջ: Որից հետո՝ 2001 թվականի սեպտեմբերի 23-ին, Կաթողիկոսն օծեց եկեղեցին եւ մատուցեց առաջին Պատարագը: Սրանով ուզում եմ ընդգծել այն անուրանալի ազգանվեր նախաձեռնությունը, որով ներկա հոբելյար Կաթողիկոսն իրագործեց Գրիգոր Լուսավորչի նշխարների հայրենադարձությունը:

Արտասահմանյան հետազոտողներից Նինա Գարսոյանը, Ջեյմս Ռասսելը եւ այլք անհիմն ջանքեր են գործադրում ապացուցելու՝ իբր հայ ժողովուրդը քրիստոնեություն ընդունելուց առաջ եղել է կրակապաշտ: Խնդիրը միայն կրակը պաշտելը չէ, այլ այն, որ կրակապաշտությունն իր հետ բերում էր այնպիսի համատարած այլասերություն ընտանեկան բարքերի մեջ, որոնք դարերով օտար են եղել հայ ժողովրդի՝ նույնիսկ հեթանոս ժամանակների բարոյական ավանդներին, որոնց հարազատ մնաց նաեւ Հայաստանում քրիստոնեություն քարոզած Գրիգոր Լուսավորիչը: Դրա համար էլ 451 թվի Ավարայրի ճակատամարտում մեր ժողովուրդը միահամուռ ոտքի ելավ Հազկերտ Բ արքայից արքայի պարտադրած կրակապաշտության եւ ընտանեկան այլասերման դեմ: Հայոց ազգային սրբի համար կրակապաշտության անշեջ հուրը, որ դավանում էին սասանյանները, համահավասար էր հավիտենական գեհենի կրակին, ինչպես բանաձեւել եմ ավելի վաղ՝ «Գրիգոր Լուսավորչի համար անշեջ հուրը ոչ թե լույսի այս կողմում էր, այլ խավարի այն կողմում, ուր հուրն անշեջ է, եւ



որդը՝ անմահ» (*«ուր որդն նոցա ոչ մեռանի, եւ հուրն ոչ շիջանի» (Մարկ. Թ 47)*:

Այստեղ ուզում եմ նշել, որ այս եկեղեցին կառուցված է այն բակի տեղում, որտեղ անցել են իմ մանկությունը եւ պատանեկությունը.

Մեր հին թաղում գիժ Գետառին առափնյա,
Որ երկաթե աղբյուր էին անվանում,
Ապրում էին նախիրցիներ նորօրյա՝
Ծնված Բիթլիս, Մուշ, Բայազետ, Կարս, Վանում:
Բակի միջին կար սպասպատ ավազան,
Կողքին՝ հսկա մի թթենի հինավուրց,
Եվ տաճկահայ գավառներից այրազան
Երկու տասնյակ տուն ու տնվոր մազապուրծ:
Եկել էին մեծ գետերից Բյուրակնյա՝
Վոհ ու Արաքս, Արածանի, Տիգրիս-գետ,
Ու ծվարել գիժ Գետառին առափնյա
Այս հին թաղում՝ իրենց հոգսի, հույսի հետ:
.....
Մեր հին թաղում չկա Գետառ ու աղբյուր,
Հիմա այնտեղ իմ մանկության հուշերին
Մրմնջում է իր աղոթքը խնկաբույր
Լուսավորչի տաճարը լուռ գիշերին:

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՈԳՈՒ ԱՆԿՇՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական աթոռի 132-րդ Վեհափառ Գարեգին Երկրորդի քսանամյա գահակալությունը շնորհավո՛ր:

Հայրապետական Աթոռն անցել է բազմաթիվ փորձությունների միջով եւ ժամանակների տեւականության մեջ մնացել տոկուն ու հաստատ: Հավատի զորավոր ուժը լույս է սփռել մեր կեցության ճանապարհին: Այդ լույսը հաջորդական անընդմեջ ընթացքով եկել հասել է մեր ներկա օրվան:

Քրիստոնեական բարեպաշտության ու Հայոց Եկեղեցու առջեւ հիմնավորապես մերժելի՛ է երբեմնակի սեւացող կուպրաշաղախ խուժանությունը: Ամեն տեսակի ոտնձգություն Հայոց Հայրապետի դեմ դատապարտելի՛ է, որովհետեւ Աստծու շնորհով նա շարունակում է հաղթահարել անձնականի ձգողական սահմանը եւ վերածվում անանձնականի համազգային խորհրդանիշի: Մենք պետք է բարձր պահենք հավատի ազգային խորհուրդը եւ բնավ թույլ չտանք, որ չարագործները տրորեն:

Ամեն տեսակի ոտնձգություն դատապարտելի՛ է: Ամենայն Հայոց Հայրապետը ոչ միայն ազգի գլխավոր խորհրդանշանն է, այլեւ հավատացյալ ժողովրդի կենդանի առաջնորդը: Ուստի կորչի՛ ձեղունի մեջ գաղտագողի բույն դրած սատանան, որ իր անխոհեմ արարքներով ներկայանում է որպես ծանակելի հտպիտ ու խեղկատակ: Ծաղրել Հայոց Եկեղեցու առաջնորդին, փորձել նսեմացնել նրա արժանապատվությունը նշանակում է նրանից առաջ ծաղրել հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը, ուստի պետք է կանխենք եւ թույլ չտանք նման դրսեւորումներ:

Փորձությունների ժամանակ ավելի ինքնամատույց է երեւում պարկեշտության սահմանն անցնող սանձարձակը, որը ոչինչ է, որովհետեւ ժողովուրդը, որ խոնարհ է ու

առաքինի, որ հնազանդ է ու հավատացյալ, ամուր կանգնած է Եկեղեցու եւ նրա առաջնորդի թիկունքին: Ահա ժողովրդի լուսապսակը Հանճարի բառաքանդակներով.

Անձրեւի, ցրտերի, շոգի,
Տանջանքի, սովի, հարվածի,
Մենության, դառնության, լացի
Բոցերում կարծրացած, օ, ոգի՛...
Օ, ոգի, օ, սաղմ նախիրյան
Հանճարի,— օ, ինքնություն,—
Աշխարհում չկար ո՛չ մի թույն,
Որ լուծեր հյուլեն քո արյան...

Օ, պի՛ղկ, անհարի՛ր, անլույծ,—
Միացման չենթակա տարր,—
Տարամերժ, օ, տարր դու օտար,
Որ հորդել ես դարեր անդադար
Ինքնաբուխ սեփական լույս…

Ինքնաբուխ սեփական լույս-ով դարերի կործանարար հոլովույթին դիմացած ժողովուրդի ո՛չ մի զավակ իրավունք չունի հասուն տարիքում մնալ մանկամիտ… Այդ իսկ պատճառով մերժելով մերժո՛ւմ եմ ամեն տեսակի ոտնձգություն Սուրբ Աթոռի դեմ:

Այլեւս պետք է ազատագրվենք օտար լծի տակ մեջքը ծուռ տոկալու ախտանշանից, բոլշեւիկյան մոլոքից, որ եկեղեցիներ էր քանդում ու հոգեւոր գործիչների գնդակահարում կամ խեղդամահ անում, որ կարմիր ծնունդ էր անում, *անաստված* վերնագրով թերթեր տպագրում եւ անհավատություն քարոզում, որ անգամ 1980-ական թվականներին՝ անկախությունից ընդամենը տարիներ առաջ, դեռեւս հետապնդում էր հավատավոր մտավորականներին, որոնք Աստծու տաճարներում պատարագի էին մասնակցում, մոմ վառում եւ աղոթք անում: Իսկ պարզ ժողովուրդը շարունակում էր, իր բառերով ասած, նշել «մեծ» ու «փոքր» Զատիկները՝ ձու ներկել ու բրնձով փլավ եփել, մատաղ անել ու բաշխել առնվազն յոթ տեղ, մեռելոցի օրերին այցելել հանգուցյալներին եւ սուրբ մեռոնով կնքել նորածին մանուկներին: Այսպես Հայոց Եկեղեցին դժվար ճանապարհ է անցել եւ տոկացել հավատի զորությամբ: Այդ իսկ պատճառով արդեն իսկ արմատապես մերժելի ու ամոթ է ամեն տեսակի դուրսպրծուկություն:

Մենք՝ որպես հայ քրիստոնյաներ, պետք է համախմբվենք մեր Եկեղեցու շուրջ, որը դարեր շարունակ եղել է ազգային արժեքների պահապանը, որն ազգ է ներկայացրել եւ պետության բացակայության տարիներին փոխարինել պետությանը: Հայոց Եկեղեցու պատմությունն առաջին հերթին ազգային արժեքների պատմություն է՝ օծված հոգեւոր լույսով, որ հայոց գրչությունն է, մանրանկարչությունը, ճարտարապետությունը, երաժշտությունը, ծիսական արարողակարգը: Սա մի ամբողջ մշակույթ է, առանց որի դադարում է ազգային ինքնությունը:

Հայ հոգեւորականը խաչի հետ միշտ էլ սուր է կրել, այլ կերպ լինել չէր կարող, որովհետեւ խաչի զորությունը պետք էր ո՛չ միայն պահպանել, այլեւ պաշտպանե՛լ: Ոգեղեն տարերքը գործի վերածվեց նաեւ Արցախի ազատագրության տարիներին, եւ ով չգիտի, թող իմանա, որ գործող Հայոց Քահանայապետը նաեւ զենք է հասցրել ճակատ՝ ժողովրդի հետ մեկտեղ պաշտպանելու Ամարասն ու Գանձասարը, ազատագրելու Դադիվանքն ու Կուսանաց անապատը:

Այս տեսակետից շատ կարեւոր է հայոց հոգեւոր առաջնորդի կառուցողական ջանքը, ի՛սկը՝ Գարեգին Ճինարար. Տնե՛ր՝ դժվարության մատնված ընտանիքներին, հիմնավորապես նորոգվող Մայր տաճարը, բարձրացող եկեղեցիներ, իմաստության մատենադարանը, թարմացված Վեհարանը, բարեկարգված շրջակա միջավայրը…

Երազանքի պես է վթարված վիրավոր կռունկների մի մեծ երամի ապաքինումը եւս, որ մեր խոնարհված եկեղեցիներն են: Այնպես պետք է անենք, որ Հայոց աշխարհում չմնա ո՛չ մի տապալված սյունաշար, քարաքանդակ մատուռ ու խարխլված խորան: Սա եւս ազգային մեծ ծրագրի իրականացման, ներքին միաբանության պահանջ է, համախմբումի նշան, նորոգման նախապայման:

Այո՛, հոյակառույց Զվարթնոցի ավերակները կարող են ծանր վեհությամբ այդպես մնալ հողին կոթնած, որովհետեւ այդպես էլ են ազդեցիկ, բայց ավերակների կողքին պետք է կառուցել նույն Զվարթնոցի մի նո՛ր տաճար, կանգո՛ւն տաճար, որի համար պատրաստ եմ ներդնել իմ համեստ միջոցները, այդպես՝ մեզանից յուրաքանչյո՛ւրը, եւ ազգային հանգանակությամբ նորից կսավառնի Զվարթնոցի արծիվը: Իսկ ինչո՞ւ՝ ո՛չ, իսկ ինչո՞ւ չսկսենք հենց վաղվանից եւ դրանով ցույց տանք մեր միաբանության ուժը:

Գարեգին Երկրորդ Վեհափառի գահակալության 20-ամյակը ցանկանում եմ շնորհավորել կարեւոր մի

առաջարկությամբ եւս: Հավատի հիասքանչ խորհուրդը պետք է պահպանվի նաեւ հիշելով հայոց բոլոր վեհափառ հայրապետերին՝ Գրիգոր Լուսավորչից սկսած… Առաջարկությունս այն է, որ Էջմիածնի պատերից դուրս Վաղարշապատ քաղաքի փողոցները կրեն մեր 132 քահանայապետերի, նաեւ պատրիարքների եւ նշանավոր հոգեւոր գործիչների անունները: Դրա համար հոգեւոր խորհուրդը պետք է քննարկի այս առաջարկությունը եւ վճիռը ներկայացնի քաղաքապետարան:

Իհարկե, կան հոգեւոր առաջնորդների անուններով անվանակոչված առանձին փողոցներ. Դա լավ է, բայց շարքը պետք է ամբողջացնել. բոլորն անուն առ անուն պետք է երեւան Վաղարշապատ քաղաքի փողոցներում: Նրանց մասին պետք է պատմեն հուշատախտակները, հարթաքանդակները, արձանները, ցուցանակները՝ ծննդյան, գահակալության եւ մահվան թվականներով, նրանց մասին պահպանված բնորոշումներով:

Այս ծրագիրն իրականացնելու համար կպահանջվեն համարձակություն եւ համոզվածություն, կպահանջվեն ժամանակ եւ համառություն, հմտություն ու ջանք:

Այս ծրագրի իրականացմամբ Էջմիածին հոգեւոր կենտրոնի շուրջը կթեւածի Վաղարշապատ հոգեւոր մայրաքաղաքը: Սա կլինի առանձնահատուկ իրողություն համաշխարհային առումով եւ յուրահատուկ հմայք կհաղորդի քաղաքին. կհզորանա ճանաչաղությունը, կընդարձակվի իմացությունը, կխորանա հետաքրքրասիրությունը, կխթանվի զբոսաշրջությունը…

Հակառակ ամեն տեսակի սպառնալիքների, ամեն տեսակի վայրագ հողմերի՝ գալո՛ւ է Հայոց միաբանության,

Հայոց համախմբումի ու Հայոց մեծ հաղթանակի օրը: Նախավկան ազատագրված Արցախն է, նորոգվող Դադիվանքը, վերականգնվող Ամարասը:

Ազգային վերակերտումի գործում անփոխարինելի է Հայոց Եկեղեցու դերը, որ սերնդեսերունդ պայքարել է հանուն քրիստոնեական հավատի ու հայակերտումի:

Քաղաքական կյանքը լի է ամեն մի տեսակի անակնկալներով, բայց Եկեղեցին կայուն է ու հաստատ շարունակում է առաջնորդել հավատացյալ ժողովրդին:

Նյութականից դուրս կա մեկ ուրիշ վիճակ՝ ոգու երանելի անկշռելիությունը…

Հանձին Գարեգին Երկրորդ Հայրապետի ողջունում եմ Հայոց Եկեղեցու փառքը եւ մեծարում նրա սպասավորներին:

Հայոց Եկեղեցու խոնարհ հավատավոր
եւ Աստծու ծառա,
որդի Ուսուցիչ Վազգեն Գասպարյանի՝
Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
3 հոկտեմբերի 2020 թ.
Ի մայր քաղաքն Երեւան

«ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՆՁ ՉԷ...»

Ի խորոց սրտի շնորհավորելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռին գահակալելու 20-ամյակի կապակցությամբ, ուզում ենք ամենայն անկեղծությամբ մեր երախտիքի խոսքն ուղղել Նորին Սրբությանը այն ամենի համար, որ կատարել է այս տարիներին՝ ի փառս մեր Եկեղեցու, հայրենիքի եւ ժողովրդի:

Երախտագիտության զգացումը բարոյապես պարտադրում է մեզ տեսնել, գնահատել եւ արժեւորել Նորին Սրբության ոչ միայն կատարած գործերը, այլեւ արդար վկայություն տալ Հայոց Հայրապետի բոլոր այն մտահղացումներին ու ծրագրերին, որոնք կատարվել են մեր սրբության սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Այս համեստ հոդվածն ընդամենը հարգանքի տուրք է Վեհափառ Հայրապետին, որն իր գահակալության 20 տարվա ժամանակահատվածում, իր անխոնջ եւ անդուլ աշխատանքով նոր լույս տվեց Հայոց Եկեղեցուն, կերպարանափոխեց Սուրբ Էջմիածինը, նոր ու լայնահուն դուռ բացեց դեպի Մայր տաճար ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում ապրող մեր զավակների համար:

Բացառիկ է Հայոց Առաքելական Եկեղեցու եւ Հայոց Հայրապետների դերը մեր բազմադարյան պատմության հոլովույթում: Այդ կապակցությամբ ուզում եմ հիշեցնել մեր նվիրյալ Կաթողիկոսներից մեկի՝ Գ. Չորեքչյանի խոսքերը. «Ամենայն Հայոց Հայրապետը անձ չէ, այլ Հայրապետական գաղափարի մարմնացում»: Իրոք, Հայոց Կաթողիկոսները դարեր շարունակ եղել են նվիրյալները Աստծո եւ Հայաստան աշխարհի, մարմնացումը հայրենիքի եւ ժողովրդի գոյության եւ միասնության գաղափարի, հանդիսացել ոչ միայն դրա կատարողը, այլեւ խորհրդանիշը:

Հայ ժողովրդի անցած բազմադարյան փառավոր ուղին հարուստ է հաղթանակներով, վերելքներով եւ ողբերգություններով, եւ հիացմունքով են հիշվում այն կաթողիկոսները, որոնք ազգի եւ Եկեղեցու հանդեպ իրենց ունեցած բարձրագույն պարտքը կատարել են անսահման նվիրումով եւ սրբությամբ:

Քսան տարի առաջ Ս. Էջմիածնի Մայր տաճարի մեջ տեղի ունեցավ 132-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը: Հայաստան աշխարհը եւ ողջ սփյուռքահայությունը ներկայացնող մոտ 470 պատգամավոր ընտրեց նոր Հայոց Հայրապետ՝ Նորին Սուրբ Օծություն Գարեգին Երկրորդին: Միաժամանակ, որպես պատգամավոր, ուզում եմ փաստել, որ ընտրությունը եղել է օբյեկտիվ, անաչառ եւ արդար: Այս հանգամանքը շեշտում եմ հատուկ, քանի որ վերջին ժամանակներում որոշակիորեն Եկեղեցու եւ Վեհափառ Հայրապետի թշնամիները փորձում են աղավաղել, ստվեր գցել այդ ընտրությունների վրա: Վստահ եմ, որ այդ փաստը կարող են հաստատել մասնակից բոլոր պատգամավորները:

Բացի այդ, Հայոց Կաթողիկոսի ընտրության նման բազմամարդ ներկայացուցչական Ազգային-Եկեղեցական ժողով՝ սկսած 1441 թ., չի եղել: 1441 թ. եղել է ամենամեծ ժողովը, երբ Հայրապետական Աթոռը տեղափոխվել է Սուրբ Էջմիածին:

Ազգընտիր Հայրապետն ստանձնեց իր վեհ պարտականությունը՝ պատասխանատվության խոր գիտակցությամբ՝ հավատալով եւ հուսալով Աստծու զորակցությանը եւ ժողովրդի նվիրումին, ինչպես եղել է դարեր շարունակ: Նորընտիր Վեհափառ Հայրապետը, ուղենիշ ունենալով իր երջանկահիշատակ նախորդների ավանդույթը, հռչակեց իր տեսլականը, կանխորոշեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետագա առաջընթացի հորիզոնները: Ստանձնելով այդ բարձրագույն պարտականությունը՝ նորաօծ Հայրապետն ասաց. «Մենք ենք այսօր կրում պատիվն ու պատասխանատվությունը՝

իրականացնելու մեր Եկեղեցու առաքելությունը, եւ թե որքան նախանձախնդրություն, որքան նվիրում ու սեր կներդնենք մեր ծառայության մեջ, դրանով պայմանավորված կլինի հաջողությունը մեր առաքելության»:

Այսօր, երբ հետադարձ հայացք ենք գցում անցած 20 տարվա բարձրությունից, տեսանելի են անդուլ աշխատանքի տարիների փառապանծ նվաճումները:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին Եկեղեցին պատշաճ դերակատարություն է ունեցել հոգեւոր, կրթության, մշակույթի, ազգային ինքնության պահպանման ասպարեզներում: Վեհափառ Հայրապետի ամենօրյա հոգածության շնորհիվ դաստիարակվել եւ հոգեւոր կրթություն է ստացել հայորդիների ու հոգեւորականների մի նոր սերունդ՝ սկսած հայորդյաց տներից, վերջացրած Գեւորգյան ճեմարանով: Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ստացել է աստվածաբանական համալսարանի կարգավիճակ, հաջողությամբ գործում են Սեւանի Վազգենյան դպրանոցը, կարգավորված է բանակի հոգեւոր ծառայությունը: Նորին Սրբության ամենօրյա հետեւողական հոգատարության շնորհիվ է, որ տարեցտարի գրանցվում է եկեղեցականների թվի աննախադեպ աճ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնավարման ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր վերածնունդը լիակատար նոր թափ ստացավ: Ստեղծվում են նոր թեմեր, կառուցվում են տաճարներ, կատարելագործվում է աստվածաբանական կրթական համակարգը: Մեր Եկեղեցին այսօր ակնառու տեղ է զբաղեցնում համաշխարհային քրիստոնեական հանրության մեջ եւ գործուն մասնակցություն ունենում միջկրոնական երկխոսության ուղղությամբ: Դրա վառ ապացույցը Վեհափառ Հայրապետի ընտրվելն է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահի պաշտոնում, ինչն ուրախության եւ հպարտության վեհ զգացում առաջ բերեց ողջ աշխարհասփյուռ հայ հանրության շրջանում: Այդ ընտրությունն Ամենայն Հայոց Հայրապետի տարիների կատարած աշխատանքի արդյունքն է, որն ուղղված է Եկեղեցիների եւ օտար կրոնական կազմակերպությունների հետ մեր Եկեղեցու հարաբերությունների ընդլայնման եւ համակարգման կարեւոր գործին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինարարական կյանքում վերելքի նոր ժամանակաշրջան է: Այդ աշխատանքների մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում Մայր տաճարը եւ նրա շրջակա տարածքը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, նոր Վեհարանի գոտին եւ բազմաթիվ այլ վերակառուցումներ:

Այսօր Մայր Աթոռն իր հոյակերտ բովանդակությամբ դարձել է հոգեւոր հզոր կաճառ, որը նաեւ հայագիտության եւ ուսումնական կենտրոն է:

Հազարամյակների պատմությամբ ծանրաբեռ Հայաստան աշխարհի գոյությանը սպառնացող օրհասական բոլոր պահերին, երբ սասանվել է հայ ազգի միասնական անվտանգությունը, վճռորոշ է եղել ազգի միասնական ոգին, որը գլխավորել է Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր գահակալներով, քանզի հարյուրամյակներ շարունակ մենք չենք ունեցել պետականություն: Այսօր՝ այս փոթորկալի ժամանակներում եւս, ազգային միասնությանը սատարող եւ անխախտ պահող նվիրյալներ են պետք, պետք է հավատ առ Աստված, հավատ Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա սպասավորների նկատմամբ:

Յուրաքանչյուր անձ պետք է հոգեպես կույր լինի, որ չտեսնի այն մեծագույն նվաճումները, որոնք ձեռք են բերվել Վեհափառ Հայրապետի քսանամյա քրտնաջան աշխատանքի եւ Եկեղեցուն անմնացորդ նվիրվածության շնորհիվ: Նա ազգի եւ Եկեղեցու նվիրյալ է՝ օժտված եղածը պահպանելու, բազմապատկելու, նորն ստեղծելու շնորհով եւ տաղանդով: Նա դարձել է մեր երկրի եւ Եկեղեցու սրբազան ավանդությունների ջահակիրը:

Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով մաղթում ենք նրան քաջառողջություն եւ լիահույս ենք, որ նա բազում տարիներ եւս առաջնորդելու է Հայոց Եկեղեցու նավը դեպի նորանոր արշալույսներ...

Վիլեն ՀԱԿՈԲՅԱՆ

Բժշկական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոս

ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՊԱՅԾԱՌ ՏԵՍԻԼՔՈՎ

Նորին Սրբության գահակալությունը եղել է հաշվետվություն՝ մեր ազգի հոգեւոր փառքն աշխարհում տարածելու, ազգային-մշակութային արժեքների, եկեղեցական ավանդույթների պահպանության համար: Սա ուխտ է, որը Վեհափառ Հայրապետը կյանքի է կոչում արդեն քսան տարի:

…2015-ի ապրիլի 23-ին Հայ Առաքելական Եկեղեցին Հայոց ցեղասպանությունից մեկ դար անց սրբադասեց մեր միլիոնավոր նահատակներին, որոնք ընկան վասն հավատո եւ վասն հայրենյաց: Եվ անկախ պետականության պայմաններում հիշատակվող Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը կարեւոր հանգրվան դարձավ այն կյանքի կոչելու համար: Եվ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ գումարվեց Հայ Եկեղեցու եպիսկոպոսական ժողով, ստեղծվեց հայեցակարգային հիմնադրույթների գրասենյակ: Շուրջ վեցդարյա ընդմիջումից հետո Հայոց Եկեղեցում տեղի ունեցավ սրբադասման նոր արարողություն: Վեհափառի բնորոշմամբ՝ «աշխարհին ականատես էր մեր պատմության հոգեւոր վերափոխմանը»: Եվ Սուրբ Տրդատի բաց խորանից Նորին Սրբությունը մարդկությանը հղեց այս խոսքերը.

Լուսանկարը՝ Գագիկ Պողոսյանի

«…Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդի հոգեւոր նոր վերածննդի պսակն ենք հյուսում՝ Հայոց ցեղասպանության նահատակներին սրբադասելով: Մեր սուրբ նահատակների հիշատակն այլեւս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ հաղթանակած ու նահատակության արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգություն: Այսօր մեր սուրբ նահատակների հավատքի եւ հայրենյաց սիրո ջերմեռանդ ոգին տարածվում է Դեր Զորից մինչեւ Սուրբ Էջմիածին եւ Ծիծեռնակաբերդ, նորանկախ Հայաստանից մինչեւ աշխարհասփյուռ հայ կյանքի վերածնված անդաստաններ՝ զորացնելով ապրելու անխախտ հավատքով, մեր կյանքի վերազարթոնքի պայծառ տեսիլքով եւ մեր արդար դատի պաշտպանության աներկբա կամքով»:

ԱՄՈՒՐ ԸՆՏԱՆԻՔ՝ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ

Վեհափառ Հայրապետը մշտապես հետամուտ է եղել մեր ազգային-մշակութային, ընտանեկան արժեքների պահպանությանը: Այսօր էլ բանուկ է պահում

դեպի եկեղեցի առաջնորդող ճանապարհները, քանզի այստեղ է, որ պետք է նախնիներից ավանդված արժեքներով պահպանենք ու զորացնենք մեր երկրի նյութական եւ հոգեւոր սահմանները: Իսկ մեր հոգեւոր միջնաբերդերից մեկն ընտանիքն է: Նորին Սրբությունն առանձնահատուկ մեծարանքի է արժանացնում զինվորականների ընտանիքներին նույնպես: Հիշարժան են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում զինվորականների ընտանիքների հետ պարբերական հանդիպումները: Եվ գլոբալացվող աշխարհի ու բազմաթիվ հոգեւոր մարտահրավերներով լի մեր ժամանակների համատեքստում սրբազան պատգամի պես են հնչում Վեհափառ Հայրապետի խոսքերը. *«Մեր ազգային կյանքում ամենայն հաջողություն սկիզբ է առնում ընտանիքներից: Եթե հայ ընտանիքը ամուր եւ հաստատուն է , ամուր եւ հաստատուն կլինի նաեւ մեր պետությունը, եւ ապահով ու անվտանգ՝ մեր հայրենիքը»:*

«ԱՐՑԱԽՈՒՄ ՄԵՐ ԱԶԳԻ ՊԱՏԻՎՆ Է»

Պատմության ընթացքում խաչն ու սուրը հայ հոգեւորականի ձեռքում հաճախ են փոխարինել իրար: Այդպես է նաեւ այսօր: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառին հաճախ կարելի է տեսնել սահմանամերձ զորամասերում: Տարեմուտին, ավանդույթի համաձայն, այցելում է Եռաբլուր պանթեոն, ապա՝ մեր երկրի սահմանները պահող զինվորներին: Իր գահակալության շուրջ 20 տարվա ընթացքում Նորին Սրբությունը ներդրել է բոլոր ջանքերը՝ պահպանելու Հայաստան—Արցախ—Սփյուռք միասնությունը:

«Արցախը սրբություն է, այնտեղ պատիվն է մեր ժողովրդի: Արցախը միշտ մեր աղոթքների մեջ է, Հայոց Եկեղեցին՝ Արցախի կողքին՝ պատրաստակամ աջակից լինելու արցախցուն: Արցախով ոգեշնչվում եւ խանդավառվում է աշխարհասփյուռ մեր ողջ ժողովուրդը, որի համախմբման եւ միավորման գործում Արցախը կարեւոր դերակատարություն ունի: Արցախահայության զորավոր ու դարերի խորքից եկող հավատքը, լավատեսությունը եւ քաջագնությունը ողջ ազգի հաղթական կամքի ոգին են կերտում»,— ահա Վեհափառ Հայրապետի պատգամը:

…Մեր աղոթքն է առ Աստված, որ Տիրոջ օրհնությամբ Վեհափառ Հայրապետը դեռ շատ երկար տարիներ ներկա լինի մեզանում: Եվ մենք նրա առաջնորդությամբ հաղթահարենք փորձությունները մեր ժամանակների՝ հավատարիմ մնալով նախնյաց ավանդույթներին եւ զորացնելով Հայոց Եկեղեցին, պետությունը, ընտանիքն ու անկրկնելի մեր մշակույթը:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Վեհափառ Հայրապետի գործունեությունը՝ մտավորականների գնահատմամբ

(խոսքերը վերցված են «ՔՀ»-ի նախորդ համարներից)

Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ (1923—2010)

Խորհրդային Հայաստանի մինիստրների խորհրդի նախագահ (1977—1989), ՀՀ ԳԱ նախագահ (1993—2006)

Մեր հոգեւոր առաջնորդին՝ Ամենային Հայոց Հայրապետին գիտեմ արդեն շուրջ 25 տարի: Հանդիպում էինք երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի մոտ: Այդ տարիներին նա ԱՀԹ-ի առաջնորդական փոխանորդն էր: Բոլորից տարբերվում էր հայրենիքի հանդեպ իր նվիրվածությամբ, ջանք չէր խնայում հանրապետությունում հանգիստ, խաղաղ կյանք ապահովելու համար:

Իսկ հայրապետության տարիների առաջին իսկ օրերից ԳԱԱ-ի ամենանվիրյալ անձն էր: Մեծ է նրա ներդրումը գիտության ոլորտում: Մեծ նվիրումով նա օգնում էր մեզ ամենատարբեր հարցերում: Ուստի պատահական չէր, որ ԳԱԱ-ն միաձայն ընտրեց նրան ԳԱԱ-ի պատվավոր անդամ, ակադեմիկոս: Մենք ունեցանք ընդամենը չորս պատվավոր ակադեմիկոս, որոնցից մեկը մեր Վեհափառ Հայրապետն է: Սա յուրօրինակ գնահատանք է՝ ուղղված նրա գործին: Նշեմ նաեւ, որ Վեհափառը մեր բոլոր միջոցառումներին մասնակցում է, բոլոր հարցերում իր ամենաջերմ մասնակցությունն է ունենում եւ օգնում: Անկեղծորեն ասեմ, որ անգամ չէի պատկերացնում, որ Վեհափառը կարող է այսպիսի լայնածավալ շինարարություն իրականացնել: Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառին «շինարար» էինք կոչում: Սակայն Գարեգին Բ Վեհափառի կատարած գործը չափազանց մեծ է: Նա ամենահամեստ կերպով ցույց էլ չի տալիս իր կատարածը: Շինարարության ասպարեզում նրա կատարած գործն անգնահատելի է: Չափազանց համեստ է, զարմանալի անձնավորություն, երբեք ցույց չի տալիս, որ Ամենայն Հայոց Հայրապետ է: Պատրաստ է օգնության ձեռք մեկնելու ցանկացած պահի, նրա հետ աշխատելն ուղղակի պատիվ է:

Վեհափառ Հայրապետը շատ երիտասարդ է, ուստի ցանկությունս է, որ նա երկար տարիներ մեր ժողովրդի գլխից անպակաս լինի: Այսպիսի Վեհափառ ունենալը մեր ազգի համար պատիվ է:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՊՀ-ի ռեկտոր (1993—2006), ՀՀ ԳԱ-ի նախագահ (2006—2021)

Անցած հինգ տարվա ընթացքում Վեհափառ Հայրապետն իրականացրել է բազմապիսի ու բազմաբովանդակ գործունեություն: Հատկապես, եթե այդ բոլորն ընդհանուր կերպով գնահատենք, կարող ենք ասել՝

ակտիվացում ամբողջ գործունեության՝ մտավոր, հոգեւոր... Այսպիսի ակտիվություն Եկեղեցու կողմից նախկինում չենք ունեցել: Ես բարձր եմ գնահատում Վեհափառ Հայրապետի ջանքերը՝ ուղղված մտավորականության եւ Սբ Էջմիածնի կապերի ամրապնդմանն ու ակտիվացմանը: Նախկինում միայն ընտրյալ մտավորականներ կարող էին մուտք գործել Վեհարան, հանդիպել Կաթողիկոսի հետ, այսօր այդ բացասական երեւույթները բարեբախտաբար չկան: Երբեմն մտածում եմ, թե ինչպես է Վեհափառը ժամանակ գտնում այդքան շատ հանդիպումներ ունենալու կրթության, գիտության, մշակույթի, պետական գործիչների հետ: Նրա գործունեության այս կողմը շատ բարձր եմ գնահատում եւ իմ երախտագիտության խոսքն ուղղում նրան՝ համոզված լինելով, որ նման գործունեությունը կշարունակվի: Սա միակողմանի չէ: Նա ոգեւորում է նաեւ մեր մտավորականությանը: Համալսարանի դասախոսների մեծ մասը կապված է Գեւորգյան ճեմարանի հետ, բազմապիսի նախաձեռնությունների մասնակից է:

Հատուկ ուզում եմ շեշտել Վեհափառ Հայրապետի ունեցած խոշոր աջակցությունը մշակութային, գիտական, կրթական, ուսումնական տարաբնույթ ձեռնարկների հրատարակությանը: Գաղտնիք չէ, որ այսօր մենք ունենք լուրջ դժվարություններ նույնիսկ պատրաստի գործեր հրատարակելու խնդրում. այս առումով Վեհափառը միշտ աջակցում եւ օգնում է մեզ: Մեծ է նրա աջակցությունը ոչ միայն այդ գրքերի տպագրման գործում. այդ ամենից զատ՝ Վեհարանում կատարվում են դրանց շնորհանդեսները:

Չեմ հիշում, որ այսօրինակ միջոցառումներ նախկինում կատարված լինեն:

Նախորդ տարի Վեհափառ Հայրապետի կողմից կազմակերպված կարեւոր մեկ այլ նախաձեռնության մասին եմ ուզում նշել, որը ես շատ եմ կարեւորում. դա համալսարանի եւ ԳԱԱ-ի հայագիտական առաջին խոշոր ժողովի համատեղ կազմակերպումն ու անցկացումն էր: Այն կայացավ ՀՀ նախագահի հովանավորությամբ եւ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ: Ի դեպ, կազմակերպման գործում առկա էին ֆինանսական, կազմակերպչական բնույթի շատ լուրջ խնդիրներ, եւ այստեղ էլ Վեհափառ Հայրապետն ունեցավ իր անմիջական մասնակցությունն ու օգնությունը՝ ապահովելով գիտաժողովի անցկացման համար բարձր մակարդակ: Մինչեւ օրս էլ այդ գիտաժողովը գնահատանքի է արժանանում համաշխարհային տարբեր գիտական կենտրոնների կողմից: Շուտով լույս կտեսնի նաեւ գիտաժողովի մասին պատմող ժողովածուն:

Հարկ է նշել նաեւ, որ Վեհափառը հաճախ է հանդիպում եւ մեծ աշխատանքներ տանում երիտասարդների ու երիտասարդական տարբեր խմբերի հետ: Մենք ծրագրել ենք կազմակերպել հանդիպումներ Վեհափառ Հայրապետի եւ համալսարանի երիտասարդների միջեւ, որոնց ընթացքում կշոշափվեն երիտասարդությանը հուզող շատ արդիական հարցեր: Հուսով ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրաստիճան հոգեւորականները եւս կաջակցեն մեր այս նախաձեռնությանը՝ նոր բովանդակություն, հաջողություններ հաղորդելով այն կարեւոր գործին, որը կոչվում է բարձրագույն կրթություն. ոլորտ, որն ուղղված է մեր երիտասարդության ապագային, երկրի զարգացման հեռանկարին:



Հակոբ ՀԱԿՈԲՅԱՆ (1923—2013)

ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր

Գիտեմ, որ Վեհափառ Հայրապետը երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի սանն է՝ մեծացած անոր ձեռքին տակ: Երբ Վազգեն Վեհափառը ծանր հիվանդ

էր, իր կյանքի վերջին տարիների հիմնական եւ կարեւոր գործերը վստահեց իրեն: Դժվար թե Վազգեն Վեհափառը նրան օգնական վերցներ եւ այդքան կարեւոր գործեր վստահեր, եթե նա չըլլար այդքան գործունյա եւ նվիրված անձ: Մեր Վեհափառը ծնած, մեծացած է Հայաստանի հողին վրա եւ շատ ավելի լավ գիտե ժողովրդի կյանքն ու վիճակը: Նա շատ եռանդուն է եւ մեծ գործունեություն է իրականացնում: Այս հինգ տարվա ընթացքում նա քիչ բան չի արել, եւ հավատում եմ, որ շատ բաներ էլ դեռ կանի: Նրա գահակալության օրոք նշվեց քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակը, բարեկարգվեց Մայրավանքի շրջապատը, Երեւանի Մայր եկեղեցու շինարարությունն ավարտին հասավ, հիմնովին վերանորոգվեց Գեւորգյան ճեմարանը, որպեսզի այնտեղ մեր ապագա հոգեւորականները լավ պայմաններում կրթվեն՝ դառնալով իսկական հոգեւորականներ: Շուտով Էջմիածնի սահմաններու մեջ բացվելու է Արշիլ Գորկու թանգարանը:

Վստահ եմ, որ Վեհափառ Հայրապետը նաեւ մեծ ուշադրություն է դարձնում, որ մեր Եկեղեցին համալրվի նոր հոգեւորականներով, որպեսզի Եկեղեցին ուժեղանա, եւ կհուսամ, կհավատամ, որ ժամանակի ընթացքում Վեհափառի ջանքերով Հայ Եկեղեցիի հեղինակությունը մեր ժողովրդի մեջ, Հայաստանի հողին վրա, մեր անկախ հայրենիքի մեջ ավելի ամրանա եւ ուժեղանա: Մեր Եկեղեցին մայր ժողովրդի ստեղծածն է եւ մեր պատմության մեջ ամենեն կարեւոր երեւույթներեն մեկն է: Եկեղեցու պատմությունը կենաց ու մահու հարց է մեր ժողովրդի համար. եթե չպաշտպանենք մեր Եկեղեցին, այն կթուլանա, եւ մեծ վնաս կլինի ժողովրդի համար:

Մաղթում եմ, որ մեր Վեհափառ Հայրապետի օրոք այնպիսի պայքար մղվի աղանդավորների դեմ, որ նրանք հայ հողին վրայեն մաքրվեն, եւ Եկեղեցին միանա, նորոգվի: Կմաղթեմ նաեւ, որ Սբ Էջմիածինը դառնա հայ ժողովրդի հոգեւոր կենտրոնը, ղեկավարը, ինչպես որ կարգն է, եւ այնտեղից ղեկավարվի ողջ հայությունը, քանի որ սա հայ ժողովրդի Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն է, որ գտնվում է Հայաստանի հողին վրա: Ցանկությունս է, որ վերանա արդեն տասնամյակներ տիրող երկպառակությունը, որ կա Հայ Եկեղեցիին մեջ, երկու կտորի բաժնված չըլլա, օրինակ հանդիսանա միասնականության: Ժողովուրդը Եկեղեցիին համարում է իրեն հոգեւոր առաջնորդը, ղեկավարը: Մենք փոքր ժողովուրդ ենք եւ պետք ունենք ուժի, միասնականության: Կուզեմ, որ այդ էլ իրագործվի մեր Վեհափառի օրոք, եւ հայ ժողովուրդն ունենա մեկ կենտրոն, մեկ ղեկավար, մեկ Եկեղեցի, թեեւ հայության մեկ մասը Սփյուռքում է, սակայն Եկեղեցին մեկն է: Մաղթում եմ, որ մեր Վեհափառ Հայրապետը երկար ապրի, որ իրագործի իր ծրագիրներն ու մտածումները՝ ի փառս հայության:

Պետրոս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1944—2016)
Պատմական գիտ. թեկնածու, պրոֆեսոր

...Փա՛ռք եւ գոհությո՛ւն Աստծուն: Մեր Եկեղեցու դարավոր պատմության մեջ Վեհափառն այն բացառիկ հայրապետներից է, որն առանձնանում է իր բազմարդյուն գործունեությամբ ու շնորհներով: Եթե փորձենք ու համարձակվենք մեկ բառով բնութագրել Վեհափառին, ապա որպես պատվատիտղոս՝ կնախընտրեինք «Շինարարը»՝ բառիս ամենալայն իմաստով. հենց այսպես էին հորջորջում անցյալի մեր բազմաբեղուն հայրապետներին, որոնք տաճարներ էին կառուցում,

դպրոցներ հիմնում՝ ի փառս Աստծու եւ ի մխիթարություն ժողովրդի: Իսկ քանի-քանի տաճար, եկեղեցի, հուշարձան, դպրոց, վարչական ու տնտեսական շինություն են կառուցվել Գարեգին Բ-ի հոգածությամբ: Իսկապես տեղին կլիներ գրանցել վերոհիշյալ մականունը: Այսօր դժվար է թվարկել, թե այս տարիների ընթացքում որքան գիրք է հրատարակվել, ինչպես է ծաղկել ու բարգավաճել տպագրական գործը: Վեհափառի նախաձեռնությամբ է, որ Հայ Եկեղեցու պատմությունը դպրոցում դարձավ պարտադիր առարկա, ինչը խիստ կարեւորություն ունի մատաղ սերնդի հոգեւոր ու հայապաշտ դաստիարակության համար՝ մերօրյա աղանդների ավերիչ գոյության պայմաններում: Դպրոցը, կրթական գործը պաշտամունքի են հասցված Վեհափառի առտնին զբաղմունքներում. Գեւորգյան հոգեւոր ճեմարան, Սեւանի Վազգենյան դպրանոց, Հառիճավանքի ընծայարան, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոց, հայորդյաց բազում տներ եւ դեռ նոր բացվելիքներ... Վեհափառ Հայրապետը մեծապես վայելում է աշխարհով մեկ սփռված հայության վստահությունն ու աջակցությունը: Նա դարձել է մի անսասան կամուրջ Սփյուռքի եւ հայրենիքի միջեւ. ապացույցը՝ այն բազմաթիվ նվիրատվություններն ու ձեռնարկները, որ իրականացվում են ինչպես Մայր Աթոռում, այնպես եւ բովանդակ Հայոց աշխարհում:

Վեհափառի անձնվեր գործունեության շնորհիվ է, որ ազգային բազմաթիվ արժեքներ հայրենադարձվել են Մայր Աթոռ՝ Սբ Էջմիածինը վերածելով մշակութային մի ինքնատիպ մայրաքաղաքի:

Մաղթում ենք, որ Վեհափառը երկար-երկար տարիներ գահակալի, քանզի այնքան ծրագրեր ունի, որ պետք է կարողանա իրականացնել ինչպես ազգային, այնպես էլ հոգեւոր կյանքում՝ ի բարօրություն մեր Սբ Եկեղեցու եւ հավատավոր ժողովրդի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հավատն է մեր ծառայության՝ մեր զինվորության գլխավոր զենքը... . . . 5
Հայոց 132-րդ Հայրապետը . . . 19
Վեհափառին աչքերը . . . 30
Ոգու շինարարը . . . 34
Եվ լույս անի քո ապրած օրերին քո խղճմտանքի անկեզ մորենին. . . . 40
Գեւորգյան հոգեւոր ճեմարան . . . 45
Սեւանի Վազգենյան դպրանոց . . . 47
Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ-ի հայորդյաց տներ . . . 49
Միջեկեղեցական գործունեության որոշ դրվագներ (2000—2021 թթ.). . . . 52
Երանի շինողաց... . . . 64
«Ի հայրապետութեան Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի Ամենայն Հայոց» . . . 75
Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորում . . . 78
Քրիստոնեական դաստիարակության կենտրոն . . . 80
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն . . . 82
Մամուլը՝ արժեհամակարգի պահպանման միջոց . . . 85
«Շողակաթ» հեռուստաընկերություն . . . 88
«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան . . . 90
Իզմիրլյան բժշկական կենտրոն. . . . 93
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սոցիալական ծառայության գրասենյակի գործունեության մասին . . . 96
Եկեղեցի եւ արվեստ . . . 99
Հայրապետական կոնդակներ. . . . 101
Հայ մշակույթի պահապանը . . . 103
Վասն հավատո, վասն հայրենյաց . . . 110
Հայոց Եկեղեցին Հայաստանի կալանավայրերում . . . 113
Վահան Թեքեյանի ազնվազան մի քերթությունը. «Եկեղեցին Հայկական» . . . 115
Կարեւոր երկու դրվագ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի գործունեությունից. . . . 121
Ոգու անկշռելիություն. . . . 124
«Ամենայն Հայոց Հայրապետն անձ չէ...». . . . 127
Մեր կյանքի վերազարթոնքի պայծառ տեսիլքով . . . 129
Վեհափառ Հայրապետի գործունեությունը՝ մտավորականների գնահատմամբ. . . . 131

«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ

Գլխ. խմբագիր՝ **Աստղիկ Ստամբոլցյան**
Խմբագիր՝ **Նարէ Սարգսյան**
Գեղ. խմբագիր՝ **Գոռ Գրիգորյան**

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ